



ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑԻԿ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ՝
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2015

**Գիրքը հրատարակվել է ՀՀ նախագահի գործընկեր կազմակերպության՝
Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած
դրամաշնորհային մրցույթի շրջանակներում:**

Մարուքյան Ա.Յ.

**Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային
քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ
հարաբերությունների համատեքստում, Ա.Յ. Մարուքյան.**

– Եր. 2015. – 220 էջ:

Խմբագիր՝ պ.գ.թ. , դոցենտ Հ. Կ. Սուքիասյան

Աշխատությունում ներկայացված են համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ԵՄ-ի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների ներկա վիճակը: Հայոց ցեղասպանության հիմնահարցը քննարկվում է Ռուսաստան-Թուրքիա, ԱՄՆ-Թուրքիա և ԵՄ-Թուրքիա հարաբերություններում առկա հակասությունների ու շահերի բախման համատեքստում:

Ներկայացվում են առաջարկներ ստեղծված իրավիճակում ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ու Սփյուռքի լոբբիստական կառույցների կողմից նշված ուժային կենտրոններում հատկապես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում համապատասխան տրամադրվածություն ստեղծելու առումով:

Գիրքը նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու մասնավորապես պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

© Ա. Յ. Մարուքյան

ԱՌԱՋԱԲԱՆ

2015 թ. հունվարի 29-ին հենց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիրի մոտ Հայաստանի Հանրապետության նախագահը պաշտոնապես հրապարակեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Այդ փաստաթղթով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Մփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար, ինչը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ¹:

Այս առումով կարևոր քայլ պետք է համարել 2015 թ. ապրիլի 28-ին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի ներկայացրած հայցը Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ Սսի կաթողիկոսարանի կալվածքների ու գույքի նկատմամբ իրավունքների վերականգնման պահանջով², որը կարող է նախադեպ դառնալ համազգային պահանջներով միջազգային դատական աստիճաններին դիմելու համար:

Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված Հայաստանն իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կա-

¹ Տե՛ս <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>

² Տե՛ս <http://www.armtimes.com/hy/read/63285>

նոնադրության և թե՛ անմիջականորեն Ցեղասպանության կոնվենցիայի դրույթների վրա, կարող է դիմել միջազգային դատական ատյաններին՝ և՛ իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, և՛ կոնկրետ հարցերի, օրինակ, կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման, կամ էլ՝ ՄԱԿ-ի կառույցների՝ Գլխավոր Ասամբլեայի կամ Անվտանգության Խորհրդի միջոցով ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով³:

Սակայն, գաղտնիք չէ, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա լուրջ ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ զուգահեռ տարվող՝ քաղաքական գործընթացով:

Մեզանում երկար ժամանակ տիրապետող է եղել այն կարծրատիպային տեսակետը, թե Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի անդամ երկիր, ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից, աշխարհի 16-րդ տնտեսությունն ունեցող և Եվրամիության անդամության թեկնածու ու տարածաշրջանային կարևոր դերակատարություն ունեցող երկիր, փայլուն փոխշահավետ հարաբերություններ ունի համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների՝ ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի հետ: Այս ամենից բխեցվում էր

³ Տե՛ս Մարտիջյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 286:

այն եզրակացությունը, թե նշված ուժային կենտրոնները Թուրքիայի վրա ճնշումներ չեն գործադրի և վերջինիս չեն հարկադրի ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը և քայլեր ձեռնարկել այդ հանցագործության հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Սակայն արագ փոփոխվող աշխարհում տեղի ունեցող վերջին զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ ինչպես ԱՄՆ-ի, Եվրամիության ու Ռուսաստանի հետ Թուրքիայի երկկողմ հարաբերություններում, այնպես էլ աշխարհաքաղաքական կարևոր հարցերի վերաբերյալ նրանց դիրքորոշումներում կան էական տարբերություններ ու շահերի բախումներ, որոնք վեր են ածվել խոր հակասությունների:

Ներկայումս որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր կուրս հռչակվել է նեոսամանականությունը, ինչը ենթադրում է Օսմանյան կայսրության նախկին տարածքի և դրան հարակից տարածքների նկատմամբ՝ Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա, Մերձավոր Արևելք, Անդրկովկաս, Կենտրոնական Ասիա և այլն, Թուրքիայի ազդեցության հաստատում⁴:

Վերոնշյալ տեսության հիմնական էությունն այն է, որ համաաշխարհային քաղաքականության մեջ որևէ պետության դերն ու արժեքը որոշվում է նրա աշխարհագրական դիրքով և պատմական անցյալով: Ըստ Ա.Դավութօղլուի՝ այդ տեսակետից Թուրքիան շահեկան դիրքերում է, քանի որ ունի ձեռնտու աշխարհագրական դիրք և հանդիսանում է Օսմանյան կայսրության իրավահաջորդը⁵: Թուրքիան այսօր նույնիսկ լիարժեք տարածաշրջանային տերութ-

⁴ St' u Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, No.1, p. 79.

⁵ Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ., «21-րդ ԴԱԸ», թիվ 6 (46), 2012, էջ 35:

յուն չէ: Խնդիրն այն է, որ այն կարող է տարածաշրջանային տերության կարգավիճակի հավակնել երեք հարթություններում՝ աշխարհագրական (Անդրկովկասում, Մերձավոր Արևելքում և այլն), կրոնական (իսլամական աշխարհում) և ռեսուրսային (նավթի, գազի և այլնի արտահանման ուղիները որոշողի՝ վերահսկողի կարգավիճակի առումով): Պարզից էլ պարզ է, որ առաջին երկու պարագաներում Թուրքիան նման դերակատարություն չունի և ունենալ չի կարող: Անդրկովկասում նրա դերակատարությանը խանգարում են ՀՀ-ն, ԼՂՀ-ն, որի խնդրի լուծման ձևաչափում այն ընդգրկված չէ (հենց այդ պատճառով էլ փորձում է ընդգրկվել), Ռուսաստանի Դաշնության ազդեցության ոլորտում գտնվող երկու ինքնորոշված պետությունները՝ Աբխազիան և Հարավային Օսիան, ինչպես նաև տարածաշրջանի գլխավոր դերակատարարը՝ ՌԴ-ն:

Թուրքիան կարող է կատարել տարածաշրջանի «գլխավոր տարանցիկ» ուղու որակապես այլ աշխարհատնտեսական դեր, որն անփոխարինելի «ծառայություն» կարող է մատուցել Արևմուտքին և Արևելքին՝ նրանց միջև տնտեսական կապերի հաստատման ու ապահովման համակարգում⁶:

Հարկ է նշել, որ հաջողված երկու-երեք տարիների ընթացքում Թուրքիայի տնտեսության մեջ ու ֆինանսներում ծագած անբարենպաստ երևույթները թուրք փորձագետներին այդպես էլ հնարավորություն չտվեցին վերջնականապես որոշել, թե որքան են կայուն ու անդառնալի երկրի տնտեսական ձեռքբերումները,

⁶ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր, վերլուծական նյութեր, թողարկում 2, Եր., 2008, էջ 55:

արդյո՞ք կանխավ չափազանցված չէ երկրի հաջողությունների գնահատականը 21-րդ դարի սկզբում⁷:

Թուրքիայի աշխարհաքաղաքական նման ամբիցիաները, ինչպես նաև միջազգային հարաբերություններում ազդեցիկ դերակատար դառնալու անթաքույց հավակնությունները մտահոգիչ ու անընդունելի են վերը նշված ուժային կենտրոնների համար:

Ռուսաստանի և Թուրքիայի ժամանակակից հարաբերությունների և երկկողմ հարաբերություններում առկա հակասությունների ու խնդիրների վերաբերյալ գրականությունը բավական հարուստ է: Այդ խնդիրներին անդրադարձել են ինչպես ռուսաստանցի դիվանագետները, այնպես էլ վերլուծաբանները՝ Ա.Գ. Հաջիևը⁸, Օ.Վոջամանը⁹, Ա. Կրիլովը¹⁰, Ա. Վորիցկին¹¹, Ն. Գ. Կիրենը¹², Ֆ. Ա., Տրինիչը¹³, Ս. Տարասովը¹⁴, Ս.Մարկեդոնովը¹⁵,

⁷ Տե՛ս Կиреев Н. Г., Турция – экономический партнер и политический соперник России в Евразии, “Россия на Ближнем Востоке: цели, задачи, возможности” (материалы конференции), М., 2001, с. 83.

⁸ Տե՛ս Գаджиев А.Г., К визиту премьер-министра Турции Р. Т. Эрдогана в Россию: российско-турецкие отношения на современном этапе, <http://www.iimes.ru/?p=9918>

⁹ Տե՛ս Կоджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004.

¹⁰ Տե՛ս Կрылов А., Российская политика на Южном Кавказе в 2009 г., Кавказ-2009. Ежегодник Института Кавказа, Ер., 2011.

¹¹ Տե՛ս Կорицкий А. Россия – Турция: 85 лет дипломатическим отношениям, «Азия и Африка сегодня», 2009, № 9.

¹² Տե՛ս Կиреев Н. Г., Среднесрочные и долгосрочные интересы Турции в отношениях с Россией, «Ближний Восток и современность», М., 1997, Выпуск 4.

¹³ Տե՛ս Թринич Ф. А., Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества, «Ближний Восток и современность», М., 2003, Выпуск 19.

¹⁴ Տե՛ս Թарасов С., Эндшпиль «Южного потока»: Россия форсирует «Турецкий поток», <http://www.regnum.ru/news/polit/1890176.html#ixzz3TDJY4FmV>, նույնի՝ Турция между Россией и Евросоюзом: кто выиграет «партию»? <http://www.regnum.ru/news/polit/1888192.html#ixzz3TDJvfZCg>

¹⁵ Տե՛ս Маркедонов С. «Пятидневная война»: предварительные итоги и следствия. /М. «Неприкосновенный запас». 2008. №5 (61), նույնի՝ Пантюркизм как мечта, миф

Ի.Տորբակովը¹⁶ և ուրիշները: Այս խնդիրները տեղ են գտել նաև թուրք դիվանագետների ու վերլուծաբանների աշխատություններում: Ռուս-թուրքական հարաբերություններին հատուկ ուսումնասիրություն էր նվիրել Թուրքիայի արտգործնախարար Ա.Դավութօղլուն¹⁷: Երկկողմ հարաբերություններն ու դրանցում առկա խնդիրներին անդրադարձել են նաև այլ թուրք հեղինակները՝ Մ. Այդինը¹⁸, Բ.Առնչը¹⁹, Ա. Օքուն²⁰, Ֆ. Օզբայը²¹, Օ. Թասսիինարը²² և ուրիշներ: Ռուս-թուրքական արդի հարաբերությունների վերաբերյալ արևմտյան հետազոտողներից ուշագրավ է Մ.Լոուրելի²³ ուսումնասիրությունը:

Ռուս-թուրքական հարաբերությունները և Հայաստանի ազգային անվտանգության ու տարածաշրջանային շահերի վրա դրանց ազդեցությանն անդրադարձել են նաև հայ հեղինակները՝

и реальность, <http://www.politcom.ru/7654.html>, Турция уходит к России, <http://www.politcom.ru/3561.html>

¹⁶ St' u Torbakov I., The Georgia Crisis and Russia-Turkey Relations, The Jamestown Foundation, 2008.

¹⁷ St' u Давудоглу А., Внешняя политика Турции и Россия, “Россия в глобальной политике”, N 1, М., 2010.

¹⁸ St' u Айдын М., Турецкая политика в отношении Кавказа в 2007 г., Кавказ-2007. Ежегодник Института Кавказа, Ер., 2008.

¹⁹ St' u Арынч Б., Турция готова осуществлять совместно с Россией крупные проекты, http://Russia-today.ru/2006/no_14/14_links.htm.

²⁰ St' u Oku A., Russian-Turkish Economic Relations in the Post-Soviet Era (AIA Turkish section), <http://www.axisglobe.com/article.asp?article=43>, 19. 04. 2005.

²¹ St' u Özbay F., The Relations between Turkey and Russia in the 2000s, Perceptions: Journal of International Affairs, Vol. XVI, No 3, SAM, Autumn 2011.

²² St' u Hill F., Taspinar O., Turkey and Russia: Axis of the Excluded? «Survival», vol. 48, no. 1, Spring 2006.

²³ St' u Laurelle M., Russo-Turkish Approachment through the Idea of Eurasia: Alexander Dugin's Networks in Turkey, The Jamestown Foundation, April 2008.

Գ. Արշակյանը և Ա., Եղիազարյանը²⁴, Մ. Աղաջանյանը²⁵, Հ. Չաքրյանը²⁶ և ուրիշներ:

Բնականաբար, թուրք-ամերիկյան հարաբերությունները գտնվել են թուրք հետազոտողների ուշադրության կենտրոնում՝ Ա.Աքյուզ²⁷, Թ.Բաբալի²⁸ և ուրիշների: Թուրք առանձին հետազոտողներ անդրադարձ են կատարել թուրք-ամերիկյան հարաբերություններին սիրիական ճգնաժամի և «Իսլամական պետության» (այսուհետ՝ ԻՊ) դեմ պայքարի համատեքստում: Դրանց թվում կարելի է նշել Կ.Գյուրսելի²⁹, Շ.Դեմիրթաշի³⁰, Չ.Եգինսու³¹ և ուրիշների աշխատությունները:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ամերիկյան հետազոտողները՝

²⁴ Տե՛ս Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ. ., «21-րդ դար», թիվ 6 (46), 2012:

²⁵ Տե՛ս Աղաջանյան Մ., Առևտրա-տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև, «Թուրքիա. էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր, վերլուծական նյութեր», թողարկում 2, Եր., 2008; նույնի՝ Россия - Турция: диалектика партнёрства, <http://newsland.com/news/detail/id/1286370/>

²⁶ Տե՛ս Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, «Հայացք Երևանից», Ռուսաստան, թիվ 2, 1996:

²⁷ Տե՛ս Akyuz A., U.S. – Turkey Economic Relations at the Outset of the 21st Century, *Insight Turkey*, Vol. 2, No. 4, October-December, 2000.

²⁸ Տե՛ս Babalı T., New Turkish Foreign Policy in the Balkans, 20 December 2010, <http://sam.gov.tr/this-is-my-first-blog>.

²⁹ Տե՛ս Gursel K., Turkey paying price for jihadist highway on border, <http://www.al-monitor.com/pulse/originals/2014/06/gursel-al-qaeda-isis-yurkey-mosul-iraq-syria-consulate.html>

³⁰ Տե՛ս Demirtaş S., More than 1,000 turks fighting for the Islamic Caliphate, <http://www.hurriyetdailynews.com/>

³¹ Տե՛ս Hubbard B., Yeginsu C., After opening way to rebels Turkey is paying heavy price, <http://www.nytimes.com/2014/06/25>

Վ.Հեյլը³², Ի.Լեսսերը³³ և ուրշներ, իսկ Ա.Մակգրեգորին³⁴ թուրք-ամերիկյան հարաբերությունները դիտարկում է Քրդական հարցի համատեքստում:

Թուրք-ամերիկյան հարաբերությունները և հարակից հարցերը եղել ու մնում են նաև խորհրդային ու ռուսաստանցի հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դրանց ժամանակին անդրադարձել են Վ.Ի. Դանիլովը, Ե.Ի., Յուրկովը³⁵ և ուրիշները: Երկու երկրների ժամանակակից հարաբերությունները շարունակում են մնալ ռուս հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում թուրք-ամերիկյան տնտեսական հարաբերություններին վերաբերող Վ.Վ. Կունսկովի³⁶, Ե.Ի. Ուրազովայի³⁷ աշխատությունները: Թուրք-ամերիկյան քաղաքական հարաբերությունների հարցերին է անդրադառնում Ս.Բ. Դրուժիլովսկին³⁸: Հայ հետազոտող Բ. Պողոսյանն³⁹ էլ իր հետազոտության մեջ անդրադարձել է թուրք-ամերիկյան հարա-

³² St' u Hale W. M., Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002.

³³ St' u Lesser I. O., Turkey, the United States and the Delusion of Geopolitics, "Survival", Vol. 48, No. 3, Autumn 2006.

³⁴ St' u McGregor A., Massoud Barzani Conducing Dangerous Games in Nothern Iraq, Terrorism Focus, Vol. IV, Issue 23, July 17, 2007; նույնի՝ PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions Terrorism Focus, Vol. IV, Issue 27, August 14, 2007.

³⁵ St' u Юрков Е.И., Исламский фактор во внешней политике США, «США экономика политика, идеология», М., 1983, № 8.

³⁶ St' u Кунаков В.В., Турция и ЕС: Проблемы экономической интеграции, М., Институт Ближнего Востока, 1999.

³⁷ St' u Уразова Е.И., Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, М., 2003.

³⁸ St' u Дружиловский С.Б., Турецкая Республика в 80 - 90-е гг. / С.Б.Дружиловский, М., 1998, նույնի՝ Политика Ирана и Турции в регионе Центральной Азии и Закавказья / С.Б.Дружиловский, В.В.Хуторская // Южный фланг СНГ. Центральная Азия - Каспий - Кавказ: возможности и вызовы для России / Под ред. М.М.Наринского, А.В.Мальгина, М., 2003.

³⁹ St' u Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2011

բերություններում Հայոց ցեղասպանության հարցի արծարծումներին:

Թուրքիա-ԵՄ հարաբերություններին և ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու հիմնահարցին հիմնարար ուսումնասիրություն է նվիրել ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտը⁴⁰: Բնականաբար, Բրյուսելի և Անկարայի բարդ հարաբերությունները գտնվել են նաև արևմտյա հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ հարաբերությունների տարբեր խնդիրներին են անդրադարձել Ե.Լենսկին⁴¹, հոլանդացի հետազոտողներ Ա.Լեջորը, Ռ.Մուջին և Ք.Չապելը համատեղ հետազոտություն են նվիրել ԵՄ-Թուրքիա տնտեսական հարաբերություններին⁴²: Ամերիկացի հետազոտող Մ.Հովան⁴³ էլ փորձել է վերլուծել ԵՄ-Թուրքիա հարաբերությունների մշակութային, կրոնական շերտերը: ԵՄ-Թուրքիա հարաբերությունների տարբեր խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված Մ. Ուգուրի⁴⁴ ուսումնասիրությունը:

Կառուցվածքային առումով աշխատանքը բաժանել ենք երեք գլուխների, որոնց առաջին ենթագլուխներում ներկայացրել ենք Ռուսաստան-Թուրքիա, ԱՄՆ-Թուրքիա և ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ներկա վիճակը և վեր հանել համաշխարհային քաղաքականության այդ ուժային կենտրոնների հետ Թուրքիայի հարաբերություններում նկատվող հակասություններն ու շահերի

⁴⁰ Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века, М., Институт востоковедения РАН, 2001.

⁴¹ Sté u Lenski E. Turkey and the EU: On the Road to Nowhere? Berlin, 2003

⁴² Sté u Assessing the economic implications of Turkish accession to the EU / A.M.Lejour, R.A. de Mooij, C.H.Capel. -The Hague: CPB Netherlands Bureau for Economic Policy Analysis, 2004.

⁴³ Sté u Howe M. Turkey: A Nation Divided over Islam's Revival / M.Howe, Boulder, 2000.

⁴⁴ Sté u Ugur M. The European Union and Turkey: An Anchor/Credibility Dilemma / M.Ugur. - Aldershot: Ashgate Publishing, 1999.

բախումները: Աշխատության գլուխների երկրորդ ենթագլուխներում էլ ներկայացրել ենք Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու ԵՄ-ի դիրքորոշումները Հայոց ցեղասպանության հարցում և դրա ազդեցությունը Թուրքիայի հետ նրանց հարաբերությունների վրա: Աշխատանքի վերջում առաջարկներ են ներկայացվում, թե համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոնների հետ Թուրքիայի հակասությունները ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության ու Սփյուռքի լոբբիստական կառույցների կողմից ինչպես կարող է օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում համապատասխան տրամադրվածություն ստեղծելու առումով:

**ԳԼՈՒԽ I. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ
ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԹՈՒՐԹԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**1.1. Ռուս-թուրքական արդի հարաբերությունների
հակասություններն ու շահերի բախումները**

Ռուսաստանի և Թուրքիայի ղեկավարները տարբեր առիթներով բազմիցս նշում էին, որ ռուս-թուրքական հարաբերություններում հարկավոր է ջանքերը կենտրոնացնել տնտեսական մերձեցման վրա⁴⁵: Թուրքական կողմը հատկապես հաճախ էր նշում, որ թուրք-ռուսական տնտեսական հարաբերությունները շատ զգայուն են քաղաքական տատանումների նկատմամբ, մինչդեռ Թուրքիայում հասարակության մի ստվար հատված իր գոյությունն ապահովում է այդ հարաբերությունների հաշվին: Թուրքիայում շատերը՝ շինարարական կապալառուներից մինչև խոշոր ընկերությունների ղեկավարները, կախված են Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններից⁴⁶: Այս հայտարարություններն ամենևին էլ պատահական չէին, քանզի հույս էր հայտնվում, թե տնտեսական ու էներգետիկ ոլորտներում դինամիկ զարգացող հարաբերությունները կարող են դրականորեն անդրադառնալ նաև ռուս-թուրքական բավականին լարված քաղաքական հարաբերությունների վրա: Սակայն շուտով պարզ դարձավ, որ նշված ոլորտներում երկկողմ հարաբերություններում նույնպես առկա են լուրջ խնդիրներ ու հակասություններ: Թեև կողմերը նպատակադրվել էին 2015 թ. ապրանքաշրջանառության ծավալները հասցնել

⁴⁵ Թուրքիա. էներգետիկական և միջազգային տնտեսական կապեր, վերլուծական նյութեր, թողարկում 2, Եր., 2008, էջ 68:

⁴⁶ Նույն տեղում, էջ 91:

100 մլրդ դոլարի, սակայն Թուրքիային լրջորեն մտահոգում է Ռուսաստանի հետ առևտրային դիֆիցիտի բավականին մեծ մակարդակը, ինչը պայմանավորված է գլխավորապես ռուսական էներգակիրների ներմուծմամբ: Ուստի՝ Անկարան փորձում է հաղթահարել առևտրաշրջանառության այդ մեծ բացասական հաշվեկշիռը⁴⁷:

Ինչ վերաբերում է ռուսական տնտեսության մեջ թուրքական ներդրումների անընդհատ աճին, ապա դա նպաստում էր Ռուսաստանի տնտեսության զարգացմանը և վնաս էր հասցնում Թուրքիայի տնտեսությանը: Մոսկվայում Թուրքիայի դեսպանատան տվյալների համաձայն՝ 2012 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է շուրջ 50 մլրդ դոլար, սակայն դրանից Թուրքիայի արտահանումը կազմում է ընդամենը 12-13 մլրդ: Ռուսական արտահանման մեջ շարունակում են գերակշռել էներգակիրները՝ կազմելով 25 մլրդ դոլար: Ռուս զբոսաշրջիկներից ստացված եկամուտները կազմում են մոտ 4 մլրդ դոլար: Թեև ռուսական տնտեսության մեջ թուրքական ներդրումներից ստացված եկամուտը կազմել է 25 մլրդ դոլար, սակայն դրա հետևանքով Թուրքիայում մեծանում է գործազրկությունը, թուրքական պետությունը կորցնում է հարկերը, իսկ Ռուսաստանը թուրքական կապիտալի միջոցով աշխատատեղեր է ստեղծում իր քաղաքացիների համար⁴⁸:

Ռուս-թուրքական էներգետիկ ոլորտի հարաբերություններում նույնպես նկատվում են լուրջ հակասություններ ու շահերի բախումներ:

⁴⁷ Тринич Ф. А., Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества, Сборник «Ближний Восток и современность», М., 2003, Выпуск 19, с. 271.

⁴⁸ St' u Визит Эрдогана в Россию,

http://www.inosmi.ru/politikaakademisi_org/20131127/215179043.htm

Մինչև 1994 թ. պահպանվում էր թուրքական ապրանքների մատակարարմամբ ռուսական գազի վճարի դիմաց մասնակի մարման պրակտիկան, ինչը բավականին նպաստեց թուրքական ապրանքների Ռուսաստան արտահանման ծավալներին: Մակայն, 1994 թ. Ռուսաստանը՝ հղում կատարելով երկրում ընդհանուր տնտեսական փոփոխությունների վրա, թուրքական առաջարկեց գազի մատակարարման դիմաց վճարումները կատարել բացառապես ազատ փոխարժեքային տարադրամով: Դրան անմիջապես հաջորդեց գազի դիմաց թուրքական ապրանքների գնման ռուսական կողմի հրաժարումը⁴⁹:

«Երկնագույն հոսքի» կառուցման ժամանակ Թուրքիան առաջ էր քաշում ռուսական կողմի համար անընդունելի պայմաններ՝ կապված ինչպես գազի սակագնի, այնպես էլ վճարման պայմանների հետ: Մասնավորապես առաջարկում էին գազի համար վճարել թուրքական ապրանքներով: Այդ ժամանակ ռուսներին հաջողվեց սակագինը մոտեցնել միջին եվրոպական գներին: «Երկնագույն հոսքի» կառուցումն արագացնելու նպատակով «Գազպրոմը» որոշեց գազի սակագնի հարցում Անկարային զիջումների գնալ՝ հայտարարելով, որ Ռուսաստանը համաձայն է Թուրքիային վառելիք վաճառել նույն գնով, ինչ Գերմանիային⁵⁰: 2010 թ. համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի շարունակման պայմաններում «Գազպրոմը» համաձայնվեց իջեցնել Թուրքիային մատակարարվող ռուսական գազի գինը 6,5 %-ով, ինչպես նաև չեղյալ համարեց 2009 թ. պայմանագրով նախատեսված ծավալները չօգտագործելու դեպքում սահմանված տուգանքներով կուտակված պարտքերը, որոնք կազմում էին 160 մլն դոլար, ինչը

⁴⁹ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր, վերլուծական նյութեր, թողարկում 2, էջ 58:

⁵⁰ St u Становая Т., Несговорчивая Турция, <http://www.politcom.ru/18676.html>

թուրքական կողմին հնարավորություն ընձեռեց 2010 թ. տնտեսել մոտ 400 մլն դոլար⁵¹: Բացի այդ՝ հաշվի առնելով Թուրքիայի տնտեսության վրա ճգնաժամի ազդեցությունը, Անկարային թույլատրվեց ընտրել գազի ավելի քիչ ծավալներ, ինչպես նաև թուրքական «Բոթաշ» ընկերությանը իրավունք տրվեց մինչև 75 %-ի չափով կրճատել գազի ընդունման ծավալները առանց «Գազպրոմի» կողմից պատժամիջոցների կիրառման⁵²:

1993 թ. մարտին Անկարայում ստորագրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ թուրք-ադրբեջանական համաձայնագիրը⁵³: Ռուսաստանը ցանկանում էր, որ նոր նավթամուղն անցներ իր տարածքով՝ Բաքու-Նովոռոսիյսկ երթուղով, որը հասում էր Չեչնիայի տարածքը, իսկ Նովոռոսիյսկից համաշխարհային շուկաներ նավթը տանկերներով փոխադրվում էր թուրքական նեղուցներով: 1990-ականների սկզբներից Ռուսաստանին հաջողվեց որոշակի հաջողություններ ունենալ: 1993 թ. Ռուսաստանի էներգետիկայի նախարար Յու. Շաֆրանիկը գաղտնի այցելություն կատարեց Բաքու, որտեղ համաձայնագրեր ստորագրեց ադրբեջանական նավթը Ռուսաստանի տարածքով տեղափոխելու վերաբերյալ: Տվյալ ժամանակաշրջանում Ադրբեջանի իշխանությունները ջանում էին հավասարակշռված քաղաքականություն վարել Թուրքիայի և Ռուսաստանի հետ: 1995 թ. հոկտեմբերի 9-ին Ադրբեջանի միջազգային նավթային կոնսորցիումը (AIOC) որոշեց՝ ադրբեջանական նավթն արտահանել արդեն իսկ գործող ինչպես հյուսիսային՝ Բաքու-Նովոռոսիյսկ նավթա-

⁵¹ Крылов А., Российская политика на Южном Кавказе в 2009 г., Кавказ-2009. Ежегодник Института Кавказа, Ер., 2011, с. 142.

⁵² St' u <http://evimturkiye.com/forum/33-2459-1>

⁵³ St' u Baran Z., The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications For Turkey, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005.

մուղով, այնպես էլ արևմտյան՝ Վրաստանի տարածքով անցնող Բաքու-Սուփսա նավթամուղով: Այս որոշումը մեծ մասամբ քաղաքական էր, քանի որ նախատեսվում էր 8 տարվա ընթացքում երկու նավթամուղերով արտահանել միայն 5 միլիոն տոննա նավթ, որը մեծ քանակություն չէ: Ադրբեջանական նավթը Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղով սկսեց հոսել 1997 թ. նոյեմբերից, իսկ Բաքու-Սուփսա նավթամուղով՝ 1999 թ. ապրիլից⁵⁴:

Թուրքիան փորձում էր խափանել Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի աշխատանքը: 1993 թ. օգոստոսին Թուրքիան քայլեր ձեռնարկեց նեղուցներով նավթատար նավերի ազատ երթևեկության վրա սահմանափակումներ մտցնելու համար: Այդ երկրի կառավարությունը, հայտարարելով, թե նավթափոխադրումների հետևանքով էկոլոգիական և անվտանգության տեսանկյունից Ստամբուլին լուրջ վտանգ է սպառնում, պահանջեց վերանայել 1936 թ. Մոնտրեյի կոնվենցիան, որը կարգավորում էր Բոսֆոր և Դարդանել նեղուցներով երթևեկության ռեժիմը, որը մերժվեց Մոսկվայի կողմից⁵⁵: Մակայն 1994 թ. մարտի 13-ին Բոսֆորի նեղուցի շրջակայքում կիպրական «Նասսիյա» տանկերի և բեռնափոխադրող նավի բախումն առիթ հանդիսացավ Թուրքիայի համար՝ հայտարարելու, որ նեղուցների շահագործումը որպես նավթափոխադրման երթուղի վտանգավոր է 10 միլիոնանոց բնակչություն ունեցող Ստամբուլի համար⁵⁶: Ռուսաստանը Թուրքիայի այս քայլը որակեց որպես դիտավորյալ փորձ՝ խոչընդոտելու Բաքու-Նովոռոսիյսկ նախագիծը և մեղադրեց Թուրքիային Մոնտրեյի կոնվենցիայի միակողմանի խախտման մեջ: 1994 թ. հունիսին, որպես

⁵⁴ Արշակյան Գ., Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 45:

⁵⁵ Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М., 2002, с. 252;

⁵⁶ Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004, с. 126.

հակաքայլ, Ռուսաստանի էներգետիկայի նախարարը միջազգային նավթային կազմակերպություններին նախազգուշացրեց, որ Կասպից ծովի նավթային և գազային հանքավայրերի շահագործման մեջ ներդրումները դիսկ են պարունակում, քանզի Կասպից ծովի բաժանման վերաբերյալ համաձայնություն գոյություն չունի:

Ռուսաստանի և Թուրքիայի միջև աճում էին տարաձայնությունները նեղուցների հիմնախնդրի շուրջ: Պաշտպանելով սևծովյան նեղուցների ռեժիմի հետ կապված իր դիրքորոշումները, Թուրքիան շեշտը դնում էր դրանց սահմանափակ հնարավորությունների և այն գործոնների վրա, որոնք կապված են Ստամբուլի բնակչության վիճակի, շրջապատող միջավայրի հետ: Ռուսաստանը չէր վիճարկում նեղուցներում անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, սակայն շարունակում էր պնդել նավարկության ռեժիմի մեղմացման և առաջին հերթին տեխնիկական միջոցներով այդ հիմնախնդրի լուծման վրա: Ռուսաստանի պահանջները մասամբ բավարարվեցին 1998 թ., երբ Թուրքիան որոշ չափով մեղմացրեց նեղուցներով նավագնացության կանոնակարգը: Ռուսաստանը նեղուցներով տրանսպորտի շարժման կարգի փոփոխությունների բնապահպանական մոտիվացիան համարեց խիստ տարակուսելի՝ համոզված լինելով, որ Անկարայի այդ քայլերն ուղղված էին նրան, որ կասպիական նավթի տեղափոխման հարցը լուծվի հոգուտ Թուրքիայի: Դրանից ելնելով՝ ռուսական կողմը շարունակում էր պնդել Թուրքիայի կողմից նեղուցներում նավարկության սահմանափակումների հետևանքով հասցված կորուստների անթույլատրելիության մասին, և որպես իր դիրքորոշման հիմնավորում բերում էր նավարկության սահմանափակում-

ների հետ կապված սեփական կորուստների գնահատականները. 1994-2000 թթ. կազմել էր 800 մլն դոլար⁵⁷:

2000-ական թթ. սկզբներին էլ Թուրքիան շարունակում էր շահարկել նեղուցներով նավթային լցանավերի շարժման սահմանափակման անհրաժեշտության և բնապահպանական նպատակով իր կողմից վերահսկողության լրացուցիչ միջոցների ներմուծման իր դիրքորոշումը: Այսպես, օրինակ, 2004 թ. սկզբի տվյալներով, նույնիսկ թուրքական նախկին սահմանափակումների հաշվառումով, Բոսֆորով և Դարդանեղով օրական անցնում էր շուրջ 14 ռուսական լցանավ, իսկ միայն 2002-2003 թթ. նեղուցներով ռուսական նավթային տեղափոխումների ծավալն աճեց 25 %-ով և կազմեց 77 մլն տոննա⁵⁸: Բնական է, որ նման դիրքորոշումը շահավետ չէր Ռուսաստանին, սակայն պետք է նշել, որ 2004 թ. հետո Ռուսաստանի և Թուրքիայի միջև բարձր մակարդակով տարվող քաղաքական երկխոսության ինտենսիվացումից հետո, նավթի տեղափոխման ուղիների հետ կապված հիմնախնդիրները զգալիորեն սքողվեցին և կողմերը փորձեցին հակակշռել նշված հակասությունները գազային համագործակցության խորացմամբ՝ չնայած, ինչպես վերը նշվեց, գազի ուղղությամբ դա կատարվում էր գերազանցապես ռուսական կողմի զիջումների հաշվին⁵⁹:

«Երկնագույն հոսք» գազամուղի շինարարության ավարտից հետո թուրքական կողմը՝ ի դեմս թուրքական «Բոթաշ» ընկերության, պահանջեց վերանայել գները և զգալիորեն նվազեցնել վառելիքի մատակարարման պլանավորված ծավալները: Ավելին, «Երկնագույն հոսք» նախագծի իրականացման ավարտին Ռուսաս-

⁵⁷ Տե՛ս «Российская газета», 03. 04. 2001.

⁵⁸ Տե՛ս «Профиль» Османское эго, http://www.Turkey.mid.ru/rus_smi/rus_smi12.html, 01. 03. 2004 (сайт Посольства России в Турции).

⁵⁹ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր..., էջ 81:

տանի և Թուրքիայի գազային հարաբերությունները բախվեցին նոր հիմնախնդրի հետ: Թուրքիայի կողմից առաջնային էներգակիրների սպառման ծավալների աճի նախնական հաշվարկները չափից դուրս լավատեսական գտնվեցին: Այսպես, արդեն 1998-2000 թթ., համաձայն Թուրքիայի Պետական վիճակագրական ինստիտուտի տվյալների, առաջնային էներգակիրների սպառման տարեկան աճի միջին տեմպերը նվազեցին 5,4 %-ով, 1994-1997 թթ. 6,8 %-ի փոխարեն⁶⁰:

Ենթադրվում էր, որ «Երկնագույն հոսք» գազամուղով Թուրքիան գազի մատակարարման արդեն առաջին իսկ տարում՝ 2003 թ. «take or pay» (վերցրու կամ վճարիր) սկզբունքով հազար մ³-ը 110 դոլար արժեքով կգնի 4 մլրդ մ³ գազ: Իսկ մինչև 2010 թ. նախատեսվում էր տարեկան ներկրումն ավելացնել 2 մլրդ. մ³, հասցնելով այն մինչև 16 մլրդ մ³-ի: Պայմանագրի գործողության 25 տարիների ընթացքում «Գազպրոմը» նախատեսում էր ստանալ 25 մլրդ դոլար⁶¹:

Անկարան դիմեց Ռուսաստանին՝ գազի սակագնի նվազեցման հարցով, սակայն Թուրքիայի վարչապետ Էրդողանի և Ռուսաստանի նախագահ Մեդվեդևի միջև այդ հարցում փոխզիջում ձեռք բերել չհաջողվեց, քանզի Ռուսաստանի նախագահը շարունակեց պնդել նախկինում գործող “take or pay” սկզբունքի վրա: Սակագնի վերանայման պահանջը թուրքական կողմն առաջադրեց «Հարավային հոսքի» համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո, ընդ որում, թուրքական կողմը ակնարկում էր, որ մերժման դեպքում պետական մակարդակով համաձայնագրի

⁶⁰ Թուրքիա. էներգետիկական և միջազգային տնտեսական կապեր..., էջ 64:

⁶¹ Նույն տեղում, էջ 77:

ժամկետը չի երկարաձգվի և ռուսական գազի գնումներով արդեն զբաղվելու են մասնավոր ընկերությունները⁶²:

Անկարան հասկանում էր, որ «Հարավային հոսքի» գործարկումը Ռուսաստանին հնարավորություն կտար Եվրոպային գազ մատակարարել շրջանցելով Ուկրաինան, որի հետ արդեն իսկ ստեղծվել էին բարդ ու լարված հարաբերություններ⁶³: Թեև «Հարավային հոսք» նախագիծը Արևմուտքի կողմից դիտվում է որպես «Նաբբուկո» խողովակաշարի այլընտրանք, սակայն թուրքական կողմը դրանք չէր համարում մրցակցող նախագծեր և պատրաստակամություն հայտնեց քննարկել այդ նախագծերից յուրաքանչյուրը: Միաժամանակ համաձայնվելով իր տարածքով թե՛ Արևմուտքի և թե՛ Ռուսաստանի էներգետիկ նախագծերի իրականացմանը, Թուրքիան ելնում էր բացառապես սեփական շահերից: Նախ, «Հարավային հոսքի» կամ «Նաբբուկոյի» ձախողման պարագայում մյուս նախագիծը կարող է դառնալ փոխարինող տարբերակ⁶⁴: Բացի այդ, այս կերպ Անկարան փորձում է մրցակցող կողմերից յուրաքանչյուրի առջև բարձրացնել իր դերն ու նշանակությունը⁶⁵: Խողովակաշարերի այս պատերազմից միանշանակ շահեկան դիրքում էր հայտնվելու Թուրքիան, որը ձգտում է վերածվել Եվրոպայի և միջերկրածովյան ավազանի երկրներ էներգակիրների մատակարարման խոշորագույն տրանզիտային հանգույցի, ինչը կհանգեցնի նրա ազդեցության մեծացմանը թե՛ Արևմուտքում և թե՛ Արևելքում: Սակայն Ռուսաստանի հետ համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Թուրքիայի էներգետիկայի

⁶² Տե՛ս Турецкий гамбит, <http://expert.ru/2011/09/30/>

⁶³ Տե՛ս Официальный сайт южного потока, <http://south-stream.info/index.php?id=14>

⁶⁴ Տե՛ս Гонка за трубами, <http://expert.ru/kazakhstan/2009/29/>

⁶⁵ Տե՛ս Геополитические устремления Турции, <http://libsib.ru/geopolitika/geopolitika-v-sovremennom-mire/arabskiy-mir>

նախարար Տ. Յըլդըզը հայտարարեց երեք պայմանների մասին, որոնց կատարումն էր պայմանավորված հնարավոր կլինի գործարկել «Հարավային հոսքը»՝ ռուսական գազի սակագնի իջեցում, «վերցրուկամ վճարի» սկզբունքից հրաժարում և ռուսական գազի վերավաճառքի իրավունք: Ակնհայտ է, որ Ռուսաստանի համար այդ պայմաններից ոչ բոլորն էին ընդունելի⁶⁶:

2003 թ. ապրիլին «Բոթաշը» դադարեցրեց գազի ընդունումը՝ հայտարարելով, որ համաձայն չէ պայմանագրի պայմանների հետ և, վկայակոչելով տնտեսական ճգնաժամը, պահանջեց իջեցնել գազի գինը մինչև 70 դոլար մ³-ի համար, գրեթե երկու անգամ կրճատել մատակարարման ծավալները և նույնիսկ սպառնաց «Գազպրոմի» դեմ հայց ներկայացնել Միջազգային արբիտրաժ: Տևական ու դժվարին բանակցությունների ընթացքում կողմերը հասան համաձայնության: Մասնավորապես «Գազպրոմը» համաձայնվեց վերանայել գնի բանաձևը, միասնականացնել դեպի Թուրքիա գազի մատակարարման գործող պայմանագրերը այնպես, որպեսզի դրանք նկատելի չտարբերվեն եվրոպական երկրների հետ առկա նմանատիպ համաձայնագրերից և դադարեցնել արբիտրաժային քննարկումները⁶⁷:

Այս զիջումը չէր կարելի համարել Անկարայի հաղթանակ, քանի որ ռուսական կողմն այս գինը ֆիքսեց առաջիկա 20 տարիների համար, ինչը գործնականում նշանակում էր, որ Ռուսաստանը թեկուզ մեծ շահույթ չհետապնդելու գնով կասեցրեց իրանական կամ ադրբեջանական գազով թուրքական շուկան գրավելու հավանականությունը⁶⁸: Պետք է նշել, սակայն, որ, ադրբեջանական գազի համեմատաբար փոքր ծավալները Թուրքիային հնարավորություն

⁶⁶ Տե՛ս Пока побеждают турки, <http://expert.ru/expert/2009/30/>

⁶⁷ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր..., էջ 78:

⁶⁸ Տե՛ս "Независимая газета", 31. 07. 2003 г.

չեն տալիս լիարժեքորեն մրցակցել Ռուսաստանի հետ: Եվրոպային մատակարարվելիք գազի չափը նախատեսված էր հասցնել շուրջ 10 մլրդ մ³, այն դեպքում, երբ Ռուսաստանը 2011 թ. Եվրոպային մատակարարել է 150 մլրդ մ³ գազ⁶⁹:

Թուրքիան ավելի ու ավելի համառորեն հայտարարում է էներգակիրների մատակարարման ոլորտում Ռուսաստանից լիարժեք կախվածության անթույլատրելիության մասին: Ձգտելով ազատվել բնական գազի մատակարարման մեկ երկրի մենաշնորհից՝ Թուրքիան էներգակիրների ստացման այլընտրանքային աղբյուրների որոնման նպատակով ակտիվ քայլեր է ձեռնարկում Ադրբեջանի, Թուրքմենստանի, Իրանի, Եգիպտոսի ու Կատարի ուղղությամբ⁷⁰: Մասնավորապես Անկարան ակտիվորեն ներգրավվեց Հայաստանը շրջանցող ինչպես էներգետիկ, այնպես էլ տրանսպորտային հաղորդակցության նախագծերում, որոնք ունենին ընդգծված հակառուսական ուղղվածություն: Խոսքը Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի մասին է, որոնցով ադրբեջանական էներգակիրները Վրաստանի ու Թուրքիայի տարածքով տեղափոխվելու էին Եվրոպա՝ այլընտրանք դառնալով ռուսական էներգակիրներին: Ռուսաստանը միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի գործարկումով տարեկան մոտ 200 մլն դոլարի վնաս է կրում⁷¹: Պետք է նշել, որ այս նավթամուղի շահութաբերությունն այդքան էլ բարձր չէ, քանզի օրական մղվում է 1,2 մլն բարել նավթ՝ խողովակաշարի օրական

⁶⁹ Արշակյան Գ., Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

⁷⁰ Եթե 2002 թ. Թուրքիա գազի ներկրման Ռուսաստանի մասնաբաժինը գերազանցում էր 62 %-ը, ապա նշված երկրներից գազի մատակարարման համաձայնագրերի իրացման հետ մեկտեղ, «Բոթաշ»-ը պլանավորում էր այն պակասեցնել մինչև 43 %-ի:

⁷¹ Տե՛ս <http://www.oilcapital.ru/industry/145015.html>

1,8 մլն բարել հզորության պայմաններում: Այդ իսկ պատճառով թուրքական կողմն առաջ է քաշել հզորությունների ավելացման հարցը՝ ձգտելով այս նախագծին մասնակից դարձնել նաև Ղազախստանին և Թուրքմենստանին: Ներկայումս նշված երկրների մասնակցությունը տվյալ նախագծում անկայուն է և տարեկան կազմում է մոտ 4-5 մլն տոննա նավթ⁷²:

ԱՄՆ ամենասկզբից աջակցում էր Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման նախագծին: Նավթամուղի վերջնակետը Ջեյհանն ընտրելն ամեննին էլ պատահական չէր, քանզի այստեղ ժամանակին կառուցվել էր հսկայական նավթային պահեստարան, որը նախատեսված էր իրաքյան նավթի պահեստավորման և հետագա տեղափոխման համար, սակայն Պարսից ծոցում 1991 թ. սկսված պատերազմից հետո անգործության էր մատնվել: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման նախագծի հիմքում ամեննին էլ տնտեսական շահը չէր, քանզի նավթամուղի կառուցման գինը չափազանց բարձր էր, իսկ եթե հաշվի առնենք խողովակաշարի կառուցման ժամանակ նավթի գների անկումն ու այդ խողովակաշարով տարեկան միայն 60 մլն տոննա նավթի փոխադրման հանգամանքները, ապա դրա շահութաբերությունը իսկապես կասկածի տակ էր⁷³: Շուտով հրապարակվեցին արևմտյան մասնագետների՝ այդ նավթամուղի վերաբերյալ գնահատականները, որոնց համաձայն Ադրբեջանն ի վիճակի չէր այդ ծավալներով երկարաժամկետ նավթ մատակարարել, ուստի հարկավոր կլինի ներգրավել նաև դազախական նավթը, ինչը լրացուցիչ բարդություններ էր առաջացնում: Չնայած այն բանին, որ նավթային

⁷² St' u Сотниченко А., Кавказский треугольник: Турция-Иран-Россия, <http://www.csef.ru/index.php/ru/politica-i-geopolitica/project>

⁷³ Чернявский С.И., Политика США по укреплению своего влияния в Азербайджане, «Независимый Азербайджан: новые ориентиры», т. 2, РИСИ, М., 2000, с. 120.

ընկերությունների մեծամասնության հրաժարվում էր ներդրումներ կատարել այդ խողովակաշարի կառուցման մեջ, ԱՄՆ-ի, Ադրբեյջանի և Թուրքիայի կառավարությունները համոռոեն պնդում էին այդ նախագծի իրագործման վրա: Վաշինգտոնն օգտագործեց իր բոլոր հնարավորությունները նավթային ընկերությունների որոշումը փոխելու նպատակով, նրանց նաև պետական աջակցություն խոստանալով՝ նախագծի շահութաբերությունը ապահովելու համար, բացի այդ քայլեր ձեռնարկվեցին Կասպից ծովի վիճելի հանքերի պատկանելության շուրջ ադրբեյջանա-թուրքմենական վեճը հարթելու, ինչպես նաև Ղազախստանին նախագծին մասնակից դարձնելու ուղղությամբ: ԱՄՆ-ի համար այս հարցում կարևորն այն էր, որ թույլ չտրվի կասպյան նավթի հիմնական ծավալների փոխադրումը Ռուսաստանի տարածքով և այդպիսով թուլանան նրա դիրքերն Անդրկովկասում ու Կենտրոնական Ասիայում: Ինչ վերաբերվում է Թուրքիային, ապա Անկարան, սեփական էներգակիրներ չունենալով, նախ իր տարածքով ադրբեյջանական նավթի տարանցիկության շահավետ պայմաններ էր ստանում, բացի այդ՝ ամրապնդում էր իր ազդեցությունը Ադրբեյջանի նկատմամբ, որը դիտվում էր որպես Կենտրոնական Ասիայի թուրքախոս ժողովուրդների հետ Անկարայի կապող օղակ⁷⁴:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագծին իր մասնակցությունը թուրքական կառավարությունը պաշտոնապես հիմնավորեց նրանով, որ բացասական վերաբերմունք ունի Բոսֆոր և Դարդանեղ նեղուցներով նավթի փոխադրումների նկատմամբ, քանզի դրա հետևանքով նեղուցներում իբր էկոլոգիական ծանր վիճակ էր ստեղծվում: Այս կապակցությամբ 1994 թ. Թուրքիան, խախտելով

⁷⁴ Чернявский С.И., Политика США по укреплению своего влияния в Азербайджане, с. 120-121.

սևծովյան նեղուցներով քաղաքացիական նավերի ազատ նավարկության մասին Մոնտրեի կոնվենցիան, սկսեց հայտարարել, որ նեղուցներով նավթատար նավերի անցման հնարավորությունները հասել են ծայրահեղ մակարդակի և որ ինքը սահմանափակումներ է մտցնելու նավթատար նավերի տոննաժի և քանակության հետ կապված:

Ռուսաստանը սկզբում առաջարկում էր ադրբեջանական նավթի փոխադրման համար օգտագործել Բաքու-Գրոզնի-Նովոռոսիյսկ նավթամուղը, որը պահանջում էր վերանորոգում և ռուսական կողմը պատրաստակամ էր մինչև նավթի մատակարարումը իր միջոցներով նորոգել այն: Սակայն Մոսկվայի առաջարկը մերժվեց և կանգ առան նոր նավթամուղի կառուցման նախագծի վրա:

Բացի Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցմանն աջակցելուց, ԵՄ-ն, ինչպես նաև ԱՄՆ-ը շահագրգռված էին նաև Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման հարցում, որը նույնպես կոչված էր թուլացնել Ռուսաստանի դիրքերը Անդրկովկասում և Եվրոպայում ռուսական գազին այլընտրանք ստեղծել: Թուրքիայի հետաքրքրությունն այս նախագծի նկատմամբ նույնպես բավականին մեծ էր: Մի կողմից, Թուրքիայի գազի պահանջարկի մեծագույն մասը բավարարվում էր ռուսական գազի մատակարարմամբ՝ հիմնականում «Երկնագույն հոսք» գազատարով, սակայն շարունակվող ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում թուրքական կառավարությունը դժվարանում էր վճարումներ կատարել ռուսական գազի նույնիսկ այն ծավալների համար, որոնք նրան մատակարարվում էին պայմանագրի դրույթներից ելնելով: Ուստի՝ թուրքական «Բոթաշ» ընկերությունը ստիպված էր ռուսական կողմին անընդհատ վճարել հսկայական

տուգանքներ, քանզի ռուսական գազն ըստ պայմանագրի մատակարարվում էր «վերցրու կամ վճարիր» սկզբունքով:

Մոսկվան Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղին շարունակում էր հակադրել Բաքու-Նովոռոսիյսկ տարբերակը: Ռուս-թուրքական հակասությունների սրման պայմաններում կասպյան նավթի շուրջ ծավալվող մրցապայքարը վերաճեց «նավթամուղերի պատերազմի», որի ընթացքում երկուստեք գործի դրվեցին ձեռքի տակ եղած ազդեցության բոլոր հնարավոր լծակները: Բաքու-Նովոռոսիյսկ տարբերակով Ռուսաստանը փորձ էր կատարում շրջանցել Թուրքիան, բայց ոչ թուրքական ջրային տարածքը: Անկարան այս պայմաններում վերանայեց նեղուցներով նավագնացության կանոնակարգը՝ 1994 թ. հունվարից սահմանափակելով նավթատարների նավարկությունը: Այս կերպ Անկարան Մոսկվային ստիպում էր հրաժարվել Բաքու-Նովոռոսիյսկ նավթամուղի ծրագրից՝ հասկացնելով, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան տարբերակին այլընտրանք չկա: Սակայն այն ժամանակ, երբ ռուսական և թուրքական պատվիրակությունները բուռն քննարկում էին նեղուցներով նավագնացության նոր կարգը, Քրդական աշխատավորական կուսակցությունը (ՔԱԿ) Թուրքիայի հարավ-արևելքում պայթեցրեց Մոսուլ-Յումուրթալըք նավթամուղը, որն արդեն թվով երրորդ պայթյունն էր, որով Անկարային նախազգուշացնում էին, որ քանի դեռ քրդական հարցը չի լուծվել, բացառվում է կասպյան նավթի տարանցիկ փոխադրումը երկրի արևելյան շրջաններով⁷⁵:

Ինչ վերաբերվում է Ադրբեջանից Թուրքիա մատակարարվող գազի Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարին, ապա այն գործարկվեց 2007 թ. մարտից, որով գազ էր մատակարարվում ոչ

⁷⁵ Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, էջ 57:

միայն Թուրքիային, այլև Վրաստանին, ինչը փրկություն էր վերջինիս համար, քանզի Ռուսաստանի հետ հարաբերությունների լարվածության պատճառով Մոսկվան այդ ձևոսանն արդեն դադարեցրել էր Վրաստանի գազամատակարարումը⁷⁶: Հեռանկարում նախատեսվում էր Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղով ապահովել ադրբեջանական գազի մատակարարումը դեպի Եվրոպա⁷⁷:

Այս գազամուղի հզորությունը կազմում է 8 մլրդ մ³, մինչդեռ 2011 թ. Ադրբեջանն այդ խողովակաշարով արտահանել է միայն 5 մլրդ մ³ գազ⁷⁸: Ինչպես տեսնում ենք, երկու խողովակաշարերն էլ գործում են իրենց հզորություններից զգալիորեն պակաս թողունակությամբ, ինչի շտկման հաշվին Անկարան փորձում է հասնել Ռուսաստանից էներգետիկ կախվածության նվազման:

Թուրքիայի էներգետիկայի նախարար Յըլդըզը հայտարարեց, որ իր երկիրը Ռուսաստանի հետ գազային համաձայնագրի ժամկետը լրանալուց հետո չի երկարաձգի դրա ժամկետը: Անկարան, թերևս, չէր հրաժարվում ամբողջ ռուսական գազից, այլ դադարեցնում է միայն Տրանսբալկանյան ուղիով ստացվող ռուսական գազի գնումները՝ շարունակելով վճարել «Երկնագույն հոսքով» ստացվող գազի դիմաց: Ստեղծված իրավիճակում «Գազպրոմը» նույնիսկ գնաց տուգանքների շեմի նվազեցման, որոնք կիրառվում էին սպառողների նկատմամբ գազի ոչ ամբողջական ընտրության դեպքում: Դա նշանակում է, որ գազի որոշակի ծավալի դիմաց սպառողը պարտադիր պետք է վճարվի, եթե այնգամ այդ ծավալը

⁷⁶ Айдын М., Турецкая политика в отношении Кавказа в 2007 г., с. 186.

⁷⁷ St' u Iseri E., Geopolitics of Oil and Pipelines in the Eurasian Heartland, "The Politics of Oil", ed. Gokay B., London: Routledge, 2006.

⁷⁸ St' u <http://www.oilcapital.ru/industry/145015.html>

չի օգտագործվել: Այնուամենայնիվ, Թուրքիան հրաժարվեց ռուսական գազի ներմուծման ծավալների մոտ 1/3-ից⁷⁹:

Թուրքիան համաձայնվեց մասնակցություն ունենալ նաև Ռուսաստանի ռազմավարական շահերի դեմ ուղղված «Նաբուկո» էներգետիկ ծրագրին: Մակայն այս ամենով հանդերձ Թուրքիային դեռևս չի հաջողվել հաղթահարել ռուսական էներգակիրներից կախվածությունը: Անկարան շարունակում է Ռուսաստանից ներմուծել սպառվող գազի կեսից ավելին և նավթի շուրջ քառորդը⁸⁰:

Պետք է նշել, սակայն, որ ռուսական «Երկնագույն հոսք» գազամուղի լրիվ հզորությունները նույնպես չեն օգտագործվում և իրական մատակարարումներն էապես ավելի ցածր են, քան նախատեսված է եղել 1997 թ. ռուս-թուրքական համաձայնագրով: Մասնավորապես նախատեսված էր, որ 2005 թ. գազի մատակարարումները պետք է կազմեին 12 մլրդ մ³, սակայն մատակարարվել է ընդամենը 10 մլրդ մ³⁸¹:

Այսպիսով, Թուրքիան ձգտում է իր տարածքը դարձնել գազամուղերի ու նավթամուղերի բաշխիչ հանգույց, այդ թվում՝ Ռուսաստանից դեպի Եվրոպա և այլ տարածաշրջաններ ուղղվող խողովակաշարերի հաշվին, ինչը կարող է Անկարայից կախվածության մեջ դնել նաև Մոսկվային: Այդ իսկ պատճառով Ռուսաստանը միշտ որոշակի վերապահումով է վերաբերվել Թուրքիայի էներգետիկ ոլորտում համագործակցության որոշ առաջարկներին:

Անկարան ակտիվորեն մասնակցում է նաև Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Չարս երկաթգծի կառուցման նախագծին, որը

⁷⁹ St' u Турция вступила в "антигазпромовский фронт": обзор турецких СМИ, www.regnum.ru/news/polit/1451922.html

⁸⁰ St' u Давудоглу А., Внешняя политика Турции и Россия, "Россия в глобальной политике", N 1, М., 2010.

⁸¹ St' u Гонка за трубами, <http://expert.ru/kazakhstan/2009/29/>

շրջանցում է Հայաստանը և որոշակիորեն ուղղված է Ռուսաստանի տնտեսական շահերի դեմ: 2005 թ. մայիսի 25-ին Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի ղեկավարները Բաքվում ստորագրեցին Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցման եռակողմ հռչակագիրը⁸², իսկ 2007 թ. փետրվարի 7-ին Թբիլիսիում ազդարարվեց 600 մլն դոլար արժողությամբ այդ նախագծի շինարարության մեկնարկը, որով նախատեսվում է ապահովել տարեկան մինչև 10 մլն տոննա ծավալով բեռնափոխադրումներ, որը հետագայում կարող է հասցվել մինչև 25 մլն տոննայի⁸³: Թուրքիայի միջոցով Անդրկովկասը Եվրոպային միացնող այս նախագիծը նախատեսվում է գործարկել այն բանից հետո, երբ Բոսֆորի նեղուցի տակ կկառուցվի Մարմարայի ստորջրյա երկաթուղային թունելը, որն այս երկաթգիծը կմիացնի համաեվրոպական երկաթգծերի ցանցին:

Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից հետո, ստեղծված իրավիճակից օգտվելով, թուրքական կողմն իր տարածքով ռուսական գազի նոր խողովակաշար կառուցելու համաձայնության դիմաց կրկին բարձրացրեց գազի գնի իջեցման հարցը: Այն բանից հետո, երբ 2014 թ. դեկտեմբերի 1-ին Անկարա կատարած պետական այցի ժամանակ Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինը հայտարարեց Թուրքիա մատակարարվող գազի սակագինը 6 %-ով իջեցնելու մասին, Անկարան պահանջեց գինը իջեցնել 15 %-ով, ինչն անընդունելի էր ռուսական կողմի համար: Փաստորեն, Անկարան ձգտում էր հնարավոր նվազագույն գնով ձեռք բերել ռուսական գազը՝ Եվրոպային այն առավելագույն թանկ գնով վերավաճառելու նպատա-

⁸² Айдын М., Турецкая политика в отношении Кавказа в 2007 г., с. 185.

⁸³ Տե՛ս Հարությունյան Ս., Տարածաշրջանային նոր գործոն Անդրկովկասում. առնչություններ Հայաստանի ազգային անվտանգությանը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=520:

կով: Թուրքական կողմի նման ձգտումները Ռուսաստանի համար անընդունելի են⁸⁴: Գազի գնի շուրջ անհամաձայնության պատճառով նոր գազատարի՝ «Երկնագույն հոսք 2»-ի կառուցման ու գործարկման նախագիծն առայժմ սառեցված է⁸⁵: Լուրջ խնդիրներ կան նաև մյուս ծրագրերի իրագործման հարցում: Ռուսաստանը համաձայնվել էր Թուրքիայում կառուցել 25 մլրդ դոլար արժողությամբ «Ակույու» ատոմակայանը, ինչի դեպքում Անկարան Ռուսաստանից կախվածության մեջ կնկներ նաև ատոմային էներգիայի ոլորտում⁸⁶: Ինչպես ատոմակայանի, այնպես էլ Սամսուն-Ջեյհան նավթամուղի կառուցման գործում, որով նախատեսվում էր ռուսական նավթը նավերով հասցնել Սամսուն, որտեղից էլ այն խողովակաշարով մղվելու էր Ջեյհան՝ ելք ստանալով Միջերկրական ծով, մինչ այժմ էական տեղաշարժ չի կատարվել⁸⁷:

Այսպիսով, Թուրքիայի կողմից Ռուսաստանի նկատմամբ իրականացվող Արևմուտքի պատժամիջոցներին չմիանալը, Եվրասիական տնտեսական միությանը միանալու, Շանհայան համագործակցության կազմակերպությունում հավասար գործընկերոջ կարգավիճակով մասնակցելու մտադրությունների մասին հայտարարելը, ինչպես նաև Ռուսաստանի հետ նոր գազային պայմանագիր կնքելը պետք է դիտարկել ոչ թե որպես բազմակերպորարտաքին քաղաքականության դրսևորում, այլ որպես Բրյուսելի վրա ճնշում գործադրելու միջոց՝ Եվրամիությանն անդամակցելու բանակցություններն արագացնելու նպատակով: Ասվածի ապա-

⁸⁴ Տե՛ս Турция торгуется за российский газ, <http://expert.ru/2015/01/26/>

⁸⁵ Տե՛ս Становая Т., Несговорчивая Турция, <http://www.politcom.ru/18676.html>

⁸⁶ Տե՛ս Визит Эрдогана в Россию,

http://www.inosmi.ru/politikaakademisi_org/20131127/215179043.htm

⁸⁷ Տե՛ս Торосян Т., Возвращение Турции, “Россия в глобальной политике”, 2009, июль, август, № 4, <http://www.globalaffairs.ru/numbers/39/12361.html>

ցույցն է Դավութօղլուի հայտարարությունը Դավոսում Ռուսաստանի հետ «Երկնագույն հոսք-2» գազամուղի կառուցման վերաբերյալ: Նա հայտարարեց, որ Անկարան դեռևս վերջնական «այո» չի ասել այդ նախագծին և երբ Թուրքիան ընդունի Ռուսաստանի առաջարկը, այդ մասին պաշտոնապես կհայտարարվի⁸⁸:

Ի տարբերություն տնտեսական և էներգետիկ ոլորտներում նկատվող հակասությունների, ռուս-թուրքական քաղաքական հարաբերություններում տարաձայնություններն ու շահերի բախումներն ավելի լուրջ բնույթ ունեն և խորանալու միտումներ են դրսևորում:

Նախևառաջ կողմերի միջև առկա է պատմական անցյալով պայմանավորված փոխադարձ կասկածամտություն և անվստահություն⁸⁹: Դա պայմավորված էր ԽՍՀՄ-ի և հետագայում նաև Ռուսաստանի հիմնավոր մտավախություններով, թե Թուրքիան կփորձի ԽՍՀՄ փլուզումն օգտագործել հետխորհրդային տարածքում իր դիրքերը հաստատելու և ամրապնդելու նպատակով, ինչն անընդունելի էր Ռուսաստանի համար: Ընդ որում, խոսքը ոչ միայն նախկին խորհրդային հանրապետությունների, այլ նաև Ռուսաստանի թուրքալեզու հանրապետությունների և Թուրքիայի միջև կապերի զարգացման մասին էր:

Այս լույսի տակ պետք է դիտարկել 1991 թ. մարտի 5-ին Մոսկվայում Թուրքիայի և ԽՍՀՄ-ի նախագահներ Թ. Օզալի և Ս. Գորբաչովի կողմից ստորագրված «Թուրքիայի և Խորհրդային Միության միջև բարեկամության ու համագործակցության մասին պայմանագիրը», որով երաշխավորում էր, որ «Թուրքիան իր

⁸⁸ Տե՛ս Կարասով Ս., Турция между Россией и Евросоюзом: кто выиграет «партию»? , <http://www.regnum.ru/news/polit/1888192.html#ixzz3TDJvfZCg>

⁸⁹ Տե՛ս Կավրիլևա Ն., Россия, Турция и Черное море, <http://www.kr-eho.info/index.php?name=News&op=article&sid=9036>

շահերի համար չի օգտագործի ԽՍՀՄ-ում տեղի ունեցող փոփոխությունները»: 16-րդ և 17-րդ հոդվածները նախատեսում էին Թուրքիայի կապերի ընդլայնում ԽՍՀՄ-ի դաշնային հանրապետությունների հետ, որոնց թվում էին «Ղազախստանը, Ղրղըզստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը և Ադրբեջանը»: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ 1992 թ. մայիսի 25-ին, ստորագրվեց նոր համաձայնագիր՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների հիմունքների մասին⁹⁰: Չնայած ձեռք բերված պայմանավորվածություններին, Անկարան ակտիվ գործունեություն ծավալեց հետխորհրդային տարածքի թյուրքախոս ժողովուրդների շրջանում՝ իր դիրքերն ու ազդեցությունը հաստատելու նպատակով⁹¹:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան սկսեց ակտիվություն դրսևորել Կենտրոնական Ասիայի երկրներում՝ ձգտելով սերտացնել հարաբերությունները նրանց հետ: Թուրքիայի աշխարհագրական դիրքը նպաստավոր է այն առումով, որ որպես մահմեդական երկիր նա փորձի Արևմուտքի և Արևելքի միջև վերածվել կայուն կամրջի, այսինքն՝ ստանձնել այն դերակատարությունը, ինչին միջոց ձգտել է Ռուսաստանը⁹²: ԱՄՆ-ի օրհնությամբ Թուրքիան առաջադրվեց իբրև տնտեսական և քաղաքական մոդել նախկին ԽՍՀՄ-ի թյուրքալեզու հանրապետություններին, թյուրքական գործոնը դարձավ Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը թուլացնելու միջոց⁹³: Սկզբնական շրջանում Անկարային հաջողվեց հասնել որոշ նախնական հաջողությունների: 1991 թ. Թուրքիան առաջիններից

⁹⁰ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր..., էջ 53–54:

⁹¹ История Турции XX век / Н.Г. Киреев, М., 2007, с. 352.

⁹² Sté u Становая Т., Россия: турецкое и иранское направления внешней политики, <http://www.politcom.ru/10270.html>

⁹³ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր..., էջ 69:

մեկը ճանաչեց Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների անկախությունը՝ հույս ունենալով այդ տարածաշրջաններում զբաղեցնել Ռուսաստանի տեղը: Բազմաթիվ պանթուրանական կազմակերպություններ իրենց մասնաճյուղերը բացեցին Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայի երկրներում: Թուրքիան Կենտրոնական Ասիայի երկրներում կատարեց նաև որոշակի ֆինանսական ներդրումներ, հիմնեց թուրքական բանկերի մասնաճյուղեր, թուրքական տարբեր կազմակերպություններ ու ընկերություններ ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել տարածաշրջանի երկրներում: Այս ամենի արդյունքում 1990-ականների սկզբին Թուրքիան, բացի Տաջիկստանից, Կենտրոնական Ասիայի երկրներում ունեցավ որոշակի առևտրատնտեսական ձեռքբերումներ: Սակայն 1993 թ. վերջերից Ռուսաստանը սկսեց վերականգնել դիրքերն իր համար կենսական նշանակության տարածքներում՝ Կենտրոնական Ասիայում և Անդրկովկասում⁹⁴:

Ադրբեջանի անկախությունից հետո Թուրքիան բազմիցս քաղաքական, բարոյական և ռազմական աջակցություն է ցուցաբերել Բաքվին: Երկու երկրներում էլ պաշտոնապես ընդունված է «մեկ ժողովուրդ՝ երկու պետություն» հայեցակարգը⁹⁵: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծուման գործում Թուրքիան մշտապես աջակցություն էր ցուցաբերում Ադրբեջանին: 1992 թ. Հայաստանի սահմանի մերձակայքում տեղակայվեց թուրքական 3-րդ բանակը, որը զինված էր ավելի քան 1500 տանկերով, շուրջ 2500 թնդանոթներով ու ականանետերով և ավելի քան 1100 զրահամեքենաներով: Այդ ցամաքային ուժերին օժանդակություն էր

⁹⁴ Ст'у Геополитические устремления Турции,

<http://libsib.ru/geopolitika/geopolitika-v-sovremennom-mire/arabskiy-mir>

⁹⁵ Ст'у Маркедонов С., Азербайджан – Турция: братство без фанатизма, <http://www.politcom.ru/10595.html>

ցուցաբերում 2-րդ տակտիկական ավիացիոն հրամանատարությունը, որի տրամադրության տակ կային մինչև 270 ռազմական ինքնաթիռներ: Ղարաբաղյան հակամարտությանը Թուրքիայի մասնակցության մոլի կողմնակից էր Ժողովրդավարական կուսակցության առաջնորդ Բ.Էջնիթը, որը 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածում իրականացրել էր թուրքական ուժերի ավիանունը: Էջնիթն առաջարկում էր առաջին հերթին թուրքական զորքերը մտցնել Նախիջևան, ինչը, սակայն, կնշանակեր խախտել 1921 թ. Կարսի պայմանագրի դրույթները: Ուստի առավելագույնը, ինչին պատրաստ էր Անկարան, դա Նախիջևանի քարտի խաղարկումն էր, Մոսկվային սպառնալով, որ եթե նա իր զորքերը մտցնի Ղարաբաղ, ապա Թուրքիան նույնը կանի Նախիջևանում: 1992 թ. մայիսի 20-ին ԱՊՀ զինված ուժերի գերագույն հրամանատար ավիացիայի մարշալ Ե.Շապոշնիկովը զգուշացրեց թուրքական կողմին, որ Անկարայի կողմից նման քայլերի դեպքում բոլորը կարող են հայտնվել Երրորդ համաշխարհային պատերազմի եզրին⁹⁶: Սրանից հետո Անկարան 1993 թ. փակեց հայ-թուրքական սահմանը, իսկ 1996 թ. պարբերաբար Ադրբեջան էին գործուղվում թուրք ռազմական խորհրդականներ, միաժամանակ ադրբեջանցի զինվորականները վերապատրաստում էին անցնում Թուրքիայում: Մոսկվան էլ, իր հերթին, ամեն կերպ ընդգծում էր Հայաստանի հետ իր հարաբերությունների ռազմավարական բնույթը⁹⁷: Անդրկովկասում Ռուսաստանի և Թուրքիայի ռազմաքաղաքական հավասարակշռման քայլերը շարունակվեցին նաև հետագայում: 2010 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվում Էրդոդանի ու Ալիևի միջև ստորագրվեց «Ռազմավարական համագործակցության և փոխօգնության

⁹⁶ St' u Tarasov C., Что значат для Эрдогана восточные границы Турции?, <http://www.regnum.ru/news/polit/1906534.html#ixzz3V0sP4i9S>

⁹⁷ St' u Маркедонов С., Турция уходит к России, <http://www.politcom.ru/3561.html>

մասին» պայմանագիր, որի համաձայն երկու երկրների միջև պետք է ստեղծվեր բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհուրդ՝ այդպիսով հիմք դնելով երկու թուրքական պետությունների ռազմաքաղաքական դաշինքին⁹⁸: Թուրքիայի պաշտպանության նախարար Յըլմազը կարևորեց Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստորագրված այդ պայմանագիրը՝ նշելով, որ Թուրքիան ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում կշարունակի Ադրբեջանին տրամադրել ռազմական օգնություն, կիրականացնի կադրերի վերապատրաստում և կցուցաբերի ցանկացած այլ օժանդակություն⁹⁹: Թուրք-ադրբեջանական այդ գործակցությունը հակակշռելու նպատակով Ռուսաստանի ու Հայաստանի միջև ստորագրվեց նոր համաձայնագիր, որով հայ-թուրքական սահմանին տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանը 25 տարով տեղակայելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգվեց 49 տարով և փոփոխություններ մտցվեցին ռազմակայանի կարգավիճակի և ֆունցիոնալ ծանրաբեռնվածության հետ կապված¹⁰⁰:

Արխագական ազգային շարժման հենց սկզբից Անկարան հատուկ համակրանք ուներ Սուխումիի նկատմամբ: 1991 թ. Արխագիայի նախագահ Արձինբան առաջին անգամ ժամանեց Թուրքիա և ընդունելության արժանացավ ընդդիմադիր ազդեցիկ քաղաքական գործիչների մեծամասնության կողմից: Ընդհուպ մինչև 1995 թ. Անկարան ոչ պաշտոնապես աջակցում էր արխագ-

⁹⁸ Տե՛ս Մարկեդոնով Ս., Азербайджан – Турция: братство без фанатизма, <http://www.politcom.ru/10595.html>

⁹⁹ Տե՛ս Турция обещает Азербайджану военную помощь, www.regnum.ru/news/fd-abroad/azeri/1455441.html

¹⁰⁰ Տե՛ս Агаджанян М., Россия - Турция: диалектика партнёрства, <http://newsland.com/news/detail/id/1286370/>

ներին, ինչը պայմանավորված էր թե՛ Անդրկովկասի նկատմամբ նրա հեռահար ծրագրերով և թե՛ Թուրքիայում բնակվող մեծաքանակ աբխազական համայնքով, որոնք բնակվում են երկրի տարբեր նահանգների ավելի քան 200 գյուղերում: Որոշ գնահատականներով, Թուրքիայում ավելի շատ աբխազներ են բնակվում, քան միջազգային հանրության կողմից չճանաչված Աբխազիայի Հանրապետությունում¹⁰¹: Մակայն Վրաստանի միջոցով էներգակիրների փոխադրումն իր տարածք, ինչպես նաև այդ երկրի վրայով հյուսիսկովկասյան անջատողականներին ցուցաբերվող գաղտնի օժանդակության հանգամանքները Անկարային հարկադրեցին Աբխազիայի հետ հարաբերություններում որոշակի հեռավորություն պահպանել: Հետագայում Անկարան ձգտում էր «աջարական սցենարը» կիրառել նաև ռուսական ազդեցության գոտի համարվող Աբխազիայում՝ ընդլայնելով իր տնտեսական ազդեցությունը այդ տարածքում, որպեսզի նրա տնտեսությունը այն աստիճան կախված լինի թուրքականից, որ Աբխազիայում ռուսական ազդեցությունը ձևական դառնա:

Թվում էր, թե 2008 թ. օգոստոսյան պատերազմով Ռուսաստանը վերջնականապես կանխեց Թուրքիայի նկրտումները Աբխազիայի հարցում, սակայն դրանից հետո էլ Անկարայի հետաքրքրությունն այս հարցում չմարեց: «Հնգօրյա պատերազմից» և Ռուսաստանի կողմից Աբխազիայի անկախության ճանաչումից հետո Թուրքիայի և Աբխազիայի կողմից երկուստեք հարաբերությունների աշխուժացման քայլեր էին ձեռնարկվում: 2009 թ. սեպտեմբերի 10-ին Թուրքիայի փոխարտգործնախարարն այցելեց Սուխումի և հանդիպեց Աբխազիայի արտգործնախարար Ս.Շամ-

¹⁰¹ Տե՛ս Սեխոմով Մ., Российско-турецкое партнерство: проверка Абхазией, <http://www.politcom.ru/3184.html>

բայի հետ, ընդ որում, թուրքական կողմը Թբիլիսիին տեղեկացրել էր այդ այցելության մասին: 2011 թ. ապրիլի 7-ին էլ մեկնարկեց մասնակի ճանաչված Աբխազիայի Հանրապետության նախագահ Ս. Բաղապշի այցը Թուրքիա: Բնական է, որ այդ այցելությունը պաշտոնական չէր, քանզի Անկարան ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Բաղապշը Թուրքիա ժամանեց ոչ թե նախագահի կամ կառավարության հրավերով, այլ որպես Թուրքիայում գործող Աբխազական ընկերակցությունների դաշնության և Կովկասյան ընկերակցությունների դաշնության հյուր: Ի տարբերություն Աբխազիայի առաջին նախագահ Արձինբայի, Բաղապշը մինչև 2011 թ. Թուրքիա չէր այցելել: Անշուշտ, Աբխազիան շահագրգռված է, բացի Ռուսաստանից, այլ երկրների հետ նույնպես հարաբերություններ հաստատելու հարցում, այդ կերպ ձգտելով հասնել միջազգային ճանաչման, իսկ Մոսկվան էլ, իր հերթին, թերևս, վերահսկում է իր կրտսեր դաշնակցի գործողությունները: Ինչ վերաբերվում է Թուրքիային, ապա նրա կատարած քայլերը վկայում են այն մասին, որ Անկարան չի հրաժարվել Աբխազիայում իր ազդեցությունը հաստատելու մտադրությունից¹⁰²:

Թուրքիան մշտապես փորձել է օգտագործել նաև Ղրիմի թաթարների գործոնը թերակղզում իր դիրքերն ամրապնդելու նպատակով՝ ձգտելով թուլացնել այնտեղ Ռուսաստանի ռազմական ու քաղաքական ներկայությունը¹⁰³: ԽՍՀՄ փլուզումից հետո Անկարան սկսեց ստեղծել Ղրիմի թաթարների թուրքամետ հասարակական կազմակերպություններ: Ուկրաինան Անկարային որևէ կերպ չէր խոչընդոտում Ղրիմի թաթարների հետ սերտ հարա-

¹⁰² Տե՛ս Маркедонов С., Абхазия на турецком направлении, <http://www.politcom.ru/11728.html>

¹⁰³ Տե՛ս Россия и Турция: Партнерство или противостояние?, <http://www.russ.ru>

բերություններ հաստատելու գործում: Երկու երկրների միջև պայմանավորվածություններ էին ձեռք բերվել Ղրիմում Թուրքիայի նախապատվության հարցում, և Կիևը դրանում իր համար սպառնալիք չէր տեսնում: Երկու տասնամյակների ընթացքում Անկարան հետևողական քայլեր էր կատարում թերակղզին իր ազդեցության գոտու մեջ մտցնելու ուղղությամբ: Թուրքական հիմնադրամներն ու կրոնական կազմակերպությունները բավական ազատ էին իրենց զգում թերակղզում, նրանց միջոցով ֆինանսավորվում էր թուրքամետ հասարակական կազմակերպությունների գործունեությունը, աջակցություն էր ցուցաբերվում Թուրքիայում Ղրիմի թաթարների վերաբնակեցմանը և այլն¹⁰⁴:

Ուկրաինական ճգնաժամի ժամանակ թուրքական այս նկրտումներն ավելի ցայտուն դրսևորումներ ունեցան, երբ Ղրիմի Ռուսաստանին միանալու գործընթացի ժամանակ Անկարան անընդհատ բարձրացնում էր Ղրիմի թաթարների իրավունքների պաշտպանության հարցը: Ղրիմի բնակչության հանրաքվեից հետո Ռուսաստանը պաշտոնապես հայտարարեց Ղրիմի բոլոր ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու իր պատրաստակամության մասին: Սակայն անգամ դրանից հետո թուրք որոշ քաղաքական գործիչներ ակտիվորեն առաջ էին քաշում այդ քայլի անօրինական լինելու գաղափարը, Ռուսաստանին մեղադրում ագրեսիա իրականացնելու և Ղրիմի թաթարների իրավունքները ոտնահարելու մեջ:

Ղրիմի թաթարների առավել թրքամետ գործիչները հանրաքվեից հետո մեկնեցին Թուրքիա, որտեղ մասնակցում էին հակառուսական ցույցերին և զանազան, այդ թվում կառավարական

¹⁰⁴ Ст' u Український кризис и интересы Турции в Крыму, <http://www.foreignpolicy.ru/analyses/ukrainskiy-krizis-i-interesy-turtsii-v-krymu/>

պարզևների արժանանում: Ընդհանուր առմամբ, Ղրիմի հետ կապված թուրքական ՋԼՄ-ներում հակառուսական քարոզչությունն աստճանաբար հանդարտվեց, սակայն ցանկացած պահի այն կարող էր վերսկսվել:

Այս հարցի մասին կրկին հիշեցին Վ.Պուտինի Թուրքիա կատարելիք այցից առաջ: Ղրիմի թաթարների թրքամետ գործիչներին մեկը՝ Մ. Ջեմիլը 2014 թ. նոյեմբերի 25-ին հրավիրվեց Էրդոդանի մոտ, իսկ Պուտինի Անկարայում գտնվելու ժամանակ քաղաքում Ղրիմի թաթարների ցույցեր էին անցնում «Զավթիչ Ռուսաստան հեռացիր Ղրիմից» կարգախոսով: Պաշտոնական Անկարան հրապարակայնորեն չի քննադատում Ղրիմի վերամիավորումը Ռուսաստանին, սակայն ակնհայտ է, որ Թուրքիան չի պատրաստվում հրաժարվել թերակղզում իր դիրքերի ուժեղացման քաղաքականությունից՝ այդ գործում ներգրավելով այնտեղ բնակվող թաթար բնակչությանը¹⁰⁵:

Թուրքիան, փաստորեն, չէր տիրապետում բավարար տնտեսական ռեսուրսների ու քաղաքական միջոցների, որպեսզի կարողանար այդ տարածաշրջաններում մրցակցել Ռուսաստանի հետ, իսկ Արևմուտքն էլ սկսեց Թուրքիային մեղադրել նշված տարածաշրջաններում իրեն տրամադրած դերի տապալման մեջ¹⁰⁶:

Թուրքիան փորձեց ամրապնդել իր քաղաքական ու տնտեսական դիրքերը նաև Սևծովյան ավազանում և 1990-ական թթ. նախաձեռնեց Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության ստեղծումը, որում Անկարան ձգտում էր տարածաշրջանային առաջնորդի դեր ստանձնել, թեև դա նրան այդքան էլ

¹⁰⁵ Տե՛ս Нужен всем берег турецкий, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

¹⁰⁶ Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, , էջ 54:

չէր հաջողվում¹⁰⁷: Գիտակցելով նշված տարածաշրջաններում իր հավակնոտ ծրագրերի տապալումը՝ 1994 թ. Անկարան այդ տարածաշրջաններում սկսեց ավելի շրջահայաց քաղաքականություն վարել, գիտակցելով Ռուսաստանի հետ արձակատման գնալու վտանգները, ձգտելով Մոսկվայի հետ հարաբերությունները կառուցել առևտրային և էներգետիկ ոլորտներում համագործակցության վրա¹⁰⁸:

Սեփական պարտությունը գիտակցելով հանդերձ՝ Անկարան չէր հրաժարվում նշված տարածաշրջաններում իր ազդեցությունը տարածելու մտադրությունից: Այս ուղղությամբ Թուրքիայի նոր արտաքին քաղաքականությունը ձևավորվեց Ա.Դավութօղլուի «ռազմավարական խորքի» տեսության հիման վրա, որի համաձայն Թուրքիան Սևծովյան ավազանում և Կենտրոնական Ասիայում պետք է ձեռք բերեր տարածաշրջանային տերության կարգավիճակ: Եվրասիայում Թուրքիայի դիրքերի ամրապնդումը, Թուրքիայի նախկին նախագահ Ս.Դեմիրելի կարծիքով, Արևմուտքի հետ հարաբերություններում կնպաստեր Անկարայի ավելի անկախ ու կոշտ դիրքորոշման ձևավորմանը¹⁰⁹:

Ռուսաստանին շատ չգրգռելու համար Անկարան իր հին նեոպանթուրանական ծրագրերը փորձում է մատուցել եվրասիական գաղափարների փաթեթավորմամբ՝ ձգտելով ընդհանրություններ գտնել Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որոնք կարող են համագործակցել եվրասիական տարածքներում և միասին վճռեն

¹⁰⁷ Տե՛ս Россия и Турция: Партнерство или противостояние?, <http://www.russ.ru>

¹⁰⁸ Айдын М., Турецкая политика в отношении Кавказа в 2007 г., Кавказ – 2007, Ежегодник Института Кавказа, Ер., 2009, с. 180-181.

¹⁰⁹ Տե՛ս Быкова О., Симпозиум в Анкаре: Турция обращает свои взгляды к Евразии, <http://www.geopolitica.ru/Articles/917>

բոլոր հարցերը¹¹⁰: Պետք է նշել, սակայն, որ եվրասիականության ընկալումները Ռուսաստանում և Թուրքիայում բացարձակապես տարբեր են: Թուրքիայում եվրասիականության հայեցակարգի տակ գլխավորապես հասկացվում է պանթուրքիզմը կամ նեոսումանականությունը, իսկ Ռուսաստանում առկա է դրա այն ընկալումը, որ եվրասիական տարածաշրջանում պետք է հաստատվի Ռուսաստանի՝ որպես եվրասիական տերության, գերակա դերը¹¹¹: Այսպիսով, երկու երկրներում եվրասիականության ընկալումներն ուղղակի հակադրվում են, ուստի այդ գաղափարի շուրջ երկու երկրների համախմբումն ուղղակի բացառվում է:

Այս ամենով հանդերձ, Անկարան տարբեր ձևաչափերով անընդհատ նախաձեռնում էր հետխորհրդային թուրքախոս հանրապետությունների ներկայացուցիչների հավաքներ: Թուրքերը հանդես էին գալիս թուրքական պետությունների խորհրդի, տնտեսական խորհրդի, միասնական այբուբենի և թուրքական աշխարհի գիտությունների ակադեմիայի ստեղծման գաղափարներով: Հավանաբար Անկարան չէր կասկածում թուրք ժողովուրդների «ավագ եղբոր» կարգավիճակում Մոսկվային փոխարինելու իր կարողություններում: Թուրքական ՁԼՄ-ների էջերում հետևողականորեն առաջ էր մղվում այն միտքը, որ թուրքական աշխարհի միասնությունը վերականգնելու պատմական պահ է հասունացել¹¹²: «Ուզբեկ», «դրդզ», «թաթար» և այլ էթնիկ պատկանելության նշման համար սկսվեցին կիրառվել «ուզբեկական թուրք», «դրդզական թուրք», «Ղրիմի թուրք» ձևակերպումները: Շրջանառության մեջ մտավ «արտաքին թուրքեր» ձևակերպումը, որի տակ

¹¹⁰ Տե՛ս Diyalog Avrasya. Istanbul, 2000, N 1, p. 29.

¹¹¹ Տե՛ս Куда пойдет Турция, <http://expert.ru/2014/12/15/>

¹¹² Տե՛ս Расов С., Пантюркизм живет, но пока не побеждает, <http://www.politcom.ru/6144.html>

հասկացվում էին Թուրքիայի տարածքից դուրս բնակվող բոլոր թյուրքական ժողովուրդները¹¹³: Այս ուղղությամբ Թուրքիայի չափազանց ակտիվությունը չի կարող չմտահոգել Ռուսաստանին, որը մտավախություն ունի, որ Անկարայի այդ քաղաքականությունը կարող է թեկուզ անուղղակիորեն ապակայունացնող ազդեցություն ունենալ Ռուսաստանի թուրքախոս բնակչության վրա: 2002 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով Ռուսաստանի թուրքախոս բնակչությունը կազմում էր մոտ 15 մլն մարդ, ընդ որում, քանակով Ռուսաստանի երկրորդ ազգության՝ թաթարների թիվը գերազանցում էր 5,5 մլն-ը, իսկ մյուս թուրքախոս ժողովուրդների՝ բաշկիրների և չուվաշների թիվը գերազանցում էր 1,6 մլն-ը: Փոքր չէ նաև Հյուսիսային Կովկասի թուրքախոս ժողովուրդների թվաքանակը: Դժվար չէ նկատել, որ թուրքախոս ժողովուրդները կենտրոնացած են Ռուսաստանի այնպիսի կարևոր ռազմավարական շրջաններում, ինչպիսիք են Պոլովոժին, Ուրալը, Կովկասը, Սիբիրը¹¹⁴:

Եթե 1992 թ. Անկարայում հրավիրված թուրքախոս երկրների ղեկավարների առաջին համաժողովում հիմնականում քննարկվում էին հումանիտար-մշակութային հարցեր, ապա 2006 թ. նոյեմբերի 17-ին Անթալիայում կայացած թուրքախոս չորս երկրների (Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքիայի) ղեկավարների 8-րդ համաժողովում առաջարկվեց ստեղծել Թուրքախոս պետությունների խորհրդարանական ասամբլեա: Թուրքախոս վեց երկրներից միայն Ադրբեջանը, Թուրքիան, Ղազախստանն ու Ղրղզստանը ստորագրեցին թուրքախոս երկրների խորհրդարանական ասամբլեա ստեղծելու մասին համաձայնա-

¹¹³ Տե՛ս Кондакчян Р.П., Турция: внутренняя политика и ислам, Ер.,1983.

¹¹⁴ Տե՛ս Маркедонов С., Пантюркизм как мечта, миф и реальность, <http://www.politcom.ru/7654.html>

գիր, որի մասին պաշտոնապես հայտարարվեց Անկարայում հրավիրված առաջին նիստի ժամանակ: Ենթադրվում է, որ Թուրքախոս երկրների խորհրդարանական ասամբլեայի նիստերն անց են կացվելու ոչ պակաս, քան տարին մեկ անգամ և յուրաքանչյուր երկրից ներկայացված են լինելու յոթ պատգամավորներ, իսկ որոշումներն էլ կայացվելու են կոնսենսուսով: Այս միության մեջ չմտան Թուրքմենստանն ու Ուզբեկստանը, որոնք հրաժարվեցին բացատրել իրենց մերժումը: 2008 թ. մարտին անցկացվեց Թուրքախոս երկրների միջխորհրդարանական խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում որոշվեց ստորագրել Խորհրդարանական ասամբլեայի ստեղծման մասին մտադրությունների արձանագրությունը և այդ նույն ժամանակ էլ ի հայտ եկան առկա տարաձայնությունները: Ղազախստանը ցանկանում էր այդ կառույցի ղեկավարումը վերցնել իր ձեռքը: Ղազախստանի նախագահ Ն. Նազարբանև առաջարկեց ստեղծել Թուրքական պետությունների համագործակցության խորհուրդ, որի առաջին խորհրդաժողովը կայացավ Ալմա-Աթիում 2011 թ. հոկտեմբերի 20-21-ին: Սակայն նման հավակնություններ ուներ նաև Թուրքիան: Դա էր պատճառը, որ Ղազախստանը դեմ էր Ասամբլեայի քարտուղարության ստեղծմանը, որը տեղակայվելու էր Թուրքիայում¹¹⁵:

2010 թ. օգոստոսին Բողրումում կայացավ թուրքախոս երկրների արտգործնախարարների հանդիպումը: Գործընկերների առջև էլույթ ունենալով՝ Դավութօղլուն հայտարարեց, որ նույն լեզվով խոսող, նույն կրոնն ու արժեքները դավանող ժողովուրդները պետք է մշակեն և իրականացնեն ընդհանուր և փոխհամաձայնեցված քաղաքականություն: Անկարայի այս առաջարկը պայ-

¹¹⁵ Տե՛ս Расов С., Пантюркизм живет, но пока не побеждает, <http://www.politcom.ru/6144.html>

մանավորված էր նրանով, որ Թուրքիան երկար ժամանակ չի կարողանում դառնալ ԵՄ-ի լիիրավ անդամ: Ըստ էության, Դավութօղլուն նոր բան չէր առաջարկում, այլ կրկնում էր այն, ինչի մասին բազմիցս խոսել էր Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը¹¹⁶:

Անկարայի նեոպանթուրանական նկրտումները չէին սահմանափակվում միայն միջինասիական հանրապետություններով, Այսրկովկասում ու Դրիմով, որոնք համարվում էին Ռուսաստանի կենսական շահերի տարածքներ, այլ տարածվում էին նաև Ռուսաստանի Դաշնության տարածքում, մասնավորապես՝ Թաթարստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր¹¹⁷:

1993 թ. Թուրքիայի վարչապետ Թ. Չիլլերը ցանկություն հայտնեց այցելել Կազան, սակայն Ռուսաստանի ԱԳՆ-ն խորհուրդ տվեց հրաժարվել այդ այցելությունից, քանզի Մոսկվան և Կազանը միմյանց միջև դեռ չէին կարգավորել վերջինիս կարգավիճակի հետ կապված վիճելի հարցերը: Անկարան ոչ պաշտոնական մակարդակով քաջալերում էր թաթար ազգայնական գործիչներին: 2008 թ. դեկտեմբերի 20-ին թաթար ժողովրդի վտարանդիական կառավարության ստեղծումից հետո նրա անդամները հանդիպումներ ունեցան որոշ թուրք պատգամավորների և հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ¹¹⁸: Ռուս-թուրքական երկկողմ հարաբերությունների պատմության ընթացքում առաջին անգամ Թուրքիայի նախագահ Ա.Գյուլը 2009 թ. փետրվարի 12-15-ը պաշտոնական այցով ժամանեց Ռուսաստան: Թուրքիայի նախագահը մեկնեց նաև Թաթարստան, որի նկատմամբ Անկարան

¹¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹¹⁷ Семедов С., Основные аспекты современной политики Турции на Кавказе. /Вестник. М., ун-та. Сер. 18. Социология и политология. 2008, № 2, с. 29–52.

¹¹⁸ Տե՛ս Маркедонов С., Пантюркизм как мечта, миф и реальность, <http://www.politcom.ru/7654.html>

վաղուց հետաքրքրություն էր ցուցաբերում: Թուրքիան ձգտում էր Թաթարստանի հետ զարգացնել նաև առևտրատնտեսական հարաբերություններ: Եթե 2004 թ. Թուրքիայի և Թաթարստանի միջև ապրանքաշրջանառությունը կազմեց մոտ 1 մլրդ դոլար, ապա 2009 թ. դրա ծավալները մոտեցան 3 մլրդ դոլարի: Թուրքիան Թաթարստանի առևտրային գործընկերների շարքում թե՛ ներդրումներով և թե՛ արտաքին առևտրով զբաղեցնում է առաջին տեղը¹¹⁹:

Չէջնական հարցը բավական երկար ժամանակ սրություն էր հաղորդում ռուս-թուրքական հարաբերություններին: Առաջին չէջնական պատերազմի ժամանակ, Թուրքիան ոչ պաշտոնապես ակտիվորեն օժանդակում էր անջատողականներին մատակարարման, տեղեկատվական և տնտեսական հարցերում¹²⁰: Թուրքական իշխանություններին մոտ կանգնած որոշ քաղաքական ուժեր բավական համակրական վերաբերմունք ունեին հյուսիսկովկասյան անջատողականների նկատմամբ: Երկրորդ չէջնական պատերազմի ժամանակ Թուրքիայի քաղաքացիները մեծամասնություն էին կազմում անկախ Իջբերիայի ջոկատներում: Առաջին հերթին դա կապված էր Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան համայնքի առկայությամբ, սակայն հարկավոր է նշել, որ թուրքական կառավարությունը մատների արանքով էր նայում իր տարածքում գործող մարտնչող Չէջնիային օգնություն ցուցաբերող բազմաթիվ հիմնադրամների գործունեությանը՝ գաղտնի հույսեր փայփայելով, որ մի օր Կովկասը կդառնա իր ազդեցության գոտին: Անջատողականների պարտությունը ստիպեց Անկարային համակերպվել այն մտքի հետ, որ այս տարածաշրջանի իր քաղաքականությունում Թուրքիան պետք է համակերպվի Մոսկվայի շահերի

¹¹⁹ Корицкий А., Россия – Турция: 85 лет дипломатическим отношениям, “Азия и Африка сегодня”, 2009, №9, с. 63-67.

¹²⁰ St’u Дугин А., Евразийская стратегия Турции, <http://agni-sophia.org/?p=2196>

հետ¹²¹: 1995 թ. Թուրքիայում իշխանության եկավ իսլամիստական ուղղվածություն ունեցող Էրբաքանի գլխավորած կառավարությունը, որն աջակցում էր չեչեն անջատողականներին ու թեն բանակի ճնշման տակ այդ կառավարությունը շուտով հրաժարական տվեց, այդուհանդերձ թուրքական հասարակության մեջ չեչենների սատարելու տրամադրությունները շարունակվեցին պահպանվել: Թուրքիայում գործում էին չեչեն անջատողականներին աջակցող հյուսիսկովկասյան ժողովուրդների կազմակերպություններ: 1996 թ. թուրքական տարածքում տեղի ունեցավ «Ավրասիա» լաստանավի գրավումը, որին հաջորդեց չեչենների իրավունքների պաշտպանության պահանջների առաջադրումը: 2000 թ. հուլիսին Թուրքիայի թուրքախոս ժողովուրդների հետ կապերի պահպանման հարցերով նախարարը Հյուսիսային Կովկասում Ռուսաստանի գործողությունները համեմատեց հրեաների նկատմամբ Հիտլերի կողմից կատարած գործողությունների հետ: Այս հարցում Անկարան հաշվի էր նստում նաև Թուրքիայի շուրջ 7 միլիոնանոց հյուսիսկովկասյան համայնքի հետ¹²²:

2000 թ. ապրիլի 16-ին ՌԴ գլխավոր դատախազությունը դիմեց Թուրքիայի իշխանություններին չեչեն ծայրահեղականների գաղափարախոսներից մեկին՝ Մ.Ուրուզովին, ձերբակալելու և հանձնելու պահանջով: Վերջինս, հանդիսանալով, այսպես կոչված, «Իչկերիայի ու Դադստանի ժողովուրդների կոնգրեսի» ղեկավարներից մեկը, 2000 թ. մարտի 10-ից հետախուզման մեջ էր: Նա մեղադրվում էր 1999 թ. աշնանը Դադստանի Նովոլաքսկի շրջանի վրա ավազակային զինկազմավորումների հարձակումը կազմակերպելու մեջ: 2000 թ. ապրիլին Ուրուզովի նկատմամբ հայտա-

¹²¹ Տե՛ս Согниченко А., Кавказский треугольник: Турция-Иран-Россия, <http://www.csef.ru/index.php/ru/politica-i-geopolitica/project>

¹²² Տե՛ս Маркедонов С., Турция уходит к России, <http://www.politcom.ru/3561.html>

րարվեց միջազգային հետախուզում: Որոշ տվյալներով, Ուդուգովը վերջին տարիներին գտնվում էր Թուրքիայում կամ Պարսից ծոցի երկրներից մեկում: 2002 թ. սկզբին Թուրքիան քաղաքական առևտուր սկսեց Ռուսաստանի հետ՝ չեչենական շարժման ղեկավարներին հանձնելու շուրջ: ՌԴ-ն Թուրքիայի առաջարկները գնահատեց իբրև բարի կամքի դրսևորում, մինչդեռ իրականում Թուրքիան փորձում էր քաղաքական փոխանակում կատարել և հասնել Վրաստանում թուրքական ռազմական ներկայության մեծացման հարցում Ռուսաստանի «բարյացակամ» վերաբերմունքին (նաև նախկին ռուսաստանյան օդային ռազմակայաններում թուրքական օդուժի տեղակայման հարցում): Սակայն տվյալ ձեռնարկը հաջողություն չունեցավ, և միայն բացահայտվեց Թուրքիայի ակնհայտ ճնշումը Ռուսաստանի վրա: Ակնհայտ էր, որ առանց Թուրքիայի մասնակցության ու աջակցության հնարավոր չէր չեչենների այդչափ լայն շարժման իրագործումը:

2003 թ. թուրքական կառավարությունը դադարեցնում է մի շարք հիմնադրամների գործունեությունը, որոնք աջակցում էին Հյուսիսային Կովկասի անջատողականներին: 2004 թ. Պուտինի Անկարա կատարելիք այցից առաջ մի քանի առավել ծայրահեղական գործիչներ ձերբակալվեցին: Այս ամենը, անշուշտ, չի նշանակում, որ Թուրքիան հրաժարվել էր Կովկասում իր ազդեցությունը տարածելու ձգտումներից, պարզապես իշխանությունից հեռացվել էին այն ուժերը, որոնք դա փորձում էին իրականացնել կոշտ ուժի միջոցով¹²³:

Չեչենական հարցում Անկարայի ակտիվությանը Ռուսաստանը փորձում էր պատասխանել քրդական շարժմանը ոչ պաշ-

¹²³ Տե՛ս Сотниченко А., Кавказский треугольник: Турция-Иран-Россия, <http://www.csef.ru/index.php/ru/politica-i-geopolitica/project>

տոնական աջակցություն ցուցաբերելու խորհրդային ավանդական քաղաքականությամբ, որի համաձայն Քրդական բանվորական կուսակցության գործունեությունը համարվում էր ազգային-ազատագրական պայքար: Հատկանշական է, որ Ռուսաստանը դեռևս այդ կազմակերպությանը չի ներառել ահաբեկչական կազմակերպությունների ցուցակի մեջ¹²⁴: 1994 թ. աշնանը Արտաքին հետախուզության ծառայության (ԱՀՕ) և Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴՕ) ղեկավարներ Ե. Պրիմակովի ու Ս. Ստեպաշինի Անկարա կատարած այցի ժամանակ թուրքական հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ Չեչնիայում գործողությանը նախորդած բանակցությունների ժամանակ Ռուսաստանը պարտավորություններ ստանձնեց հրաժարվել Քրդական բանվորական կուսակցությանն աջակցելու խորհրդային քաղաքականությունից¹²⁵: Սակայն, չնայած ստանձնած պարտավորությանը, քրդական վտարանդիական խորհրդարանը տեղափոխվեց Մոսկվա, և 1995 թ. հոկտեմբերի 30-ին Պետդումայի շենքում գումարվեց քրդական վտարանդիական խորհրդարանի 3-րդ նստաշրջանը: Այս առնչությամբ Անկարայի բողոքներին Մոսկվան պատասխանեց, որ նստաշրջանի գումարումը մասնավոր միջոցառում է¹²⁶: Ակնհայտ է, որ քրդական հարցում Մոսկվան որդեգրել էր նույն գործելաոճը, ինչ Անկարան չեչենական հարցում, երկու կողմերն էլ պաշտոնապես հայտարարում էին անջատողականներին չօժանդակելու մասին, սակայն ոչ պաշտոնապես այդ

¹²⁴ Ст'ю Взгляд из Анкары, <http://expert.ru/2010/04/29/>

¹²⁵ Ст'ю Маркедонов С., Между исторической справедливостью и реальной политикой, <http://www.politcom.ru/7644.html>

¹²⁶ Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, էջ 59:

հարցերն օգտագործում էին միմյանց վրա ճնշում գործադրելու նպատակով:

2008 թ. ռուս-վրացական հնգօրյա պատերազմի ժամանակ Անկարան ընդգծված չեզոքություն պահպանեց՝ ամերիկյան ռազմանավերին թույլ չտալով նեղուցներով մուտք գործել Սև ծով, ինչը կարող էր ավելի լարել իրավիճակը տարածաշրջանում¹²⁷: Հենց պատերազմի օրերին Էրդողանն առաջարկեց ստեղծել «Կովկասում կայունության ու անվտանգության պլատֆորմ»¹²⁸: Նախկին ծրագրերով Թուրքիան փորձ էր կատարում Ռուսաստանին դուրս մղել Կովկասից և որպես գործընկեր ընդգրկել Արևմուտքին¹²⁹: 2000 թ. հունվարին՝ երկրորդ չեչենական պատերազմը սկսվելուց հետո Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելի կողմից առաջ քաշվեց «Կայունության պակտը»¹³⁰: Սակայն նոր ծրագրով Թուրքիան Ռուսաստանին առաջարկում էր տարածաշրջանի խնդիրները լուծել առանց ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ներգրավման¹³¹: Այս առաջարկի շրջանակներում էր, որ Թուրքիայի նավատորմի հրամանատարը խորհրդակցություններ անցկացրեց իր ռուս գործընկերոջ հետ¹³²:

¹²⁷ St' u Маркедонов С. «Пятидневная война»: предварительные итоги и следствия. М. «Неприкосновенный запас». 2008, № 5 (61).

<http://magazines.russ.ru/nz/2008/5/ma11.html>

¹²⁸ St' u Celac S., Emerson M., Tocci N., A Stability Pact for Caucasus, CEPS Working Document 145, Bruxelles, CEPS, 2000.

¹²⁹ St'u Mkrtchyan T., Petrosyan V., Integration of Transcaucasia: Continued Failure and Hope, Turkish Policy Quarterly, Vol 8, No 1, Spring 2009, p. 63.

¹³⁰ St' u "Transcript of Remarks and Response to Media Questions by Russian Minister of Foreign Affairs Sergey Lavrov at Joint Press Conference with Turkish Minister for Foreign Affairs Ali Babacan", September 2, 2008, İstanbul, http://www.turkey.mid.ru/hron/hron_e_19.html

¹³¹ St' u Punsman B. G., The Caucasus Stability and Cooperation Platform: An Attempt to Foster Regional Accountability, ICBS Policy Brief, No.13, April, 2009.

¹³² Челикпала М., Турция и Южный Кавказ, Кавказ-2009. Ежегодник Института Кавказа, Ер., 2011, с. 177.

Թեև թուրքական կողմի գաղափարը, բացի Վրաստանից, հավանության արժանացավ մյուս երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի կողմից, այդուհանդերձ այն այդպես էլ մնաց որպես առաջարկ¹³³: Ակնհայտ էր, որ այս ծրագրով Անկարան Անդրկովկասում իր ազդեցությունը մեծացնելու քողարկված նպատակ էր հետապնդում: Թուրքական ծրագրի կենսագործումը գործնականում Անկարային հնարավորություն կընձեռեր մասնակցել նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին, ինչն անընդունելի է ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի համար: 2009 թ. հունվարի 26-ին Ստամբուլում այս հարցով հրավիրված խորհրդաժողովում անդրկովկասյան հանրապետությունների, Թուրքիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները որևէ արդյունքի չհանգեցին: Ռուսաստանը, մասնակցելով վերոհիշյալ հանդիպմանը, բացահայտ դեմ չարտահայտվելով նախագծին, դրա կենսագործման ուղղությամբ որևէ գործնական քայլ չկատարեց¹³⁴:

Հատկանշական է, որ վերջին շրջանում Թուրքիան իբրև եվրոատլանտյան համակարգին հակակշիռ խոսում է Շանհայան կազմակերպությանն անդամակցելու իր պատրաստակամության մասին, որտեղ առաջատար դիրքերը պատկանում են Ռուսաստանին և Չինաստանին: Բնական է, որ տարածաշրջանային մակարդակում Ռուսաստանը, մրցակցելով Թուրքիայի հետ և վերջինիս դիտելով հակառակ ճամբարի մասնակից, չի համաձայնվի Անկարայի՝ Շանհայան կազմակերպությանն անդամակցելու ցանկության հետ, քանզի այդ կազմակերպությունը հանդիսանում

¹³³ Арас Б., Турция и Южный Кавказ в 2008 г., Кавказ-2008. Ежегодник Института Кавказа, Ер., 2010, с. 179.

¹³⁴ Արշակյան Գ., Եդիագարյան Ա., Թուրքիայի քաղաքականության առաջնահերթություններն Անդրկովկասում 2008-2011 թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (47), 2013, էջ 59:

է Ռուսաստանի բազմաբևեռ քաղաքականության դրսևորումներից ու դրան լեզվատիրություն հաղորդող կառույցներից մեկը: Մյուս կողմից էլ Անկարայի այդ հայտարարություններն ավելի շուտ քաղաքական բլեֆի էին նմանվում, ինչով Թուրքիան որոշակի հաղորդագրություն էր հղում ԵՄ-ին, որպեսզի վերջինս չկարծի, թե Անկարան տնտեսական ինտեգրման այլընտրանք չունի¹³⁵: Պեկինում 2012 թ. հունիսի 6-7-ին կայացած Շանհայան կազմակերպության գագաթաժողովում Թուրքիան ստացավ երկխոսության գործընկերոջ կարգավիճակ, ինչից հետո 2013 թ. սկզբին Էրդոդանը հայտարարեց ԵՄ-ի փոխարեն Շանհայան կազմակերպությանը միանալու իր երկրի պատրաստակամության մասին, սակայն սեպտեմբերի 13-ի Բիշքեկում կայացած գագաթաժողովին Թուրքիան ներկայացուցիչներ չուղարկեց: Դրանից բացի Անկարայի կողմից նաև Մաքսային միությանն անդամակցելու ցանկություն արտահայտվեց: Հետաքրքիր է պատկերացնել, թե Մաքսային միությանը, որին անդամակցում են Ռուսաստանը, Բոլոռուսը, Ղազախստանը, Հայաստանն ու Ղրղզստանը, Թուրքիայի հիպոթետիկ միանալն ինչպես է համադրվելու Թուրքիայի ԵՄ-ի մաքսային միության կազմում լինելու հետ, երբ թուրքական արտահանման 40 %-ը բաժին է ընկնում եվրոպական երկրներին, իսկ թուրքական տնտեսության մեջ իրականացվող ուղղակի ներդրումների 70 %-ը նույնպես կատարվում է եվրոպական երկրների կողմից¹³⁶: Վերը շարադրվածից ակնհայտ երևում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման ուղղությամբ Թուրքիայի կատարած քայլերն իրականում իմիտացիոն բնույթի էին, որոնցով ԱՄՆ-ից ու

¹³⁵ Տե՛ս Визит Эрдогана в Россию,

http://www.inosmi.ru/politikaakademisi_org/20131127/215179043.htm

¹³⁶ Տե՛ս Агаджанян М., Россия - Турция: диалектика партнёрства, <http://newsland.com/news/detail/id/1286370/>

ԵՄ-ից հիասթափված Անկարան վերջիններինս փորձում է հասկացնել Ռուսաստանի հետ հարաբերությունների իրական սերտացման ռիսկերը, որպեսզի վերջիններս ավելի արժևորեն Թուրքիային և ընդառաջեն նրա ցանկություններին¹³⁷: Ուստի երաշխիք չկա, որ Ռուսաստանի հետ մերձենալու պատրանքներով Թուրքիան չի ձգտում քաղաքական դիվիդենտներ ստանալ ԱՄՆ-ից և ԵՄ-ից, քանզի Մոսկվայի և Անկարայի միջև տարաձայնությունները չեն վերացել թուրքական տարածքում հակահրթիռային պաշտպանության համակարգեր տեղակայելու և սիրիական ճգնաժամի հարցերում¹³⁸:

Որպես ՆԱՏՕ-ի անդամ, Թուրքիան ակտիվորեն մասնակցում է Ռուսաստանի դեմ ուղված ԱՄՆ-ի ծրագրերին: 2011 թ. սեպտեմբերի 14-ին ԱՄՆ-ի հետ նա ստորագրեց համաձայնագիր, որի համաձայն 2012 թ. հունվարին Իրանի սահմանին տեղակայվելու էր ՆԱՏՕ-ի հակահրթիռային ռադար: Մինչև 2000 կմ հեռավորությամբ թիրախների հայտնաբերման համար նախատեսված ռադարի հիմնական խնդիրն է ոչ միայն Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի, այլև Ռուսաստանի հարավային օդային տարածքների հսկումը¹³⁹: Իսկ 2012 թ. նոյեմբերին Անկարան դիմեց ՆԱՏՕ-ին՝ թուրք-սիրիական սահմանին «Պատրիոտ» տեսակի պաշտպանական հրթիռներ տեղակայելու համար¹⁴⁰: ՆԱՏՕ-ն իր աջակցությունը հայտնեց Թուրքիայի առաջարկին, դա հիմնավորելով

¹³⁷ Տե՛ս Կարգուլ: Зачем нужны США и Евросоюз, когда есть Россия, Китай и Сирия?, <http://profi-forex.org/news/entry1008060259.html>

¹³⁸ Տե՛ս Կարգուլ Կ., Россия, Турция и Черное море, <http://www.kr-eho.info/index.php?name=News&op=article&sid=9036>

¹³⁹ Մարգարյան Ս., Ռազմաքաղաքական համագործակցությունը եվրասիական ինտեգրման համատեքստում, «21-րդ ԴԱԸ», № 2 (48), էջ 22-23:

¹⁴⁰ Տե՛ս Կարգուլ Կ., Возвращение Турции, «Россия в глобальной политике», 2009, июль, август, № 4, <http://www.globalaffairs.ru/numbers/39/12361.html>

Դամասկոսի քիմիական զենքի սպառնալիքից Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ-պետությանը՝ Թուրքիային, պաշտպանելու անհրաժեշտությամբ¹⁴¹: Փաստն այն է, սակայն, որ սիրիական կողմից Թուրքիայի համար իրական սպառնալիք չկար: Սիրիական կառավարական ուժերը չեն պատրաստվում հարձակվել Թուրքիայի վրա, թուրքական սահմանային տարածքների հրետակոծման դեպքերն ավելի շուտ ունեցել են պատահական բնույթ և պայմանավորված էին նրանով, որ Թուրքիայից անընդհատ Սիրիա էին անցնում զինված գրոհայինների խմբեր: «Պատրիոտ» համակարգերը նախատեսված են հակաօդային պաշտպանության համար, որոնք կոչված են օդային հարձակումից պաշտպանել պետության սահմանափակ տարածքը: Թուրքական տարածքի հրետակոծման բացառիկ դեպքերի ժամանակ երբեք ավիացիա չի օգտագործվել, ուստի հարց է ծագում, թե ինչի համար են թուրք-սիրիական սահմանին հարկավոր այդ համակարգերը, եթե դրանք նման միջադեպերը կանխելու համար նախատեսված չեն: «Պատրիոտ» համակարգը գործում է 90 կմ շառավիղով, ինչը թույլ է տալիս օդային հարձակումներից պաշտպանել ոչ միայն թուրքական, այլև սիրիական տարածքի որոշակի հատվածը: Այս համակարգի գործունեության արդյունքում կստեղծվի յուրահատուկ բուֆերային գոտի, որտեղ կարող է անվտանգ գտնվել Սիրիայի զինված ընդդիմությունը՝ չվախենալով կառավարական ուժերի ավիացիայի հարվածներից: Թուրքիայի տարածքից անվտանգության նման գոտիներ կարող են տեղափոխվել, օրինակ, սիրիացի ընդդիմադիր գրոհայինների պատրաստման ճամբարները: Ռուսաստանը, բնականաբար, նման գործողությունների դեմ է հանդես գալիս՝ մատնանշե-

¹⁴¹ St' u Agadjanyan M., Турция - «Пэтриоты», США и НАТО – передовое базирование, Ирану и России - «головная боль», <http://www.politcom.ru/14955.html>

լով, որ թուրք-սիրիական սահմանին «Պատրիոտ» համակարգերի տեղակայումով Թուրքիան սիրիական քաղաքացիական պատերազմի մեջ ավելի է ներքաշվում¹⁴²:

Օգտագործելով ՆԱՏՕ-ի անդամ լինելը՝ Թուրքիան փաստացի շարունակում է ակտիվ գործունեություն ծավալել տարբեր տարածաշրջաններում, այդ թվում՝ Օսմանյան կայսրության նախկին հպատակ երկրներում իր ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ¹⁴³: Ի հակակշիռ դրա՝ Մոսկվան Հայաստանի տարածքում տեղադրեց բարձր ճշգրտության «Իսկանդեր-Մ» հրթիռային համակարգեր, որոնց թիրախը ոչ թե ադրբեջանական տարածքն է, այլ Թուրքիայում տեղակայված ամերիկայն հակահրթիռային համակարգի բաղադրիչները՝ վաղ արձագանքման ռադարը և «Պատրիոտ» հրթիռային համակարգերը¹⁴⁴: Բացի այդ, Ռուսաստանը, ելնելով 1996 թ. մարտի 21-ին Կիպրոսի հետ ստորագրած ռազմական բնագավառում համագործակցության պայմանագրից, վերջինիս վաճառել էր գերժամանակակից հրթիռային համակարգեր, որոնք ընդունակ են խոցել անգամ ցածր թռչող թիրախները¹⁴⁵:

Ռուսաստանի համար դժվար է կայուն հարաբերություններ պահել Թուրքիայի նման երկրի հետ, որը հաճախ կտրուկ փոխում է իր արտաքին քաղաքական առաջնահերթությունները: 2004 թ. հունվարին Սիրիայի նախագահ Բ.Ասադի՝ Թուրքիա կատարած

¹⁴² St' u Evseev B., «Размещение системы Patriot в Турции призвано обеспечить создание зон безопасности на приграничной территории Сирии, в которых сможет укрываться сирийская вооруженная оппозиция, не опасаясь атак авиации, <http://www.politcom.ru/14970.html>

¹⁴³ Հովսեփյան Ա., Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերություններն արդի փուլում, «21-րդ ԴԱԸ», թիվ 5 (51), Եր., 2013, էջ 103:

¹⁴⁴ St' u Россия нейтрализует американскую ППО в Турции, <http://www.km.ru/v-rossii/2013/06/06/otnosheniya-rossii-s-respublikami-byvshego-sssr/712627>

¹⁴⁵ St' u Геополитические устремления Турции, <http://libsib.ru/geopolitika/geopolitika-v-sovremennom-mire/arabskiy-mir>

պատմական այցից հետո երկու երկրների միջև կարծես թե համագործակցության հիմքեր դրվեցին, սակայն շուտով Անկարան վերանայեց այդ քաղաքականությունը և կրկին վերադարձավ հարաբերությունների սրմանն ու հակամարտությանը: Նույնը նկատվեց նաև Եգիպտոսի պարագայում: Անկարայի արտաքին քաղաքականության մեջ հաճախակի նկատվող նման տատանումները տարածաշրջանի մյուս երկրների մոտ Թուրքիայի նկատմամբ անվստահություն են առաջացնում¹⁴⁶:

Ռուսաստանը և Թուրքիան տարածաշրջանային և աշխարհաքաղաքական հարցերում տարբեր դիրքերում են գտնվում. եթե Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանում Թուրքիայի հիմնական մրցակիցն է, ապա նա հանդիսանում է այդ տարածաշրջանում Ռուսաստանի հիմնական դաշնակիցը, եթե Թուրքիան «արաբական գարնան» կողմնակիցն էր և ակտիվորեն ներգրավվել էր այդ գործընթացներում, ապա Ռուսաստանն այդ զարգացումներին խիստ կասկածամտորեն և քննադատաբար էր վերաբերվում, ինչը հատկապես դրսևորվեց Եգիպտոսի և Սիրիայի պարագայում: Թուրքիան սիրիական ընդդիմության կողմնակիցն է և պնդում է, որ Բ.Ասադը պետք է հեռացվի իշխանությունից, իսկ Ռուսաստանը Ասադի իշխանությանն օժանդակող գլխավոր ուժն է¹⁴⁷: Ռուսաստանը բազմիցս Թուրքիային կոչ է արել ուղիղ երկխոսություն սկսել Դամասկոսի հետ, սակայն թուրքական կողմը մշտապես հրաժարվել է Բ.Ասադի հետ հարաբերությունների վերականգնու-

¹⁴⁶ Տե՛ս Агаджанян М., Россия - Турция: диалектика партнёрства, <http://newsland.com/news/detail/id/1286370/>

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

մից՝ միաժամանակ հրապարակայնորեն հայտարարելով սիրիական ընդդիմությանը սատարելու մասին¹⁴⁸:

Սիրիական ճգնաժամի հետ կապված ռուս-թուրքական հարաբերությունները բավականին սրվեցին 2012 թ.: Սիրիական հակաօդային պաշտպանության կողմից թուրքական լրտես-ինքնաթիռի խոցվելը Անկարայի կողմից նախապատրաստված սադրանք էր, որով փորձ էր կատարվում շրջանցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Սիրիայի նկատմամբ ռազմական գործողություն սկսելու Ռուսաստանի ու Չինաստանի արգելքը: Թեև միջադեպից անմիջապես հետո ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ա.Ռասմուսենը դաշինքի անունից գորակցություն հայտնեց Թուրքիային, այդուհանդերձ սաստվեցին նաև Դամասկոսի նկատմամբ նրա ռազմական նկրտումները, և Անկարան ստիպված եղավ հայտարարել, որ միայնակ գորքեր չի մտցնի Սիրիա¹⁴⁹:

Նույն թվականի հոկտեմբերի 10-ին թուրքական ռազմական ինքնաթիռները Մոսկվայից Դամասկոս թռչող սիրիական քաղաքացիական օդանավին Սիրիա զենք տեղափոխելու կասկածանքով հարկադրեցին վայրէջք կատարել Անկարայում: Օդանավի խուզարկությունից հետո ուղեբեռը առգրավվեց թուրքական իշխանությունների կողմից: Օդանավում գտնվում էին 37 ուղևորներ, որոնցից 17-ը Ռուսաստանի քաղաքացիներ, այդ թվում՝ կանայք և երեխաներ: Անկարայում Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչները Ռուսաստանի քաղաքացիների իրավունքները պաշտպանելու և օգնություն ցուցաբերելու նպատակով ուղղվեցին օդանավակայան, սակայն նրանց թույլ չտրվեց հանդիպել օդանավում գտնվող ռուսաստանցիների հետ: Մերժելով թույլ տալ ռուս

¹⁴⁸ Տե՛ս Аватков В., Новый облик турецкой армии в начале XXI века, <http://vpoanalytics.com/2013/04/27/>

¹⁴⁹ Տե՛ս Он упал, <http://expert.ru/expert/2012/26/>

դիվանագետների հանդիպումը Ռուսաստանի քաղաքացիների հետ, Անկարան փաստորեն խախտեց երկկողմ հյուպատոսական կոնվենցիայի դրույթները: Ինը ժամ տևած խուզարկությունից հետո սիրիական օդանավին թույլ տրվեց շարունակել չվերթը դեպի Դամասկոս:

Հոկտեմբերի 12-ին Ռուսաստանի ԱԳՆ-ն պահանջեց վերադարձնել թուրքական իշխանությունների կողմից օդանավից բռնագրավված ուղեբեռը՝ 12 արկղներում գտնվող սիրիական ռադիոլուկացիոն համակարգի համար տեխնիկական միջոցներն ու դրանց փաստաթղթերը, սակայն թուրքական կողմը չբարեհաճեց անգամ պատասխանել ուղեբեռը վերադարձնելու պահանջով Մոսկվայի հղած բողոքի մի քանի նոտաներին¹⁵⁰: Վերջապես Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ ինքնաթիռը զինամթերք էր փոխադրում, որը ռուսական ռազմաարդյունաբերական ընկերության կողմից ուղարկվում էր Սիրիայի պաշտպանության նախարարությանը¹⁵¹: Այդ մասին Էրդողանը հատուկ հայտարարեց Ղազախստանի նախագահ Ն. Նազարբանի հետ Անկարայում կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ¹⁵²: Այսպիսով, Թուրքիայի վարչապետը Ռուսաստանի դեմ ուղղված այդ գործողության մասին պաշտոնապես հայտնում էր հետխորհրդային տարածքում Ռուսաստանի դաշնակից պետության՝ Ղազախստանի նախագահի ներկայությամբ, որպեսզի ավելի մեծ հնչեղություն հաղորդի կատարվածին: Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն էլ իր հերթին ավելացրեց, որ դա կասկածելի օդանավի վերջին հար-

¹⁵⁰ Տե՛ս Агаджанян М., Россия «группу действий» на «группу друзей» не меняет, <http://www.politcom.ru/15684.html>

¹⁵¹ Տե՛ս Нелегкий выбор Анкары, <http://expert.ru/2012/10/12/>

¹⁵² Տե՛ս Самойлова С., В Турции с мыслями о Сирии, <http://www.politcom.ru/14968.html>

կադիր վայրէջքը չէ, և ապագայում Թուրքիայի կողմից նման ստուգումները շարունակվելու են: Միջադեպից հետո Ռուսաստանի նախագահն անորոշ ժամանակով հետաձգեց հոկտեմբերի 14-15-ին Թուրքիա կատարելիք իր պաշտոնական այցը¹⁵³:

Իրականում սիրիական օդանավում հակաօդային պաշտպանության համակարգի լրկատորների պահեստամասեր էին: Ընդհանուր առմամբ, քաղաքացիական օդանավերով կապի միջոցների փոխադրումն արգելված չէ, սակայն Թուրքիան տվյալ դեպքում գործեց ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի շրջանակներում համաձայնեցված սխեմայով: Անկարան հայտնեց, որ թուրքական հետախուզությունը գործել է վստահելի աղբյուրներից ստացված օպերատիվ տեղեկատվության հիման վրա: Հասկանալի է, Անկարան պետք է լուրջ պատճառներ ունենար նման ակնհայտ հակառուսական գործողություն կատարելու համար, հակառակ դեպքում չէր հանդգնի գնալ նման քայլի: Կարելի է ենթադրել, որ թուրքական հատուկ ծառայություններն ավելի մեծ ակնկալիքներ ունեին բռնագրավված ուղեբեռի խուզարկությունից, սակայն կապի միջոցներ հայտնաբերելով և դրանք չվերադարձնելով, պարզապես փորձում են իրենց հեղինակությունը փրկել: Մոսկվայից Դամասկոս թռչող ինքնաթիռի ուղեբեռի պարունակության վերաբերյալ թուրքական հատուկ ծառայություններին ապատեղեկատվության հաղորդումն ու դրան հաջորդած գործողությունները թերևս ձեռնտու էին ԱՄՆ-ին: ԱՄՆ-ի Պետքարտուղարության ներկայացուցիչն այդ դեպքերից հետո հայտարարեց, որ Վաշինգտոնը վճռականորեն սատարում է թուրքական իշխանությունների իրականացրած գործողություններին: Պետքարտուղարության ներկայացուցիչը հրաժարվեց պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք թուրքական կառավարության

¹⁵³ Տե՛ս Провокация с последствиями, <http://expert.ru/2012/10/11/>

վատահեղի աղբյուրը եղել է ԱՄՆ-ը¹⁵⁴: Նշենք, որ ԱՄՆ-ը մշտապես փորձել է Ռուսաստանին մերկացնել Բ.Ասադին զենք վաճառելու հարցում, սակայն Ռուսաստանը հավաստիացրել է, որ Սիրիայի հետ Մոսկվան գործում է միայն նախկին պայմանագրերի շրջանակներում և նոր պայմանագրեր չի կնքում:

2013 թ. ապրիլի 17-ին Ստամբուլում կայացավ Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունների դեկավարների հանդիպումը, որը Սիրիայի հարցում կողմերի դիրքորոշումների մերձեցման չհանգեցրեց: Անկարան իր եվրոատլանտյան և մերձավորարևելյան գործընկերների հետ շարունակեց պնդել իշխանությունից Բ.Ասադի հեռացման վրա, ինչը համարվում էր հակամարտության կարգավորման և Սիրիայում կայունության ապահովման անհրաժեշտ նախապայման: Մոսկվան իր հերթին հայտարարեց, որ բոլոր ուժերի կողմից ընդունված Ժնևյան պաշտոնական հաղորդագրության մեջ Ասադի վարչակարգի հեռացման մասին որևէ խոսք չկա, ուստի կարգավորման ուղղությամբ քայլերը հարկավոր է կատարել Սիրիայի ներքաղաքական ճգնաժամի բոլոր կողմերի, այդ թվում՝ Դամասկոսի իշխանությունների մասնակցությամբ: Ռուսաստանի համար նաև անընդունելի էին Սիրիայի շուրջ տեղի ունեցող այն զարգացումները, որոնք կհանգեցնեին հակամարտությանն արտաքին ռազմական միջամտությանը, ինչում հատկապես շահագրգռված էր Անկարան: Սակայն, Ռուսաստանը բացառությամբ Չինաստանի հետ ՄԱԿ-ի ԱԽ-ում Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտության որոշման արգելափակման, հակամարտության սկզբնական շրջանում իրավիճակի վրա ազդելու հնարավորություններ չունեցավ: Մինչդեռ Արևմուտքը «Սիրիայի բարեկամների խումբ» ստեղծեց, որում

¹⁵⁴ St' u Нелегкий выбор Анкары, <http://expert.ru/2012/10/12/>

ակտիվ դերակատարում ստանձնեց Թուրքիան, և այդ խմբի հանդիպումներն էլ անց էին կացվում Անկարայում¹⁵⁵:

2014 թ. նոյեմբերի 9-ին Թուրքիայի նախագահն իր նախաձեռնությամբ սիրիական հակամարտության հարցի հետ կապված հեռախոսազրույց ունեցավ ռուս գործընկերոջ հետ: Էրդոդանը հայտարարեց, որ Թուրքիան չի կարող անտարբեր մնալ հարևան երկրում մարդկանց զանգվածային ոչնչացման նկատմամբ, ինչին ի պատասխան Պուտինը կատեգորիկ ձևով զգուշացրեց նրան, որ Թուրքիայի հետագա միջամտության դեպքում Ռուսաստանը հակաքայլեր կձեռնարկի տարածաշրջանում պատերազմ սանձազերծելու Թուրքիայի քայլերի դեմ: Նման պատասխանից ցնցված թուրք նախագահը փորձեց պարզել, թե արդյոք նրա խոսքերը Թուրքիային ուղղված ռազմական սպառնալիք են, ինչին Պուտինը պատասխանեց, որ Էրդոդանն իր խոսքերը կարող է մեկնաբանել ինչպես կամենա: Միևնույն ժամանակ Պուտինը Էրդոդանին հիշեցրեց սիրիական ճգնաժամում Թուրքիայի սխալ և ագրեսիվ քաղաքականության փաստերը, որոնք տասնյակ հազարավոր անմեղ քաղաքացիական մարդկանց կյանքեր խլեցին և թուրք նախագահին կոչ արեց ձեռնպահ մնալ ահաբեկիչներին աջակցելուց, որոնց մարզվելու ճամբարներն ու անվտանգության գոտիները տեղակայված են թուրքական տարածքներում¹⁵⁶:

2014 թ. դեկտեմբերին Ռուսաստանի նախագահ Պուտինի Անկարա կատարած պետական այցի շրջանակներում Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների համատեղ մամուլի ասուլիսում միանգամից պարզ դարձավ, որ երկու երկրները դեռևս չեն

¹⁵⁵ Տե՛ս Агаджанян М., Россия «группу действий» на «группу друзей» не меняет, <http://www.politcom.ru/15684.html>

¹⁵⁶ Տե՛ս Жесткий телефонный разговор между Эрдоганом и Путиным закончился взаимными угрозами, <http://pervodika.ru/articles/25742.html>

կարողանում ընդհանուր մոտեցումներ գտնել Սիրիայի ճգնաժամը կարգավորելու հարցում: Պուտինը, խոսելով թուրքական տարածքների հրետակոծությունների մասին, պաշտպանեց սիրիական իշխանություններին՝ համոզմունք հայտնելով, որ դրանք պատահականություն են եղել, քանզի ստեղծված իրավիճակում Սիրիան բացարձակապես շահագրգռված չէ հարևանների վրա հարձակվելու հարցում: Ուստի նա երկու կողմերին զապվածության կոչ արեց¹⁵⁷:

Մոսկվան դժգոհ էր սիրիական ճգնաժամում Թուրքիայի ագրեսիվ դերակատարությունից, իսկ Թուրքիան համարում էր, որ Սիրիան գտնվում է թուրքական կենսական շահերի գոտում, իսկ Ասադի վարչակարգը միանշանակ պետք է հեռացվի իշխանությունից: Ասադը Մոսկվայի համար տվյալ տարածաշրջանում վերջին դաշնակիցն է, որի համար նա պատրաստ է պայքարել՝ առավել ևս, որ Սիրիայի նախագահը ցուցաբերում է իշխանությունը պահելու պատրաստակամություն և կարողություն¹⁵⁸:

2015 թ. մարտի 20-ին Կիևում Ուկրաինայի նախագահ Պ. Պորոշենկոյի հետ կայացած համատեղ ասուլիսում Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան որոշել է Ուկրաինային տրամադրել 50 մլն դոլարի վարկ, ինչպես նաև 10 մլն դոլար հատկացնել որպես մարդասիրական օգնություն հարկադրված տեղահանվածների կարիքները հոգալու համար: Ուկրաինայի նախագահն ընդգծեց, որ Թուրքիան Ուկրաինայի համար հանդիսանում է հիմնական ռազամավարական գործընկերներից մեկը, և որ Ուկրաինան բարձր է գնահատում իր ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտ-

¹⁵⁷ Տե՛ս Самойлова С., В Турции с мыслями о Сирии, <http://www.politcom.ru/14968.html>

¹⁵⁸ Տե՛ս Преображенский И., Путина столкнули с Эрдоганом, <http://www.politcom.ru/14664.html>

պանության հարցում Թուրքիայի ունեցած դիրքորոշումը, Ղրիմի անջատման չճանաչումը և միջազգային կազմակերպություններում Ուկրաինայի հետ համագործակցությունը¹⁵⁹: Հատկանշական է, որ Թուրքիայի նախագահի այցը Կիև, Ուկրաինային վարկ և մարդասիրական օգնություն տրամադրելը կատարվեց Ռուսաստանի հետ հարաբերությունների խիստ լավածության պայմաններում և, անշուշտ, այս քայլը նույնպես Մոսկվային ուղղված որոշակի ուղերձ էր:

Հաշվի առնելով Թուրքիայի ՆԱՏՕ-ի անդամությունը և տարածաշրջանային քաղաքականության ազդեցիկ դերակատար դառնալու նրա հավակնությունները՝ դժվար չէր կռահել, որ Թուրքիայի և Ռուսաստանի միջև առկա հակասությունները խորանալու էին¹⁶⁰:

Վերջին ամիսներին Ռուսաստանի կողմից «Իսլամական պետության» դիրքերին ավիահարվածներ հասցնելը բավականին նյարդայնացրել է Էրդողանին, որն իր երկրի համար անընդունելի համարեց ռուսական ռազմական ինքնաթիռի կողմից Թուրքիայի օդային տարածքի խախտումը՝ համոզիչ չհամարելով ռուսական կողմի բացատրությունները¹⁶¹: Ռուսաստանի Պաշտպանության նախարարությունը հայտարարեց, որ 2015 թ. հոկտեմբերի 3-ին ռուսական ռազմական ինքնաթիռը ԻՊ դիրքերին օդային հարվածներ հասցնելու ժամանակ մի քանի վայրկյան հայտնվել է թուրքական օդային տարածքում, ինչը պայմանավորված է եղել եղանակային անբարենպաստ պայմաններով: Թուրքիան այս միջադե-

¹⁵⁹ Տե՛ս Турция выдаст Украине кредит на \$50 млн, и \$10 млн гуманитарной помощи, <http://www.regnum.ru/news/polit/1907382.html#ixzz3V0ptuVoK>

¹⁶⁰ Гушер А., Южный Кавказ, Америка, НАТО, «Азия и Африка сегодня», М., 2009, № 2, с. 10-16.

¹⁶¹ Տե՛ս Турция обиделась, <http://expert.ru/2015/10/9/>

պի հետ կապված անգամ սպառնաց, որ կարող է գնալ ռուսական գազի գնման պայմանագրերի վերանայման¹⁶²: Մոսկվան Թուրքիայի սպառնալիքին հանգիստ վերաբերվեց, քանզի վստահ է, որ ցանկացած պահի ի վիճակի է սանձել Անկարային՝ օգտագործելով ռուսական գազից թուրքական տնտեսության կախվածությունը, քանզի Թուրքիան իրեն անհրաժեշտ գազի ծավալների 2/3-ը ստանում է Ռուսաստանից և առայժմ նրան չի հաջողվում դիվերսիֆիկացնել իր էներգետիկ համակարգը և ռուսական գազին այլընտրանք գտնել: Հնչեցված սպառնալիքները, սակայն, ավելի սրեցին առանց այդ էլ լարված երկկողմ հարաբերությունները:

Հոկտեմբերի 3-ի միջադեպին հաջորդեց թուրքական օդուժի կողմից նոյեմբերի 24-ին ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը, որը ԻՊ օդային հարվածներ հասցնելիս իբր թե կրկին խախտել էր Թուրքիայի օդային տարածքը: Եթե հոկտեմբերի 3-ի միջադեպի հետ կապված ռուսական կողմն ընդունել էր թուրքական օդային տարածքը կարճաժամկետ խախտելու փաստը, ապա այս դեպքում հայտարարվեց, որ ռուսական ինքնաթիռը խոցվել է Սիրիայի տարածքում: Միջադեպի կապակցությամբ Ռուսաստանի նախագահը հանդես եկավ բավականին կոշտ հայտարարությամբ՝ Թուրքիային անվանելով ահաբեկիչների աջակից և մեղադրելով Անկարային ԻՊ կողմից վերահսկվող տարածքներից նավթի և նավթամթերքի վաճառքով զբաղվելու մեջ: Պուտինը նաև զգուշացրեց, որ ռուսական ինքնաթիռի խոցումը լուրջ հետևանքներ կունենա ռուս-թուրքական հարաբերությունների վրա¹⁶³:

Եթե հաշվի առնենք Ռուսաստանի և ԱՄՆ-ի կողմից ԻՊ ավիահարվածներ հասցնող կոալիցիոն ուժերի միջև, որոնց թվում

¹⁶² Տե՛ս Президент Турции пригрозил отказаться от российского газа, <http://expert.ru/2015/10/8/>

¹⁶³ Տե՛ս Турки «ударили в спину», <http://expert.ru/2015/11/24/>

է նաև Թուրքիան, օդային միջադեպերի կանխարգելման մասին համաձայնագրի ստորագրումը, ապա այս միջադեպն ընդհանրապես պետք է տեղի չունենար: Այն, որ միջադեպից անմիջապես հետո Անկարան Ռուսաստանի հետ կապ հաստատելու և միջադեպը պարզաբանելու փոխարեն կապ հաստատեց ՆԱՏՕ-ի գրասենյակի հետ, ռուսական կողմին կասկածելու տեղիք տվեց, որ Անկարան այդ քայլը կատարել է ՆԱՏՕ-ի իր գործընկերների հետ խորհրդակցելով, այլ ոչ թե սեփական նախաձեռնությամբ: ՆԱՏՕ-ի տարածած հայտարարության մեջ թեև դաշինքը պաշտպանում էր իր օդային տարածքը պաշտպանելու Անկարայի իրավունքը, սակայն հստակ նշվում էր, որ դա եղել է Անկարայի նախաձեռնությունը¹⁶⁴: Այս ամենից նշմարվում են երկու հնարավոր սցենարներ`

ա. Արևմուտքը Թուրքիայի պարագայում կիրառել է Վրաստանի ու Ուկրաինայի սցենարը, երբ սկզբից նրանց քաջալերում էր Ռուսաստանի դեմ պայքարում, սակայն իրավիճակի սրման պայմաններում նրանց ուղղակի չաջակցեց,

բ. Առաջնորդվելով նեոսամանական հավակնություններով, Անկարան փորձում է Մերձավոր Արևելքի տարածաշրջանում Ռուսաստանի հետ ավելի թեժ մրցապայքարի մեջ մտնել` ձգտելով կանխել նրա դիրքերի ուժեղացումը:

Երկու սցենարների դեպքում էլ պարզ է մի բան, որ ռուս-թուրքական հարաբերությունների նախկին վիճակին վերադարձ այլևս չի լինելու և երկու երկրների հարաբերություններն արդեն ընթանալու են ավելի կոշտ մեթոդներով: Մասնավորապես Ռուսաստանը Անկարայի նկատմամբ սկսել է կիրառել պատժամիջոցներ` սկսած տնտեսական սահմանափակումներից և վերջացրած Հայոց ցեղասպանության հիմնահարցով:

¹⁶⁴ Տե՛ս u Москву просят понять и простить, <http://expert.ru/2015/11/25/>

1.2. Ռուսաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և դրա ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա

Տարածված է այն տեսակետը, թե Ռուսաստանի Պետդուման Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հայտարարությունն առաջին անգամ ընդունել է 1995 թ. ապրիլի 14-ին: Մինչդեռ 1994 թ. ապրիլի 20-ին և 22-ին Ռուսաստանին Պետդումայի նստաշրջաններում պատգամավորական տարբեր խմբակցություններ արդեն հանդես էին եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու առաջարկությամբ: Երկօրյա քննարկումներից հետո ապրիլի 22-ին Ռուսաստանի Պետդուման ընդունեց առաջին հայտարարությունը, որում ասվում էր. «ՌԴ Պետդումայի նստաշրջանը այդ ողբերգության հիշատակի 79-րդ տարելիցի նախօրեին, դատապարտելով հայերի ցեղասպանությունը, իր խորը ցավակցությունն է արտահայտում հայ ժողովրդին և կարեկցում է ցեղասպանությունից սուժած վերապրողներին, որոնք բնակվում են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում: Հիշողությունը և խղճմտանքը առհավետ կմնա մեզ հետ»¹⁶⁵: Այս թույլ և անորոշ ձևակերպումներով հայտարարությանը մեկ տարի անց որոշակի իրադարձություններից հետո պետք է հետևեր ավելի հստակ ձևակերպումներով ու պատմական իրողությունն արտահայտող նոր հայտարարություն:

Միանգամայն բնական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հայտարարություն կամ բանաձև ընդունելիս ցանկացած պետություն, այդ թվում՝

¹⁶⁵ Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը (1915-2000), Եր., 2001, էջ 36:

Հայաստանին բարեկամ երկիր հանդիսացող Ռուսաստանը, նման քաղաքական որոշումներ կայացնելիս նախ առաջնորդվում է իր ազգային-պետական շահերով և հետո միայն ձգտում ընդառաջել իր երկրում բնակվող հայկական համայնքի ձգտումներին:

Այս առումով պետք է նշենք, որ Ռուսաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում նույնպես պայմանավորված է եղել որոշակի քաղաքական զարգացումներով: 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի ու միջազգային կոնսուրցիումի միջև Բաքվում ստորագրվեց ադրբեջանական նավթահանքերի շահագործման վերաբերյալ «դարի պայմանագիրը»: Հակառակ ակնկալիքների՝ պայմանագրով Թուրքիայի մասնաբաժինը ընդամենը 1.75 % էր կազմում, ինչի պարագայում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի հարցն ընդհանրապես երկրորդ պլան էր մղվում: Թուրքական դիվանագիտությունը հսկայական ջանքեր գործադրեց իր մասնաբաժնի ավելացման ուղղությամբ և հասավ նրան, որ 1995 թ. ապրիլին միջազգային կոնսուրցիումի որոշմամբ Իրանի 5 % կազմող մասնաբաժինը տրամադրվեց Թուրքիային: Ստեղծված իրավիճակում Ռուսաստանը կոնսուրցիումի շրջանակներում մնաց միայնակ և սկսեց վիճարկել «դարի պայմանագիրը»՝ Կասպից ծովի կարգավիճակի անհստակության պատճառաբանությամբ: Բացի դրանից, Մոսկվան փորձեց այնպիսի քայլ կատարել, որն արժանի պատասխան կլիներ միանգամից երկու թուրքական պետություններին: Որպես նման քայլ ընտրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման նոր՝ ավելի հստակ ու ծանրակշիռ հայտարարության ընդունումը¹⁶⁶:

¹⁶⁶ Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, էջ 58:

1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Պետդուման ընդունեց 1915 թ. Հայոց ցեղասպանությունը դատապարտող նոր հայտարարություն, որում մասնավորապես ասվում է. «Ռուսաստանի Պետական Դուման, հիմնվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտյան Հայաստանի տարածքներում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին, առաջնորդվելով ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի և 1968 թ. նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի ոգով և տառով, ձգտելով Ռուսական պետության մարդասիրական ավանդույթների վերածնությանը, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ դեռ 1915 թ. եվրոպական Մեծ տերությունները հայ ժողովրդի նկատմամբ Թուրքական կայսրության գործողությունները որակեցին որպես «մարդկության դեմ կատարված հանցագործություն», նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը իրականացվեց Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով, դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, վշտակցություն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում է ցեղասպանության զոհերի հիշատակի օր»¹⁶⁷: Շատ կարևոր է, որ Պետդումայի հայտարարության մեջ հղում է կատարվում միջազգային իրավական այնպիսի փաստաթղթերի վրա, ինչպիսիք են ՄԱԿ-ի 1948 և 1968 թթ. Կոնվենցիաները, ինչպես նաև Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի

¹⁶⁷ Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17, с. 1497.

24-ի համատեղ հռչակագիրը, որով դատապարտվում էր թուրքական իշխանությունների կողմից հայերի զանգվածային բնաջնջումը և անձնական պատասխանատվություն էր սահմանվում երիտթուրքական կառավարության անդամների և նահանգային պաշտոնյաների համար, որոնք մասնակցություն էին ունեցել այդ հանցագործություններին¹⁶⁸: Վերջապես, Պետղումայի հայտարարության ամենակարևոր ձևակերպումն այն է, որ ցեղասպանությունն իրականացվել է Ռուսաստանի եղբայրական հայ ժողովրդի նկատմամբ նրա պատմական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում: Ուշագրավ է, որ Ռուսաստանի Պետղուման հայերի ցեղասպանությունը համարում է հանցագործություն, որն իրականացվել է նաև Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով: Այս ձևակերպումը Օսմանյան կայսրությունը Մեծ Թուրանի վերածելու թուրքական պանթուրանական գաղափարախոսության ակնարկ է պարունակում, քանզի հայտնի է, որ հայերի ցեղասպանությունն այդ գաղափարի կենսագործման առաջին քայլերից էր, ինչին հետևելու էր թուրքախոս ժողովուրդներով բնակեցված տարածքների, այսինքն՝ Ռուսական կայսրության զգալի հատվածի, միացումը Օսմանյան կայսրությանը և համաթուրքական պետության ստեղծումը: Թեև Պետղումայի հայտարարությամբ ապրիլի 24-ը հայտարարվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, սակայն, հանուն ճշմարտության նշենք, որ այդ օրը Ռուսաստանում հիմնականում նշվում է միայն տարբեր քաղաքների հայկական համայնքների կողմից, իսկ պետական մարմիններն այս հարցում ավելի չեզոք դիրք են գրավել:

¹⁶⁸ Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М.Г. Нерсисяна, Ер., 1983, с. 280.

Թուրք քաղաքական գործիչների և քաղաքական վերլուծաբանների կարծիքով, Թուրքիայի նկատմամբ ռազմավարություն մշակելիս Ռուսաստանը բացի Անկարայի նկատմամբ էներգետիկ լծակներն օգտագործելը, կիրառում է նաև Հայոց ցեղասպանության հարցը: Ընդ որում, թուրք գործիչները կարծում են, որ Մոսկվան ենթարկվում է հայկական մեծաքանակ համայնքի ճնշմանը, ինչն արտահայտվեց Պետդումայի կողմից 1995 թ. Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունումով¹⁶⁹:

Պետդուման 2005 և 2015 թթ. Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի 90-րդ և 100-րդ տարելիցներին ընդունեց ևս երկու հայտարարություններ, սակայն դրանք իրենց բովանդակությամբ ու հստակությամբ էապես զիջում են 1995 թ. հայտարարությանը:

2005 թ. ապրիլի 22-ին Ռուսաստանի Պետական Դուման Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունեց երկրորդ հայտարարությունը, որում մասնավորապես ասված է. «Հայ ժողովրդի ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ, որը հանդիսանում է XX դարի ամենաողբերգական ու դաժան իրադարձություններից մեկը, Ռուսաստանի Դաշնության Դաշնային Խորհրդի Պետական Դուման իր խոր վշտակցությունն է արտահայտում եղբայրական հայ ժողովրդին: Պետական Դումայի պատգամավորները, ամբողջովին դատապարտելով հայ ժողովրդի ցեղասպանությունը, գտնում են, որ դրա 90-րդ տարելիցը պետք է հիշատակվի միջազգային հանրության կողմից»¹⁷⁰: Այս հայտարարության մեջ Պետդուման փաստորեն բավարարվել է միայն Հայոց ցեղասպանության

¹⁶⁹ Տե՛ս Взгляд из Анкары, <http://expert.ru/2010/04/29/>

¹⁷⁰ Տե՛ս Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “По случаю 90-летия начала геноцида армянского народа” от 22 апреля 2005 года, <http://www.nashasreda.ru>

դատապարտմամբ և հայ ժողովրդին վշտակցություն հայտնելով, ինչն արտահայտված էր նաև նախորդ հայտարարության մեջ:

Հատկանշական է, որ սիրիական ճգնաժամի ժամանակ ռուս-թուրքական հարաբերություններին նոր սրություն հաղորդեցին Քեսաբի դեպքերը: Ռուսաստանը խստորեն դատապարտեց 2014 թ. մարտի 21-ին «Ալ-Ղաիդա»-ի հետ կապեր ունեցող «Ջաբհաթ ալ-Նուսրա» և «Ահրար աշ-Շամ» ծայրահեղական խմբավորումների մի քանի հազարի հասնող զինյալների՝ թուրքական Յայլադադի անցակետից Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջան ներխուժումը: Ռուսաստանի ԱԳՆ-ն տարածած հաղորդագրությունում, դատապարտելով Քեսաբի վրա կատարված հարձակումը և խաղաղ բնակչության նկատմամբ կատարված հանցագործությունները, հստակ նշում էր, որ պատմականորեն հայկական անկլավի՝ Քեսաբի վրա ծանր հրետանին և տանկերը գործի են դրվել հենց Թուրքիայի տարածքից: Իր տարածած երկրորդ հայտարարությամբ Ռուսաստանի արտգործնախարարությունը պահանջեց, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկի Քեսաբի իրավիճակը և սկզբունքային գնահատական տա այդ իրադարձություններին¹⁷¹: Հատկանշական է, որ ռուսական ՁԼՄ-ներն ամեն կերպ փորձում էին այս դեպքերը փոխկապակցել Հայոց ցեղասպանության հետ: Նույնիսկ բանը հասավ նրան, որ ռուսական որոշ լրատվամիջոցներ հեռարձակեցին իբր Քեսաբում կատարված հայերի սպանությունների տեսարաններ, որոնք իրականության հետ ոչ մի առնչություն չունեին:

Ռուսաստանի Պետական Դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի հանձնա-

¹⁷¹ Տե՛ս Դավութջյանի «Թուրքիան բացել էր դռները Քեսաբի հայերի համար», <http://www.azatutyun.am/content/article/25318585.html>

ժողովի կողմից Ղումայի օրակարգ մտցվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Պետդումայի հայտարարությունը, որը կրկնում է 2005 թ. հայտարարության դրույթները: Ռուսաստանի օրենսդիր մարմնի վերջին հայտարարության մեջ կարևորվում է պատմության բարդ հարցերը խաղաղ միջոցներով, այդ թվում՝ դիվանագիտական ջանքերով լուծելու հանգամանքը և որպես նման ձևով վիճելի հարցերը լուծող կառույցներ մատնանշվում են Եվրասիական տնտեսական միությունը, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը և Շանհայան կազմակերպությունը¹⁷²: Այս ձևակերպումից անհասկանալի է, թե ինչպես հայերը պետք է բանակցեն ցեղասպանությունը ժխտող Թուրքիայի հետ և ինչպես նշված կառույցների փորձը կարող է օգնել այդ գործին: Նման անհասկանալի ու անորոշ ձևակերպումներով, անշուշտ, նվազեցվում է այդ հայտարարության նշանակությունը:

Տվյալ հայտարարության մեջ դրական նորություն կարելի է համարել այն, որ Պետդուման, հիմնվելով արդարության սկզբունքների վրա, պաշտպանում է պատմական հիշողությունը պահպանելու բոլոր ժողովուրդների ձգտումը, ինչը համարվում է անցած ու ներկա հակամարտությունների կարգավորման և կողմերի հաշտեցման անհրաժեշտ պայման¹⁷³:

ՌԴ նախագահ Վ.Պուտինը 2015 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում հնչեցրած ելույթում վերահաստատեց Ռուսաստանի դիրքորոշումը՝ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու վերաբերյալ: Պուտինը հիշեցրեց 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից ընդուն-

¹⁷² Ст'у Госдума России приняла заявление в связи со 100-летием Геноцида армян, <http://dailynewslight.ru/?u=24042015730>

¹⁷³ Ст'у նույն տեղում:

ված համատեղ հայտարարության մասին, հատուկ ընդգծելով, որ այդ հայտարարությունն ընդունվել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Մոզոմովի նախաձեռնությամբ: Վերջում Պուտինը նշել է, որ ռուս ժողովուրդը սգում է հայ ժողովրդի հետ միասին և Ռուսաստանյան հարյուրավոր քաղաքներում ավելի քան 2000 հիշատակի միջոցառումներ են տեղի ունենում, որոնց մասնակցում են ինչպես հայ համայնքի ներկայացուցիչները, այնպես էլ այլ ազգությունների տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ¹⁷⁴:

Նոյեմբերի 24-ին ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը առիթ հանդիսացավ, որ Ռուսաստանը որոշ եվրոպական երկրների օրինակով Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրինագիծ մշակի: Օրինագիծը Պետդումա է ներկայացվել «Արդար Ռուսաստան» կուսակցության կողմից, որի առաջնորդ Միրոնովը հայտարարեց, որ այն շուտով կմտնի ստորին պալատի օրակարգ: Օրինագծի համաձայն, 1915-1922 թթ. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստը ժխտողներն ու հավանություն տվողները տուգանվելու են 300 000 ռուբլի տուգանքով կամ ենթարկվելու են մինչև 3 տարի ազատազրկման, իսկ եթե դա կատարվել է ՁԼՄ-ների միջոցով, ապա տուգանքի չափը հասնելու է մինչև 500 000 ռուբլու, իսկ ազատազրկման ժամկետը՝ մինչև 5 տարվա¹⁷⁵: Այս օրինագիծն ընդունելու դեպքում Ռուսաստանը Շվեյցարիայից, Սլովակիայից, Հունաստանից ու Կիպրոսից հետո կդառնա հինգերորդ երկիրը,

¹⁷⁴ Տե՛ս Հայաստանի, Սերբիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահները ելույթ ունեցան Ծիծեռնակաբերդում, <http://www.azatutyun.am/content/article/26976030.html>

¹⁷⁵ Տե՛ս В Госдуму внесут законопроект о криминализации отрицания геноцида армян в Турции во время Османской империи, <http://www.trust.ua/news/118910>

որը կքրեականացնի Հայոց ցեղասպանության ժխտումը: Կարծում ենք, որ Պետդումայի կողմից այս քայլն արագացնելու հարցում իրենց ջանքերը պետք է ակտիվացնեն նաև հայկական համայնքային կառույցներն ու անհատ գործիչները: Ռուսաստանում նման օրենքի ընդունումը կարևոր է նրանով, որ մեծաթիվ մահմեդական ու մասնավորապես թուրքախոս բնակչություն ունեցող այդ երկրում այլևս կբացառվի Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնելու փորձերը: Միևնույն ժամանակ, այս քայլը կարող է լուրջ հիմք հանդիսանալ նաև Ռուսաստանի կողմից Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում հայ ժողովրդին ու Հայաստանի Հանրապետությանը գործուն աջակցություն ցույց տալու հարցում:

ԳԼՈՒԽ II. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԱՄՆ-ԹՈՒՐԳԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1. Ամերիկա-թուրքական արդի հարաբերությունների հակասություններն ու շահերի բախումները

Վերջին ժամանակաշրջանում ՆԱՏՕ-ի երկու գործընկերների ու երբեմնի ռազմավարական դաշնակիցների՝ ԱՄՆ-ի ու Թուրքիայի հարաբերություններում սկսել են նկատվել շահերի բախումներ, կարևոր աշխարհաքաղաքական հարցերում դիրքորոշումների տարբերություններ, որոնք վեր են ածվել լուրջ հակասությունների և խորանալու միտումներ են դրսևորում:

Տասնամյակներ շարունակ Թուրքիան ավանդաբար համարվում էր իսլամական աշխարհում ԱՄՆ-ի միակ հավատարիմ դաշնակիցը, քանզի «անկառավարելի» Սաուդյան Արաբիան, ունենալով էներգակիրների խոշորագույն պաշարներ, ինքնուրույն քաղաքականություն էր իրականացնում՝ ձգտելով դառնալ արաբական աշխարհի հովանավորն ու առաջնորդը, իսկ Պակիստանն էլ, միջուկային զենք ունենալով, ավելի հաճախակի էր իրեն թույլ տալիս «սեփական տեսակետ» ունենալ որոշակի հարցերում: Ի տարբերություն այս երկուսի՝ Անկարան մինչև վերջերս Վաշինգտոնի քաղաքականության ամենականխատեսելի և ենթարկվող գործընկերն էր¹⁷⁶: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի դերն ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ զգալիորեն նվազեց, և Վաշինգտոնը հաճախ սկսեց հաշվի չնստել Անկարայի շահերի հետ: ԱՄՆ-ի և Թուրքիայի միմյանցից

¹⁷⁶ St' u Турция: зачем нужны США и Евросоюз, когда есть Россия, Китай и Сирия?
<http://profi-forex.org/news/entry1008060259.html>

օտարումը առաջին հերթին սկսեց տեղի ունենալ հետևյալ պատճառներով՝ ԽՍՀՄ փլուզումից և խորհրդային սպառնալիքի վերացումից հետո Անկարան նույնպես դադարեց Վաշինգտոնի պաշտպանության կարիքը զգալ: Բացի այդ, Թուրքիայում տեղի է ունենում քաղաքական համակարգի իսլամացման գործընթաց, ինչը նույնպես բացասաբար է ազդում թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա¹⁷⁷:

Զգալիորեն նվազեցին նաև ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող ռազմական օգնության չափերը: 1992 թ. ավարտին մոտեցավ Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև 1980 թ. մարտի 29-ին ստորագրված և դեկտեմբերի 18-ին ուժի մեջ մտած «Պաշտպանական և տնտեսական համագործակցության մասին» պայմանագրի գործողության ժամկետը: Սկսած 1992 թ. նշված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում էր միայն մեկ տարով, և յուրաքանչյուր տարի այդ հարցը հավելյալ խնդիրներ էր ստեղծում կողմերի համար¹⁷⁸: Վաշինգտոնի համար Թուրքիայի դերի նվազման վկայություն կարելի է համարել նաև այն փաստը, որ արդեն 1994 թ. կեսերին Թուրքիայում գտնվող 12 ամերիկյան ռազմակայաններից 8-ը կա՛մ փակվել, կա՛մ հանձնվել էին թուրքական զինված ուժերին: ԱՄՆ-ի համար իր նշանակությունը շարունակում է պահպանել միայն Թուրքիայի տարածքում տեղակայված ամերիկյան Ինջիրլիկ ռազմակայանը: Ադանայից ընդամենը 10 կմ հեռավորության վրա գտնվող ռազմակայանը 1955 թ. իր բացման օրվանից կարևոր դերակատարում է ունեցել ինչպես Սառը պատերազմի տարիներին, այնպես էլ Իրաքյան երկու պատերազմների և Աֆղանստանում ընթացող ռազմական գործողությունների

¹⁷⁷ St' u Турция уходит из под ног США, <http://www.meast.ru/article/>

¹⁷⁸ Hale W. M., Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002, p. 218-219.

ժամանակ: Նշենք, որ ԱՄՆ-ը չունի ռազմակայանը օգտագործելու երկարաժամկետ թույլտվություն և պարբերաբար հարկադրված է Թուրքիայի հետ քննարկել ռազմակայանի օգտագործման թույլտվության երկարացման խնդիրը, հանգամանք, որը բավականին կարևոր լծակ է թուրքական իշխանությունների ձեռքում¹⁷⁹:

Ստեղծված պայմաններում Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի կողմից Թուրքիային հասկացվող դերակատարությունն աստիճանաբար դառնում էր այն խնդիրներից մեկը, որի վրա հիմնվում էին երկկողմ նոր հարաբերությունները: Թուրքիայի համար նախկին խորհրդային հանրապետություններում կարևոր դերակատարման ստանձնումը որոշակիորեն փոխհատուցում էր ԽՍՀՄ փլուզման հետևանքով ԱՄՆ-ի համար Թուրքիայի ռազմավարական կարևորության նվազման հանգամանքը: Սակայն Թուրքիան շուտով համոզվեց, որ ԱՄՆ-ը շահագրգռված չէ իրեն սկզբունքային աջակցություն ցույց տալ նաև Կովկասում ու Կենտրոնական Ասիայում, քանզի զգուշանում էր Անկարայի ինքնուրույնության մեծացումից, որը, ոգեշնչվելով 1980-90-ական թթ. տնտեսական հաջողություններով ու ռազմուժի արդիականացման հնարավորություններով, այդ տարածաշրջաններում ձգտում էր վարել աշխույժ տարածաշրջանային քաղաքականություն:

ԱՄՆ-ը գիտակցում էր, որ Ղազախստանը, Ղրղզստանն ու Տաջիկստանն աշխարհաքաղաքական առումով խոցելի վիճակում են և միշտ կձգտեն համագործակցել Ռուսաստանի հետ (Տաջիկստանը՝ նաև Իրանի հետ): Թերևս դա էր նաև պատճառը, որ Վաշինգտոնը չէր աջակցում Կենտրոնական Ասիայում Թուրքիայի

¹⁷⁹ Պոդոպյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., էջ 65:

դիրքերի ամրապնդմանն ուղղված Անկարայի ջանքերին: Այդ իրավիճակում Թուրքիան ստիպված էր հաշտվել այն մտքի հետ, որ անբավարար ռեսուրսների ու ԱՄՆ-ի աջակցության բացակայության պայմաններում իր քաղաքականության այդ ուղղությունն այլևս անհեռանկարային է և շուտով հրաժարվեց այդ տարածաշրջանում իր հավակնոտ ծրագրերից:

Թուրք քաղաքական գործիչների զգալի մասը (նաև իշխող կուսակցության շարքերից) համոզված են, որ Թուրքիան պետք է իր դիրքերն ամրապնդի Միջին Արևելքում և բարելավի հարաբերությունները Ռուսաստանի ու Կենտրոնական Ասիայի թյուրքական պետությունների հետ՝ «արևմտյան ճակատում» անհաջողությունները փոխհատուցելու նպատակով: Վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Արևմուտքում Թուրքիայի դիրքերը կախված կլինեն Արևելքում այդ երկրի ունեցած ազդեցություններից:

Թուրք-ամերիկյան հարաբերություններում որոշակի լարվածություն նկատվեց 1996-1997 թթ. երբ Թուրքիայում վարչապետի պաշտոնը զբաղեցնում էր իսլամական «Բարեկեցություն» կուսակցության ղեկավար էրբականը: Վերջինս փորձեց բարելավել հարաբերությունները Թուրքիայի անմիջական հարևանների, առաջին հերթին Իրանի և Սիրիայի հետ, ինչը, բնականաբար, չէր կարող դժգոհություն չառաջացնել ԱՄՆ-ում: Ի վերջո, զինվորականության ճնշման ներքո էրբաքանը 1997 թ. հարկադրված էր հրաժարական ներկայացնել¹⁸⁰: 2002 թ. նոյեմբերին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության եկավ չափավոր իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, ինչից հետո Վաշինգտոնը սկսեց

¹⁸⁰ Նույն տեղում, էջ 11:

կասկածել Թուրքիայի դաշնակցային հավատարմությանը¹⁸¹: 2003-2007 թթ. թուրք-ամերիկյան հարաբերություններն աստիճանաբար վատթարանում են, և Թուրքիայում ակտիվորեն քննարկվում էր երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխման հնարավորությունը, ընդ որում, հավանական սցենարներից էր ԱՄՆ-ից կախվածության թուլացումը և վերջինի մրցակիցների հետ հարաբերությունների խորացումը:

Թուրքիայի նախկին արտգործնախարար Դավութօղլուն իր «Ռազմավարական խորք» աշխատության մեջ Թուրքիայի գլխավոր դժբախտությունը համարում է իսլամական քաղաքակրթությունից դուրս գալը և օտար քաղաքակրթության մեջ մտնելը: Իսլամակենտրոն աշխարհընկալումից բացի, Դավութօղլուի աշխատանքում նկատելի է Թուրքիայի իսլամական ուժերին բնորոշիչ համարվող նեոսումանական աշխարհընկալումը և տեսլականը: Դավութօղլուի աշխատության մեջ մասնավորապես առաջ է քաշվում Թուրքիայի կողմից տարածաշրջանային խնդիրների լուծման գործում Օսմանյան կայսրության անցյալի փորձառության օգտագործման գաղափարը, ինչը նշանակում է, որ առնվազն նախկին Օսմանյան կայսրության տարածքներում Անկարան պետք է վերածվի «տարածաշրջանային կարգ հաստատողի» ու «կենտրոնական երկրի»:

Առաջնորդվելով այս ռազմավարությամբ՝ Անկարան նախաձեռնեց միջնորդություններ տարբեր հակամարտող կողմերի, նաև ներպետական դերակատարների ու անգամ ահաբեկչական խմբավորումների միջև: Բացի պաղեստինյան հարցից, Անկարան փորձեց որպես միջնորդ հանդես գալ նաև Լիբանանի ներքաղաքական ճգնաժամի և իսրայելասիրիական հակամարտության

¹⁸¹ Տե՛ս Появится ли на карте мира Курдистан?, <http://www.iimes.ru/> 24.12.2007

հաղթահարման գործընթացում: Պաշտոնական Վաշինգտոնը փորձում էր հետ պահել Թուրքիային Սիրիայի հետ սերտ հարաբերությունների հաստատումից: Մասնավորապես, 2005 թ. գարնանը ԱՄՆ-ի իշխանությունները փորձեցին հասնել Թուրքիայի նախագահ Ա. Սեզերի՝ Դամասկոս կատարելիք այցելության չեղյալ հայտարարմանը, սակայն Թուրքիայի նախագահը, որն այս հարցում վայելում էր նաև վարչապետ Էրդողանի լիակատար աջակցությունը, տեղի չտվեց ամերիկյան հորդորներին¹⁸²:

Թուրքիան միջնորդություն իրականացրեց նաև Սերբիայի իսլամաբնակ Մանջակ մարզի խմբավորումների հակասությունները հարթելու հարցում: Մյուս կողմից, Թուրքիան 2010 թ. Սերբիայի ու Բոսնիա-Հերցեգովինայի միջև միջնորդեց միմյանց տարածքային ամբողջականությունը հարգելու վերաբերյալ հռչակագրի ընդունման հարցում¹⁸³: Սակայն Թուրքիայի միջնորդական ջանքերը ժամանակի ընթացքում ստանում էին ավելի կողմնակալ ու կրոնական բնույթ և, որպես կանոն, ավարտվում անհաջողությամբ և ավելի սրում տարածաշրջանի ժողովուրդների միջև հարաբերությունները:

ԱՄՆ-ի վարչակարգում լավ հասկանում են, որ Մերձավոր Արևելքում նոր սպառնալիք է առաջացել հանձինս Թուրքիայի քաղաքականության: Անկարան արդեն չէր կարող դիտվել որպես ԱՄՆ-ի վստահելի դաշնակից, քանզի այդ երկիրը փորձում էր միջազգային հարաբերություններում հանդես գալ իր հավակնություններով, որոնք ոչ միշտ է, որ համընկնում են ԱՄՆ-ի ռազմավարական շահերի հետ: Թուրքիան փորձում էր իր շուրջը ստեղծել այնպիսի տնտեսական և քաղաքական տարածություն, որը հակա-

¹⁸² Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները..., էջ 48:

¹⁸³ Steu Babali T., New Turkish Foreign Policy in the Balkans, 20 December 2010, <http://sam.gov.tr/this-is-my-first-blog>.

սում էր ԱՄՆ-ի տարածաշրջանային շահերին: Թուրքիան չէր թաքցնում Սևծովյան տարածաշրջանում, Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի դիրքերի թուլացման հարցում իր շահագրգռվածությունը: Թուրքիան իր ռազմավարական ծրագրերում կողմնորոշվում է դեպի Ասիայի այնպիսի ուժային կենտրոններ, ինչպիսիք են Չինաստանն ու Հնդկաստանը, ձգտում է վերածվել մահմեդական երկրների տնտեսական միության առաջատարի, ինչը նույնպես ունի ակնհայտ հակաամերիկյան ուղղվածություն և նշված տարածաշրջաններում հակադրվում է ԱՄՆ-ի տարածաշրջանային շահերին¹⁸⁴:

ԱՄՆ-ը հետխորհրդային տարածքներում տեղակայեց իր ավիաբազաները, զորամիավորումները և ռազմական խորհրդականներին՝ ձեռք բերելով նոր դաշնակիցներ և գործընկերներ: Այս ամենի արդյունքում ԱՄՆ-ի համար Թուրքիայի՝ որպես առանցքային դաշնակցի, դերը տարածաշրջանում զգալիորեն նվազեց¹⁸⁵: Վաշինգտոնը հետխորհրդային տարածքի վրա ազդեցություն տարածելու առումով արդեն հիմնվում էր ոչ այնքան Թուրքիայի, որքան նոր դաշնակիցների՝ Ուկրաինայի և Վրաստանի վրա¹⁸⁶:

Առաջին 60 տարիների ընթացքում Թուրքիան լիարժեք գոհ էր ՆԱՏՕ-ին իր անդամակցությունից: Թուրքիան ՆԱՏՕ անդամ պետությունների շարքում ԱՄՆ-ից հետո ունի երկրորդ մեծաքանակ բանակը. ՆԱՏՕ զինվորների թիվը շուրջ 3,5 միլիոն է, ԱՄՆ-ի բանակի անձնակազմը՝ 1.427.000, իսկ Թուրքիայինը՝ 720.648:

¹⁸⁴ St' u Мурядян И., США – Турция – партнеры или противники?, <http://novostink.ru/mir/54421.html#ixzz2ozvvsDb1>

¹⁸⁵ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., Кавказ-2004, Ежегодник Института Кавказа, Ер., 2006, с. 184.

¹⁸⁶ St' u Пахомов Н., Российско-турецкое партнерство: проверка Абхазией, <http://www.politcom.ru/3184.html>

Վերջինիս բանակն ունի զինվորական ուսումնաստության առանձին համակարգեր, մասնավորապես՝ սպայական կազմը կրթվում և վերապատրաստվում է ինչպես այլ երկրների զինվորական ուսումնական հաստատություններում, այնպես էլ ՆԱՏՕ-ի ակադեմիաներում¹⁸⁷: Բելգիայի, Գերմանիայի, Իտալիայի և Նիդերլանդների հետ մեկտեղ Թուրքիան ՆԱՏՕ-ի այն անդամ պետություններից է, որն իր տարածքում ՆԱՏՕ-ի միջուկային զինամթերք ունի: Թուրքիայի ռազմաօդային Ինջիրլիք ռազմակայանում պահեստավորված են 70 միավոր մարտավարական միջուկային ռումբեր, որոնցից 10-20-ը նախանշված են Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից օգտագործման համար, իսկ մնացած 50 ռումբերը գտնվում են ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի տրամադրության տակ¹⁸⁸:

Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո նրա քաղաքական կշիռը դաշինքում զգալիորեն նվազեց: Թուրքիան դեմ էր արտահայտվում Լիբիա ՆԱՏՕ-ի ուժերի ներխուժմանը, սակայն ստիպված էր համակերպվել այդ որոշման հետ¹⁸⁹: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը և վարչապետ Ռ. Էրդողանը Ստրասբուրգում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում հրաժարվում էին գլխավոր քարտուղարի պաշտոնում հաստատել դանիացի Ռասմուսենի թեկնածությունը՝ նրան մեղադրելով ծաղրանկարային սկանդալին չմիջամտելու, Դանիայի տարածքում հեռարձակվող քրդական հեռուստաալիքը չփակելու մեջ և այլն: Միայն ԱՄՆ-ի նախագահի

¹⁸⁷ Ст' u Stratejik Plan 2012-2016, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Dokuments/SP/Sp2012-2016/index.html>

¹⁸⁸ Ст' u Взаимодействие Турции и НАТО, <http://www.nato.bz/ru/pr/p00157.html>

¹⁸⁹ Ст' u Гаврилева Н., Россия, Турция и Черное море, <http://www.kr-eho.info/index.php?name=News&op=article&sid=9036>

անձնական միջամտության հետևանքով Թուրքիան քվեարկեց առաջարկվող թեկնածության օգտին¹⁹⁰:

2004 թ. Ռումինիայի և Բուլղարիայի անդամակցումով Սևծովյան տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ընդարձակումը լրջորեն մտահոգում էր Թուրքիային, որը բավարար քաղաքական կամք չդրսևորեց այս ուղղությամբ ՆԱՏՕ-ի ընդարձակումը կանխելու համար և արդյունքում գրկվեց Սևծովյան ավազանում դաշինքի միակ անդամը լինելու արտոնյալ կարգավիճակից¹⁹¹: ԱՄՆ-ը ցանկանում էր նաև իր ռազմակայանն ունենալ Սևծովյան ավազանում, և Ջ. Բուշի վարչակարգն այս հարցում ճնշում էր գործադրում Թուրքիայի վրա, որպեսզի ամերիկյան ռազմակայան հիմնվի Տրապիզոնի շրջանում, սակայն այս հարցում թուրքերը դիմադրեցին¹⁹²:

Երբեմն Թուրքիան պատրաստակամություն է հայտնում տրամադրել ավելի մեծաթիվ խաղաղապահ զորախումբ, ինչպես Կոսովոյում և Բոսնիայում, սակայն նա առանձնապես խանդավառված չէր Աֆղանստանում կոալիցիայի ռազմարշավին մասնակցելու փաստով: ԱՄՆ-ը հասկանում է Թուրքիայի հետապնդած քաղաքական նպատակները, ուստի փորձում է հավասարակշռել նրա ռազմական ծառայություններն ու քաղաքական հավակնությունները: Վերջերս ամերիկացիներն ընդհանրապես կասկածներ հայտնեցին Թուրքիայի զինուժի մարտունակության և անվտանգության համակարգում նրա արդյունավետության վերաբերյալ: Նշվում էր թուրք զինվորականների կողմից ռազմական տեխնիկայի նոր տեսակներին տիրապետելու ցածր մակարդակը և թուրքական հետախուզության ոչ արհեստավարժ լինելու հանգամանքը:

¹⁹⁰ Տե՛ս К союзнику – с пониманием, <http://expert.ru/2009/04/7/>

¹⁹¹ Տե՛ս Маркедонов С., Турция уходит к России, <http://www.politcom.ru/3561.html>

¹⁹² Տե՛ս Турции нужна не земля, а рынок, <http://expert.ru/2010/05/24/>

Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին նվիրված ԱՄՆ-ի զեկույցներում անընդհատ նշվում էին Թուրքիայում քրդերի իրավունքների խախտումների մասին՝ մատնանշելով, որ թուրքական իշխանությունները ճնշումներ են իրականացնում երկրի հարավարևմտյան շրջաններում գործող հասարակական կազմակերպությունների նկատմամբ: 1996 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը սահմանափակումներ մտցրեց Թուրքիային զենքի վաճառքի հարցում, ինչը հիմնավորվում էր խաղաղ քուրդ ազգաբնակչությանն ամերիկյան զենքով սպանելու հանգամանքով: Մակայն ամերիկյան զինվորականները շրջանցում էին այս արգելքը, 1997 թ. եվրոպական հրամանատարության շրջանակներում համատեղ գորավարժություններ էին իրականացնում թուրքական հատուկ ստորաբաժանումների հետ, որոնք էլ աչքի էին ընկել քուրդ բնակչության նկատմամբ դաժան գործողություններով:

Վաշինգտոնի հետաքրքրությունը քրդերի նկատմամբ պայմանավորված է տարածաշրջանում ԱՄՆ-ի աշխարհատնտեսական շահերով, ինչպես նաև տվյալ տարածաշրջանում քրդական գործոնի դերի բարձրացումով: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանատունը սկսեց զգուշորեն հետաքրքրվել այդ երկրի քրդերով, կանոնավոր կերպով այցելել այդ շրջանները, ինչն անընդհատ լարվածություն էր առաջացնում Անկարայում: Ամերիկացիներն անգամ փորձում էին քրդերի ոչ պաշտոնական կենտրոն համարվող Դիարբեքիրում հյուպատոսություն բացել, ինչը բացասական արձագանք ստացավ Անկարայի կողմից, որը կտրուկ դեմ արտահայտվեց նաև Դիարբեքիրում ամերիկյան և տեղացի գործարարների համագործակցության գրասենյակ բացելու ԱՄՆ-ի նախաձեռնությանը: Թուրքիայում ամերիկյան դեսպանատունը հարաբերություններ էր հաստատել նաև քրդական մտավորականության

հետ, պարբերաբար նրանց հետ անց էր կացնում հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում էր Քրդական հարցը: Ընդ որում, ամերիկյան դեսպանատուն էին հրավիրվում նաև քրդական ծագում ունեցող թուրքական կուսակցությունների ներկայացուցիչներ: Քրդերի հետ ԱՄՆ-ի դեսպանատան շփումները նույնպես Անկարայի ուժգին դժգոհությունն էին առաջացնում:

Թեև ԱՄՆ-ը պաշտպանում են Անկարային ՔԱԿ-ի ահաբեկիչների դեմ պայքարում, այդուհանդերձ չեն մոռանում հիշեցնել Թուրքիային ՔԱԿ-ին Քրդական հարցից անջատելու մասին: 1990-ական թթ. Վաշինգտոնը պարբերաբար ՔԱԿ-ին ընդգրկում էր ահաբեկչական կազմակերպությունների ցուցակի մեջ, սակայն երբեմն ՔԱԿ-ի գործողություններն անվանում էր «ապստամբական», այլ ոչ թե «ահաբեկչական», իսկ նրա անդամներին՝ «մարտիկներ», այլ ոչ թե «ահաբեկիչներ»: 2000 թ. հետո զինված պայքարի դադարեցումից հետո ԱՄՆ-ի Պետքարտուղարությունն իր զեկույցներում մի քանի տարի ՔԱԿ-ն չէր անվանում ահաբեկչական կազմակերպություն, թեև այն մնում էր ցուցակում: Այս ամենը վկայում է այն մասին, որ Վաշինգտոնում ՔԱԿ-ն չէին համարում սովորական ահաբեկչական կազմակերպություն, այլ նրան վերաբերվում էին որպես խոշորագույն քրդական քաղաքական կազմակերպության, որը հանդես էր գալիս Մերձավոր և Միջին Արևելքում անկախ, ժողովրդավարական քրդական պետության ստեղծման օգտին¹⁹³: Աջակցելով Թուրքիային ՔԱԿ-ի դեմ պայքարում՝ ԱՄՆ-ն Անկարայի ուշադրությունը միշտ հրավիրում է այդ կազմակերպության և քուրդ ազգաբնակչության խնդիրների

¹⁹³ St' u Политика США в отношении курдов Турции,
<http://agrimaykop.ucoz.com/news/>

տարանջատման անհրաժեշտության վրա¹⁹⁴: Ոչ պաշտոնական տվյալներով՝ ՔԱԿ-ի գործունեությունն անգամ ֆինանսավորվում է Վաշինգտոնի կողմից և նման աջակցության արդյունքում քուրդ մարտիկները հնարավորություն էին ստանում ներթափանցել թուրքական տարածք և այնտեղ ահաբեկչական գործողություններ կատարել¹⁹⁵:

Հատկանշական է, որ թեև Իրաքյան Քուրդիստանի և Թուրքիայում բնակվող քրդերի հարցում Վաշինգտոնը վարում է տարբերակված քաղաքականություն, այդուհանդերձ, ԱՄՆ-ում շատ լավ գիտակցում են այդ տարածքների փոխկապվածությունը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ռ. Պիրսոնը 2003 թ. հուլիսին ԱՄՆ-ը վերդառնալուց առաջ հայտարարեց, որ ԱՄՆ-ը Թուրքիայի հարավ-արևելքը և Իրաքի հյուսիսը հակված է դիտել որպես միասնական տնտեսական գոտի, դեսպանը հատուկ ուշադրություն հրավիրեց այդ տարածքներն իրար հետ կապող հաղորդակցության ուղիների ապահովման վրա¹⁹⁶:

Ամերիկա-թուրքական դաշնակցային հարաբերությունների վրա ոչ մի խնդիր այնպիսի բացասական ազդեցություն չունեցավ, ինչպես ամերիկյան ներխուժումը Իրաք¹⁹⁷: Իրաքի ռազմական գործողության նախապատրաստման և իրականացման ժամանակ ԱՄՆ-ը բացարձակապես հաշվի չէր առնում Անկարայի շահերը, երբ փորձում էր ստանալ Թուրքիայի համաձայնությունն այդ երկրի տարածքից Իրաք ներխուժման հարցում: Այդ իսկ

¹⁹⁴ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 185.

¹⁹⁵ St' u Новикова Е., Новый шанс Анкары, <http://expert.ru/2011/09/14/>

¹⁹⁶ St' u Политика США в отношении курдов Турции, <http://agrimaykop.ucoz.com/news/>

¹⁹⁷ Lesser I. O., Turkey, the United States and the Delusion of Geopolitics, "Survival", Vol. 48, No. 3, Autumn 2006, p. 83.

պատճառով շուրջ վեց ամիս տևած բանակցություններից հետո 2003 թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ամերիկյան զորքերին Թուրքիայի տարածքից Իրաք ներխուժման թույլտվության տրամադրման ամերիկյան կողմի առաջարկը¹⁹⁸: 2003 թ. Անկարան Իրաքի վրա հարձակում իրականացնելու համար հրաժարվեց ԱՄՆ-ին տրամադրել իր ռազմակայանները, իր շահերը վեր դասելով ամերիկացիների շահերից¹⁹⁹: Թուրքական խորհրդարանը, փաստորեն, թույլ չտվեց, որ թուրքական տարածքում տեղակայվի շուրջ 60 հազարանոց ամերիկյան զորախումբը՝ չնայած այն հանգամանքին, որ Վաշինգտոնն Անկարային խոստացել էր 15 մլրդ դոլարի չափով ֆինանսական օգնություն ցուցաբերել²⁰⁰: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի որոշումը ցավալի հարված եղավ Բուշի վարչակարգի, առավել ևս՝ Պենտագոնի համար, քանզի ամերիկա-բրիտանական զորքերը ստիպված եղան Բաղդադի ուղղությամբ հարձակումն իրականացնել հարավից: Ամերիկյան վարչակարգի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ կոշտ քննադատության ենթարկեցին թուրք զինվորականությանն այն բանի համար, որ թուրք զեներալները չկարողացան կամ չցանկացան ազդել քաղաքացիական իշխանությունների վրա ԱՄՆ-ին հարկավոր որոշման ընդունման նպատակով²⁰¹: Թուրքիայի որոշումը ոչ միայն հարկադրեց փոխել պատերազմի նախնական ծրագրերը, այլև բացասական հետևանք ունեցավ հետագայում Իրաքում ստեղծված անկայուն վիճակի վրա: Ամերիկյան մամու-

¹⁹⁸ Hill F., Taspinar O., Turkey and Russia: Axes of the Excluded? “Survival”, Vol. 48, No. 1, Spring, 2006, p. 82.

¹⁹⁹ Ст'у Горбунов О., Турецкая фронда, <http://www.politcom.ru/12341.html>

²⁰⁰ Ст'у Израильский вектор внешней политики Турции, <http://mir-politika.ru/364-turciya-israel.html>

²⁰¹ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 185.

լում «զգուշավոր» հրապարակումներ հայտնվեցին այն մասին, որ ԱՄՆ-ը «Ինջիրիլկ» ռազմակայանի փոխարեն ստիպված է որոնել նոր ռազմակայաններ իր օդուժի համար Միջին Արևելքում, օրինակ՝ Վրաստանում և Իրաքյան Քուրդիստանում²⁰²: ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդը հետագայում հայտարարեց, որ Իրաքում ստեղծված անկայուն իրավիճակի պատճառներից մեկն էլ այն է, որ Թուրքիան չթույլատրեց ամերիկյան չորրորդ հետևակային դիվիզիային Թուրքիայի տարածքով հյուսիսից մտնել Իրաք՝ երկրորդ ճակատ բացելով Ս. Հուսեյնի դեմ²⁰³:

2002 թ. ընթացքում քրդական կառավարությունը ԱՄՆ-ից ստացավ մեծաքանակ սպառազինություն, որի յուրացումը կատարվում է Վաշինգտոնի ներկայացուցիչների վերահսկողությամբ: Իրաքյան Քուրդիստանում ստեղծվել է նաև ԿՀՎ-ի արտաքին հետախուզության գրասենյակ, որը գործում է տեղի իշխանությունների հետ կապի մեջ լինելով: Քրդական կառավարությունն ԱՄՆ-ին առաջարկում է «օրինականացնել» այդ գրասենյակի գործունեությունը՝ ստորագրելով համապատասխան պայմանագիր, բայց Վաշինգտոնը հրաժարվում է՝ խուսափելով պաշտոնական հարաբերություններ հաստատելուց: ԱՄՆ-ը փաստորեն իրագործեց երկարատև հաջող գործողություն Իրաքը դաշնության վերածելու ուղղությամբ՝ երկրի հյուսիսարևելյան մասում ստեղծելով քրդական պետական կազմավորում: Թուրքիան խիստ դժգոհ է Իրաքյան Քուրդիստանին ԱՄՆ-ի ցուցաբերած այդ օժանդակությունից²⁰⁴:

Անկախ Քուրդիստանի ստեղծումը Ջ. Բուշի վարչակարգի ծրագրի հիմնական բաղկացուցիչներից մեկն էր: «Մեծ Մերձավոր Արևելքը» ծրագրվում էր որպես տարածաշրջանի գոյություն

²⁰² Տե՛ս Շլոսցեր Բ., Տանուլ տված Թուրքիան, 22.04.2003, <http://www.inosmi.ru>

²⁰³ Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները ..., էջ 49:

²⁰⁴ Տե՛ս Дружественный ультиматум, <http://expert.ru/2010/08/16/>

ունեցող քարտեզի վերաձևում ԱՄՆ-ի կողմից կառավարվող համակարգ ստանալու նպատակով²⁰⁵: 2005 թ. Իրաքն ընդունեց նոր սահմանադրություն, որով լայն ինքնավարություն է ամրագրված Իրաքյան Քուրդիստանի համար: Այդ փաստաթղթի համաձայն՝ Քուրդիստանը կարող է դուրս գալ Իրաքի կազմից կենտրոնական իշխանությունների կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում²⁰⁶: Իրաքյան Քուրդիստանը, բացի խորհրդարանից, ունի նաև կառավարություն, սեփական ռազմական խմբավորումներ՝ պեշմերգաները, որոնք հաշվվում են մինչև 80 հազար մարդ՝ զինված ծանր զինատեսակներով, զրահամեքենաներով և տանկերով, սեփական անվտանգության ծառայությունը՝ «Ասաիշ»-ը, որը ստեղծվեց իսրայելյի խորհրդականների օգնությամբ, մի քանի արբանյակային ալիքներ, չորս համալսարաններ՝ Սուլեյմանիեում, Էրբիլում, Դահուկում և Քիֆրիում: 2005 թ. Էրբիլի մոտ կառուցվեց օդանավակայան, որը Իրաքյան Քուրդիստանին ապահովեց արտաքին աշխարհի հետ օդային հաղորդակցությունը, Սուլեյմանիեում կա նաև երկրորդ օդանավակայանը: Չախոյի մոտակայքում սկսված նավթի հանքերի շահագործումը, որոնց պաշարները գնահատվում է մոտ 100 մլն բարել, Քուրդիստանին կարող է տալ եկամուտների անկախ աղբյուրներ: Քուրդիստանում արդեն գործում են 3800 իրաքյան և արտասահմանյան ընկերություններ: Չզտելով ներդրումներ ներգրավել, Քուրդիստանում օրենք ընդունվեց, որի համաձայն արտասահմանյան ներդրողները 10 տարով ազատվում էին հարկերից: Այսպիսով, Իրաքյան Քուրդիստանը հանդիսանում է Իրաքի միակ համեմատաբար կայուն և բարեկե-

²⁰⁵ Տե՛ս Слабые звенья Востока, <http://expert.ru/2011/08/12/>

²⁰⁶ Տե՛ս Турция разработала детальный план вторжения в Ирак, <http://www.regnum.ru/> 26.09.2007

ցիկ գոտին²⁰⁷: Բացի Իրաքյան Քուրդիստանում իրենց դիրքերը պահելուց, քուրդ գործիչները բարձր քաղաքական պաշտոններ են զբաղեցնում նաև Իրաքի կառավարությունում: Այս ամենը հնարավոր դարձավ ԱՄՆ-ի կողմից քրդերի դիրքերի լուրջ պաշտպանության արդյունքում, որոնց կռալիցիայի կողմից քայքայված Իրաքում հարկավոր էր լոյալության և կայունության մի կղզի²⁰⁸:

Թուրքիային խիստ անհանգստացնում է Իրաքյան Քուրդիստանին մոտ գտնվող խոշոր նավթահանքերով հարուստ Քիրքուք քաղաքի ապագա ճակատագիրը և այդ հարցում ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը: Քրդական ինքնավարության կառավարությունը ցանկանում է Քիրքուքն ընդգրկել իր սահմաններում, իսկ թուրքական կառավարող շրջանակները դեմ են դրան՝ գտնելով, որ Քիրքուքի հայտնվելը քրդական ինքնավարության սահմաններում լուրջ խթան կհանդիսանա հետագայում Հյուսիսային Իրաքի տարածքում անկախ քրդական պետության ստեղծման համար²⁰⁹:

Իրաքյան Քուրդիստանի օրինակը վարակիչ է ոչ միայն Սիրիայի, այլև Թուրքիայի քրդերի համար, ուստի սահմանային Հաքիարիի շրջանում թուրքական ռազմաօդային ուժերը պարբերաբար օդային հարվածներ են հասցնում քրդերի դիրքերին²¹⁰:

Ամերիկացիների համար Իրաքում բարդ վիճակի պայմաններում Թուրքիան քայլեր է ձեռնարկում իր դիրքերը Հյուսիսային Իրաքում իրապես ամրապնդելու համար՝ հենվելով թուրքալեզու տարրի վրա: 2003 թ. ապրիլի 23-ին Քիրքուքից ոչ հեռու կալանվեցին 23 թուրքեր, որոնցից 10-ը թուրքական հատուկ ծառայությունների գործակալներ էին, որոնք մարդասիրական շարասյան

²⁰⁷ Տե՛ս Седов Д., Сирия, Турция и курды, <http://vpoanalytics.com/2012/11/02/>

²⁰⁸ Տե՛ս Слабые звенья Востока, <http://expert.ru/2011/08/12/>

²⁰⁹ Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները..., էջ 51:

²¹⁰ Տե՛ս Они создали Курдистан, <http://expert.ru/2012/07/30/>

կազմում քաղաքացիական հագուստով ներթափանցել էին Հյուսիսային Իրաք: Խուզարկության ժամանակ նրանց մոտ հայտնաբերվեց մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Ամերիկացի գնդապետ Բ. Մեյվիլը հայտարարեց, որ նրանց նպատակը եղել է այնպիսի պայմաններ ստեղծելը, որ Թուրքիան կարողանար դա օգտագործելով Քիրքուք ուղարկել մեծաթիվ խաղաղարար զորախումբ: Նրա խոսքերով, հատուկ ջոկատայինները կապված էին քաղաքում գործող տարբեր թուրքական խմբերի հետ, սակայն ապրիլի 24-ի առավոտյան պահակախմբի ուղեկցությամբ նրանք վերադարձվեցին սահմանագիծ²¹¹: Այսպիսով, Թուրքիան բացահայտորեն փորձում էր Հյուսիսային Իրաքում ամրապնդել իր դիրքերը, ինչը տրամագծորեն հակադրվում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին: Ի պատասխան այս միջադեպի՝ Թուրքիայի զինուժի գլխավոր շտաբը հայտարարեց, թե մտադիր է դադարեցնել բանակցություններն ամերիկյան արտադրության 50 ուղղաթիռների գնման գործարքի շուրջ, որի գումարը կազմում էր շուրջ 2,2 մլրդ դոլար:

Այս իրավիճակում 2003 թ. հուլիսի 22-26-ը պաշտոնական այցով Վաշինգտոն ժամանեց Թուրքիայի արտգործնախարար Ա. Գյուլը, ով ամերիկյան կողմին հայտնեց Հյուսիսային Իրաքի կայունացման նպատակով այնտեղ թուրքական ուժեր մտցնելու Անկարայի մտադրության մասին²¹²: Ամերիկյան իշխանությունները կտրուկ դեմ արտահայտվեցին դրան, քանզի Իրաքի հյուսիսը երկրի առավել կայուն հատվածներից մեկն էր, իսկ թուրքական ներխուժումը լրջորեն կապակայունացներ իրավիճակը ողջ տարածաշրջանում: Եթե թուրքերը մտնեին Հյուսիսային Իրաք և մարտեր սկսեն ՔԱԿ-ի զինյալների հետ, ապա թուրքական բանա-

²¹¹ McGregor A., Massoud Barzani Conducting Dangerous Games in Northern Iraq, Terrorism Focus, Vol. IV, Issue 23, July 17, 2007, p. 4.

²¹² Պոդոյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները..., էջ 55:

կին անհնար կլինի չբախվել իրաքյան անվտանգության ուժերի հետ, ինչի դեպքում ամերիկացիները կրկին ստիպված էին լինելու պաշտպանել Անկարային, իսկ քրդերն իրենց դավաճանված կզգային՝ այն դեպքում, երբ նրանք հանդիսանում էին այդ երկրում ԱՄՆ-ի միակ իրական հենարանը:

Հոկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման թիվ 106 բանաձևի քվեարկությունից գրեթե անմիջապես հետո էրդողանը հայտարարեց, որ, չնայած ամերիկյան կողմի անհամաձայնությանը, կառավարությունը մտադիր է դիմել խորհրդարանին՝ թուրքական գործերին Իրաքի տարածքում ռազմական գործողություններ իրականացնելու թույլտվություն տրամադրելու առաջարկով: Հոկտեմբերի 17-ին թուրքական խորհրդարանը ձայների բացարձակ առավելությամբ հավանություն տվեց մեկ տարի ժամկետով Հյուսիսային Իրաքում քուրդ ապստամբների դեմ ռազմական գործողություններ իրականացնելու նպատակով Իրաքի տարածք թուրքական զինուժ մտցնելու կառավարության առաջարկին²¹³:

Բուշն անձամբ բանակցություններ սկսեց իրաքյան և թուրք առաջնորդների հետ՝ ձգտելով միջոցներ գտնել Հյուսիսային Իրաք թուրքական ռազմական ներխուժումից խուսափելու համար: Իրաքի և Թուրքիայի ղեկավարներին առաջարկվում էր եռակողմ բանակցություններ անցկացնել Ստամբուլում կայանալիք իրաքյան հիմնահարցին նվիրված միջազգային համաժողովի ընթացքում: Վաշինգտոնը նաև ճնշում էր գործադրում իրաքյան քրդերի առաջ-

²¹³ Նույ տեղում, էջ 62:

նորդների՝ Ջ. Թալաբանիի և Մ. Բարզանիի վրա, որպեսզի նրանք էլ իրենց հերթին ազդեին ՔԱԿ-ի ղեկավարության վրա²¹⁴:

Հյուսիսային Իրաքում ԱՄՆ-ի իրական նպատակների առնչությամբ թուրքական կողմի կասկածներն էլ ավելի ուժեղացան այն բանից հետո, երբ 2007 թ. թուրքական ուժերը ՔԱԿ-ի մարտիկներից առգրավեցին ամերիկյան արտադրության զենքեր: Ամերիկյան կողմի պնդումների համաձայն, ՔԱԿ-ի զինյալներից խլված ամերիկյան զենքերը նախատեսված էին իրաքյան բանակի համար, սակայն դրանց մի մասն ապօրինաբար տրվել է քրդերին իրաքյան անվտանգության ծառայության որոշ աշխատակիցների կողմից: Այնուամենայնիվ, Թուրքիայի վարչապետ էրդողանը հայտարարեց, որ այս խնդրի կապակցությամբ ամերիկյան կողմի բացատրություններն այնքան էլ համոզիչ չեն²¹⁵:

Չնայած Վաշինգտոնի նախագուշացումներին, 2007 թ. դեկտեմբերի 17-ի, լույս 18-ի գիշերը Թուրքիան Հյուսիսային Իրաքում ՔԱԿ-ի զինյալների ռազմակայաններին հարված հասցնելու անվան տակ լայնածավալ ռազմական գործողություն իրականացրեց հարևան երկրի տարածքում, որի իրական նպատակն էր խարխլել Իրաքյան Քուրդիստանի ինքնավարությունը²¹⁶: Հատկանշական էր, որ Անկարան այդ ներխուժումը փորձում էր ներկայացնել այնպես, որ Վաշինգտոնը հարձակման նախորդ օրը բացել էր Իրաքի օդային տարածքը թուրքական օդուժի համար, ինչով, փաստորեն, թույլ էր տվել իրականացնել այդ ռազմական գործողությունը: Սակայն ամերիկյան կողմը ժխտում էր դա՝ նշելով, որ իրենք միայն տեղյակ են եղել կատարվելիք ներխուժման մասին: Հյուսի-

²¹⁴ Տե՛ս Страсти по Турции, <http://expert.ru/2007/10/24/>

²¹⁵ McGregor A., PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions Terrorism Focus, Vol. IV, Issue 27, August 14, 2007, p. 4.

²¹⁶ Տե՛ս Новикова Е., Курдистан в огне, <http://expert.ru/2007/10/18/>

սային Իրաքում Թուրքիայի ռազմական ներխուժումը համընկավ Իրաք ԱՄՆ-ի պետքարտուղար Ք. Ռայսի պաշտոնական այցի հետ, որի հետ հրաժարվեց հանդիպել այդ երկրում Վաշինգտոնի ամենահավատարիմ դաշնակիցը համարվող Իրաքյան Քուրդիստանի առաջնորդ Մ. Բարզանին: Վերջինս թուրքական հարձակման մեջ տեսնում էր նաև Վաշինգտոնի մեղքը: Կատարված փաստից հետո ԱՄՆ-ը Թուրքիայից պահանջեց դադարացնել Իրաքի ապակայունացմանն ուղղված ռազմական գործողությունները²¹⁷:

2014 թ. հուլիսի 5-ին հերթական անգամ ամերիկյան զինվորները Իրաքյան Քուրդիստանի գորամիավորումների օգնությամբ ձերբակալեցին Հյուսիսային Իրաքում գտնվող թուրքական հատուկ նշանակության ուժերի 11 զինծառայողների: Սպիտակ տունը հրաժարվեց Անկարային պաշտոնական բացատրություն տալ այդ կապակցությամբ: Ի պատասխան 2014 թ. նոյեմբերի 12-ին թուրք ազգայնականների մի խումբ Ստամբուլում հարձակում իրականացրեց ամերիկացի զինծառայողների վրա, ինչը դատապարտվեց Վաշինգտոնի կողմից²¹⁸:

Չնայած Իսրայելի հետ ունեցած երկարամյա ռազմաքաղաքական գործակցությանը²¹⁹՝ Թուրքիան գիտակցաբար հարաբերությունների սրման գնաց Մերձավոր Արևելքում իր և ԱՄՆ-ի ավանդական դաշնակցի՝ Իսրայելի հետ: «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց կարճ ժամանակ անց Իսրայելի նկատմամբ Անկարայի վարած քաղաքականության

²¹⁷ Տե՛ս Сюрприз для Кондолизы Райс, <http://expert.ru/2007/12/19/>

²¹⁸ Տե՛ս Американо-турецкие разногласия по Сирии ведут к ухудшению отношений, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

²¹⁹ Տե՛ս Минасян С. М., Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности. 21-й век: Информационно-аналитический журнал, №2 (4), Ер., 2004, с. 94-115.

մեջ կտրուկ շրջադարձ կատարվեց: Արաբական երկրների հետ Իսրայելի դիմակայության մեջ Անկարայի իսլամիստական կառավարությունը սկսեց պաշտպանել արաբական երկրների շահերն ու իրավունքները և անհամաձայնություն հայտնել պաղեստինյան հիմնահարցում Իսրայելի գործողությունների հետ՝ դրանք անվանելով «պաղեստինցիների նկատմամբ ահաբեկչական մեթոդների կիրառում»: Շուտով Իսրայելը նաև հայտնվեց ազգային անվտանգությանը սպառնալիք ներկայացնող երկրների թուրքական ցուցակում: Թուրքիան հարաբերություններ է զարգացնում ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական կազմակերպություն համարվող ՀԱՄԱՍ-ի հետ, որը Իսրայելի և Արևմուտքի նկատմամբ արտահայտված թշնամական վերաբերմունք ունի²²⁰:

Պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման հետ սերտ համագործակցության գնալով Թուրքիան վտանգի տակ դրեց իր հարաբերությունները ոչ միայն Իսրայելի, այլև ԱՄՆ-ի հետ: Անկարան «պետական ահաբեկչություն» անվանեց 2004 թ. մարտին իսրայելական հատուկ ծառայությունների կողմից պաղեստինյան ՀԱՄԱՍ խմբավորման առաջնորդ շեյխ Յասինի և ավելի ուշ նրա ժառանգորդ Ա. Ռանտիսիի վնասազերծումը²²¹: Էրդողանը հայտարարեց, թե Թուրքիան հիասթափված է ԱՄՆ-ի կողմից ՀԱՄԱՍ-ի օրինական հաղթանակը չճանաչելու փաստից և 2006 թ. հունվարին Անկարայում ՀԱՄԱՍ-ի ղեկավարության համար պաշտոնական ընդունելություն կազմակերպեց²²²: ՀԱՄԱՍ-ի ղեկավար Հ. Մաշալը

²²⁰ St' u Турция: зачем нужны США и Евросоюз, когда есть Россия, Китай и Сирия?, <http://profi-forex.org/news/entry1008060259.html>

²²¹ St' u Израильский вектор внешней политики Турции, <http://mir-politika.ru/364-turciya-israel.html>

²²² Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները..., էջ 49:

Անկարայում Էրդողանին անվանեց ոչ միայն Թուրքիայի, այլև իսլամական աշխարհի առաջնորդ²²³:

Անկարան Թեյ-Ավիլի հասցեին մեղադրանքներ հնչեցրեց, երբ Իսրայելը պաղեստինյան անկլավում իրականացնում էր «Ձուլածո կապար» լայնամասշտաբ ռազմական գործողությունը, որից հետո Թեյ-Ավիլը շրջափակեց Գազայի հատվածը՝ ձգտելով թույլ չտալ, որ 2007 թ. այն վերահսկող ՀԱՄԱՍ-ին գենք մատակարարվի²²⁴: 2009 թ. ձմռանը դավոսյան գագաթաժողովի ժամանակ Թուրքիայի վարչապետ Էրդողանը Իսրայելի նախագահ Շ.Պերեսին մեղադրեց Գազայի հատվածի նկատմամբ ագրեսիա իրականացնելու, երեխաներին և քաղաքացիական անձանց սպանելու մեջ:

Իսրայելի պաշտպանության նախարար Է. Բարաքի Թուրքիա կատարելիք այցից առաջ Թեյ-Ավիլի և Անկարայի միջև նոր դիվանագիտական սկանդալ տեղի ունեցավ: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ հրեաները վրդովվեցին Թուրքիայում հերթական հակաիսրայելական սերիալի՝ «Գայլերի հովիտ» ֆիլմի ցուցադրությունից, որում ցույց էր տրվում, թե ինչպես են Թուրքիայում լրտեսական գործունեություն իրականացնող «Մոսադի» գործակալները համագործակցում տեղի մաֆիայի հետ, առևանգում երեխաների և նրանց թաքցնում Իսրայելի դեսպանատանը: Իսրայելի վրդովմունքը հատկապես առաջացրեց այն, որ սերիալի նկարահանումը ֆինանսավորվել էր Թուրքիայի պետական հեռուստատեսության կողմից: Իր արմատականությամբ հայտնի Իսրայելի արտգործնախարար Ա. Լիբերմանը որպես բողոքի նշան ցանկանում էր Անկարայից հետ կանչել Իսրայելի դեսպանին: Երկու երկրների միջև առանց այդ էլ լարված հարաբերություններն էլ ավելի չսրելու

²²³ Տե՛ս Աгаджанян М., Почему у Турции не получилось? Ближний Восток слезам не верит! <http://www.politcom.ru/14904.html>

²²⁴ Տե՛ս Дружественный ультиматум, <http://expert.ru/2010/08/16/>

նպատակով վարչապետ Նաթանյահուն թույլ չտվեց նման կերպ վարվել, այլ հանձնարարեց Լիբերմանին բավարարվել Թել-Ավիվում թուրք դեսպանից բացատրություններ պահանջելով: Լիբերմանն իր հերթին հանձնարարեց դա անել իր տեղակալին²²⁵:

2010 թ. հունվարի 11-ին Իսրայելի փոխարտգործնախարար Այալոնը թուրք դեսպանին հրավիրել էր ոչ թե արտգործնախարարություն, այլ իսրայելական խորհրդարան՝ կնեսետ, ինչն արդեն իսկ դիվանագիտական արարողակարգի խախտում էր: Թուրք դեսպանը հրեա լրագրողների ներկայությամբ ստիպված էր Այալոնի աշխատասենյակի դռան առաջ երկար սպասել, հանդիպման ժամանակ էլ սեղանին ցուցադրաբար դրված էր միայն Իսրայելի դրոշը: Թուրք դեսպանը հրապարակայնորեն նվաստացման ենթարկվեց հրեա բարձրաստիճան դիվանագետի կողմից, որը լրագրողների ներկայությամբ մոտ մեկ ժամ իր վրդովմունքն էր հայտնում թուրք դեսպանին Թուրքիայի հակահրեական գործողությունների կապակցությամբ: Անկարան սպառնաց հետ կանչել իր դեսպանին, և երկու երկրների միջև հարաբերություններն ավելի լարվեցին: Իսրայելի արտգործնախարարի և նրա տեղակալի այս գործողությունը պայմանավորված էր նրանով, որ նրանք համաձայն չէին իսրայելա-սիրիական հարաբերություններին Թուրքիայի միջնորդության հետ, որը ոչ միայն օգուտ չտվեց երկկողմ հարաբերություններին, այլ ավելի բարդացրեց դրանք: Այս սկանդալից հետո՝ հունվարի 17-ին Իսրայելի պաշտպանության նախարար Է. Բարաքը պետք է մեկնե՛ր Անկարա՝ Թուրքիայի պաշտպանության նախարարի և անձամբ Էրդոհանի հետ հանդիպելու և բոլոր վիճելի հարցերը կարգավորելու առաքելությամբ: Սակայն կատարվածից հետո Էրդոհանը հրաժարվեց հանդիպել նրա հետ:

²²⁵ Ст' у Сериал раздора, <http://expert.ru/2010/01/14/>

Իսրայելն իր հերթին սպառնաց, որ եթե Թուրքիան շարունակի պաշտպանել Իսրայելի թշնամիներին, մասնավորապես՝ ՀԱՄԱՍ-ին, ապա Թել-Ավիվը կարող է պատասխան քայլերի դիմել, մասնավորապես հրաժարվել պաշտպանել Անկարայի տեսակետը ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության հետ կապված: Թել-Ավիվը սպառնում էր, որ եթե թուրքերը շարունակեն պաշտպանել պաղեստինցիներին, ապա ինքը կպաշտպանի քրդերին, քանի որ թուրքական բանակը հանցագործություններ է կատարում քուրդ խաղաղ բնակչության դեմ: Երկրորդ անգամից Անկարան ընդունեց հրեաների ներողությունը և Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն հայտարարեց, որ երկու երկրների միջև ճգնաժամը հաղթահարված է²²⁶: Սակայն թուրք-իսրայելական հարաբերությունների լարվածության գագաթնակետը դեռ առջևում էր:

Թուրք-իսրայելական հարաբերությունների էլ ավելի սրմանը նպաստեցին «արաբական գարնան» իրադարձությունները: Իսրայելի ղեկավարներին մտահոգություն պատճառեց Միջերկրական ծովի արևելյան հատվածում թուրքական ռազմանավերի կողմից պարեկային հսկողություն իրականացնելու մասին Էրդոդանի հայտարարությունը: 2010 թ. մայիսի 31-ին Թուրքիայի կողմից պաղեստինցիներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու անվան տակ «Մավի Մարմարա» խաղաղության նավատորմն ուղարկվեց Գազայի հատված: Ի պատասխան Անկարայի այս քայլի՝ Իսրայելը ձեռնարկեց պատասխան գործողություններ: Իսրայելական հատուկ ջոկատայինների գործողության արդյունքում 19 մարդ զոհվեց, 30-ը՝ վիրավորվեց և 480-ը ձերբակալվեց, որոնց ճնշող մեծամասնությունը Թուրքիայի քաղաքացիներ էին: Թուրքիայի վարչապետն Իսրայելից պահանջեց ներողություն խնդրել «Խաղաղության

²²⁶ Տե՛ս նույն տեղում:

նավատորմի» վրա հարձակման հետևանքով Թուրքիայի քաղաքացիների մահվան համար, սակայն Իսրայելը կատարվածում չէր ճանաչում իր մեղքը և չէր պատրաստվում ներողություն խնդրել Անկարայից՝ մերժելով նավատորմի խաղաղ լինելը:

Մերժում ստանալուց հետո Անկարան Իսրայելի դեսպանից պահանջեց հեռանալ երկրից, հետ կանչեց նաև իր դեսպանին Թել-Ավիվից, կողմերի միջև խզվեցին դիվանագիտական հարաբերությունները և հայտարարվեց Իսրայելի հետ ռազմական ուղրտում համագործակցության կասեցման մասին²²⁷: Հատկանշական է, որ Էրդոդանի հակահրեական հայտարարություններից հետո միակ պարտված կողմը ԱՄՆ-ն է, որը կորցնում է իր տարածաշրջանային քաղաքականության երկու կարևոր դաշնակիցներին²²⁸: ԱՄՆ-ը մեծապես մտահոգված էր թուրք-իսրայելական հարաբերությունների սրմամբ և մեծ ջանքեր էր գործադրում իր դաշնակիցներին հաշտեցնելու ուղղությամբ²²⁹: Վաշինգտոնը երկու կողմին էլ կոչ արեց քայլեր ձեռնարկել երկկողմ հարաբերությունների կարգավորման և պատժամիջոցների վերացման ուղղությամբ: Մինևույն ժամանակ Իսրայելից «բարի կամքի» դեսպանները և ԱՄՆ-ից հրեական լոբբիստները ժամանում էին Անկարա՝ թուրքական իշխանություններին կոչ անելով Մերձավոր Արևելքում միջազգային ահաբեկիչների և իսլամական ծայրահեղական կազմակերպությունների սպառնալիքից ելնելով վերականգնել թուրք-

²²⁷ St´u Израиль: вердикт отношениям с Турцией - "Нer", <http://newsland.com/news/detail/id/1209327/>

²²⁸ St´u Агаджанян М., Ссорятся Турция и Израиль, а страдают США, <http://www.politcom.ru/15450.html>

²²⁹ Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., «Сравнительная политика», N1, М., 2013.с. 66.

ամերիկա-իսրայելական համագործակցությունը²³⁰: Այս գործողությունների հետևանքով Թել-Ավիվը համաձայնվեց ՄԱԿ-ի հանձնաժողովի հետաքննությանը, որի մեջ մտան Իսրայելի, Թուրքիայի ներկայացուցիչները և միջազգային հեղինակություն ունեցող քաղաքական գործիչներ²³¹: Չնայած այս ամենին՝ Անկարան Գազայի հատված նոր «Խաղաղության նավատորմեր» ուղարկելու պատրաստակամություն էր հայտնում՝ քաջ զիտակցելով, որ իսրայելական ռազմածովային ուժերին հրաման է տրված թույլ չտալ նման նավերի մոտեցումը²³²: 2012 թ. հունվարին Թուրքիան ընդունեց Գազայի վարչապետ Բ. Հանիին, և հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Անկարան ֆինանսական աջակցություն կցուցաբերի պաղեստինցիներին, ինչին խիստ ցավագին արձագանքեց Իսրայելը²³³:

Պաշտոնական այցով Իսրայելում գտնվող ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբամայի միջամտությամբ 2013 մարտի 22-ին Իսրայելի վարչապետ Բ. Նաթանյահուն, ի վերջո, ափսոսանք հայտնեց «Մավի Մարմարա» թուրքական նավի վրա գրոհելիս իսրայելական կողմի թույլ տված սխալների կապակցությամբ, ինչը հանգեցրեց Թուրքիայի քաղաքացիների մահվան: Հատկանշական է, որ Իսրայելն ափսոսանք հայտնեց կատարվածի վերաբերյալ, այլ ոչ թե ներողություն խնդրեց թուրքերից, քանզի տեղի ունեցածը համարում էր Թուրքիայի կողմից կազմակերպված սադրանք՝ արաբական աշխարհում իր հեղինակությունը բարձրացնելու նպատակով²³⁴: Իս-

²³⁰ Տե՛ս *Израильский вектор внешней политики Турции*, <http://mir-politika.ru/364-turciya-israel.html>

²³¹ Տե՛ս *Дружественный ультиматум*, <http://expert.ru/2010/08/16/>

²³² Տե՛ս *Турецкая осень*, <http://expert.ru/expert/2011/37/>

²³³ Տե՛ս *Израильский вектор внешней политики Турции*, <http://mir-politika.ru/364-turciya-israel.html>

²³⁴ Տե՛ս *Продавили*, <http://expert.ru/2013/03/25/>

րայելի վարչապետ Նաթանյահուի հետ հեռախոսազրույցից հետո Էրդողանը զրույց ունեցավ ՀԱՄԱՍ-ի ղեկավարության հետ՝ փոխանցելով իսրայելցիներից ստացած հավաստիացումները Գազայի հատվածում շրջափակման ռեժիմի վերանայման հետ կապված և հայտնեց մոտ ապագայում պաղեստինյան անկլավ այցելելու իր մտադրության մասին: Թեև ամերիկացիների խնդրանքով Էրդողանը հետաձգեց իր այցելությունը Գազայի հատված, սակայն Օբամայի հետ հանդիպման ժամանակ Էրդողանը կրկին հայտնեց պաղեստինյան անկլավ այցելելու իր մտադրության մասին²³⁵:

Միննույն ժամանակ, Անկարան հայտարարեց, որ Իսրայելի հետ հարաբերությունների անմիջապես և լիարժեք վերականգնում չի լինելու, քանի դեռ չեն կատարվել թուրքական բոլոր պահանջները՝ կապված ոչ միայն ներդրության ու նյութական հատուցման, այլև Գազայի հատվածի ապաշրջափակման հետ: Սրան անմիջապես հետևեց իսրայելական կողմի պատասխանը. Թել-Ավիվը պաշտոնապես հայտնեց, որ Գազայի հատվածի շրջափակման վերացման պահանջն անիրականանալի է²³⁶: Իսրայելի և Թուրքիայի միջև սկսվեցին 19 զոհվածների ընտանիքներին նյութական հատուցում տրամադրելու հարցի շուրջ բարդ ու տևական բանակցություններ, սակայն 4 ամսվա ընթացքում կողմերին չհաջողվեց հանգուցալուծման հասնել: Անկարային չէր բավարարում միայն զոհվածների ընտանիքներին նյութական հատուցում տրամադրելը, նա Իսրայելից պահանջում էր նաև Գազայի հատվածում բարելավել պաղեստինցիների վիճակը, ինչը հրեական պետության համար բացարձակապես ընդունելի չէր: Իսրայելի ղեկավար-

²³⁵ Տե՛ս Աгаджанян М., США остаются дирижером «турецкого марша» на Ближнем Востоке, <http://www.politcom.ru/15801.htm>

²³⁶ Տե՛ս Աгаджанян М., Турция – Израиль: примирение с многоточием, <http://www.politcom.ru/15544.html>

րությունը հույս ուներ, որ երկկողմ հարաբերությունների կարգավորման միջնորդ հանդիսացող Վաշինգտոնը ճնշում կգործադրի Անկարայի վրա՝ չափից դուրս արմատական պահանջներ չներկայացնելու հարցում²³⁷:

2013 թ. փետրվարի 27-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը կրկին ստիպեց Իսրայելին անհանգստանալ: Վիեննայում կայացած «Քաղաքակրթությունների դաշինք» խորագրով ՄԱԿ-ի վեհաժողովին ելույթ ունենալիս Էրդողանը սիոնիզմը հավասարեցրեց ֆաշիզմին, ինչը բավարար էր դժգոհության մեծ ալիք բարձրացնելու համար: Էրդողանի հայտարարությունը դատապարտվեց ԱՄՆ-ի կողմից, որի համար հակահրեական հռետորաբանությունն այդ միջոցառման շրջանակներում ցանկալի չէր²³⁸:

Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուն հրաժարվեց մասնակցել անվտանգության հարցերին նվիրված Մյունխենյան գագաթաժողովին*, քանի որ վերջին պահին մասնակիցների թվում ավելացել էր Իսրայելի պատվիրակությունը²³⁹: Իսրայելի արտգործնախարար Լիբերմանը, մեկնաբանելով Թուրքիայի արտգործնախարարի Մյունխենյան գագաթաժողովը բոյկոտելու որոշումը, հայտարարեց, որ Իսրայելի կողմից սխալ էր «Խաղաղության նավատորմի» հետ կապված ներողություն խնդրելը և քանի դեռ

²³⁷ Տե՛ս Продавили, <http://expert.ru/2013/03/25/>

²³⁸ Տե՛ս Агаджанян М., Ссорятся Турция и Израиль, а страдают США, <http://www.politcom.ru/15450.html>

* Պետությունների և կառավարությունների ղեկավարների, արտաքին գործերի և պաշտպանության նախարարների, աշխարհի տարբեր հատվածների գործարար և գիտական աշխարհի, իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների կարևոր գագաթաժողով է, որն անցկացվում է յուրաքանչյուր տարի և հանդիսանում է միջազգային հարաբերությունների վիճակի յուրահատուկ բարոմետր:

²³⁹ Տե՛ս Тарасов С., Турция vs Израиль: битва за ближневосточную корону, <http://www.regnum.ru/news/polit/1892909.html#ixzz3TDIsRWBe>

Թուրքիայում իշխանության գլխին է Էրդոդանի կառավարությունը, երկկողմ հարաբերությունների կարգավորման որևէ հնարավորություն գոյություն չունի:

Թուրքական իշխանությունները մտահոգված էին նաև նրանով, որ ԱՄՆ-ի կողմից թուրքական տարածքում տեղակայվելիք ռադարից ստացված հետախուզական տեղեկությունները կարող էին փոխանցվել նաև Իսրայելին և այդ առիթով իրենց մտահոգությունն էին արտահայտել Վաշինգտոնին: Անկարային հանգստացնելու համար Պենտագոնի ղեկավար Լ. Պանետտան Բրյուսելում ՆԱՏՕ-ի շտաբում ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի քաղաքականությունը ենթադրում է տեղեկատվության փոխանակում միայն դաշինքի մասնակիցների միջև, իսկ Իսրայելը, ՆԱՏՕ-ի անդամ չհանդիսանալով, չի կարող օգտվել այդ տեղեկություններից: Մյուս կողմից հայտարարվեց, որ ռադարը տեղադրվում է ԱՄՆ-ը, Եվրոպան և Մերձավոր Արևելքը Իրանի հեռահար հրթիռներից պաշտպանելու նպատակով: Ակնհայտ էր, որ Իրանի համար առաջնահերթ թիրախ հանդիսանում է Իսրայելը²⁴⁰:

Թուրք-իսրայելական հարաբերությունների սրումը հիմք հանդիսացավ, որ Իսրայելի կառավարությունը և ԱՄՆ-ի կառավարող վերնախավում ազդեցիկ դիրքեր ունեցող ծագումով հրեա գործիչներն ամերիկյան կառավարող էլիտայում սկսեն բավական հիմնավոր փաստարկներ շրջանառել Թուրքիայի դեմ և կասկածի տակ դնել այն թեզը, որ Անկարան շարունակում է մնալ ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը²⁴¹:

²⁴⁰ Տե՛ս ПРО НАТО в Турции направлено против Ирана, но Израилю не поможет, <http://www.regnum.ru/news/fd-abroad/1453906.html#ixzz1aM3jTSu7>

²⁴¹ Տե՛ս Мурадян И., США – Турция – партнеры или противники?, <http://novostink.ru/mir/54421.html#ixzz2ozvvsDb1>

Մինչև «արաբական գարունը» թուրքական ռազմավարության էությունը կայանում էր Մերձավոր Արևելքի գլխավորապես տնտեսական և գաղափարական կլանման մեջ²⁴²: 2009-2010 թթ., երբ «արաբական գարնան» հետևանքները դեռևս կանխատեսելի չէին, ԱՄՆ-ը, Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրների եղած վարչակարգերի տապալման ու դրանց «ժողովրդավարացման» գործում որոշեց օգտագործել Թուրքիայի տարածքն ու ռեսուրսները՝ վերջինիս ներգրավելով այդ գործընթացների մեջ: Թուրքիան պաշտպանեց «արաբական գարունը» և Վաշինգտոնի առաջարկն ընկալեց այնպես, որ Անկարան Մերձավոր Արևելքում դարձել է Վաշինգտոնի իրավահավասար գործընկերը, մինչդեռ վերջինս ելնում էր նրանից, որ իր համար գոյություն չունեն իրավահավասար գործընկերներ: ԱՄՆ-ն Անկարային մշտապես համարել է կրտսեր գործընկեր, պահանջելով երկկողմ հարաբերություններում պահպանել աստիճանակարգումը: Փաստորեն, ԱՄՆ-ն իր մեղքի բաժինն ունի նրանում, որ Թուրքիային «արաբական գարնան» ընթացքում տրվեցին այնպիսի արտոնություններ, որոնք մեծացրեցին Անկարայի ամբիցիաները՝ այն աստիճան, որ գլխացավանք դարձան նաև Վաշինգտոնի համար:

Անկարան հույս ուներ, որ հին վարչակարգերի տապալումից հետո արաբական երկրներում կհաստատվի Թուրքիայի իսլամական ժողովրդավարության մոդելը, ինչը կհաստատի իր անվերապահ ազդեցությունը տարածաշրջանի երկրների վրա²⁴³: Թուրքիային կուրացրել էին «արաբական գարնան» ընձեռած հեռանկարները: Նա կարծում էր, որ այդ գործընթացներին մասնակցելով հնարավոր է առավելության հասնել արաբական աշխարհի

²⁴² Տե՛ս Имам не сдержал азарта, <http://expert.ru/expert/2012/31/>

²⁴³ Տե՛ս Турецкая осень, <http://expert.ru/expert/2011/37/>

այնպիսի մրցակիցների նկատմամբ, ինչպիսիք էին Եգիպտոսն ու Լիբիան²⁴⁴: Անկարան հատկապես մեծ ոգևորություն ապրեց Եգիպտոսում Մուբարաքի իշխանության տապալումից հետո, որը համարվում էր տարածաշրջանային առաջնորդ դառնալու հարցում Թուրքիայի գլխավոր մրցակիցը²⁴⁵: Թուրքիան պաշտպանում էր Լիբիայի վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևը և հանդես էր գալիս կոալիցիայի կողմից այդ երկրի նկատմամբ սահմանափակումների կիրառման օգտին: Թուրքական նավերը իրականացնում էին Լիբիա զենք մատակարարելու արգելափակումը, սակայն Անկարան դեմ էր ցամաքային ռազմական գործողության իրականացմանը: Իր այս դիրքորոշմամբ Անկարան փորձում էր շահել լիբիական հակամարտության բոլոր կողմերի, ինչպես նաև արաբական աշխարհի համակրանքը և առավելության հասնել Եվրոպայի և ԱՄՆ-ի նկատմամբ, որոնք Լիբիայի ճգնաժամը հաղթահարելու միակ լուծումը տեսնում էին ռազմական ուժի կիրառման մեջ²⁴⁶:

2011 թ. սեպտեմբերի կեսերին ավարտվեց Թուրքիայի վարչապետ Էրդոդանի արաբական շրջագայությունը, որի ընթացքում նա այցելեց Եգիպտոս, Թունիս և Լիբիա: Թուրքիայի իշխանությունները պլանավորել էին որքան հնարավոր է արագ «արաբական գարնան» հետևանքով Հյուսիսային Աֆրիկայի երկրների նոր կառավարությունների հետ հաստատել բարեկամական հարաբերություններ՝ նրանց համար ծառայելով որպես ապագա բարեփոխումների և արտաքին քաղաքականության յուրահատուկ ուղենիշ²⁴⁷: Ստացվում էր, որ «արաբական գարնանը» Թուրքիայի մաս-

²⁴⁴ Տե՛ս Имам не сдержал азарта, <http://expert.ru/expert/2012/31/>

²⁴⁵ Տե՛ս Тарасов С., Турция vs Израиль: битва за ближневосточную корону, <http://www.regnum.ru/news/polit/1892909.html#ixzz3TDIsRWBe>

²⁴⁶ Տե՛ս Урегулирование на подъеме, <http://expert.ru/2011/04/8/>

²⁴⁷ Տե՛ս Ларионов Р., Дипломатия Эрдогана: и себе, и людям,

նակցությունից պրակտիկ օգուտներ էր ստանում Անկարան, մինչ-դեռ նրան այս գործընթացում սատարող ԵՄ-ի և ԱՄՆ-ի շահերի առաջնությունը կասկած էր հարուցում²⁴⁸: Արաբական երկրների շրջագայությունից հետո Էրդոդանը մեկնելու էր ԱՄՆ-ը, որի արդյունքներով էլ կորոշվեր Մերձավոր Արևելքում կայունության հաստատման այն բանաձևի ճակատագիրը, որն առաջարկվում էր Անկարայի կողմից²⁴⁹: Վերջին շրջանում Վաշինգտոնը չափազանց դժգոհ էր Էրդոդանի վարչակարգի կողմից իրականացվող քաղաքականությունից: ԱՄՆ-ին հատկապես մտահոգում էր Թուրքիայի տարածաշրջանային առաջնորդ դառնալու հեռանկարը, քանզի ինքնուրույն քաղաքականություն իրականացնելով՝ Թուրքիան դադարել էր սպասարկել Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի քաղաքականությանը²⁵⁰: ԱՄՆ-ի նախագահ Օբաման արդեն պակաս եռանդով էր հանդիպում թուրք առաջնորդի հետ, որի պատճառը Մերձավոր Արևելքում Թուրքիայի չնվազող ամբիցիաներն էին²⁵¹: Թեև լիբիական ուղղությամբ Անկարան միացավ ՆԱՏՕ-ի կռաւիցիային, սակայն շուտով հայտնվեց երկրորդական դերում:

Եթե Թունիսում, Եգիպտոսում և Լիբիայում Թուրքիային ավելի շուտ օժանդակ դեր էր հատկացված, ապա սիրիական իրադարձություններում նա դարձավ հիմնական դերակատարներից մեկը: Միրիական ճգնաժամը, սակայն, ցույց տվեց Թուրքիայի հնարավորությունների սահմանափակ լինելը և որ Անկարան բաց ռազմական բախման գնալուն պատրաստ չէ: Անկարան ու Վա-

<http://www.politcom.ru/12568.html>

²⁴⁸ Տե՛ս Սախոմով Կ., Турецкие амбиции, <http://www.politcom.ru/12598.html>

²⁴⁹ Տե՛ս Լարիոնով Ք., Дипломатия Эрдогана: и себе, и людям, <http://www.politcom.ru/12568.html>

²⁵⁰ Տե՛ս Կրասնայա կարտոչկա դլա Էրդոգան, <http://expert.ru/expert/2010/09/>

²⁵¹ Տե՛ս Ագաճյանյան Մ., США остаются дирижером «турецкого марша» на Ближнем Востоке, <http://www.politcom.ru/15801.htm>

շինգտոնը լուրջ տարաձայնություններ ունեն սիրիական ճգնաժամի կարգավորման հետ կապված²⁵²: ԱՄՆ-ի համար անընդունելի է Թուրքիայի համառությունը սիրիական հակամարտության մեջ արագ ռազմական միջամտություն իրականացնելու հարցում: Թեև երկու կողմերն էլ համակարծիք են Սիրիայի նախագահ Բ.Ասադին իշխանությունից հեռացնելու հարցում, սակայն տարբեր են նրանց մարտավարությունները²⁵³:

Թուրքիայի ուղղությամբ արձակված հրետանային արկերից գոհվեցին 5, վիրավորվեցին 11 մարդ, ինչից հետո Անկարան պատասխան կրակ բացեց Սիրիայի ուղղությամբ, որտեղից ենթադրաբար արձակվել էին արկերը: Դրանից հետո Անկարան դիմեց ՆԱՏՕ-ին՝ խնդրելով իրեն աջակցություն ցուցաբերել և հաստատել, որ Սիրիայի հետ ռազմական հակամարտության դեպքում դաշինքը կսատարի Թուրքիային: Ակնհայտ էր, որ Անկարան այս սահմանային միջադեպը փորձում էր օգտագործել և, շահարկելով ՆԱՏՕ-ի կանոնադրության դրույթները, դաշինքին հարկադրել ռազմական ներխուժում իրականացնել Սիրիա: Սակայն ՆԱՏՕ-ի ավագ գործընկերները, մասնավորապես ԱՄՆ-ը, կանգնեցրեց Անկարային, որի գործողությունները դիտվեցին որպես արկածախնդրային, որոնք կարող էին հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Դաշնակիցների նման պահվածքը խիստ վիրավորական էր Անկարայի համար²⁵⁴:

²⁵² Տե՛ս Կարասով. Ս., «Ядерная интрига» Обамы: укрепить Рухани, удержать Эрдогана, <http://www.regnum.ru/news/polit/1900464.html#ixzz3TDGUuBZA>

²⁵³ Տե՛ս Ագաձյանյան Մ., США остаются дирижером «турецкого марша» на Ближнем Востоке, <http://www.politcom.ru/15801.htm>

²⁵⁴ Տե՛ս Փրեոբրաձենսկի Ի., Турция готова завязать, <http://www.politcom.ru/14636.html>

Վաշինգտոնի և Անկարայի հարաբերություններում նոր ճգնաժամը սկսվեց այն ժամանակ, երբ Կոնգրեսը մերժեց 2013 թ. աշնանը Սիրիայում ցամաքային ռազմական գործողություն իրականացումը: Թուրքական կողմը դա որակեց որպես դավաճանություն²⁵⁵:

Սիրիական ճգնաժամի հետ կապված թուրք-ամերիկյան տարաձայնությունները վերաբերվում են նաև սիրիական ընդդիմությանը զենք մատակարարելու հարցին: 2012 թ. մարտի 25-ին Օբամայի և Էրդոհանի հանդիպման ժամանակ սիրիական ընդդիմությանը զենք մատակարարելու հարցում կողմերի դիրքորոշումները լրիվ տարբեր էին²⁵⁶: Թուրքիան իր դատարանի որոշմամբ արգելեց այնպիսի փաստաթղթերի հրապարակումը, որոնք վկայում են թուրքական հետախուզության կողմից սիրիացի ընդդիմադիրներին զենք մատակարարելու մասին, որի մի մասն անցել է «Ջարհաթ ալ-Նուսրա» ահաբեկչական խմբավորման ձեռքը²⁵⁷: Իսկ ԱՄՆ-ն իր հերթին զենք չի մատակարարում սիրիական ընդդիմությանը՝ հիմնավոր կասկածներ ունենալով, որ այն կարող է հայտնվել ծայրահեղականների ձեռքում, որոնք կռվում են ոչ թե Ասադի, այլ բոլորի, այդ թվում՝ Արևմուտքի դեմ: Թուրքիան ակտիվորեն ներգրավված է սիրիական ճգնաժամում, նրա տարածքով Սիրիա ազատ ելումուտ են անում տարբեր ահաբեկիչներ: Այդ ամենով հանդերձ Անկարան չի պատրաստվում առանց դաշնակիցների միայնակ ներքաշվել սիրիական ճգնաժամի մեջ²⁵⁸:

²⁵⁵ St' u Amerikano-tureckie raznoglasia po Sirii vedut k uxudsheniю otnosheniiy, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

²⁵⁶ St' u Agadjanyan M., SSHA prosyat skoncentrirovatsya na Sirii, <http://www.politcom.ru/15604.html>

²⁵⁷ St' u Turciya vse bol'she otdalяetsя ot Zapada, <http://expert.ru/2015/01/24/>

²⁵⁸ Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., с. 67.

ԱՄՆ-ն, իր հերթին, դժգոհ էր Թուրքիայից, որ վերջինս, լինելով ՆԱՏՕ-ի անդամ, չի ցանկանում ավելի ակտիվ մասնակցություն ունենալ ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կռաւիցիայում «Իսլամական պետության» դեմ պայքարում²⁵⁹: Թուրքիան սահմանափակվեց միայն նրանով, որ «Իսլամական պետությանը» օղային հարվածներ հասցնելու նպատակով ամերիկյան ինքնաթիռներին թուրքական տարածքի ավիաբազաներից օգտվելու իրավունք տվեց: Իր պասիվությունն Անկարան փորձում էր հիմնավորել նրանով, որ չի ցանկանում «Իսլամական պետությանը» Թուրքիայից վրեժ լուծելու առիթ տալ, սակայն իրականում «Իսլամական պետությանը» իր համար սպառնալիք չէր համարում²⁶⁰: Միրիական ճգնաժամի հենց սկզբից Թուրքիան վերածվեց Միրիա, այնուհետև նաև Իրաք փոխադրվող իսլամիստ զինյալների տարանցիկ ճանապարհի²⁶¹: Թուրքական և միջազգային մամուլի հրապարակումների համաձայն, Թուրքիան Ազգային հետախուզական ծառայության միջոցով 2012 թ. ակտիվորեն զբաղվում է սիրիացի ապստամբներին, ինչպես նաև ԻՊ-ին զինամթերք տրամադրելու և թիկունքային օժանդակություն ցույց տալու գործով: Ավելին, Թուրքիայի քաղաքներում բացվել են ԻՊ-ի զինյալների հավաքագրման ոչ ֆորմալ գրասենյակներ և տարբեր տվյալներով ԻՊ-ի ջոկատներում կռվում են Թուրքիայի 1000-3000 քաղաքացիներ²⁶²:

²⁵⁹ St' u Tarasov. S., «Ядерная интрига» Обама: укрепить Рухани, удержать Эрдогана, <http://www.regnum.ru/news/polit/1900464.html#ixzz3TDGUuBZA>

²⁶⁰ St' u Ближневосточный фронт контртеррористической коалиции США, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

²⁶¹ St' u Gursel K., Turkey paying price for jihadist highway on border, <http://www.al-monitor.com/pulse/originals/2014/06/gursel-al-qaeda-isis-yurkey-mosul-iraq-syria-consulate.html>

²⁶² St' u Demirtaş S., More than 1,000 turks fighting for the Islamic Caliphate, <http://www.hurriyetdailynews.com/>

Թուրքական ընդդիմադիր լրատվամիջոցների պնդմամբ՝ ԻՊ-ի գրոհայինները Սիրիայում շարունակում են ակտիվորեն գործել պաշտոնական Անկարայի աջակցությամբ²⁶³: Իսկ քուրդ ակտիվիստները հայտնում են, որ Թուրքիայից ԻՊ-ի կողմից վերահսկվող տարածքներ մեծ քանակությամբ զենք և զինամթերք է փոխադրվում²⁶⁴: Արևմտյան պաշտոնյաները հաճախ են մեղադրում Անկարային նրանում, որ վերջինիս գիտությամբ ու թողտվությամբ, իսկ հաճախ էլ թուրքական հատուկ ծառայությունների օժանդակությամբ զինված ահաբեկիչները Թուրքիայով անարգել ներթափանցում են Սիրիա²⁶⁵: Կարճ ժամանակում Թուրքիան դարձավ Եվրոպայից, Ասիայից և Ամերիկայից ժամանող զինյալների հիմնական մայրուղին, որով վերջիններն անցնում են Սիրիա: Թուրքիան հիմնական տարանցիկ ուղի է հանդիսանում նաև Կոստվոյից, Մակեդոնիայից և Բոսնիայից ԻՊ-ին միացած հարյուրավոր ծայրահեղ իսլամիստների համար²⁶⁶: Այս հարցը 2014 թ. սեպտեմբերին դարձավ Ուելսում կայացած Օբամա-Էրդոհան հանդիպմանը քննարկվող հիմնական հարցերից մեկը²⁶⁷: Դժվար է պատկերացնել, որ ԻՊ-ի համար թուրքական խոշոր քաղաքներում հարյուրավոր մարդկանց հավաքագրման մասին տեղյակ չլինեն թուրքական ոստիկանությունը և Ազգային հետա-

²⁶³ St' u Причины терпимого отношения Турции к боевикам ИГ, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

²⁶⁴ St' u Турция признала "исламский халифат" государством, <http://www.nakanune.ru/news/2014/9/23/22370286#sthash.yF6GN4FV.dpuf>

²⁶⁵ St' u Hubbard B., Yeginsu C., After opening way to rebels Turkey is paying heavy price, <http://www.nytimes.com/2014/06/25>

²⁶⁶ St' u Albanian expert: Turkey waypoint for Balkan jihadists, <http://www.todayzaman.com/353477.html>

²⁶⁷ Գեղամյան Վ., Թուրքիայի դերը «Իսլամական պետություն» կազմակերպության կայացման գործում, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր, N 7, Եր., 2015, էջ 178:

խուզական ծառայությունը: Ավելին, թուրքական հատուկ նշանակության զորքերի թոշակի անցած մի խումբ սպաներ մեկնել են Սիրիա և բարձր վարձատրության դիմաց կոչվում են ԻՊ-ի շարքերում²⁶⁸: Էրդոդանը և Դավութօղլուն խուսափում են ԻՊ-ը «ահաբեկչական» կառույց որակելուց: Էրդոդանն անգամ հայտարարեց, որ Թուրքիան երբեք չի ընդունի «իսլամական ահաբեկչություն» դրույթը²⁶⁹:

ԻՊ խմբավորման գոյության գլխավոր երաշխիքներից մեկը նրա կողմից վերահսկվող տարածքների նավթային ռեսուրսների անօրինական վաճառքն է, իսկ անօրինական վաճառքի գլխավոր սև շուկան Թուրքիան է: Սիրիայի հետ սահմանակից Թուրքիայի հարավային շրջաններում կառուցվել են բազմաթիվ ինքնաշեն նավթատար խողովակներ, որոնցով նավթը փոխադրվում է Թուրքիա, որտեղից էլ այն բեռնատարներով հասցվում է գնորդներին: Նավթի անօրինական վաճառքից ստացված ֆինանսական միջոցներով էլ գոյատևում է ԻՊ-ն: Երբ 2014 թ. օգոստոսին միջազգային ճնշման տակ Թուրքիան ստիպված էր ուժեղացնել թուրք-սիրիական սահմանի վերահսկողությունը և մասամբ կանխել նավթի անօրինական վաճառքը, Թուրքիայի Մաքսերի նախարարությունը մեկ տարվա ընթացքում փակեց նավթի 233 անօրինական լցակայան: ԻՊ-ից ստացվող նավթի անօրինական վաճառքով զբաղվում են ոչ միայն սահմանամերձ շրջանների բնակիչները, այլև որոշ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչի պատճառով էլ իշխանություններն աչք են փակում այդ մաքսանենգության վրա²⁷⁰:

²⁶⁸ Նույն տեղում, էջ 185:

²⁶⁹ St' u Turkey providing direct support to ISIS, <http://www.wnd.com/2014/10>

²⁷⁰ St' u Sanger D., Davis J., Struggling to starve ISIS of oil revenue, U.S. seek assistance from Turkey, <http://www.nytimes.com/2014/09/14/>

Թուրքիան միակ պետությունն էր, որ ԻՊ ռազմական առաջ-խաղացումների ժամանակ Մոսուլում շարունակում էր պահել իր հյուպատոսությունը: 2014 թ. հունիսի 9-ին ԻՊ-ի զինյալները, գրավելով թուրքական հյուպատոսությունը, գերի վերցրեցին 49 աշխատակիցների: Այս պատճառաբանությամբ Անկարան հրա-ժարվեց մասնակցել ԱՄՆ-ի կողմից ԻՊ-ի դեմ ստեղծված ռազմա-կան կռաւիցիային: Սեպտեմբերի 20-ին հայտարարվեց Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայության կողմից գերիներին ազատ արձակելու մասին: Թուրքական իշխանությունները այդ-պես էլ չբացահայտեցին Մոսուլի գլխավոր հյուպատոսության աշխատակիցների ազատման գործողության մանրամասնություն-ները, ինչը կասկածներ առաջացրեց, որ Թուրքիայի և ԻՊ-ի միջև գործարք է տեղի ունեցել: Էրդոդանը հայտարարեց, որ դիվանա-գիտական առաքելության 49 աշխատակիցների համար փրկագին չի վճարվել, սակայն չհստակեցրեց, թե արդյոք ահաբեկիչները հյուպատոսության աշխատակիցների դիմաց ստացել են ինչ-որ փոխհատուցում, թե ոչ²⁷¹: Այս փաստերի հիման վրա թե՛ Արևմուտքում և թե՛ Թուրքիայում տարածված է այն կարծիքը, որ Անկարան և «Իսլամական պետությունը» գործում են փոխադարձ պայմանավորվածությամբ:

Թուրք գերիների արձակումից հետո էլ Անկարան ԻՊ-ի դեմ կռաւիցիայի գործողությունների մասնակցելու դիմաց առաջարկեց իրեն սահմանակից Սիրիայի հյուսիսային տարածքում ստեղծել բուֆերային գոտի: Այս առաջարկի էությունը կայանում էր նրա-նում, որ այդպիսով Անկարան հնարավորություն կստանար վերա-հսկել Ռոժավայում նոր քրդական պետականություն ստեղծելու

²⁷¹ St' u Турция признала "исламский халифат" государством,
<http://www.nakanune.ru/news/2014/9/23/22370286#sthash.yF6GN4FV.dpuf>

գործընթացը²⁷²: Վերը նշվածից պարզ է դառնում, որ առանց թուրքական կողմի ֆինանսական, ռազմական, նյութատեխնիկական, քարոզչական օժանդակության ԻՊ-ը չէր կարող ունենալ այն հզորությունը, որն այսօր ունի:

ԻՊ-ի դեմ պայքարում Անկարայի գրաված նման դիրքորոշումը հանգեցրել է նրան, որ Վաշինգտոնն այդ հարցում պատրաստ է որոշ դերկատարում հատկացնել նույնիսկ Իրանին, ինչի մասին բավականին հստակ արտահայտվեց պետքարտուղար Ջ. Քերրին: Սա նշանակում է, որ ԱՄՆ-ն իր տարածաշրջանային քաղաքականության մեջ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիային կարող է մղել երկրորդական պլան և նրա տեղը հատկացնել Թեհրանին, մանավանդ որ կողմերի միջև արդեն որոշակի փոխըմբռնում կա նաև Իրանի միջուկային ծրագրի հետ կապված²⁷³: Թուրքիան հրաժարվեց նաև կատարել ԻՊ-ի կողմից շրջափակված քրդաբնակ Քոբանի քաղաքի ուղղությամբ մարդասիրական միջանցք ստեղծելու միջազգային պահանջը²⁷⁴: Այնուամենայնիվ, Վաշինգտոնի ճնշման տակ Անկարան ստիպված եղավ թույլ տալ, որ իր տարածքով Սիրիա անցնեն Իրաքյան Քուրդիստանի ռազմական ստորաբաժանումները՝ «պեշմերգաները», ինչը բացարձակապես ընդունելի չէր Թուրքիայի համար²⁷⁵:

Թուրքիայի նախագահ Էրդողանը հրաժարվեց ԱՄՆ-ի նախագահ Օբամայի հետ հեռախոսազրույցից Սիրիայի և Գազայի

²⁷² Գեղամյան Վ., Թուրքիայի դերը «Իսլամական պետություն» կազմակերպության կայացման գործում, էջ 190-191:

²⁷³ Տե՛ս Կարասով Ս., «Ядерная интрига» Обама: укрепить Рухани, удержать Эрдогана, <http://www.regnum.ru/news/polit/1900464.html#ixzz3TDGUsBZA>

²⁷⁴ Տե՛ս Կարասով Ս., Турция предоставит США военные базы для борьбы с ИГ, <http://mir-politika.ru/17142.html>

²⁷⁵ Տե՛ս Կարասով Ս., На грани хаоса: Турция и «сирийский ребус», <http://www.regnum.ru/news/polit/1887577.html#ixzz3TDKdHK9H>

հատվածի հարցում ունեցած տարաձայնությունների պատճառով: Երդողանը ԱՄՆ-ին քննադատում էր Սիրիա ցամաքային ռազմական ներխուժումից հրաժարվելու և Իսրայելին աջակցություն ցուցաբերելու համար՝ հայտարարելով, որ քանի որ Օբամայի հետ իր զրույցները արդյունք չտվեցին, ուստի բանակցությունները պետք է վարեն արդեն արտգործնախարարները²⁷⁶: ԱՄՆ-ի պետքարտուղար Քերրիի և Թուրքիայի քաղաքական վերնախավի միջև Անկարայում ընթացած բանակցությունների գլխավոր թեման Սիրիան էր: Բացի Թուրքիայից, Քերրին այցելեց նաև Հորդանան, որը Վաշինգտոնի կողմից դիտվում է որպես այլընտրանք, եթե Սիրիայի հարցում չհաջողվի համաձայնության գալ Անկարայի հետ²⁷⁷:

Վաշինգտոնի կողմից Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների պայմաններում Անկարան համագործակցում էր Թեհրանի հետ, քանի որ բնական գազի իր պահանջարկի 18-20 %-ը ապահովվում է Իրանից²⁷⁸: 2009 թ. հոկտեմբերին Երդողանը Իրանի հետ իրանական «Հարավային պարս» հանքավայրը համատեղ շահագործելու պայմանավորվածություն ձեռք բերեց և իրավունք ստացավ տարեկան վաճառել այդ հանքավայրից ստացվող 17,5 մլրդ մ³ գազ²⁷⁹: Թուրքիան առաջիններից մեկը շնորհավորեց Ս.Ահմադիյեջադին 2009 թ. Իրանի նախագահ վերընտրվելու կապակցությամբ, մինչդեռ Արևմուտքն այդ ընտրությունները համարում էր արյունալի հեղաշրջում²⁸⁰: ԱՄՆ-ի համար հիասթափեցնող

²⁷⁶ Տե՛ս Премьер-министр Турции больше не хочет разговаривать с Обамой, <http://www.nakanune.ru/news/2014/7/24/22362062#sthash.1AQn3fwx.dpuf>

²⁷⁷ Տե՛ս Агаджанян М., США просят сконцентрироваться на Сирии, <http://www.politcom.ru/15604.html>

²⁷⁸ Տե՛ս Агаджанян М., Турецкий гамбит: умиротворение курдов для ускорения развязки в Сирии, <http://www.politcom.ru/15141.html>

²⁷⁹ Տե՛ս Расчеты по-соседски.... http://expert.ru/2010/01/13/erdogan_vizit/

²⁸⁰ Տե՛ս Турция: зачем нужны США и Евросоюз, когда есть Россия, Китай и Сирия?,

էր նաև այն, որ Թուրքիան հրաժարվեց Իրանին զսպողի դերում հանդես գալ, այլ ընդհակառակը, բարելավելով հարաբերությունները Թեհրանի հետ, փաստորեն խախտեց ԱՄՆ-ի նկատմամբ իր դաշնակցային պարտավորությունները: 2009 թ. Էրդոդանը Ահմադինեջադին նույնիսկ ռազմական աջակցություն առաջարկեց իրանական միջուկային օբյեկտերի վրա հնարավոր հարձակման դեպքում՝ խոստանալով անհրաժեշտության դեպքում տրամադրել հետախուզական տվյալներ և աջակցել ռազմաօդային ուժերով²⁸¹:

Ի հեճուկս Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման, Թուրքիան և Բրազիլիան «դեմ» քվեարկեցին Իրանի նկատմամբ հերթական պատժամիջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշմանը և առաջարկեցին իրենց տարածքում իրանական ցածր հարստացված ուրանի վերամշակման գործարան կառուցել²⁸²: Արդյունքում՝ Թեհրանը մերժեց իր ցածր հարստացված ուրանը Ռուսաստանում և Ֆրանսիայում հարստացնելու առաջարկները և համաձայնվեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի ոչ մշտական անդամ հանդիսացող Թուրքիայի և Բրազիլիայի առաջարկի հետ²⁸³:

Իրանի միջուկային ծրագրի հարցում ԱՄՆ-ի հետ առձակատման գնալու գնով Անկարան ցանկանում էր զարգացնել սեփական ատոմային էներգետիկան և մտադիր էր այդ ոլորտում Թեհրանի հետ տեխնոլոգիական համագործակցություն իրականացնել²⁸⁴: 2010 թ. մայիսի 16-ին Թուրքիայի նախագահ Էրդոդանը

<http://profi-forex.org/news/entry1008060259.html>

²⁸¹ Տե՛ս Красная карточка для Эрдогана, <http://expert.ru/expert/2010/09/>

²⁸² Տե՛ս Ахмадинежад рекомендует Западу признать ядерный Иран, <http://expert.ru/2011/01/21/>

²⁸³ Տե՛ս Использован последний шанс, <http://expert.ru/2010/05/17/>

²⁸⁴ Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., с. 66.

ժամանեց Թեհրան, որտեղ էլ կայացավ եռակողմ գործարքը: Թուրքիան, Բրազիլիան և Իրանը համատեղ հռչակագիր ստորագրեցին, համաձայն որի Թեհրանը պետք է Թուրքիա ուղարկեր իր ցածր հարստացված ուրանի մեծ մասը, որը փոխարինվելու էր Թեհրանի գիտական ռեակտորի համար անհրաժեշտ հարստացված վառելիքով²⁸⁵: Իրանի միջուկային ծրագրում ակտիվ ներգրավվելու իր այս քայլով Անկարան լրջորեն սրեց հարաբերությունները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ մյուս դաշնակիցների հետ²⁸⁶:

ԱՄՆ-ը դժգոհ էր նաև Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների կարգավորման փորձերից: 2008 թ. օգոստոսին ռուս-վրացական պատերազմի ժամանակ ՆԱՏՕ-ի անդամ հանդիսացող Թուրքիան չենթարկվեց ԱՄՆ-ի ճնշմանը և չգնաց նեղուցների կարգավիճակի մասին Մոնտրեի պայմանագրի դրույթների խախտման և թույլ չտվեց, որ ամերիկյան ավիակիրները մտնեն Սև ծով²⁸⁷: Թեև Թուրքիայի վարչապետի խորհրդական Ա.Դավութօղլուն հայտարարեց, որ այդ քայլը պայմանավորված էր Թուրքիայի 75-80 %-ով ռուսական էներգակիրներից կախվածությամբ²⁸⁸, սակայն հետագա զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ Անկարան հստակ քաղաքական նպատակներ էր հետապնդում: ԱՄՆ-ը խիստ դժգոհ էր, որ Անկարան Ռուսաստանին «Կովկասի կայունության և խաղաղության պլատֆորմ»-ն առա-

²⁸⁵ Տե՛ս Աхмадинеджад рекомендует Западу признать ядерный Иран, <http://expert.ru/2011/01/21/>

²⁸⁶ Տե՛ս Турция нужна не земля, а рынок, <http://expert.ru/2010/05/24/>

²⁸⁷ Տե՛ս Torbakov I., The Georgia Crisis and Russia-Turkey Relations, Jamestown Foundation, 2008, p. 14.

²⁸⁸ Տե՛ս Turkey's Top Foreign Policy Aide Worries about False Optimism in Iraq, Interview with A. Davutoglu, Council on Foreign Relations, 19 September, 2008, <http://www.cfr.org/turkey/turkeys-top-foreign-policy-aide-worries-false-optimismiraq/p17291>.

ջարկելուց առաջ ոչ միայն չէր խորհրդակցել Վաշինգտոնի հետ, այլև ընդհանրապես տեղյակ չէր պահել դրա մասին²⁸⁹: ԱՄՆ-ի համար անընդունելի էր նաև այն, որ Թուրքիայի նախաձեռնությամբ Անդրկովկասում դերակատարներ էին ճանաչվում միայն Թուրքիան և Ռուսաստանը՝ անտեսելով Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի տեղն ու դերը այդ տարածաշրջանում²⁹⁰:

Վաշինգտոնի կողմից Ռուսաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառման պայմաններում Թուրքիան ձգտում էր նրա հետ սերտացրեց հարաբերությունները տնտեսական ու էներգետիկ ոլորտներում²⁹¹: 2014 թ. դեկտեմբերին Պուտինի Անկարա կատարած այցից անմիջապես հետո Թուրքիայի մայրաքաղաք մեկնեց նաև ԱՄՆ-ի փոխնախագահ Ջ.Բայդենը²⁹²: Սա վկայում է այն մասին, որ Վաշինգտոնին լրջորեն մտահոգել էր ռուս-թուրքական հնարավոր մերձեցման հեռանկարը:

Թուրքիան հանդես եկավ նաև Շանհայան կազմակերպությանն անդամակցելու օգտին, ինչի մասին Ռուսաստանի նախագահ Պուտինի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Էրդոդանը²⁹³: Թեև Վաշինգտոնի պետքարտուղարության ներկայացուցիչը փորձեց սրան հումորով արձագանքել, թե հետաքրքիր կլիներ տեսնել, թե ինչպես է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան մտնում Շանհայան կազմակերպության մեջ, սակայն Անկարայի նմանօրինակ քայլերն ար-

²⁸⁹ Гирагосян Р., США и Кавказ в 2008 г., Кавказ-2008. Ежегодник Института Кавказа, Ер., 2010, с. 183.

²⁹⁰ St' u "Is Turkey Getting Away from the US in Caucasus", Journal of Turkish Weekly, August 31, 2008, <http://www.turkishweekly.net/comments.php?id=2973>

²⁹¹ St' u Турция: зачем нужны США и Евросоюз, когда есть Россия, Китай и Сирия?, <http://profi-forex.org/news/entry1008060259.html>

²⁹² St' u Нужен всем берег турецкий, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

²⁹³ St' u Эрдоган подтвердил намерение Турции присоединиться к ШОС, <http://www.nakanune.ru/news/2013/11/22/22332459#sthash.cdu6hwaJ.dpuf>

դեն վաղուց են նյարդայնացնում Վաշինգտոնին: Անկարան, անշուշտ, կփորձի իր այդ հայտարարությունները ամերիկացիների առջև ներկայացնել այնպես, որ Թուրքիան պատրաստվում է Շանհայան կազմակերպությունում կատարել Վաշինգտոնի «աչքերի և ականջների» դերը, սակայն վերջինիս համար դա այդքան էլ համոզիչ չի լինի²⁹⁴:

2013 թ. սեպտեմբերին Անկարան հայտարարեց, որ հակահրթիռային պաշտպանության համակարգերի գնման մրցույթում հաղթել է չինական ընկերությունը²⁹⁵: Թուրքիայի պաշտպանության նախարար Ի.Յըլմազը հայտարարեց, որ չինական հակահրթիռային պաշտպանության համակարգը կներդրվի թուրքական ազգային պաշտպանության համակարգի մեջ: ՆԱՏՕ-ի դաշնակիցների ճնշման տակ Թուրքիան երկարաձգեց հակահրթիռային համակարգի գնման մրցույթի ժամկետը, սակայն չինական համակարգի ընտրության որոշումը մնաց անփոփոխ, թեև ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ներկայացուցիչները բազմիցս բարձրացնում էին ՆԱՏՕ-ի դաշնակից երկրի համար չինական հակահրթիռային համակարգի ներդրման անհամապատասխանության և վտանգավոր լինելու հարցը²⁹⁶:

Այս հայտարարությունն իսկական իրարանցում առաջացրեց ԱՄՆ-ում և ՆԱՏՕ-ում: 2013 թ. նոյեմբերի 18-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Քերրիի հրավերով Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավուլթօղլուն մեկնեց Վաշինգտոն՝ երկկողմ հարաբերություն-

²⁹⁴ Տե՛ս Աгаджанян М., Турция шоосирует дорогу на Восток, <http://www.politcom.ru/15239.html>

²⁹⁵ Տե՛ս НАТО нервничает из-за сближения Турции с Россией и Китаем, <http://www.nakanune.ru/news/2015/3/15/22391499#sthash.uts88ckE.dpuf>

²⁹⁶ Տե՛ս Турция создаст независимую от НАТО систему ПРО, <http://mir-politika.ru/18005.html>

ները, տարածաշրջանային հարցերը, ինչպես նաև Չինաստանի հետ կնքվելիք հեռահար գործողության հրթիռային համակարգերի գնման համաձայնագրի հարցը քննարկելու համար: Թուրքիան փորձում էր հարցը ներկայացնել այնպես, որ հայտարարված մրցույթում Չինաստանն առաջարկել է լավագույն գինը, և որ Անկարան դեռևս վերջնական որոշում չի կայացրել: Ի վերջո, Դավոլթօղլուն ստիպված գնաց զիջումների և հայտարարեց, որ եթե եվրոպական և ամերիկյան ընկերություններն առաջարկեն ավելի լավ գին ու պայմաններ, ապա Թուրքիան բանակցությունները կշարունակի նրանց հետ²⁹⁷: Ակնհայտ էր, որ Անկարայի որոշումը ոչ միայն և ոչ այնքան տնտեսական էր, որքան քաղաքական²⁹⁸: Այդ կերպ Թուրքիան փորձում էր իր դժգոհությունն արտահայտել ՆԱՏՕ-ի իր դաշնակիցներից, որ նրանք որոշումներ կայացնելիս ավելի քիչ են սկսել հաշվի առնել իր շահերը: Հասկանալի էր, որ եթե Թուրքիայի և Չինաստանի միջև համաձայնագիրը ստորագրվեր, ապա դա կհակասեր Թուրքիայի ՆԱՏՕ-ի դաշնակիցների՝ եվրոպական երկրների ու ԱՄՆ-ի շահերին, քանզի Թուրքիայում կսկսեին գործել իրար հակասող առանձին հակահրթիռային պաշտպանության համակարգեր:

Ներկայումս ամերիկյան վերնախավում գնալով մեծանում է այն մտայնությունը, որ Անկարան նախկինի պես վստահելի և միևնույն ժամանակ կանխատեսելի գործընկեր այլևս չի հանդիսանում²⁹⁹: Ամերիկյան վերնախավում Էրդողանի և Թուրքիայի նկատմամբ քաղաքական էլիտայի կարծիքները կիսվում են և տվյալ

²⁹⁷ Տե՛ս СІША заставили Турцию отказаться от ПВО Китая, <http://glasru.ru/>

²⁹⁸ Տե՛ս Евсеев В., Китайское ПРО для Турции – это сигнал, адресованный США, <http://www.politcom.ru/18603.html>

²⁹⁹ Տե՛ս Агаджанян М., Почему у Турции не получилось? Ближний Восток слезам не верит! <http://www.politcom.ru/14904.html>

երկրի նկատմամբ քաղաքականությունը կիրականացվի ելնելով այն բանից, թե որ հոսանքի տեսակետը կոնկրետ ժամանակահատվածում կհաղթանակի: Արմատական տրամադրված ամերիկյան քաղաքական գործիչները հույսեր են փայփայում, որ իրենց կհաջողվի Թուրքիային վերադարձնել իրենց համակարգի մեջ՝ հասնելով Էրդոդանի հեռացմանը և քեմալականների ու զինվորականների դիրքերի վերականգնմանը: Նրանք աջակցեցին թուրք բնակչության աչքերում Էրդոդանի վարչակարգի վարկաբեկմանն ուղղված թուրքական բանակի դժգոհ սպաների քայլերին³⁰⁰:

Ամերիկյան քաղաքական էլիտայի ոչ արմատական հատվածը գտնում է, որ Վաշինգտոնի համար դեռևս վաղ է ի դեմս Թուրքիայի կորցնել ուժեղ տարածաշրջանային գործընկերոջ, քանզի Իրաքից ԱՄՆ-ը գորքերը դուրս բերելուց հետո Վաշինգտոնը այնտեղ իրավիճակը վերահսկելու կարիք կունենա, իսկ Թուրքիայի հարավ-արևելքում գտնվող Ինջիրլիք ռազմակայանը դրա համար շատ հարմար պլացդարմ է: Նրանք գտնում են, որ Թուրքիան անհրաժեշտ է ԱՄՆ-ին որպես Աֆղանստանին մոտ գտնվող երկիր և որպես Իրանին հարևան պետություն, որի միջոցով Վաշինգտոնը միշտ ձգտում էր սանձել Թեհրանի տարածաշրջանային նկրտումները³⁰¹:

Բոլոր դեպքերում ԱՄՆ-ում թուրքական լոբբինգը հայտնվել է դժվարին իրավիճակում, քանզի թուրքամետ գործիչների համար գնալով դժվարանում է ամերիկյան քաղաքական վերնախավում Թուրքիայի շահերի պաշտպանության օգտին փաստարկներ բերելը նաև հրեաների հակազդեցության պատճառով: ԱՄՆ-ի վարչակարգի վերլուծաբանների տարբեր խմբեր աստիճանաբար

³⁰⁰ St´u Красная карточка для Эрдогана, <http://expert.ru/expert/2010/09/>

³⁰¹ St´u Дружественный ультиматум, <http://expert.ru/2010/08/16/>

հանգում են այն տեսակետին, որ Թուրքիան այլևս չի դասվում համաշխարհային քաղաքականության ազդեցիկ պետությունների շարքին, ուստի պրակտիկ քաղաքականության մեջ Եվրոպայի և Ասիայի խոշոր տերությունների կողքին Անկարային հարկավոր չէ լուրջ դերակատարում հասկացնել՝ գիտակցելով հանդերձ, որ ինքնուրույն քաղաքականություն վարելու համար վերջինիս հայեցողության տակ դեռևս կան որոշակի ռեսուրսներ: Թուրքիայի կողմից իր հնարավորությունների գերազնահատման և որոշակի սահմաններն անցնելու դեպքում ԱՄՆ-ը Անկարայի նկատմամբ կսկսի որոշակի զսպման լծակներ կիրառել իր հսկողության տակ գտնվող միջազգային կառույցների՝ ՆԱՏՕ-ի և Միջազգային Արժույթի Հիմնադրամի միջոցով: Այս առումով չի կարելի բացառել նաև ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության հարցի նոր շահարկումները, ինչը Վաշինգտոնի համար դարձել է Անկարայի նկատմամբ կիրառվող ավանդական ճնշման միջոցներից մեկը:

Մի բան հստակ է, որ ներկայումս Թուրքիայի, որպես ոչ այնքան լոյալ պետության, նկատմամբ արդեն որոշակիորեն փոփոխվել է ԱՄՆ-ի հետախուզական ծառայությունների և Պենտագոնի վերաբերմունքը:

2.2. ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և ամերիկա-թուրքական հարաբերությունների վրա դրա ազդեցությունը

Հայոց ցեղասպանության հիմնահարցը միշտ էլ որոշակի ազդեցություն է ունեցել ամերիկա-թուրքական արդի հարաբերությունների վրա՝ ունենալով թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի դրսևորումներ:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ առաջին՝ № 148 բանաձևն ԱՄՆ-ում ընդունվել է դեռևս 1975 թ., որով այդ տարվա ապրիլի 24-ը Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը սահմանեց որպես անմարդկային վերաբերմունքից տուժած մարդկանց հիշատակի ազգային օր, իսկ 1915 թ. դեպքերը որակվեցին որպես ցեղասպանություն, այնուհետև 1984 թ. սեպտեմբերի 12-ին ընդունվեց № 247 բանաձևը, որը, ըստ էության, կրկնում էր 1975 թ. բանաձևի դրույթները³⁰²:

Այս բանաձևերի ընդունումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը դարձավ Թուրքիայի նկատմամբ այս կամ այն հարցում ճնշումներ գործադրելու Վաշինգտոնի գործիքներից մեկը, որն օգտագործվում էր Անկարայի կողմից «անհնազանդության» դրսևորումների ժամանակ: Անշուշտ, երբեմն ԱՄՆ-ի հայկական համայնքի՝ Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերը համնկնում էին ամերիկյան պաշտոնական շրջանակների կողմից այդ հարցով Թուրքիային սանձելու քաղաքականության հետ, սակայն, ցավոք, Անկարա-

³⁰² St' u Маркедонов С., Между исторической справедливостью и реальной политикой, <http://www.politcom.ru/7644.html>

յի հետ իր խնդիրները կարգավորելուց հետո Վաշինգտոնն այս հարցում չէր գնում վճռական քայլերի:

Քանի որ սկզբնական շրջանում Թուրքիայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության մշակողն ու իրականացնողը Պենտագոնն էր, ապա Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի ընդունումը սկզբնական շրջանում չեզոքացվում էր նրա կողմից՝ ելնելով Անկարայի հետ ռազմական-ռազմավարական հարաբերություններ պահպանելու առաջնահերթությունից: Հետագայում Անկարայի նկատմամբ ամերիկյան քաղաքականության մշակումն ու իրականացումը հանձնվեց Պետքարտուղարությանը, որը Սպիտակ տան հետ մեկտեղ Պենտագոնին փոխարինեց նաև Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի ձախողման հարցում³⁰³: Բացի ԱՄՆ-ի պետական մարմիններից, այս հարցում իրենց հետաքրքրությունն էին ցուցաբերում նաև հրեական լոբբիստական կառույցները: Պատահական չէ, որ թուրք առաջնորդները Իսրայելի հետ հարաբերությունների խորացման հարցում հաշվի էին առնում նաև ԱՄՆ-ի Կոնգրեսում հրեական լոբբինգի ազդեցությունը, որի միջոցով հույս ունեին օրենսդիր մարմնում թուլացնել հայկական ու հունական լոբբինգի դիրքերն ու տապալել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերը³⁰⁴:

1990-ական թթ. առաջին կեսին ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունների ջանքերն ուղղված էին Ադրբեջանի դեմ ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների ընդունմանն ու Թուրքիային ամերիկյան զենքի վաճառքի խնդրում սահմանափակումների կիրառմանը, ինչպես նաև 1993 թ. ապրիլից փակված հայ-թուրքական սահմանի վերաբացմանը հասնելուն: ԱՄՆ-ի հայկա-

³⁰³ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 186.

³⁰⁴ St u Геополитические устремления Турции,

<http://libsib.ru/geopolitika/geopolitika-v-sovremennom-mire/arabskiy-mir>

կան լոբբիստական կառույցների՝ ԱՀՀ-ի և ԱՀԱԿ-ի ջանքերով «Ազատության աջակցության ակտի»» շրջանակներում ընդունվեց 907-րդ ուղղումը, որն արգելում էր ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին պետական ֆինանսական օժանդակության տրամադրումը, քանի դեռ վերջինս շարունակում էր Հայաստանի հանդեպ թշնամական գործողությունները և Հայաստանի շրջափակումը³⁰⁵:

1995 թ. մարտի 23-ին Դ. Բոնիորի կողմից ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատում շրջանառության մեջ դրվեց թիվ 47 բանաձևի նախագիծը, որում նշվում էր, որ հաշվի առնելով այն փաստը, որ Թուրքիայի Հանրապետության նախորդ՝ Օսմանյան կայսրության կառավարության կողմից 1915-1923 թթ. կազմակերպված ցեղասպանությանը գոհ են գնացել հայ ժողովրդի մեկից մեկուկես միլիոն նախնիներ, Ներկայացուցիչների պալատը որոշում է.

1. Կոնգրեսը միանում է ամերիկահայ համայնքին՝ հարգելու հայերի ցեղասպանության զոհերի հիշատակը;

2. Միացյալ Նահանգները պետք է խրախուսի Թուրքիայի Հանրապետությանը ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ճանաչել և հիշատակի արժանացնել 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ իրականացված դաժանությունները³⁰⁶: Մակայն այս բանաձևը չներկայացվեց Ներկայացուցիչների պալատի քննարկմանը: Նույն թվականին ԱՄՆ-ի հայ լոբբիստական կազմակերպությունների ջանքերով հիմնվեց ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի Հայկական հարցերով հանձնախումբը, որի առաջին համանախագահներն էին Դեմո-

³⁰⁵ Gregg H. S., *Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the US*, The Rosemary Rogers Working papers Series, 2001, pp. 24-33.

³⁰⁶ *The Armenian Genocide. Documents and declarations 1915-1995. Compiled with an introduction by H. Sassounyan*, Los Angeles, 1995, p. 12.

կրատական կուսակցության ներկայացուցիչ Ֆ. Փալոնը և Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Է. Պորտերը:

1996 թ. մայիսի 15-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նախաձեռնությամբ Կոնգրեսում ընթացան լուսմներ Հայոց ցեղասպանության պատմական փաստի ճանաչման հարցի շուրջ³⁰⁷: 1997 թ. մարտի 21-ին Ջ. Ռադանովիչը շրջանառության մեջ դրեց Ներկայացուցիչների պալատի թիվ 55 բանաձևը, որը հիմնականում կրկնում էր 1995 թ. ներկայացված թիվ 47 բանաձևի դրույթները: Բանաձևն ուղղվեց ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնաժողով, սակայն այդպես էլ չընդգրկվեց Ներկայացուցիչների պալատի օրակարգում:

Նույն թվականի հունիսի 11-ի № 3540 բանաձևով Թուրքիային տնտեսական օգնություն ցուցաբերելու հարցերը փոխկապակցվում էին 1915-1923 թթ. հայերի նկատմամբ իրականացված «դաժանությունների» ճանաչման գործընթացի հետ, ընդ որում, Անկարայից պահանջվում էր ձեռնարկել բոլոր քայլերը «հայերի ցեղասպանության գոհերի» հիշատակի հավերժացման ուղղությամբ³⁰⁸:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուղերձներով հանդես եկավ նաև ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնը: ԱՄՆ-ի նախագահների Հայոց ցեղասպանության հարցին նվիրված ուղերձները 1994 թ. դարձան ավանդական: Սակայն բոլոր ուղերձներում ԱՄՆ-ի նախագահները խուսափում էին ցեղասպանություն բառն օգ-

³⁰⁷ Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001, էջ 13:

³⁰⁸ St' u Markedonov C., Между исторической справедливостью и реальной политикой, <http://www.politcom.ru/7644.html>

տագործելուց՝ բավարարվելով «մեծ ողբերգություն», «պատմության մութ էջ» և նմանատիպ այլ ձևակերպումներով:

1999 թ. նոյեմբերի 18-ին Ջ. Ռադանովիչի, Դ. Բոնիորի, Ֆ. Փալնի և Ջ. Բոզանի կողմից Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 398 բանաձևը, որում ասվում էր, որ 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված քաղաքականության արդյունքում տեղահանվել է երկու միլիոն հայ, որոնցից մեկուկես միլիոնը սպանվել է: Բանաձևը ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում Հայոց ցեղասպանության վերաբերյալ համապատասխան ուսուցում և նյութեր ապահովել Միացյալ Նահանգների մարդու իրավունքների ոլորտի և ընդհանրապես արտաքին քաղաքականության հետ առնչվող ծառայությունների բոլոր պաշտոնյաների, առաջին հերթին՝ Պետքարտուղարության բոլոր աշխատակիցների համար: 2000 թ. սեպտեմբերի 14-ին բանաձևը հաստատվեց արտաքին հարաբերությունների հանձնաժողովի արտաքին գործերի և մարդու իրավունքների ենթահանձնաժողովի կողմից, իսկ սեպտեմբերի 21-ին՝ նաև հանձնաժողովի կողմից: Այդուհանդերձ, նախագահ Քլինթոնի ակտիվ միջամտության հետևանքով բանաձևը Ներկայացուցիչների պալատի օրակարգ չմտավ³⁰⁹:

2000 թ. սեպտեմբերի 27-ին Ջ. Ռադանովիչի կողմից շրջանառության մեջ դրվեց Ներկայացուցիչների պալատի թիվ 596 բանաձևի նախագիծը, որը գրեթե կրկնում էր թիվ 398 բանաձևը, որից, սակայն, հանվել էր Հայոց ցեղասպանության մասին ուսուցում ապահովելու կետը: Բանաձևի նախագծում հստակ փաստեր էին ներկայացվում Հայոց ցեղասպանության վերաբերյալ, ԱՄՆ-ի նախագահին կոչ էր արվում Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված ամենամյա ուղերձներում 1.5 միլիոն հայերի

³⁰⁹ Պողոսյան Բ., նշվ., աշխ., էջ 21:

սիստեմատիկ կանխամտածված ոչնչացումն անվանել ցեղասպանություն³¹⁰: Բանաձևը քննարկման դրվեց Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Դրա ընդունման հավանականությունն ավելի էր մեծանում ԱՄՆ-ում ընթացող նախագահական ընտրարշավի պատճառով: Ջ. Բուշ Կրտսերի և գործող փոխնախագահ Ա. Գորի միջև ձայների տարբերությունն աննշան էր, և այս հանգամանքը թե՛ Դեմոկրատական և թե՛ Հանրապետական կուսակցությանը հարկադրում էր դիմել ցանկացած միջոցի՝ ընտրողների հավելյալ ձայներ շահելու համար: Ստեղծված պայմաններում մի քանի հարյուր հազարի հասնող հայ ընտրողների ձայները կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ 2000 թ. նոյեմբերին նախատեսված նախագահական ընտրությունների արդյունքների վրա:

Թուրքիայում ևս գիտակցում էին, որ այս անգամ Ներկայացուցիչների պալատի կողմից բանաձևի ընդունման հավանականությունը բավականին մեծ է: 2000 թ. հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում նախատեսված քննարկումներին մասնակցելու նպատակով Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հատուկ պատվիրակություն ուղարկեց Վաշինգտոն: Չնայած թուրքական կողմի բոլոր ջանքերին, 2000 թ. հոկտեմբերի 3-ին Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 24 կողմ, 11 դեմ և 2 ձեռնպահ քվեարկության արդյունքներով ընդունեց բանաձևը³¹¹:

Հոկտեմբերի 3-ին կայացած քվեարկությունից հետո Թուրքիայի խորհրդարանի հինգ խմբակցություններ հատուկ հայտարարա-

³¹⁰ Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Сост., отв. редактор, автор предисловия и комментария Ю.Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, док. 1459.

³¹¹ Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 23:

րություն հրապարակեցին, որում նշվում էր թուրքական կողմից պատասխան քայլեր ձեռնարկելու հնարավորության մասին, մասնավորապես, թուրք խորհրդարանականներն սպառնում էին արգելափակել ամերիկացիների կողմից Ինջիրլիկ ռազմակայանի օգտագործումը: Մինչ այդ թուրքական կառավարությունն արդեն որոշակի քայլեր էր ձեռնարկել թե՛ ԱՄՆ-ի և թե՛ Հայաստանի նկատմամբ՝ խստացվել էր Հայաստանի քաղաքացիներին Թուրքիա մուտքի արտոնագրերի տրամադրման կարգը, իսկ Թուրքիայի Գլխավոր շտաբի պետ Ն. Կիլիլիօղլուն չեղյալ էր հայտարարել ԱՄՆ-ը նախատեսված այցելությունը, Անկարան վերականգնել էր Իրաքում թուրքական արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնը: Թուրքիայի էներգետիկայի նախարար Ջ. էրսյումերը նույնիսկ հայտարարել էր, որ Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման դեպքում պաշտոնական Անկարան կվերսկսի իրաքյան նավթի տեղափոխումը Թուրքիայի տարածքով:

Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից բանաձևի ընդունումից հետո նույն օրը ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնի հետ հեռախոսազրույց ունեցավ Թուրքիայի նախագահ Ա. Սեզերը՝ Թուրքիայի դժգոհությունն արտահայտելով բանաձևի ընդունման կապակցությամբ³¹²:

Թուրքական կողմը ցեղասպանության բանաձևի ընդունումը կանխելու համար օգտագործում էր նաև ԱՄՆ-ից զենքի ձեռքբերման գործարքները չեղյալ հայտարարելու խաղաքարտը: Խնդիրը, մասնավորապես, վերաբերում էր մի քանի մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 145 ամերիկյան մարտական ուղղաթիռներ ձեռքբե-

³¹² Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, էջ 41-44:

րելու նախնական համաձայնությանը: Թուրքական իշխանություններն ակնարկում էին, որ պատրաստ են չեղյալ հայտարարել այդ գործարքը և ամերիկացիների փոխարեն մարտական ուղղաթիռներ գնել ռուս-իսրայելական համատեղ կոնսորցիումից:

Թուրքական այս սպառնալիքները որոշակի ազդեցություն ունեցան առաջին հերթին ԱՄՆ-ի գործադիր իշխանության վրա: Հայոց ցեղասպանության բանաձևի քննարկումը Ներկայացուցիչների պալատում նախատեսված էր 2000 թ. հոկտեմբերի 19-ին: Քննարկումից մեկ օր առաջ ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնը հատուկ ուղերձով դիմեց Ներկայացուցիչների պալատի խոսնակ Դ. Հասթերթին: Նշելով, որ բանաձևի ընդունումը զգալի բացասական հետևանքներ կունենա Սերձավոր Արևելքում ԱՄՆ-ի կենսական շահերի, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի ջանքերի վրա՝ Բ. Քլինթոնը կոչ էր անում օրակարգից հանել բանաձևը: 2000 թ. հոկտեմբերի 19-ին Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստից առաջ Դ.Հասթերթը նիստի օրակարգից հանեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևը:

Չնայած ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը չընդունվեց, այս խնդրում երկկողմ լարվածությունն ու հարաբերությունների խոցելի բնույթը այն բանի վկայությունն էր, որ, չնայած կողմերը հայտարարում էին հարաբերությունների ռազմավարական նշանակության և կարևորության մասին, այնուամենայնիվ, դրանցում աստիճանաբար սկսել էին լուրջ խնդիրներ ի հայտ գալ³¹³:

ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի օրակարգից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևը հանելուց հետո ԱՄՆ-ի

³¹³ Պոդոպյան Բ., նշվ. աշխ., էջ 7:

պետքարտուղարության աջակցությամբ Դ.Ֆիլիպսը շարունակեց հայ-թուրքական երկխոսության մեկնարկին ուղղված իր քայլերը: Պետքարտուղարությունում հանգեցին այն գաղափարին, որ երկխոսության մեկնարկի լավագույն տարբերակը նախկինում պետական համակարգում աշխատած, դիվանագիտական շփումների որոշակի փորձ ունեցող մասնավոր անձանցից կազմված հանձնաժողովի ձևավորումն է³¹⁴:

Եթե Բ.Քլինթոնի նախագահության տարիներին Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը քողարկվում էր տարբեր նրբանկատ փաստարկներով, ապա Ջ. Բուշի վարչակազմն իր քաղաքական ոճին հավատարիմ նախնորեց լիովին մերկացնել այդ հիմնախնդրի քաղաքական ու բարոյական կողմերը, այնպես որ, այդ հանցագործությունը եղել է, բայց այդ փաստի պաշտոնական ճանաչումը կարող է վնաս հասցնել ամերիկյան շահերին:

Նախագահ ընտրվելուց հետո Ջ. Բուշ Կրտսերը հրաժարվեց կատարել ամերիկահայերին տված իր խոստումը, և 2001 թ. ապրիլի 24-ի ուղերձում խուսափեց Հայոց ցեղասպանություն բառակապակցությունն օգտագործելուց՝ կիրառելով «պատմության մեծագույն ողբերգություններից մեկը» ձևակերպումը, չնայած այն հանգամանքին, որ ավելի քան 100 կոնգրեսական նամակով դիմել էին նրան՝ կոչ անելով հարգել իր նախընտրական խոստումները և ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

2003 թ. ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների վատթարացումը հանգեցրեց ոչ միայն ԱՄՆ-ի վարչակազմի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարցի վերարձարձմանը, այլև ամերիկացիների գիտակցության մեջ էական փոփոխություն-

³¹⁴ Phillips L. D., *Unsilencing the Past: Track two Diplomacy and Turkish-Armenian Peconciliation*, Berghahn Books, 2005, p. 31-34.

ների: Տեղի էր ունեցել «դավաճանություն» ռազմավարական դաշնակցի կողմից՝ ամերիկյան աշխարհընկալման տեսանկյունից «ցավոտ» հարցի առնչությամբ, վրեժխնդրություն ահաբեկիչներից ու ԱՄՆ-ին թշնամական քաղաքական վարչակարգից, չխոսելով արդեն գործնական պահերի մասին: Քչերն էին կասկածում, որ բանաձևը կընդունվեր, եթե չլիներ Սպիտակ տան, պետքարտուղարության և Պենտագոնի ճնշումը Սենատի ղեկավարության վրա: Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանը հեռախոսագրույց ունեցավ ԱՄՆ-ի փոխնախագահ Դ. Չեյնիի հետ, որը խոստացավ միջոցներ ձեռնարկել կասեցնելու Հայոց ցեղասպանությունը հիշատակող բանաձևի քննարկումը Կոնգրեսում: Պենտագոնի ղեկավարի տեղակալ Պ. Վուլֆովիցը, որը հանդես էր եկել Թուրքիայի ղեկավարության հասցեին աննախադեպ խիստ հայտարարությամբ, նույնպես միացավ օրակարգից բանաձևը հանելու օգտին արվող լոբբինգին:

2003 թ. հուլիսի 22-ից 26-ը պաշտոնական այցով Վաշինգտոն ժամանեց Թուրքիայի արտգործնախարար Ա. Գյուլը: Այդ շրջանում երկկողմ հարաբերությունները բավականաչափ լարված էին, կապված առաջին հերթին իրաքյան իրադարձությունների հետ: Ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաները ևս մեկ անգամ հայտարարեցին, որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրն օրակարգից չի հանվել³¹⁵:

2003 թ. ապրիլի 10-ին Ջ. Ռադանովիչի, Ա. Շիֆի, Ֆ. Փալոնի և Ջ. Նոլենբերգի կողմից Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց թիվ 193 բանաձևը, որում որպես ցեղասպանության օրինակ հիշատակվում էր նաև Հայոց ցեղասպանությունը: Մայիսի 21-ին բանաձևը միաձայն հաստատվեց Ներկայացուցիչների պալատի իրավական հարցերով հանձնաժողովի կողմից: Հունիսի 10-ին

³¹⁵ Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 52:

նույնաբովանդակ թիվ 164 բանաձևը ներկայացվեց նաև Սենատի քննարկմանը:

Սենատ ներկայացված բանաձևը նախատեսվում էր քվեարկության դնել հուլիսի 10-ին՝ ԱՄՆ-ի Պետքարտուղարության բյուջեի նախագծի հետ միասին, սակայն վերջին պահին այն հանվեց քվեարկությունից³¹⁶:

Հետագայում ԱՀՀ-ի և ԱՀԱԿ-ի ակտիվ աջակցությամբ Ներկայացուցիչների պալատ ներկայացվեց կոնգրեսականներ Ջ. Ռադանովիչի, Ջ. Նոլենբերգի, Ֆ. Փալոնի և Ա. Շիֆի հեղինակած Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 316 բանաձևը, որը 2005 թ. սեպտեմբերի 15-ին ձայների բացարձակ առավելությամբ հավանության արժանացավ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Այն ԱՄՆ-ի նախագահին կոչ էր անում ապահովել Հայոց ցեղասպանության փաստի արտացոլումը երկրի արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում³¹⁷: Սակայն այս բանաձևը նույնպես չներկայացվեց Ներկայացուցիչների պալատի քննարկմանը:

2006 թ. հուլիսին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը քվեարկեց երաշխիքների տրամադրման բանաձևի օգտին, որի համաձայն արտահանման և ներմուծման հիմնադրամները չեն օգտագործվելու Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի շինարարության ժամանակ, որը կառուցվում էր շրջանցելով Հայաստանը: Ամերիկյան կոնգրեսականները դեմ արտահայտվեցին տարածաշրջանային նման տրանսպորտային նախագծերի միջոցով Հայաստանի մեկուսացմանը: 5068 բանաձևում ասվում է, որ հարկատուների գումարները չպետք է օգտագործվեն Հայաս-

³¹⁶ Նույն տեղում, էջ 54:

³¹⁷ Նույն տեղում, էջ 57:

տանի էլ ավելի շրջափակման նպատակով, որն արդեն տուժում է Թուրքիայի և Ադրբեջանի երկկողմանի շրջափակումից³¹⁸:

Դեռևս 2007 թ. հունվարին Ա. Շիֆր, Ջ. Ռադանովիչը և Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահներ Ֆ. Փալոնն ու Ջ. Նոլենբերգը Ներկայացուցիչների պալատին ներկայացրին թիվ 106 բանաձևը: Այն լուրջ հիմնավորումներով հաստատում էր Հայոց ցեղասպանության փաստը, առավել լիարժեք ներկայացնում դրա ժամանակագրական սահմանները՝ 1915-ից մինչև 1923-ը, նշում գոհերի թվաքանակը՝ 2 միլիոն տեղահանված, որոնցից 1,5 միլիոնը՝ բնաջնջված: Ընդգծվում էր քաղաքական և իրավական տեսանկյունից չափազանց կարևոր մի հանգամանք. հայերը ոչնչացվել են իրենց պատմական հայրենիքի տարածքում, որտեղ բնակվում էին ավելի քան 2500 տարի³¹⁹:

Ներկայացուցիչների պալատում բանաձևի ընդունման հավանականությունը մեծացել էր նաև այն պատճառով, որ 2006 թ. աշնանը տեղի ունեցած Կոնգրեսի ընտրությունների արդյունքում Ներկայացուցիչների պալատում մեծամասնություն էր ստացել Դեմոկրատական կուսակցությունը: Պալատի խոսնակ Ն.Փելոսին ևս հանդես էր գալիս Հայոց ցեղասպանության մասին բանաձևի ընդունման օգտին: Բանաձևը Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովում պետք է քննարկվեր դեռևս 2007 թ. մարտին, սակայն Ջ. Բուշի վարչակազմին հաջողվեց հետաձգել այդ քննարկումը: 2007 թ. մարտի 7-ին բանաձևի քննարկման դեմ ուղղված նամակով Ն. Փելոսիին դիմեցին ԱՄՆ-ի պետքարտուղար Ք. Ռայսը և Պաշտպանության նախարար Ռ. Գեյթսը:

³¹⁸ Տե՛ս Маркедонов С., Армянский вопрос как зеркало американской политики, <http://www.politcom.ru/5219.html>

³¹⁹ Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 58:

Հոկտեմբերի 8-ին Վաշինգտոն գործուղվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատվիրակությունը, որի ղեկավար, «Արդարություն և զարգացում» կուսակցության փոխնախագահ է. Բաղըշը հայտարարել էր, որ ամեն ինչ անելու են բանաձևը տապալելու համար: Նա միաժամանակ ակնարկել էր Իրաքում տեղակայված ամերիկյան զորքերին Թուրքիայի տարածքից, մասնավորապես, Ինջիրլիքի ռազմակայանից կատարվող տեխնիկական մատակարարումները դադարեցնելու հնարավորության մասին: Թուրքիայի խորհրդարանի նախագահ Ք. Թոփթանը հոկտեմբերի 7-ին Ներկայացուցիչների պալատի խոսնակ Ն. Փելոսիին ուղղված նամակում նշել էր, որ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից բանաձևի ընդունումը բացասական ազդեցություն կթողնի երկկողմ հարաբերությունների վրա, որոնց վերականգնման համար կարող են տասնամյակներ պահանջվել:

Հոկտեմբերի 10-ին նախատեսված քվեարկությունից մեկ օր առաջ թուրքական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամների հետ՝ նրանց կոչ անելով չընդունել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը՝ շեշտելով, որ քվեարկության դրական արդյունքը բացասական ազդեցություն կունենա թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա³²⁰: Թուրք քաղաքական գործիչները ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևերի քննարկումները դիտում էին որպես ԱՄՆ-ի կողմից Անկարայի նկատմամբ իրականացվող շանտաժ³²¹:

2007 թ. հոկտեմբերի 11-ին Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի Միջազգային հարաբերությունների հանձնաժողովը ըն-

³²⁰ Նույն տեղում, էջ 59:

³²¹ St' u Турция уходит из под ног США, <http://www.meast.ru/article/>

դունեց № 106 բանաձևը, որով դատապարտվում էր Օսմանյան կայսրությունում 1915 թ. իրականացված ցեղասպանությունը: Դրանից հետո Կոնգրեսում բանաձևի ընդունմանը դեմ դուրս եկավ ԱՄՆ-ի ողջ վարչակազմը: Պետքարտուղար Կ. Ռայսը և պաշտպանության նախարար Ռ. Գեյթսը Կոնգրեսին դիմեցին ուղերձներով, որոնցում ասվում էր, որ Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունումը վնաս կհասցնի ԱՄՆ-ի ազգային անվտանգության շահերին: Բացի այդ, ԱՄՆ-ի Պետքարտուղարությունը բանաձևի ընդունման դեմ Կոնգրես է ուղարկել ԱՄՆ-ի նախկին պետքարտուղարների՝ Հ. Քիսինջերի, Կ. Փաուելի, Մ.Օլբրայթի և Ջ. Բեկքերի ստորագրությամբ ուղերձը: Չնայած այդ ամենին՝ բանաձևը հանձնաժողովում ընդունվեց 27 կողմ և 21 դեմ ձայների հարաբերակցությամբ: Հատկանշական էր, որ բանաձևի տեքստի տակ ստորագրել էին ոչ միայն Միջազգային հարաբերությունների հանձնաժողովի անդամները, այլև 226 կոնգրեսականներ, այսինքն՝ այնքան, որքան ձայն հարկավոր էր Ներկայացուցիչների պալատում բանաձևն անցկացնելու համար³²²:

Ի տարբերություն 2000 թ, այս անգամ ԱՄՆ-ի հրեական լոբբին չէր խոչընդոտում բանաձևի ընդունմանը: Ավելին, Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ծագումով հրեա Թ. Լանթոսը, որը Հոլոքոսթը վերապրած միակ կոնգրեսականն էր և երկար տարիներ Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման հակառակորդը, այս անգամ ակտիվորեն աջակցում էր բանաձևի ընդունմանը: Ակնհայտ է, որ բանաձևի ընդունումը հրեական լոբբին դիտարկում էր որպես նախազգուշացում էրդոզանին՝ վերջինիս կողմից Իսրայելին ուղղված քննադատության

³²² Sté u Маркедонов С., Армянский вопрос как зеркало американской политики, <http://www.politcom.ru/5219.html>

համատեքստում: Ի նշան բողոքի, Թուրքիան Վաշինգտոնից հետ կանչեց իր դեսպանին³²³:

Հյուսիսային Իրաքում թուրքական զինված ուժերի կողմից լայնածավալ ռազմական գործողությունների իրականացման վտանգը լուրջ ազդեցություն ունեցավ 106 բանաձևի ընդունման գործընթացի վրա: Նախկինում բանաձևին աջակցություն հայտնած մի շարք կոնգրեսականներ հայտարարեցին դիրքորոշման փոփոխման մասին: Հոկտեմբերի 17-ին Ներկայացուցիչների պալատի նախագահ Ն. Փելոսին հայտարարեց, որ ամենայն հավանականությամբ Պալատի լիագումար նիստում թիվ 106 բանաձևի քվեարկությունը կհետաձգվի: Դեմոկրատական կուսակցության մի շարք առաջատար ներկայացուցիչներ ևս դիմեցին Փելոսիին՝ խնդրելով հետաձգել բանաձևի քվեարկությունը՝ հայտարարելով, որ ստեղծված պայմաններում բանաձևի ընդունման հավանականությունը բավականաչափ փոքր է:

2007 թ. հոկտեմբերի 25-ին բանաձևի քվեարկությունը հետաձգելու խնդրանքով Ն. Փելոսիին դիմեցին թիվ 106 բանաձևի հեղինակներ Ա. Շիֆը ու Կոնգրեսի հայկական հանձնախմբի համանախագահ Ֆ. Փալոնը, ինչպես նաև բանաձևի ակտիվ աջակիցներ Բ. Շերմանն ու Ա. Էշուն՝ խնդրելով առայժմ չսահմանել բանաձևի քվեարկության ժամկետ³²⁴:

Ի վերջո, թուրքական իշխանություններին հաջողվեց այս անգամ ևս տապալել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումը ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի կողմից՝ որպես հաղթաթուղթ օգտագործելով Հյուսիսային Իրաք ռազմական ներխուժման հնարավորությունը: Հյուսիսային Իրաք ներխու-

³²³ Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 60:

³²⁴ Նույն տեղում, էջ 63:

ժելու Էրդողանի որոշման վրա ազդեց նաև ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից 2007 թ. հոկտեմբերի 10-ին Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունումը, ինչը հունից հանեց Թուրքիայի քաղաքական վերնախավին: ԱՄՆ-ի պետքարտուղար Ռայսը առանձին հեռախոսազրույցներ ունեցավ նախագահ Ա. Գյուլի, վարչապետ Էրդողանի և արտգործնախարար Ա. Բաբաջանի հետ՝ ընդգծելով, որ Իրաքի կայունությունն ընդհանուր շահ է բոլորի համար և վիճակն ապակայունացնող ցանկացած քայլ վնաս կհասցնի երկու կողմերին: Շտապ Անկարա գործուղվեցին պետքարտուղարի և պաշտպանության նախարարի տեղակալները, որոնք, սակայն, քննադատություն լսեցին Հայոց ցեղասպանության բանաձևի ընդունման հետ կապված³²⁵:

2007 թ. Ջ. Բուշի վարչակարգը տապալեց այդ նախաձեռնությունը: Բուշ Կրտսերն այդ կապակցությամբ հայտարարեց, որ բոլորը ցավում են հայ ժողովրդի ողբերգական տառապանքների համար, որոնք սկսվեցին 1915 թ., սակայն այդ բանաձևը ճիշտ պատասխան չէ պատմությանը վերաբերող զանգվածային սպանություններին, և դրա ընդունումը մեծ վնաս կհասցնի ԱՄՆ-ի՝ ՆԱՏՕ-ի առանցքային դաշնակիցների հետ հարաբերություններին և ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմին: Հայոց ցեղասպանության դատապարտման բանաձևի ընդունման հարցում Վաշինգտոնը, փաստորեն, զիջման գնաց Անկարային, որպեսզի նրան համոզի Հյուսիսային Իրաք գորքեր չմտցնել: Չի բացառվում, որ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձևի քննարկման

³²⁵ St' u Турция разработала детальный план вторжения в Ирак, <http://www.regnum.ru/> 26.09.2007

ժամանակն ընտրվել էր հենց այդ նպատակով: Արդյունքում՝ բանաձևը չմտավ Ներկայացուցիչների պալատի օրակարգ:

2007 թ. Ներկայացուցիչների պալատում իր ելույթի ժամանակ դեմոկրատ Ջ.Կոստան, որը կողմ էր քվեարկել բանաձևին, կոչ արեց այդ աստիճան չձայրահեղացնել Թուրքիայից եկող սպառնալիքները՝ նշելով, որ 1995 թ. Ռուսաստանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո Ռուսաստանի առևտրի ծավալները Թուրքիայի հետ ավելացել են 351 %-ով³²⁶:

2008 թ. սկզբին Բ.Օբաման հայտարարեց, որ նախագահ դառնալու դեպքում ինքը ճշմարտությունը կասի Հայոց ցեղասպանության մասին և, այդպիսով, արդյունավետ ձևով կարձագանքի բոլոր ցեղասպանություններին: Հայաստանը և ԱՄՆ-ի հայկական համայնքը մեծ հույսեր էին տածում, որ նախագահ Օբաման կկատարի նախագահի թեկնածու եղած ժամանակ տված խոստումները: Սակայն նա շարունակեց նախագահ Քլինթոնի և Բուշ Կրտսերի պրակտիկան, որոնք նույնպես նման խոստումներ էին տվել և հրաժարվել դրանք կատարել: 2009 թ. ապրիլի 24-ից երկու շաբաթ առաջ Օբաման պաշտոնական այց կատարեց Թուրքիա ու թեև ասում էր, որ իր տեսակետները 1915 թ. իրադարձությունների նկատմամբ չեն փոխվել, թուրքական խորհրդարանում ելույթ ունենալիս հայտարարեց, որ բաց սահմանը թուրք և հայ ժողովուրդներին կվերադարձնի դեպի խաղաղ և բարգավաճ համակեցություն, և որ ԱՄՆ-ը լիովին աջակցում են Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորմանը³²⁷: Իսկ ապրիլի 24-ին

³²⁶ St' u Markedonov C., Между исторической справедливостью и реальной политикой, <http://www.politcom.ru/7644.html>

³²⁷ St' u The White House, Office of the Press Secretary, April 6, 2009, Remarks By President Obama to the Turkish Parliament, <http://www.whitehouse.gov/the-press-office/>

Օրաման Հայոց ցեղասպանությունն անվանեց «Մեծ եղեռն»³²⁸: Այս կերպ Օրաման փորձում էր սիրաշահել հայերին, բայց միևնույն ժամանակ չնեղացնել թուրքերին:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացը թուրքական իշխանությունների կողմից փաստացի տապալելուց հետո ևս ամերիկյան իշխանությունները շարունակում էին ջանքեր գործադրել արձանագրությունները «կենդանի պահելու» ուղղությամբ՝ կողմերին հորդորելով հետ չվերցնել իրենց ստորագրությունները և սպասել առավել բարենպաստ պահի՝ առաջիկայում դրանք վավերացնելու համար: Այս համատեքստում պետք է դիտարկել ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից 2010 թ. մարտի 4-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 252 բանաձևի ընդունումը: Ներկայացուցիչների պալատի լիազույժում նիստում բանաձևի հնարավոր ընդունումը ծառայում էր որպես լծակ այս հարցում Թուրքիայից զիջումներ ստանալու համար:

2010 թ. մարտի 4-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի միջազգային հարաբերությունների հանձնաժողովում քննարկվեց 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության տարածքում իրականացված ցեղասպանության մասին բանաձևը: Բանաձևում նշվում էր, որ հայերի ցեղասպանությունը ծրագրվեց և իրագործվեց Օսմանյան կայսրության կողմից 1915-1923 թթ., ինչի հետևանքով տեղահանվեցին 2 մլն հայեր, որոնցից 1,5 մլն-ը սպանվեց, իսկ կես մլն փրկվածները քշվեցին իրենց տներից: Արդյունքում՝ վերջ դրվեց իրենց հայրենիքում հայերի 2500-ամյա ներկայությանը: Բանաձևը ԱՄՆ-ի

³²⁸ St' u The White House, Office of the Press Secretary, April 24, 2009, Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, http://www.whitehouse.gov/the_press_office/

նախագահին կոչ էր անում միջոցներ ձեռնարկել, որպեսզի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ այդ իրադարձություններն իրենց արտացոլումը գտնեն³²⁹: Դժվար չէ նկատել, որ այս բանաձևը, տառացիորեն կրկնում էր 2007 թ. թիվ 106 բանաձևի տեքստը:

ԱՄՆ-ի պետքարտուղար Հ. Քլինթոնը միջազգային հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հ. Բերմանին ասաց, որ բանաձևի ընդունումը ռիսկի կենթարկի հայ-թուրքական արձանագրությունները: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը Բ. Օբամայի հետ հեռախոսազրույցում նշել էր, որ Վաշինգտոնը չպետք է թույլ տա, որ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև հարաբերություններին վնաս հասցվի: Կոնգրեսում քվեարկությանը հետևում էին 3 հայ և 8 թուրք պատգամավորներ: Բանաձևն ընդունվեց մեկ ձայնի տարբերությամբ՝ կողմ քվեարկեցին հանձնաժողովի 23, իսկ դեմ՝ 22 անդամներ: Ընդ որում, կոնգրեսականներից մեկը՝ դեմոկրատ Շ. Ջեքսոն Լին, չմասնակցեց քվեարկությանը: Հանձնաժողովի քվեարկության արդյունքները ցույց տվեցին, թե ինչպիսի համառ պայքար է ընթացել լոբբիստական խմբերի ու դիվանագետների միջև: Նախագահ Օբամայի վարչակարգը և թուրքական իշխանությունները կոնգրեսականներին հորդորեցին չհաստատել բանաձևը, իսկ քվեարկությունից անմիջապես հետո Վաշինգտոնից հետ կանչվեց Թուրքիայի դեսպանը³³⁰: Դավութօղլուն արձագանքելով այս իրադարձությանը, հայտարարեց, որ Թուրքիան երբեք որոշումներ չի կայացնելու ճնշման տակ և որ Հայաստանի հետ ստորագրված արձանագրությունները նույնպես դիտվում են այդ համատեքստում³³¹:

³²⁹ Տե՛ս և He время для справедливости, <http://expert.ru/2010/03/9/>

³³⁰ Տե՛ս США и Турция: временные сложности или опасная нестабильность?, <http://www.ia-centr.ru/expert/7388/>

³³¹ Տե՛ս և He время для справедливости, <http://expert.ru/2010/03/9/>

ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ձևափոխումը հանգեցրեց նրան, որ հայ լոբբիստական կառույցները հարկադրված փոխեցին իրենց պայքարի մարտավարությունը և սկսեցին ակտիվ աշխատանքներ տանել ԱՄՆ-ի նահանգային խորհրդարաններում, ինչի արդյունքում ԱՄՆ-ի 46 նահանգներ, այսինքն՝ երկրի ավելի քան 90 %-ը, արդեն ճանաչել ու դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Նման մարտավարությամբ հայկական կառույցները, թերևս, փորձում էին ճնշում գործադրել դաշնային մարմինների վրա, որ նրանք համակերպվեն ստեղծված իրավիճակի հետ և, ի վերջո, դաշնային մակարդակով նույնպես ընդունեն համապատասխան որոշում: Սակայն փորձը ցույց տվեց, որ դաշնային մարմինները չեն առաջնորդվում նման տրամաբանությամբ: Սա նշանակում է, որ հայկական լոբբիստական կառույցների գործունեության վեկտորն օրենսդիր մարմնից պետք է տեղափոխվի դեպի գործադիր մարմինը՝ մասնավորապես դեպի այն կառույցները, որոնք տասնամյակներ շարունակ ձախողել են հայկական բանաձևերը՝ Սպիտակ տուն, Պետքարտուղարություն և Պենտագոն: Ամերիկաթուրքական հարաբերություններում վերջին շրջանում նկատվող սրությունը կարող է օգտագործվել նշված կառույցների վրա ազդելու առումով:

ԱՄՆ-ի Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա շարունակում են ազդեցություն ունենալ իսրայելական իշխանությունները՝ շնորհիվ ԱՄՆ-ի հրեական լոբբիստական կազմակերպությունների: Դրա դրսևորումը եղավ այն, որ թիվ 252 բանաձևն ընդունվեց ընդամենը մեկ ձայնի առավելությամբ, ինչում որոշ դերակատարություն ունեցավ Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, ծագումով հրեա

Հ.Բերմանը: Իսրայելի համար այս խնդիրը կարևորություն ձեռք բերեց Թուրքայի ղեկավարության՝ աստիճանաբար ուժեղացող հակաիսրայելական հայտարարությունների և 2010 թ. հունվար-մայիս ամիսներին երկու երկրների միջև ծագած մի շարք սկանդալների և վատթարացող հարաբերությունների համատեքստում: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի և Իսրայելի իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության, որպես Թուրքիայի դեմ ճնշում գործադրելու գործոնի օգտագործումը հաճախ առնչություն չունի ՀՀ կամ Սփյուռքի հայության շահերի և մտադրությունների հետ³³²:

Այս առումով թուրք-իսրայելական հարաբերությունների լարվածությունը և խորացող հակասությունները հայ լոբբիստներն ապագայում նույնպես կարող են օգտագործել ԱՄՆ-ի հրեական լոբբիստական կառույցների հետ համագործակցության ուղիներ մշակելու համար, որ նրանք, եթե չաջակցեն հայկական նախաձեռնություններին, ապա գոնե չեզոքություն պահպանեն: Այս համագործակցությունը կարող է օգտագործվել ոչ միայն ԱՄՆ-ի կոնգրեսականների, այլև Սպիտակ տան վրա ազդելու նպատակով՝ Հայոց ցեղասպանության հարցում բարենպաստ դիրքորոշում ձևավորելու համար: Հարկավոր է հաշվի առնել նախորդ բանաձևերի ձախողումների փորձը՝ նույն սխալները թույլ չտալու համար:

³³² Պողոսյան Բ., նշվ. աշխ., էջ 67:

ԳԼՈՒԽ III. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԵՄ- ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

3.1. ԵՄ-Թուրքիա հարաբերությունների հակասություններն ու շահերի բախումները

Եվրոպական Միությանը Թուրքիայի անդամակցելը դարձել է ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ամենաառանցքային հարցը: Անդամակցության տևական գործընթացը երկկողմ հարաբերություններում ի հայտ բերեց բազմաթիվ խնդիրներ: Չնայած դրան՝ Թուրքիայի անդամության բանակցությունները շարունակվում էին և կողմերից յուրաքանչյուրը դրանք շարունակելու իր շարժառիթներն ուներ:

ԵՄ-ի շահագրգռվածությունը Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացման գործում առաջին հերթին պայմանավորված էր վերջինիս բարենպաստ աշխարհագրական դիրքով, քանզի նրա տարածքով հնարավոր էր հասնել Մերձավոր Արևելքի ու Կենտրոնական Ասիայի շուկաներին և հումքերի աղբյուրներին, ինչը ԵՄ-ի համար չափազանց կարևոր էր: Բացի այդ, Թուրքիայի հետ համագործակցությունը ԵՄ-ին կարող էր տալ միջերկրածովյան ավազանում իր ազդեցության ամրապնդման հնարավորություն: Թուրքիային դիտելով որպես բուֆերային գոտի՝ Բրյուսելը կարող էր փորձել իր ազդեցությունը տարածել մերձավորարևելյան և հետխորհրդային երկրների վրա: ԵՄ-ին անդամակցելը Թուրքիային մանրելու մեծ հնարավորություններ կընձեռի Մերձավոր Արևելքի, Իրանի, Անդրկովկասի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի ուղղություններում: Ընդ որում, նման աջակցությունը ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել նրան, որ Անկարան իսկապես դառնա ինքնուրույն աշխարհաքաղաքական խաղացող նշված

աշխարհագրական տարածքներում: Այսինքն, ԵՄ-ին անդամակցությունը Անկարայի համար ոչ այնքան նպատակ է, որքան միջոց՝ իր նեոսոմանական հավակնոտ տեսլականին հասնելու համար: Թուրքիայի համար կարևոր է ոչ միայն ԵՄ-ին անդամակցությունը, այլ եվրոինտեգրման գործընթացը, որը հնարավորություն է տալիս երկիրը տանել ժողովրդավարացման ճանապարհով՝ զարգացնելով թե՛ քաղաքական համակարգը և թե՛ տնտեսությունը՝ միաժամանակ Արևելքի ու Արևմուտքի միջև մանևրելու հնարավորություն ստանալով:

ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին բոլոր թեկնածու պետություններից, այդ թվում՝ Թուրքիայից, ԵՄ-ն ակնկալում է որոշակի պայմանների կատարում: Սկզբի համար հարկավոր է, որ թեկնածու երկիրը համապատասխանի կոպենհագենյան չափանիշներին, որոնք սահմանվել են 1993 թ. հունիսի 21-22-ին Կոպենհագենում կայացած կառույցի գագաթաժողովի ժամանակ՝ ներառելով իրենց մեջ ժողովրդավարության գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, արդյունավետ գործող շուկայական տնտեսության գոյության և մի շարք այլ չափանիշներ: Թեկնածու երկիրը գտնվում է ԵՄ-ի մանրակրկիտ մոնիթորինգի տակ՝ ուսումնասիրելով, թե ինչպես են տվյալ երկրի կողմից կատարվում առաջադրված պայմանները: Առաջին պայմանների բավարարումից հետո ներկայացվում է պայմանների նոր փաթեթ և այդպես շարունակ³³³:

ԵՄ-ն պահանջում է, որ Թուրքիան համապատասխանի ժողովրդավարական և քաղաքական չափանիշներին, որոնց համաձայն Անկարան իր ներպետական օրենսդրությունը պետք է ներ-

³³³ Старченков Г. И., Турция: долгий путь в Евросоюз, «Современная Европа», М., 2002, № 4, с. 78.

դաշնակեցնի ԵՄ-ի օրենսդրությանը, հստակեցնի թուրքական զինված ուժերի լիազորությունները՝ բացառելով պաշտպանությանը չվերաբերող ոլորտներում զինված ուժերի ազդեցությունը, համապատասխան փոփոխություններ կատարի դատական համակարգում, կոռուպցիայի դեմ պայքարում և այլն: Կոպենհագենյան չափանիշների տնտեսական բլոկի պայմանների կատարման առումով Թուրքիան որոշակի խնդիրներ ունի, քանզի նրա տարածքներն անհամաչափ են զարգանում: Եթե արևմտյան շրջանները զարգանում են ավելի դինամիկ, ապա արևելյան շրջաններն ավելի հետամնաց են, անհամամասնություն գոյություն ունի նաև Թուրքիայի քաղաքների ու գյուղերի միջև: Թուրքայի անդամակցության պարագայում դա կարող է հանգեցնել ԵՄ-ի ներսում լուրջ միգրացիոն տեղաշարժերի, ինչը ցանկալի չէ Բրյուսելի համար³³⁴:

ԵՄ-Թուրքիա հարաբերություններում կարևոր քայլ կատարվեց 1995 թ., երբ Բրյուսելի ու Անկարայի միջև ստորագրվեց Թուրքիայի ԵՄ-ի մաքսային միությանը միանալու համաձայնագիրը, ինչև վերածվեց տնտեսական ոլորտում հարաբերությունների սերտացման: Սակայն ԵՄ-Թուրքիա հարաբերությունները սրվեցին, երբ 1997 թ. դեկտեմբերի Լյուքսեմբուրգում կայացած ԵՄ-ի զագաթաժողովում հայտարարվեց Լեհաստանի, Չեխիայի, Հունգարիայի, Սլովենիայի, Էստոնիայի և Կիպրոսի հետ կառույցի լիիրավ անդամության շուրջ բանակցություններ սկսելու մասին: Անկարայում շատ ցավազին ընդունեցին այն փաստը, որ ԵՄ-ի անդամության թեկնածուների ոչ այդ, ոչ էլ հեռանկարային ցուցակում Թուրքիան չէր հիշատակվում³³⁵:

³³⁴ Տե՛ս Կунаков В.В., Турция и ЕС: проблемы экономической интеграции, М., 1999.

³³⁵ Տե՛ս Կуранов А., Новички спешат в Евросоюз, «Новое время», Приложение, Политэкономия, № 10, 26 мая 1998.

1999 թ. դեկտեմբերի Հելսինկիում կայացած ԵՄ-ի հերթական գագաթաժողովում Թուրքիան վերջապես պաշտոնապես ընդգրկվեց կառույցի անդամության թեկնածուների ցուցակում: ԵՄ-ն հայտարարեց, որ Թուրքիան հանդիսանում է ԵՄ-ի անդամության թեկնածու երկիր՝ հաշվի առնելով այն չափանիշները, որոնք ներկայացվել են մյուս թեկնածու պետություններին³³⁶:

Իրավական և տնտեսական բարեփոխումների անցկացումից հետո 2000 թ. Նիցցում կայացած ԵՄ-ի գագաթաժողովում որոշվեց, որ Թուրքիայի անդամակցության բանակցությունները սառեցվում են այնքան ժամանակ, մինչև երկիրը կհասնի նախնական քաղաքական պահանջների բավարարմանը, մասնավորապես կղաղաբեցնի ազգային փոքրամասնությունների հանդեպ խտրականությունը, կկայունացնի երկրի տնտեսությունը, կբարելավի մարդու իրավունքների պաշտպանության վիճակը և կսահմանափակի բանակի դերը երկրի ներքին քաղաքականության վրա³³⁷:

2002 թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում իշխանության եկավ իսլամամետ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը, որը հայտարարեց ԵՄ-ին անդամակցելու քաղաքականության շարունակականության մասին: Թուրքական իշխանությունները մեծ ջանքեր գործադրեցին 2002-2005 թթ. խորհրդարանում օրենսդրական բարեփոխումների միջոցով ԵՄ-ի պահանջները բավարարելու ուղղությամբ: Դրա արդյունքում 2004 թ. Բրյուսելում Եվրոպական խորհրդի նիստը որոշեց 2005 թ. Թուրքիայի հետ վերսկսել

³³⁶ St´u Эрдоган поставил Европе ультиматум о членстве в ЕС,
<http://www.nakanune.ru/news/2015/1/24/22384848#sthash.d24F5E7t.dpuf>

³³⁷ St´u Декларация брюссельского саммита, подписанная 17.12.2004года,
www.abhaber.com.tr.

անդամակցության բանակցությունները³³⁸: Մակայն, դրանով հանդերձ ԵՄ-ի ազդեցիկ պետությունների առաջնորդները մտավախություններ ունեին, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը Եվրոպայի մահմեդականացման գործընթացի և ԵՄ-ի թուլացման նոր խթան կհանդիսանա՝ ամրապնդելով Թուրքիայի դիրքերը, որը միջազգային հարաբերություններում հավակնում է դառնալ ուժեղ և ինքնուրույն դերակատար³³⁹:

Բրյուսելի կողմից Թուրքիայի հետ անդամության բանակցությունների վերսկսումը նշանակում էր, որ այդ երկիրը որոշ ոլորտներում սկսել է համապատասխանել եվրոպական չափանիշներին: Բրյուսելը Թուրքիայի բարեփոխումների իրականացման համար բավական ֆինանսական միջոցներ էր հատկացրել, ինչը խոսում էր այդ հարցում նաև ԵՄ-ի տրամադրվածության մասին: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում մարդու իրավունքներին, այդ թվում՝ խոսքի ազատությանը, դատական գործընթացին, ազատագրկման վայրերում դատապարտվածներին պահելու պայմաններին և այլն: Չնայած կատարված որոշ փոփոխություններին՝ Թուրքիայի սահմանադրության մեջ դեռևս պահպանվում էր մահապատիժը, իսկ դատապարտյալների նկատմամբ դաժան վերաբերմունքի հարցում կատարվել էին չնչին դրական փոփոխություններ³⁴⁰:

ԵՄ-ի չափանիշներին համապատասխանելու նպատակով թուրքական կողմի իրականացրած բարեփոխումները, անշուշտ, երկրում հանգեցրին որոշակի դրական տեղաշարժերի, սակայն ակնհայտ էր, որ դրանք ավելի շուտ կրում էին մակերեսային, ոչ

³³⁸ Stu Turkey-EU Relations, <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey-and-the-european-union.en.mfa>

³³⁹ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 186.

³⁴⁰ St u Энтин Л.М., Европейское право, М., 2005.

հիմնական բնույթ, ինչն էլ արձանագրեցին ԵՄ-ի համապատասխան մարմինները: Օբյեկտիվ գնահատելով Թուրքիայի կողմից ԵՄ-ին անդամակցելու ուղղությամբ կատարված քայլերը կարող ենք արձանագրել, որ ո՛չ ներպետական օրենսդրության, ո՛չ հարևան երկրների հետ հարաբերությունների բարելավման և ոչ էլ իրական ժողովրդավարության՝ խոսքի ազատության, ազգային փոքրամասնությունների պաշտպանության տեսակետից Թուրքիան դեռևս չէր համապատասխանում ԵՄ-ի անդամակցության չափանիշներին³⁴¹:

Սակայն որքան Թուրքիային թվում էր, թե մոտենում է բաղձալի նպատակին, ԵՄ-ն ավելի բժախնդիւր ձևով էր մոտենում նրան նոր նախապայմանների առաջադրման հարցին³⁴²: ԵՄ-ի ազդեցիկ երկրները՝ Ֆրանսիան և Գերմանիան, միանշանակ բացասական դիրքորոշում ունեն Թուրքիայի Եվրամիությանն անդամակցելու հարցում: Ինչպես հայտնի է, Թուրքիայի առջև դրվել են մի շարք նախապայմաններ, որոնք կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ Թուրքիայի ներսում և Թուրքիայից դուրս առկա հիմնախնդիրներ: Այդ նախապայմանները հաղթահարելուց հետո միայն Եվրամիությունը կհամաձայնվի Թուրքիայի հետ շարունակել բանակցությունները անդամակցության հարցի շուրջ: Ներքին խնդիրների շարքում նշվում են թուրքական տնտեսության անհամաչափ և ոչ բավարար զարգացման մակարդակը, որը թեև արձանագրել է որոշ առաջընթաց, սակայն շարունակում է խիստ անկայուն մնալ: Եվրոպացի գործիչներին մասնավորապես մտահոգում է թուրքական բյուջեի բարձր դեֆիցիտը, սղաճի բարձր

³⁴¹ Старченков Г.И., Турция: долгий путь в Евросоюз, «Современная Европа», М., 2002, № 4, с. 78.

³⁴² Моисеев П.П., Старченков Г.И., Стратегии экономического развития Турции, «Народы Азии и Африки сегодня», М., 2003, № 7, с. 21.

մակարդակը, ինչը բացասաբար է ազդում թուրքական արժույթի գնողունակության վրա, ինչպես նաև տնտեսության մեջ պետության անսահմանափակ միջամտությունը: Բացի այդ, նշվում է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության անբավարար մակարդակը: Թեև այս ոլորտում իրականացվել են որոշ բարեփոխումներ և ընդունվել են նոր օրենքներ, սակայն դրանք հիմնականում մնացել են թղթի վրա: Շարունակվում են ոտնահարվել ազգային ու կրոնական փոքրամասնությունների՝ քրիստոնեական համայնքների ու քրդերի իրավունքները³⁴³:

Թուրքերն, իրենց հերթին, համոզված են, որ ԵՄ-ն Թուրքիային ավելի կոշտ պայմաններ է ներկայացնում, քան անդամության այլ թեկնածու երկրներին: Այս պնդումը զուրկ չէ հիմքերից, քանզի եվրոպացիներին իսկապես մտահոգում են Թուրքիայի տարածքի, բնակչության թվի, ինչպես նաև մահմեդական մշակույթի հարցերը, որոնք թեկնածու պետություններին ներկայացվող ընդհանուր չափորոշիչներից դուրս են³⁴⁴: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու վրա ամենաբացասական ազդեցությունը թողնում է Թուրքիայի բնակչության մեծաքանակ լինելը: ԵՄ-ի համար լուրջ մարտահրավեր է այն, որ, կառույցի անդամ դառնալով, Թուրքիան Եվրոխորհրդարանում կստանա Գերմանիային հավասար պատգամավորական տեղեր՝ հնարավորություն ունենալով ազդել կառույցի քաղաքականության վրա: ԵՄ-ի երկրներն առանց Թուրքիայի անդամակցության էլ արդեն մտահոգված են իրենց տարածք միլիոնավոր թուրք ներգաղթյալների ներթափանցումով³⁴⁵: Թուրք ներ-

³⁴³ Stéu Гаджиев А.Г. Курдский вопрос в свете очередного ежегодного доклада Еврокомиссии о развитии Турции. Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09a.htm>

³⁴⁴ Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., с. 188.

³⁴⁵ Моисеев П., Старченков Г. И., Стратегии экономического развития Турции, с. 21.

գաղթյալները Գերմանիայում դարձել են ոչ միայն տնտեսական, այլև քաղաքակրթական խնդիրների առաջացման պատճառ: Ակնհայտ է, որ Թուրքիայի անդամակցության պարագայում եվրոպական երկրներ են ուղղվելու թուրք միլիոնավոր ներգաղթյալների նոր հոսքեր, և այդ երկրներն ուղղակի չեն կարողանա դիմակայել դրա հետևանքով առաջացած նոր ժողովրդագրական ճգնաժամին, որը կործանարար կդառնա դարերով ձևավորված եվրոպական ինքնության համար: Նույն մտահոգությունն արտահայտվում է նաև թուրքական համեմատաբար անորակ ու էժանագին ապրանքներով եվրոպական շուկաները նվաճելու հետ կապված, ինչը եվրոպական արտադրողների սնանկացման կհանգեցնի:

ԵՄ-ի գրեթե բոլոր պետությունները բախվում են մահմեդական, այդ թվում՝ Թուրքիայից հեռացած ներգաղթյալների սոցիալական, քաղաքական և մշակութային խնդիրների հետ: Բացի այդ, ԵՄ-ին անհանգստացնում է Թուրքիայի՝ Եվրոպայի անվտանգությանը սպառնացող տարածաշրջանների հարևանությունը, քանզի այդ երկիրը կարող է վերածվել ԵՄ-ի տարածք անկայունության տեղափոխման տարանցիկ միջանցքի: Ի վերջո, նշվում է, որ Թուրքիան, որտեղ առկա է իսլամի գերիշխող դիրքը, չի համապատասխանում եվրոպական ընդհանուր արժեքային համակարգին, իսկ առանց այդ համապատասխանության Թուրքիայի անդամակցությունը կարող է կործանարար դառնալ հենց ԵՄ-ի համար³⁴⁶:

Այս ամենը հաշվի առնելով՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունների նոր փուլից անմիջապես առաջ Անկարան սպառնաց Բրյուսելին, որ եթե եվրոպական գործիչները չդադարեն Թուրքիային առաջադրել նոր պայմաններ, ապա Թուրքիան ԵՄ-ի անդամ դառնալու մտքից կհրաժարվի: Սա նոր դրսևո-

³⁴⁶ Տե՛ս Գորբուнов Օ., Турецкая фронда, <http://www.politcom.ru/12341.html>

րում էր ԵՄ-Թուրքիա հարաբերություններում, սովորաբար նման սպառնալից տոնով խոսում էր Բյուրեսելը: Սակայն այս անգամ դերերը կարծես թե փոխվել էին: Անկարայի նման կոշտ դիրքորոշումը պայմանավորված էր նաև նրանով, որ Հունաստանը հայտարարել էր, որ հավանություն չի տա ԵՄ-ի դեպի Արևելք մասշտաբային ընդարձակմանը, եթե ԵՄ-ին անդամակցող Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների հետ միևնույն ցուցակում չհայտնվի նաև Կրետեն, որը կառավարվում է միջազգայնորեն ճանաչված հունական համայնքի կողմից³⁴⁷:

Թուրքական հասարակության ամենատարբեր շերտերում ավելի տարածված է այն տեսակետը, որ ԵՄ-ը, հարկադրելով Թուրքիային կատարել նորանոր պահանջներ, սահմանափակում է նրա ինքնիշխանությունը, ձգտելով թուլացնել երկիրը և, ի վերջո, մերժելու է անդամակցությունը: Թուրքիայում ամրապնդված է այն տեսակետը, թե, չնայած Թուրքիայի կատարած բարեփոխումներին, ԵՄ-ն արհեստական խոչընդոտներ է ստեղծում Թուրքիայի անդամակցության հարցում, որ ԵՄ-ն վեր է ածվել «քրիստոնեական երկրների ակումբի», որը չի ցանկանում իր կազմն ընդունել մահմեդական երկրին՝ հաշվի առնելով ավանդույթների և մշակութային տարբերությունները³⁴⁸: Ինչ վերաբերում է եվրոպական երկրների հասարակական կարծիքին, ապա Գերմանիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և Մեծ Բրիտանիայում կատարված հարցումները ցույց տվեցին, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը դեմ է հարցվածների 52 %-ը, իսկ 41 %-ը՝ կողմ է: Ընդ որում, անդամակցության հակառակորդներն ավելի շատ են Ֆրանսիայում՝ 64,4 %, Գերմանիայում՝ 62 % և Մեծ Բրիտանիայում՝

³⁴⁷ Ст' u Пахомов Н., Анкара устала от ЕС, <http://www.politcom.ru/1391.html>

³⁴⁸ Старченков Г.И., Турция: долгий путь в Евросоюз, с. 78.

46,3 %: Հատկանշական է, որ Թուրքիայի անդամության կողմնակիցները շատ են Լեհաստանում՝ 54,1 % և Իսպանիայում՝ 53,2 %³⁴⁹: Ակնհայտ է, որ Թուրքիայի անդամությանը դեմ են արտահայտվում ԵՄ-ի ավելի ազդեցիկ երկրների բնակչությունը, իսկ կողմ՝ երկրորդական, կամ նոր անդամակցած երկրների բնակչությունը:

ԵՄ-ին անդամակցելու գործընթացի դանդաղելուց հետո, Թուրքիայի ջանքերով 2008 թ. Ստամբուլում կազմակերպվեց Թուրքիա-Աֆրիկա համագործակցության առաջին գագաթաժողովը, որին մասնակցում էին մոտ հինգ տասնյակ աֆրիկյան պետությունների ներկայացուցիչներ: Այս ուղղությամբ Անկարայի կատարած հետևողական քայլերի հետևանքով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում հաջողվեց ապահովել աֆրիկյան պետությունների ձայները, որոնցով Թուրքիան ընտրվեց Անվտանգության Խորհրդի անդամ³⁵⁰:

Թուրքիան ակտիվորեն ներգրավվեց նաև «արաբական գարնան» գործընթացի մեջ, որպեսզի չեզոքացնի Հյուսիսսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում Եվրոպայի, առաջին հերթին Ֆրանսիայի՝ իր ազդեցությունը վերկանգնելու փորձերը: Այն բանից հետո, երբ Բրյուսելը Թուրքիային դուրս մղեց Եվրոպայից, Անկարան սկսեց հավակնություններ ցուցաբերել այլ տարածքներում թուրքական դիրքերի ամրապնդման հարցում: Դավութօղլուն խոստովանեց, որ Եվրոպայի ազդեցության գոտիների ընդարձակումը Հյուսիսսային Աֆրիկայում կարող է հանգեցնել Թուրքիայի՝ որպես միջերկրկրածովյան տերության դերի նվազման: Այդ իսկ պատճառ-

³⁴⁹ St' u Куранов А., Новички спешат в Евросоюз, Новое время. Приложение, Политэкономия №10. 26 мая 1998.

³⁵⁰ St u Թուրքիայի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, <http://www.mfa.gov.tr/turkiye-afrika-iliskileri.tr.mfa>

ռով Անկարան որոշել է տարածաշրջանից դուրս չմղվելու նպատակով ինքը գլխավորել այդ գործընթացները³⁵¹:

2009 թ. սկզբին Թուրքիայի վարչապետ Էրդողանը փորձեց նոր թափ հաղորդել ԵՄ-ին իր երկրի անդամության բանակցություններին: Միննույն ժամանակ նա որոշակի կասկածներ արտահայտեց «Նաբբուկո» գազամուղի տնտեսական նպատակահարմարության հետ կապված և հայտարարեց այդ նախագծի նկատմամբ իր երկրի վերաբերմունքի փոփոխության մասին: Եվրահանձնաժողովի նախագահ Բարոզուն խորհուրդ տվեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը չկապել «Նաբբուկոյի» նախագծի հետ: Թեև Էրդողանը պատասխանեց, որ չի պատրաստվում այդ նախագիծը որպես գործիք օգտագործել ԵՄ-ի դեմ, այդուհանդերձ, նրա քայլերից հենց դա էր նշմարվում³⁵²:

ԱՄՆ-ի նախագահ Օբաման ակտիվորեն աջակցում էր Թուրքիայի քայլերին՝ ԵՄ-ին կոչ անելով ընդառաջ գնալ Անկարային: Սակայն Ֆրանսիայի նախագահ Սարկոզին հայտարարեց, որ ինքը դեմ է Թուրքիայի անդամակցությանը և որ այդ հարցը վերաբերվում է միայն ԵՄ-ի անդամ-պետություններին³⁵³: Սարկոզին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը դեմ էր արտահայտվում դեռ նախագահի թեկնածու եղած ժամանակ: Նա պնդում էր, որ ԵՄ-ի անդամ չի կարող դառնալ մի երկիր, որը չի ճանաչում ԵՄ-ի անդամ հանդիսացող Կիպրոսին, իսկ ԵՄ-ում հաստատված կարգը չընդունող երկիրը տեղ չունի այդ կառույցում: Այս անգամ էլ Ֆրանսիայի նախագահը հասկացնել տվեց, որ Թուրքիան առավելազույնը կարող է դառնալ ԵՄ-ի արտոնյալ գործընկեր, քանզի

³⁵¹ St' u Имам не сдержал азарта, <http://expert.ru/expert/2012/31/>

³⁵² St' u Собакина Д., Проект Навуссо: новые перспективы и позиция Турции, <http://www.politcom.ru/7511.html>

³⁵³ St' u Мефодьева О., Обама сошелся с турками, <http://www.politcom.ru/7930.html>

Թուրքիայի հավատարմությունը ԱՄՆ-ին մտահոգում է Ֆրանսիային, իսկ Փարիզը ԵՄ-ն դիտում է որպես ԱՄՆ-ին հակակշիռ և աշխարհում Ֆրանսիայի ազդեցության տարածման միջոց: Դրանից ելնելով՝ ԵՄ-ի մշակութային և քաղաքական արժեքներին չհամապատասխանող Թուրքիայի մուտքը կառույցի մեջ կխախտի ներդաշնակությունը ԵՄ-ի ներսում և կխաթարի ԱՄՆ-ին նրա այլընտրանք լինելը³⁵⁴:

ՆԱՏՕ-ն և Վաշինգտոնը ԵՄ-ին առաջարկում էին նաև Թուրքիայի հետ համաձայնագիր ստորագրել, որով վերջինիս լուրջ դերակատարում կհատկացվի եվրոպական անվտանգության ու պաշտպանության քաղաքականության մեջ: Սակայն ԵՄ-ն բանաձև ընդունեց, որի համաձայն երրորդ երկրները կառույցի կողմից ընդունվող որոշումներում մասնակցություն ունենալ չեն կարող³⁵⁵:

Այս հարցում Սարկոզիի տեսակետը լիովին կիսում է Ա. Մերկելը, որը 2005 թ.՝ Գերմանիայի կանցլեր դառնալուց ի վեր, հայտարարում է, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամությունը պետք է փոխարինվի արտոնյալ գործընկերոջ կարգավիճակով: Նման դիրքորոշման համար պատրվակ դարձավ նաև Էրդողանի կառավարության կողմից խոշոր քաղաքներում սկսված ցույցերի դաժան ճնշումը: Այս կապակցությամբ Թուրքիայի ԵՄ-ի հարցերով նախարար Բաղեշը նույնիսկ Մերկելին կոչ արեց իր ներքաղաքական խաղերի համար չօգտագործել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը և զգուշացրեց Անկարայի հետ հարաբերություններում կամայականությունների հետևանքների մասին: Բեռլինում Թուրքիայի դեսպանը կանչվեց Գերմանիայի ԱԳՆ, որտեղ նրանից բացատրություններ պահանջեցին Բաղեշի կողմից Գերմանիայի

³⁵⁴ Տե՛ս Самодин А., Турция не созрела, <http://www.politcom.ru/7928.html>

³⁵⁵ Տե՛ս Турция рулит, <http://expert.ru/2011/09/19/>

կանցլերի հասցեին արված անվայել արտահայտությունների կապակցությամբ³⁵⁶:

2010 թ. մարտի վերջին Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը երկօրյա այցով ժամանեց Թուրքիա՝ Իրանի նկատմամբ պատժամիջոցների խստացման, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության և Գերմանիայում թուրքական դպրոցների բացման հարցերը քննարկելու նպատակով: Վերը նշված բոլոր հարցերով, սակայն, փոխզիջման հասնել չհաջողվեց: Մերկելը նախ միանգամից հայտարարեց, որ թուրքերը կարող են հույսեր ունենալ միայն ԵՄ-ի արտոնյալ գործընկերոջ կարգավիճակ ստանալու հետ կապված, ինչը Գերմանիայի կանցլերը թեև փորձում էր ներկայացնել որպես միջանկյալ կարգավիճակ, որը կարող է տանել դեպի անդամություն, սակայն հասկանալի էր, որ դա Անկարայի համար ոչ թե հանգրվան էր, այլ վերջնակետ: Մերկելը, փաստորեն, կրկնում էր Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի տեսակետները և կրկին որպես փաստարկ բերում Թուրքիայի կողմից ԵՄ-ի անդամ Կիպրոսին չճանաչելը և նրա առջև թուրքական նավահանգիստների փակ պահելը: Մերկելի առաջարկը, սակայն, Անկարային ոչ միայն չգոհացրեց, այլև վերջինիս տարածաշրջանային գերտերության հավակնությունների պայմաններում նույնիսկ նվաստացուցիչ համարվեց: Թուրքիայի ԵՄ-ի հարցերով նախարար Բադեշը հայտարարեց, որ արտոնյալ գործընկերոջ կարգավիճակ գոյություն չունի և Թուրքիան ընդհանրապես չի դիտարկում նման տարբերակ, այլ բանակցություններ է վարում բացառապես ԵՄ-ին անդամակցելու հարցի շուրջ: Թուրքերը լավ են հասկանում, որ Կիպրոսի հարցը ԵՄ-ի կողմից Թուրքիայի անդամակցությունը կասեցնելու պա-

³⁵⁶ Stéphan Agadjanyan M., Турецкий проигрыш на немецких выборах, <http://www.politcom.ru/16457.html>

տրվակ է: Իրական պատճառն այն է, որ ԵՄ-ն պատրաստ չէ իր կազմի մեջ մտցնել 72,5 մլն բնակչություն ունեցող երկրի, որի 99 %-ը մահմեդականներ են, ինչը հակադրվում է եվրոպական արժեհամակարգին և կարող է սպառնալիք դառնալ նրա համար:

Ձգտելով կոմպենսացնել Բրյուսելի այդ որոշման բացասական հետևանքները, Անկարան սկսեց խնդրել Թուրքիայի համար վերացնել վիզային ռեժիմը, ինչը ԵՄ-ն արել էր Սերբիայի հետ, որը Բրյուսելի հետ դեռ չէր սկսել անդամության բանակցությունները: Սակայն Մերկելը փորձեց շրջանցել այդ հարցը, քանզի գտնում էր, որ չափազանց վտանգավոր է վերացնել վիզային ռեժիմը մի երկրի հետ, որի բնակչության զգալի մասը արմատական իսլամի հետևորդ է³⁵⁷:

Էրդողանը վաղուց խնդրում էր Գերմանիային իր տարածքում բնակվող շուրջ 3 մլն թուրքերի համար բացել թուրքական դպրոցներ, ինչը, նրա կարծիքով, կնպաստեր Գերմանիայի թուրքերի մոտ թուրքական ինքնագիտակցության պահպանմանը: Սակայն գերմանացիների մեծ մասը թուրք վարչապետի առաջարկը բացասաբար ընդունեց, քանզի այդ երկրում բնակվող թուրքերն առանց այդ էլ դժվար են ինտեգրվում գերմանական հասարակության մեջ, իսկ դպրոցների բացումը լրացուցիչ բարդություններ կարող է ստեղծել: Գերմանացիները չէին մոռացել, որ 2008 թ. փետրվարի 18-ին Քյոլնում մոտ երկու տասնյակ հազար թուրքերի առջև ելույթ ունենալով Էրդողանը նրանց կոչ արեց ակտիվորեն ներթափանցել Գերմանիայի իշխանական մարմինների մեջ և չինտեգրվել գերմանական հասարակության մեջ՝ դա համարելով հանցագործություն ուղղված մարդկության դեմ: Սա չափազանց վիրավորական էր գերմանացիների համար, քանզի այս կերպ Էրդողանը

³⁵⁷ Տե՛ս В отношениях без перемен, <http://expert.ru/2010/04/1>

փորձում էր հիշեցնել Նյուրնբերգյան դատավարության մասին և հավասարության նշան դնել նացիստական և ժամանակակից Գերմանիաների միջև: Նման հայտարարություններից հետո գերմանացի քաղաքական գործիչների հետ հանդիպման ժամանակ Էրդողանը հանդգնեց խոսել Գերմանիայում թուրքական դպրոցներ ու համալսարաններ բացելու անհրաժեշտության մասին, որոնց դասավանդող անձնակազմը կապահովվի Թուրքիայից: Գերմանացի գործիչները Էրդողանի խոսքերը որակեցին որպես Գերմանիայի ներքին գործերին միջամտություն: Այս կապակցությամբ դեռ այն ժամանակ Մերկելն արձագանքեց, որ Գերմանիայի թուրքերը պետք է լոյալ լինեն գերմանական պետության նկատմամբ: Թեև Էրդողանին Գերմանիայում դիմավորում են հազարավոր թուրքեր, Մերկելին դա այդքան էլ չի մտահոգում, քանզի հաջորդ ընտրություններին նրանք հազիվ թե իր քաղաքական ուժին դեմ քվեարկեն, որովհետև Գերմանիայի քաղաքացիություն ստանալու գործընթացը բավականին բարդ է, և թուրքական համայնքի ներկայացուցիչները գերմանական ընտրագանգվածի որոշիչ խումբ չեն կարող դառնալ³⁵⁸: Այդուհանդերձ, գերմանական վերնախավն այս ամենը համարեց Գերմանիայում բնակվող թուրքերին Էրդողանի կողմից կառավարվող քաղաքական հոսանքի վերածելու փորձ³⁵⁹:

Մերկելի այցի ժամանակ ձախողվեց նաև Իրանի նկատմամբ պատժամիջոցների խստացման հարցի շուրջ Անկարայի հետ համաձայնության գալու հնարավորությունը: Այդ հարցում ԵՄ-ին աջակցություն ցույց տալու Մերկելի խնդրանքն Էրդողանը մերժեց, քանզի Անկարան շատ բարձր էր գնահատում Թեհրանի հետ իր հարաբերությունները՝ հատկապես Էներգետիկ ոլորտում համա-

³⁵⁸ Տե՛ս Пахомов Н., Настырная Турция, <http://www.politcom.ru/17147.html>

³⁵⁹ Տե՛ս Турецкие претензии Германии, <http://expert.ru/expert/2008/07>

գործակցությունը և միջուկային ծրագրի շուրջ համագործակցության հեռանկարները: Այս առումով Թուրքիայի վարչապետն Իսրայելին ակնարկելով հայտարարեց, որ այդ տարածաշրջանում կա երկիր, որն ունի միջուկային զենք, բայց նրա նկատմամբ պատժամիջոցներ չեն կիրառվում³⁶⁰:

2013 թ. Խորվաթիայի մուտքը ԵՄ-ը թուրքական իշխանություններին վիրավորվելու լրացուցիչ պատճառներ սովեց, քանզի Խորվաթիան և Թուրքիան 2005 թ. հոկտեմբերի 3-ին անդամակցության հարցով զուգահեռ էին բանակցություններ սկսել ԵՄ-ի հետ³⁶¹:

2013 թ. դեկտեմբերին Թուրքիայում իրականացվեց խոշոր հակակոռուպցիոն գործողություն, որից հետո երկրում իրականացվում են ոստիկանության աշխատակիցների զանգվածային ձերբակալություններ: Նրանցից շատերին մեղադրեցին ոչ պաշտոնական «Էրգենեկոն» կազմակերպությանն անդամակցելու մեջ, որին իբր ֆինանսավորում ու քաջալերում է ԱՄՆ-ում ապրող իսլամի աստվածաբան Ֆ.Գյուլենը: Էրդողանի կարծիքով՝ Գյուլենը ձգտում է տապալել թուրքական կառավարությունը, ուստի դրանով էր նա բացատրում թուրք պետական ծառայողների կողմից կառավարության անդամներին վարկաբեկող տվյալների հրապարակումը³⁶²: Ձերբակալվել էին լրատվամիջոցների շուրջ 30 ներկայացուցիչներ: Դատախազի խոսքերով՝ ձերբակալվածները մեղադրվում էին ահաբեկչական խմբավորման գործողություններին մասնակցելու, խարդախության և զրպարտության, ինչպես նաև

³⁶⁰ Տե՛ս В отношениях без перемен, <http://expert.ru/2010/04/1/>

³⁶¹ Տե՛ս Агаджанян М., Турция – ЕС: когда процесс важнее результата, <http://www.politcom.ru/16015.html>

³⁶² Տե՛ս Испугали: ЕС намекнул Турции, что аресты могут повлиять на ее вступление в ЕС, <http://www.nakanune.ru/news/2014/12/15/22380775#sthash.JbmNdEcX.dpuf>

հեղաշրջում նախապատրաստելու մեջ³⁶³: Իրականում ցուցարարները բողոքում էին այն օրենքի ընդունման դեմ, որը իշխանություններին համացանցի օգտատերերի տվյալներին հասանելիություն և առանց դատարանների համաձայնության կայքերի արգելափակման իրավունք կտա: Այս կերպ Անկարան ինքն իր անդամության հակառակորդներին ևս մեկ հաղթաթուղթ տվեց:

Էրդողանի կողմից թուրքական խորհրդարան ներկայացվեց նաև օրինագիծ, որով ավելի էին սահմանափակվում քաղաքացիական իրավունքները և մեծացնում թուրքական հատուկ ծառայությունների կողմից անձանց վերաբերյալ տեղեկություններ հավաքելու, ձայնագրելու իրավունքները՝ ցանկացած անհրաժեշտ միջոցների կիրառմամբ, իսկ այն լրագրողները, որոնք կհրապարակեն թուրքական հատուկ ծառայությունների՝ իրենց ձեռքն ընկած փաստաթղթերը, կարող են հայտնվել ճաղերի հետևում: Դրանից առաջ թուրք օրենսդիրներն արդեն ընդունել էին դատական իշխանության նկատմամբ կառավարության վերահսկողությունն ուժեղացնելու մասին օրինագիծը³⁶⁴:

Եվրոպացիները ձեռքակալությունները կապեցին եվրոհիստեգրման հետ՝ նշելով, որ լրագրողների և ՋԼՄ-ների ներկայացուցիչների ձեռքակալությունները հակասում են եվրոպական այն արժեքներին ու չափանիշներին, որոնց մասը ձգտում է դառնալ Թուրքիան: ԵՄ-ի արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատու Ֆ. Մոգերինիի և եվրոպական հարևանության ու ընդարձակման հարցերով պատասխանատու Յ. Հանի համատեղ հայտարարության մեջ նշվում էր, որ ցանկացած երկրի՝ ԵՄ-ին անդամակցելը կախված է տվյալ երկրի ամեն հաջորդ քայլից,

³⁶³ Տե՛ս Կու Կուդա քույդեդ Կուրցիյա, <http://expert.ru/2014/12/15/>

³⁶⁴ Տե՛ս Կուրքե օպյաթ հոտյաթ հոտյաթ Դորոգյա վ Եվրոպյա, <http://expert.ru/2014/02/25/>

օրենքի և հիմնարար իրավունքների լիակատար պահպանումից³⁶⁵: Ի պատասխան ԵՄ-ի պատասխանատուների սպառնալիքների՝ Էրդոդանը նշեց, որ Թուրքիան ուժեղ երկիր է և չի պատրաստվում կանգնած մնալ ԵՄ-ի դռների առջև և աղերսել անդամություն՝ սպառնալով, որ եթե Թուրքիային չընդունեն ԵՄ-ը, ապա նա կգնա իր ճանապարհով³⁶⁶: Էրդոդանի նման հայտարարությունները և Անկարայի գնալով ավելի ակտիվացող արտաքին քաղաքականությունը հակադրվում է արևմտյան գործընկերների շահերին: Եվրոպայում այդքան էլ երջանիկ չեն Անկարայի նման դաշնակից ունենալուց, սակայն ստիպված էին համակերպվել՝ հաշվի առնելով վերջինիս ռազմավարական դիրքը, որը գտնվում է Եվրոպայի և Ասիայի սահմանագծում³⁶⁷:

2014 թ. մարտի 5-ին ԵՄ-ի միջազգային հարաբերությունների հանձնաժողովը դիմեց Եվրոխորհրդարանին և Եվրահանձնաժողովին Թուրքիայի անդամակցության հարցը վերանայելու առաջարկով: Անկարան կատարել էր պահանջների 35 կետերը, սակայն Բրյուսելի 13 կետերի պահանջները դեռևս չէին կատարվել, որոշ կետեր էլ արգելափակվել էին Կիպրոսի և Ֆրանսիայի կողմից: Թուրքիայի հակառակորդների շարքին միացան նաև նրանք, ովքեր հիասթափված էին Թուրքիայում կատարվող ժողովրդավարական սկզբունքներից նահանջով: Նրանք գտնում էին, որ Թուրքիայի հետ բանակցությունները կարող են շարունակվել միայն Էրդոդանի իշխանությունից հեռանալու կամ նրա միանձնյա գործողությունները սանձելու դեպքում³⁶⁸:

³⁶⁵ Տե՛ս Կуда пойдет Турция, <http://expert.ru/2014/12/15/>

³⁶⁶ Տե՛ս Эрдоган посоветовал Евросоюзу держать свое мнение при себе, <http://mir-politika.ru/17588.html>

³⁶⁷ Տե՛ս Турция все больше отдаляется от Запада, <http://expert.ru/2015/01/24/>

³⁶⁸ Տե՛ս Анкаре опять хотят закрыть дорогу в Европу, <http://expert.ru/2014/02/25/>

Անդամակցության հավերժ բանակցությունները հանգեցրել են նրան, որ Թուրքիայում արդեն քչերն են հավատում ԵՄ-ին անդամակցելուն³⁶⁹: Հասկանալով ԵՄ-ին անդամակցելու անհեռանկար լինելը՝ թուրք դիվանագետները սկսել են ավելի շատ խոսել ԵՄ-ի հետ Նորվեգիայի համագործակցության փորձի մասին: Սկանդինավյան այդ երկրի հարաբերությունները ԵՄ-ի հետ կարելի է բնութագրել որպես անդամությանը մոտ կարգավիճակ: Նորվեգիան ԵՄ-ի հետ միասնական առևտրային տարածքում է, սակայն պահպանում է իր գործողությունների ազատությունը ինչպես ներքին տնտեսական քաղաքականության, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտներում³⁷⁰:

Թուրքիան իր համար եվրոփնտեգրման գործընթացի ավարտի վերջնաժամկետ արդեն սահմանել է 2023 թ.՝ Թուրքիայի Հանրապետության հռչակման 100-րդ տարելիցը, և եթե մինչ այդ ժամկետը Թուրքիան չանդամակցի ԵՄ-ին, ապա ամենայն հավանականությամբ շրջադարձ կկատարի այդ ուղղությունից:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին Բրյուսելի կողմից Անկարային ներկայացվող հիմնական պահանջներից մեկը միասնական Կիպրոսի ճանաչումն է: Սակայն թուրքական իշխանությունների համար կղզու հյուսիսային հատվածի վրա ազդեցության պահպանումը համարվում է կարևոր՝ միջերկրածովյան ավազանի արևելյան հատվածում Անկարայի ռազմավարական շահերի պաշտպանության տեսակետից: Կիպրոսում թուրքական զորքերի առկայությունը Անկարայի համար անհրաժեշտ միջոց է միջազգային հանրության կողմից չճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) գոյությունը

³⁶⁹ St´u Красная карточка для Эрдогана, <http://expert.ru/expert/2010/09/>

³⁷⁰ St´u Агаджанян М., Турецкий проигрыш на немецких выборах, <http://www.politcom.ru/16457.html>

պահպանելու համար³⁷¹: Մինևույն ժամանակ, կղզու հյուսիսային հատվածը տնտեսական զարգացման մակարդակով էապես հետ է մնում հարավային հատվածից, իսկ Անկարան բավարար միջոցներ չունի տնտեսական մեկուսացման վիճակում գտնվող ՀԿԹՀ-ի ֆինանսական կարիքների բավարարման համար: ՀԿԹՀ-ի ֆինանսական կարիքների հոգալու հետևանքով, վատթարանում է նաև Թուրքիայի տնտեսության վիճակը, ինչը լրացուցիչ խոչընդոտ է դառնում ԵՄ-ին անդամակցելու հարցում³⁷²:

ԵՄ-ի և Թուրքիայի միջև կնքված «Գործակցության մասին փաստաթղթում» ամրագրվեց դրույթ, որը Թուրքիային պարտավորեցնում էր հետևել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Ք.Անանի ջանքերին, որոնք ուղղված էին կիպրական հակամարտությունը կարգավորելուն³⁷³: Թեև ԵՄ-ն և կառույցի անդամ-պետությունները հայտարարում էին Կիպրոսի միավորման Ք.Անանի նախաձեռնության պաշտպանության մասին, սակայն իրականում ԵՄ-ի ազդեցիկ երկրները նախընտրում էին կառույցի մեջ տեսնել միայն կղզու հունական հատվածը, քանզի Անանի ծրագրի իրականացումը պահանջում էր մոտ 27 մլրդ դոլար, որից միայն 10 մլրդ-ը ծախսվելու էր գաղթականների վրա: Իսկ այդ ամբողջ գումարի մեծագույն մասը պետք է հատկացվեր ԵՄ-ի կողմից³⁷⁴: Արդյունքում՝ 2002 թ. ԵՄ-ն բավարարեց միայն Կիպրոսի Հանրապետության անդամակցության հայտը, որը դարձավ կառույցի լիիրավ անդամ, իսկ կղզու հյուսիսային հատվածի կարգավիճակը շարու-

³⁷¹ Տե՛ս Ястребов Я., Турция на распутье // Красная звезда, 16.07.2002.

³⁷² Տե՛ս <http://www.cyprusadvertiser.com/article.asp?id=333>

³⁷³ Տե՛ս Декларация брюссельского саммита, подписанная 17.12.2004 года, www.abhaber.com.tr.

³⁷⁴ Сафрахян Р., Турция и Кипрская проблема: Эпизоды «Большой игры», «21-й Век», №2, 2005, с.13.

նակում է անորոշ մնալ: Այս որոշումից հետո, սակայն, ԵՄ-ն նույնպես հայտնվել է ոչ դյուրին վիճակում, քանզի նրա անդամ պետություններից մեկի տարածքի մի հատվածն օկուպացված է կառույցի անդամ չհանդիասացող պետության կողմից: Թերևս դա է նաև պատճառը, որ կիպրական հարցն անկյունաքարային նշանակություն ունի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցություններում, որի լուծմանը դեմ է արահայտվում Անկարան՝ դրանով անդամակցության բանակցություններ մտցնելով փակուղի³⁷⁵:

Անանի նախաձեռնության ձախողումից հետո ԵՄ-ն իր հերթական ընդարձակումով վերջնականապես ամրապնդեց Կիպրոսի պառակտումը՝ միայն կղզու հարավային հատվածն ընդգրկելով իր կազմի մեջ: Այս քայլն էլ ավելի սրեց Բրյուսելի և Անկարայի հարաբերությունները: Հետագայում ԵՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեց հատուկ արձանագրություն, որով ընդարձակվում էին ԵՄ-ի և Թուրքիայի միջև մաքսային պայմանավորվածությունները, որոնք տարածվելու էին ԵՄ-ին նոր անդամակցած տասը երկրների, այդ թվում՝ Կիպրոսի վրա: Այդուհանդերձ, Թուրքիայի արտգործնախարարությունը հատուկ նոտա տարածեց, որով ընդգծում էր, որ մաքսային համաձայնագիրը բացարձակապես չի նշանակում, որ Թուրքիան ճանաչել է Կիպրոսը և որ Անկարայի կարծիքն այդ հարցում անփոփոխ է՝ գոյություն ունի միայն Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն: Անկարայի այս դիրքորոշումը լրացուցիչ առիթ դարձավ, որ Ֆրանսիան, ինչպես նաև Գերմանիան ԵՄ-ի անդամների շրջանում տարածեն իրենց դիրքորոշումը, համաձայն որի Անկարայի համար նախատեսվում էր միայն հատուկ գործընկերոջ կարգավիճակ: Եվրոխորհրդարանն իր հերթին, շահարկելով Անկարայի հայտարարությունը, սկսեց

³⁷⁵ Sté u Маркедонов С., Турция уходит к России, <http://www.politcom.ru/3561.html>

ձգձգել ստորագրված մաքսային համաձայնագրերի վավերացումը³⁷⁶: Այսպիսով, Թուրքիայի հետ ԵՄ-ին անդամակցության բանակցությունները հերթական անգամ դադարեցվեցին 2006 թ. դեկտեմբերին՝ այն պատճառով, որ Անկարան հրաժարվում է իր ծովային և օդային տարածքները բացել կիպրական նավերի ու ինքնաթիռների համար³⁷⁷:

Ստեղծված իրավիճակում Կիպրոսի հունական վարչակարգը վետոյի կիրառման իրավունք ունի Թուրքիայի ԵՄ-ին անդամակցելու հարցում և անպայման կօգտագործի իր այդ իրավունքը, եթե Անկարան չկատարի իր կողմից ներկայացվող պահանջը: Թուրք ղեկավարները կարծում են, որ կիպրական հարցի կարգավորման գործում Անկարայի կողմից ցանկացած զիջում նրա նկատմամբ կթուլացնի թուրքական հանրապետությունների վստահությունը, որոնց հովանավորությունը Թուրքիան մտադիր է ստանձնել³⁷⁸: Այդ տրամաբանությունից ելնելով՝ Կիպրոսի Հանրապետությանը ԵՄ-ի նախագահության անցնելու ժամանակ Էրդողանը նույնիսկ սպառնաց, որ եթե դա տեղի ունենա, ապա Անկարան ինքը կստեղծի ԵՄ-ի հետ հարաբերությունները³⁷⁹:

Միջերկրական ծովի ավազանում նավթի պաշարներին տիրանալու շուրջ լուրջ դիվանագիտական պայքար էր ծավալվել մի կողմից Կիպրոսի Հանրապետության ու Իսրայելի, մյուս կողմից՝ չճանաչված Հյուսիսային Կիպրոսի ու Թուրքիայի միջև: Կողմերը դիմում էին տարբեր մեթոդների, որպեսզի հաստատեն Կիպրոսից

³⁷⁶ Տե՛ս Սեմ Կախոմով, *Անկարա ցտալա օտ ԵՇ*, <http://www.politcom.ru/1391.html>

³⁷⁷ Տե՛ս Ագաձձյանյան Մ., *Կիպրոս – ԵՇ: քոգդա քրոցես վաձնե քեզուլտատա*, <http://www.politcom.ru/16015.html>

³⁷⁸ Տե՛ս Նեքոտրե ասքեքտյ վնեշնեյ քոլիտիքի Կիպրոսի, <http://atc.az/index.php?newsid=126>

³⁷⁹ Տե՛ս Սեմ Կախոմով, *Սոսլեդնե քիքրսքո քրեքքրեձնե*, <http://expert.ru/2011/08/1/>

ոչ հեռու գտնվող նավթի և գազի պաշարներին տիրանալու իրենց իրավունքը: 2011 թ. սեպտեմբերի 18-ին Կիպրոսի նախագահ Դ. Քրիստոֆիասը հայտարարեց, որ մոտ ժամանակներում Նիկոսիան իր ջրային տարածքում կսկսի էներգակիրների հանքերի երկրաբանական աշխատանքները: Անկարան դեմ արտահայտվեց Կիպրոսի մտադրությանը՝ նշելով, թե այդպիսով խախտվում են թուրք-կիպրացիների իրավունքները, որոնք նույնպես պետք է օգտվեն կղզու հարստություններից: Անկարան սպառնաց, որ Հյուսիսային Կիպրոսի հետ պայմանագիր կկնքի և ինքը կսկսի կղզու ջրային տարածքների էներգակիրների հանքերի երկրաբանական աշխատանքները: Կիպրոսի Հանրապետությունը դա համարեց անօրինական ներխուժում իր բացառիկ տնտեսական գոտի: Իսրայելն ակտիվորեն ներգրավվեց այս պայքարի մեջ՝ հույն-կիպրացիների կողմից և համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերեց Նիկոսիայի հետ: Անտեսելով Անկարայի սպառնալիքները՝ Նիկոսիան սկսեց աշխատանքները, որոնք հատուկ վստահվել էին ամերիկյան ընկերությանը, ինչին խոչընդոտելու դեպքում Անկարան կարող էր խախտել ԱՄՆ-ի շահերը³⁸⁰: Անկարան Կիպրոսի ավերի մոտ հետազոտական նավ ուղարկեց, որը կղզու ջրային տարածքներում կատարելու էր երկրաբանական հետախուզական աշխատանքներ՝ էներգակիրների հանքերի հայտնաբերման ուղղությամբ: Նախատեսվում էր ուղարկել նաև երկրորդ նավը, որը հետախուզական-որոնողական աշխատանքներ էր իրականացնելու կղզու ջրային տարածքների հատվածում: Ընդ որում, երկու նավերն էլ չէին պատկանում Թուրքիային և հատուկ վարձակալվել էին այդ նպատակով:

³⁸⁰ Տե՛ս Կ. Կ. Կարապետյան, *http://expert.ru/2011/09/19/*

Անկարայի այդ գործողությունները վրդովեցրին Նիկոսիային, որն իր ջրային տարածքներում էներգակիրների հանքերի երկրաբանական աշխատանքները հատուկ սկսեց իրականացնել Թուրքիային հակառակորդ դարձած Իսրայելի հետ: Նիկոսիան Թեյ-Ավիվի հետ նախատեսել էր ռազմաօդային ուժերի զորավարժանքներ անցկացնել երկրաբանական որոնողական աշխատանքների գոտում, ինչն Անկարան համարեց իր վրա ճնշում գործադրելու փորձ: Իր ջրային տարածքներում գազի հանքերի շահագործման հարցում Նիկոսիան աջակցություն ստացավ ոչ միայն Իսրայելի, այլև ԵՄ-ի կողմից: Կիպրոսի ջրային տարածքում գազի և նավթի հանքերի շահագործման շուրջ լարվածությունը հասավ գագաթնակետին: Թուրքական նավերն ու ուղղաթիռները փորձում էին հոգեբանական ճնշում գործադրել և խանգարել ամերիկյան Noble Energy ընկերությանը, որը երկրաբանական-հետախուզական աշխատանքներ էր կատարում Կիպրոսի համար³⁸¹:

Այդ նույն ժամանակ Թեյ-Ավիվի ավիաբազայից օդ բարձրացած իսրայելական F-15 ռազմական ինքնաթիռներն ուղղվեցին դեպի Կիպրոս և թռան կղզու հունական և թուրքական հատվածների վրայով: Թուրքական հակաօդային պաշտպանության համակարգի կողմից կղզու թուրքական հատվածի օդային տարածքը խախտելու մասին զգուշացումներին իսրայելցիները չարձագանքեցին: Միայն թուրքական ռազմաօդային ուժերի F-16 կործանիչների օդ բարձրանալուց հետո իսրայելական ինքնաթիռները վերադարձան իրենց ավիաբազա: Իսրայելական ինքնաթիռները կղզու վրայով շատ ցածր էին թռչում, ուստի հնարավոր էր անգամ անզեն աչքով որոշել դրանց պատկանելությունը: Բացի ինքնաթիռներից՝ իսրայելական ռազմական ուղղաթիռը շատ ցածր թռիչքներ էր

³⁸¹ St' u Фактор нестабильности Средиземноморья, <http://expert.ru/2011/10/24/>

կատարում թուրքական երկրաբանական «Պիրի Ռեխ» նավի վրայով, որը զբաղված էր Կիպրոսի ջրային տարածքներում նավթի որոնողական աշխատանքներով³⁸²: Կիպրոսի ջրային տարածքում էներգակիրների որոնողական աշխատանքների հարցում ԵՄ-ն, բնականաբար, սատարում էր իր անդամ հանդիսացող Կիպրոսի Հանրապետությանը և դատապարտում Նիկոսիայի դեմ Անկարայի կատարած անօրինական գործողությունները:

2014 թ. մայիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրեց Թուրքիային 90 մլն եվրո վճարել 1974 թ. ռազմական ներխուժման հետևանքների համար, որից 30 մլն եվրոն կազմում էր ռազմական գործողության հետևանքով անհայտ կորածների բարեկամների փոխհատուցումը, իսկ 60 մլն եվրոն հատկացվելու էր հույն կիպրացիներին, որոնք շարունակում էին ապրել Կիպրոսի օկուպացված տարածքում՝ Կարպաս թերակղզում: Սակայն Անկարան հրաժարվում է կատարել դատարանի վճռի պահանջը: Եվրոդատարանի վճռի պահանջի չկատարումը ևս մեկ ապացույց էր ԵՄ-ի անդամ պետությունների համար, թե ինչպես է Անկարան, ձգտելով անդամակցել ԵՄ-ին, վերաբերվում եվրոպական արժեքներին ու չափանիշներին:

Այս որոշումից հետո նույն թվականի հուլիսին հույն կիպրացիների մի խումբ, որը տուժել էր 1974 թ. կղզի թուրքական զինված ներխուժումից, Թուրքիայի դեմ հայց ներկայացրեց Միջազգային Քրեական դատարան՝ պահանջելով Կիպրոսի Հանրապետության տարածքում Թուրքիայի կողմից կատարված հանցագործությունների հետաքննություն անցկացնել և կանխել Կիպրոսի բռնազավթված տարածքների վրա թուրքական բնակավայրերի ավելացման

³⁸² St´u Турция вступила в "антигазпромовский фронт": обзор турецких СМИ, <http://regnum.ru/news/polit/1451922.html>.

գործընթացը: Հայցում ուշադրություն էր դարձվում Թուրքիայի կողմից ՄՔԴ-ի Կանոնադրության դրույթների պարբերական ու աղաղակող խախտումների վրա, որոնք տարածքների բռնագրավում իրականացնող երկրին արգելում են ուղղակիորեն և անուղղակիորեն իր բնակիչներին վերաբնակեցնել բռնագրավված տարածքներում: Հայցը դատարանին ներկայացվել է Եվրոխորհրդարանում Կիպրոսի Հանրապետությունից ընտրված պատգամավոր Կ.Մավրիդիսի և «Կիպրացիներն ընդդեմ թուրքական ռազմական հանցագործությունների» ընկերակցության կողմից, որն իր մեջ միավորում է կիպրացի գաղթականներին, որոնք Թուրքիայի ռազմական ներխուժման հետևանքով հարկադրված էին լքել իրենց տները, թողնել ունեցվածքը³⁸³: Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ Անկարան անտեսելու է նաև այս միջազգային դատական ատյանի որոշումը:

Ազգային փոքրամասնությունների, առաջին հերթին՝ քրդերի, իրավունքների պաշտպանության հարցը հանդիսանում է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հաջորդ լուրջ խոչընդոտը: ԵՄ-ն Թուրքիայի քրդերի հարցում ձգտում է հասնել հնարավորինս լայն ինքնավարության, իսկ Անկարան խիստ բացասաբար է վերաբերվում Բրյուսելի նման առաջարկներին³⁸⁴: Թուրքական իշխանությունները ոչ միայն չեն ընդունում Թուրքիայում Քրդական հարցի առկայությունը, այլև արգելում են քրդական ավանդական տոների և ծեսերի նշումը: Այսպես, 1998 թ. մարտի 21-ին թուրքական իշխանություններն արգելեցին Դիարբեքիրում քրդական Նովրուզի

³⁸³ St´u Киприотские беженцы подали иск в Международный уголовный суд против Турции, <http://mir-politika.ru/15506.html>

³⁸⁴ St´u Седов Д., Сирия, Турция и курды, <http://vpoanalytics.com/2012/11/02/>

տոնակատարության նշումը, որը քրդերի համար ազատության և ճնշման դեմ պայքարի խորհուրդ ունի³⁸⁵:

ԵՄ-ի և Թուրքիայի միջև կնքված «Գործակցության մասին փաստաթղթի» կարևոր դրույթներից է նաև քրդական հարցի քաղաքական և իրավական կարգավորումը: Առաջին փուլում ԵՄ-ն այս հարցի հետ կապված Անկարային Թուրքիայի քաղաքացիներին՝ մայրենի լեզվով հեռուստատեսությամբ և ռադիոյով խոսելու բոլոր օրենսդրական արգելքները վերացնելու պահանջ ներկայացրեց³⁸⁶: 2001 թ. հոկտեմբերին Թուրքիայի սահմանադրության 34-րդ հոդվածում կատարվեցին փոփոխություններ, որոնց համաձայն ցանկացած լեզվի կիրառության իրավունքը կարող է սահմանափակվել, եթե այդ միջոցները ձեռնարկվում են երկրի ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության նպատակով, իսկ թուրքերենը շարունակում է մնալ դասավանդման միակ լեզուն: 2002 թ. ԵՄ-ի ճնշման տակ Անկարան իր տարածքում թույլատրեց քրդերեն լեզվով հեռուստա-ռադիոհաղորդումների հեռարձակումը, սակայն Սահմանադրության մեջ ամրագրվեց ուսումնական հաստատություններում թուրքերենով դասավանդելու պարտադիր լինելը:

2004 թ. մայիսին Թուրքիայի սահմանադրության մեջ ամրագրվեց ներպետական օրենսդրության նկատմամբ միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը, ինչը հնարավորություն էր տալիս թուրքական դատարանների վճիռները բողոքարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Այս առումով առաջին գործը Թուրքիայի խորհրդարանի նախկին պատգամավոր, քաղաքական բանտարկյալ, քրդական շարժման գործիչ Լեյլա

³⁸⁵ Гасратян М.А., Курды Турции в новейшее время, Ер., 1990, с. 23.

³⁸⁶ St' u Декларация брюссельского саммита, подписанная 17.12.2004 года, www.abhaber.com.tr.

Չանայի՝ 2004 թ. հուլիսի 2-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ազատ արձակումն էր³⁸⁷:

Այս գործին հաջորդեց ՔԱԿ-ի առաջնորդ Ա. Օջալանի ավելի հնչեղ գործի քննությունը, որը 1999 թ. փետրվարին ձերբակալվեց Քենիայում, փոխադրվեց Թուրքիա, իսկ 2002 թ. հունիսին թուրքական դատարանը նրան մեղավոր ճանաչեց պետական դավաճանության մեջ և դատապարտեց մահվան: Սակայն երեք տարի անց ԵՄ-ի ճնշման տակ մահապատիժը փոխարինվեց ցմահ ազատազրկմամբ: 2005 թ. մայիսի 12-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճռի համաձայն Օջալանի նկատմամբ դատավարության իրականացման ու մահապատժի վճռի կայացման ժամանակ խախտվել էին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առանձին դրույթներ: Դրանից ելնելով՝ պահանջվում էր կրկնակի դատաքննություն անցկացնել՝ պահպանելով ժողովրդավարական սկզբունքներն ու ընթացակարգերը:

Անկարան կանգնած էր բարդ երկրնորանքի առաջ: Մի կողմից՝ Օջալանի գործով կրկնակի դատաքննության անցկացումը, անշուշտ, լուրջ հարված կհասցնեք իշխանությունների հեղինակությանը և երկրում կամրապնդեք քրդերի դիրքերը, որոնց դեմ այդքան հետևողական պայքար էին մղում թուրքական գորամիավորումները: Մյուս կողմից՝ թե՛ իրավական և թե՛ քաղաքական տեսակետից Եվրոդատարանի որոշման չկատարումը որոշակի հետևանքներ կունենար Անկարայի համար: Իրավական տեսակետից Անկարան հարկադրված էր կատարել Ստրասբուրգի դատարանի որոշումը, քանզի բարեփոխելով իր իրավական համակարգը, արդեն իսկ ընդունել էր միջազգային համաձայնագրերի և մի-

³⁸⁷ St' u European Council. 2000 Regular Report from the commission on Turkey. Progress towards accession.(08.12.2000)

ջազգային իրավական նորմերի, այդ թվում՝ Եվրոդատարանի ընդունած որոշումների, գերակայությունը իր ներպետական օրենսդրության նկատմամբ: Իսկ քաղաքական տեսակետից այդ որոշման չկատարումը կարող էր հանգեցնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շուրջ արդեն նախատեսված բանակցությունների հերթական փուլի ձախողման:

Հատկանշական է, որ Եվրոդատարանը չէր բարձրացնում Օջալանի անմեղության և ազատ արձակման հարցը, ինչը նշանակում էր, որ նա բոլոր դեպքերում շարունակելու էր իր պատիժը կրել թուրքական բանտում: Սակայն թուրքական կառավարությունում այս հարցի շուրջ տեսակետները կիսվեցին³⁸⁸: Կրկնակի դատաքննություն, այնուամենայնիվ, չանցկացվեց, իսկ ԵՄ-ն Թուրքիայի անդամակցության դեմ լրացուցիչ փաստարկներ ստացավ:

ԵՄ-ի կողմից Քրդական հարցում Անկարայի վարած քաղաքականության քննադատությունը և մի շարք եվրոպական երկրների կողմից Թուրքիային այդ կառույցի անդամությանը դեմ լինել հանգեցրեց նրան, որ Անկարան սկսեց հեռանալ ԵՄ-ից և եվրոպականացման քաղաքական կուրսը փոխարինեց մերձավորարևելյան ուղղվածությամբ³⁸⁹:

Թուրքական ներխուժումը Հյուսիսային Իրաք վրդովմունքի մեծ ալիք բարձրացրեց եվրոպական երկրներում և միջազգային կազմակերպություններում: Նույնիսկ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանը սատարող Լոնդոնը հայտարարեց, որ իրավիճակը պետք է կարգավորվի խաղաղ բանակցային եղանակով, որին պետք է մասնակցեն Բաղդադի, Անկարայի և Քրդական ինքնավա-

³⁸⁸ Տե՛ս Багиро Д., Оджалан не пускает Турцию в Евросоюз, <http://www.politcom.ru/986.html>

³⁸⁹ Տե՛ս Израильский вектор внешней политики Турции, <http://mir-politika.ru/364-turciya-israel.html>

րության ղեկավարության ներկայացուցիչները: Բեռլինն իր հերթին զգուշացրեց Թուրքիային, որ նա իր գործողություններով ապակայունացնում է տարածաշրջանային անվտանգությունը և որ անհրաժեշտ է գործել միջազգային իրավունքի շրջանակներում³⁹⁰: 2014 թ. հունվարին Թուրքիա կատարած այցի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդը կրկին բարձրացրեց Թուրքիայում քրդական փոքրամասնության հիմնախնդիրները՝ նշելով, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում Եվրոպան չի կարող դրանք անտեսել³⁹¹:

ԵՄ-ին լրջորեն մտահոգում են նաև Անկարայի սերտ կապերն Իրանի հետ չնայած այն հանգամանքին, որ վերջինիս նկատմամբ Արևմուտքը պատժամիջոցներ էր իրականացնում: Բրյուսելի համար առանձնապես մտահոգիչ էր միջուկային ծրագրերի ոլորտում թուրք-պարսկական համագործակցությունը: Թուրքիայի շահագրգռվածությունը Իրանի միջուկային ծրագրի պաշտպանության հարցում պայմանավորված է նրանով, որ Անկարան ցանկանում է զարգացնել սեփական միջուկային ծրագիրը: Այս թեզն անուղղակիորեն հաստատվում է նրանով, որ Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն 2009 թ. նոյեմբերին առաջարկել էր Թուրքիայի պատրաստակամությունը իր տարածքում հարստացնել իրանական ցածր հարստացված ուրանը՝ այն միջուկային վառելիք դարձնելու նպատակով: Ընդ որում, այս առաջարկն Անկարան արեց այն բանից հետո, երբ Թեհրանը մերժեց վեցյակի առաջարկը՝ իր ցածր հարստացված ուրանից միջուկային վառելիք

³⁹⁰ Кунаков В.В., Турция и ЕС: проблемы экономической интеграции, Институт изучения Израиля и Ближнего Востока. М., 1999, с. 17.

³⁹¹ St´u Мамедов М., Турецкий гамбит французского президента, <http://www.politcom.ru/17266.html>

ստանալու ցիկլը Ֆրանսիայում կամ Ռուսաստանում իրականացնելու վերաբերյալ³⁹²:

2011 թ. Թուրքիան ռուսական «Ռոսատոմ» ընկերության հետ 15 մլրդ եվրո արժողությամբ պայմանագիր կնքեց Անթալիայից մոտ 300 կմ հեռավորության վրա «Ակույու» միջուկային ռեակտորի կառուցման մասին, իսկ 2013 թ. 17 մլրդ եվրո արժողությամբ նմանատիպ համաձայնագիր ստորագրեց Ֆրանս-Ճապոնական ընկերության հետ «Սինոպ» ռեակտորի կառուցման մասին: Թուրքիայի նախագահ Ա.Գյուլը հայտարարեց, որ Թուրքիան չի կարող թույլ տալ, որ իր հարևաններից որևէ մեկն ունենա այնպիսի զենք, որն ինքը չունի: Գյուլը խոսում էր ինչպես Իրանի միջուկային ծրագրի, այնպես էլ Իսրայելի մասին, որի միջուկային զենքի առկայությունը, չնայած Թեյ-Ավիվի անընդհատ ժխտումներին, արդեն գաղտնիք չի ներկայացնում: Թուրքիայի միջուկային ծրագրի մասին տեղեկատվական այս արտահոսքը Գերմանիայի Դաշնային հետախուզական ծառայությունն (BND) իրականացրեց գերմանական «Die Welt» պարբերականի միջոցով՝ այն ժամանակ, երբ Մերձավոր Արևելքում իրավիճակը ծայրահեղ լարվեց, իսկ Անկարան անզիջում դիրք գրավեց Արևմուտքի համար մի շարք սկզբունքային հարցերում³⁹³:

Ի հեճուկս ԵՄ-ի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների՝ Անկարան ցուցադրաբար սկսեց հարաբերությունները բարելավել Մոսկվայի հետ: 2013 թ. սկզբին Էրդոդանը հայտարարեց, թե Թուրքիան չի պատրաստվում հավերժ սպասել Եվրոպայի դռների առջև և նույնիսկ նշեց, որ Թուրքիան պատրաստակամ է անդամակցել Շանհայան կազմակերպության

³⁹² Агаев С.Л., Иран: внешняя политика и проблемы независимости, М., 1996, с. 67.

³⁹³ Sе´u Ядерные амбиции Анкары, <http://expert.ru/2014/09/24/>

նր³⁹⁴: Անկարան շահարկում էր Շանհայան կազմակերպությունում գործընկերոջ իր կարգավիճակը*, որը փորձում էր ներկայացնել որպես այդ կառույցին լիարժեք անդամակցելու իրավական հիմք: Ակնհայտ էր, որ Անկարան այս քայլն ուներ բացառապես քարոզչական բնույթ և կատարվում էր ԵՄ-ի անդամության գործընթացից հիասթափվածության համատեքստում՝ փորձելով հասկացնել Բրյուսելին, որ Անկարան այլընտրանքային ինտեգրման հնաչավորություն ունի: Ասվածի ապացույցն այն է, որ Շանհայան կազմակերպության Բիշքեկյան գազաթաժողովին Անկարան ներկայացուցիչներ չուղարկեց³⁹⁵:

Այս նույն տրամաբանությամբ Թուրքիան բազմիցս ակնարկել է նաև Մաքսային միությանն անդամակցելու իր պատրաստակամության մասին³⁹⁶: Մաքսային միությանն իր անդամակցելը Անկարան փորձում է հիմնավորել նաև գաղափարապես՝ պնդելով, թե Ռուսաստանում ակտիվորեն շրջանառվող եվրասիականության գաղափարը Թուրքիային նույնպես հարազատ է: Եվրասիականության գաղափարի տակ, սակայն, թե՛ Մոսկվան և թե՛ Անկարան հասկանում են իրենց միանձնյա գերակայությունն այդ տարածաշրջանում:

³⁹⁴ Տե՛ս Агаджанян М., Турция шоосирует дорогу на Восток, <http://www.politcom.ru/15239.html>

* Շանհայան կազմակերպությունում գործընկերոջ կարգավիճակն ավելի ցածր է, քան դիտորդի կարգավիճակը, քանի որ գործընկերները չեն կարող մասնակցել կառույցի բոլոր միջոցառումներին և ծանոթանալ ոչ պաշտոնական փաստաթղթերին, դիտորդներին թույլ է տրվում միայն մասնակցել կառույցի հիմնական միջոցառումներին:

³⁹⁵ Տե՛ս Агаджанян М., Турция шоосирует дорогу на Восток, <http://www.politcom.ru/15239.html>

³⁹⁶ Տե՛ս Расов С., Турция предложила создать аналог Евросоюза, <http://www.politcom.ru/9562.html>

Էրդողանի այս հայտարարություններին Բրյուսելում լուրջ չվերաբերվեցին, քանզի նման իրական մտադրություն ունենալու դեպքում Անկարան նախ պետք է դուրս գա Եվրամիության մաքսային միությունից, ինչը կնշանակի հրաժարվել եվրոպական երկրներ թուրքական արտահանման 40 %-ի հասնող ծավալներից, ինչպես նաև այդ երկրներից թուրքական տնտեսության մեջ ավելի քան 70 %-ի չափով ուղղակի ներդրումներից, ինչին Թուրքիան հասկանալի է, որ չի կարող գնալ³⁹⁷: Այդուհանդերձ, Անկարայի նման սադրանքներն արդեն սկսել են նյարդայնացնել Բրյուսելին:

2014 թ. դեկտեմբերին Պուտինի` Թուրքիա կատարած այցից և այդ երկրի տարածքով ռուսական նոր գազատարի շինարարության հայտարարությունից հետո Բրյուսելից Անկարա մեկնեց բարձրաստիճան պաշտոնյաների պատվիրակություն, որին հետևեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Քեմերոնի այցը: Այդ երկու այցերի հրապարակված նպատակն էր Անկարային հորդորել ավելի ակտիվ մասնակցություն ունենալ «Իսլամական պետության» դեմ պայքարում: Սակայն իրականում ԵՄ-ն փորձում էր ճշտել Անկարայի և Մոսկվայի հարաբերությունների լրջության աստիճանը և կանխել նրանց հետագա մերձեցումը³⁹⁸: ԵՄ-ը մտադիր էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որ վերջինս միանա Ռուսաստանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցներին: Պուտինի պաշտոնական այցից անմիջապես հետո` դեկտեմբերի 8-9-ին, Անկարա ժամանեցին ԵՄ-ի արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատու Ֆ. Մոզերինին, ԵՄ-ի եվրոպական քաղաքականության և հարևանության կոմիսար Յ. Հանը և ԵՄ-ի մարդասիրական օգնության և ճգնաժամերի կառավարման կոմիսար Ք.

³⁹⁷ St´u Агаджанян М., Россия - Турция: диалектика партнёрства, <http://newsland.com/news/detail/id/1286370/>

³⁹⁸ ЕС не хочет отдавать Турцию России, <http://expert.ru/2014/12/13/>

Ստիլիանիդիսը, որոնք փորձում էին Թուրքիային համոզել միանալ Ռուսաստանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցներին³⁹⁹: Ծայրահեղ դեպքում ԵՄ-ի պատվիրակությունը ցանկանում էր հասնել գոնե նրան, որ Թուրքիան չչարաշահեր ստեղծված իրավիճակը և չփորձեր լրացուցիչ օգուտ ստանալ՝ Ռուսաստան արտահանելով այն մթերքները, որոնք ԵՄ-ի երկրներից արգելված է արտահանել Ռուսաստան⁴⁰⁰: Ակնհայտ էր, սակայն, որ Անկարան արդեն անում էր հենց այն, ինչից նրան փորձում էին հետ կանգնեցնել ԵՄ-ի պատվիրակները:

ԵՄ-ն Թուրքիայից ակնկալում է նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարում ավելի ակտիվ ներգրավվածություն, Անկարային քննադատում, որ իր տարածքը վեր է ածել Սիրիա և Իրաք եվրոպացի իսլամիստների փոխադրման միջանցքի՝ պահանջելով խստացնել վերահսկողությունը Սիրիայի սահմանին: Նաև խնդրում է, որ Անկարան եվրոպացի ջիհադիստների մասին ավելի ակտիվ տեղեկատվություն փոխանակի Բյուսելի հետ⁴⁰¹: Սակայն բոլոր նշված ուղղություններով Թուրքիան այդքան էլ տրամադարված չէր ԵՄ-ի հետ համագործակցության, և կողմերի միջև եղած հակասությունների և գնահատականների տարբերության պատճառով նրանց չհաջողվեց քննարկվող հարցերի առնչությամբ ընդհանուր հայտարարի գալ:

Մերձավոր Արևելքում իրավիճակի սրման հետևանքով Եվրոպա ուղղվող ներգաղթյալների հոսքը զսպելու հարցում Բյուսելին ու Անկարային հաջողվեց միայն ձեռք բերել նախնական պայմանավորվածություններ այն մասին, որ ԵՄ-ն այս հարցում

³⁹⁹ Տե՛ս Нужен всем берег турецкий, <http://www.foreignpolicy.ru/analyses/>

⁴⁰⁰ Տե՛ս СМИ: ЕС призывает Турцию не мешать санкциям против РФ, <http://mir-politika.ru/17537.html>

⁴⁰¹ Տե՛ս ЕС не хочет отдавать Турцию России, <http://expert.ru/2014/12/13/>

Թուրքիայի օժանդակման դիմաց վերջինիս կհատկացնի 3 մլրդ եվրո՝ գաղթականների կենտրոնների բարեկարգման համար և խոստացավ Անկարայի համար թեթևացնել շենգենյան երկրների վիզային ռեժիմը⁴⁰²: Պետք է նշել, սակայն, որ խորացող հակասությունների ու դրանց պատճառների չվերացման պայմաններում այս նախաձեռնության շրջանակներում ԵՄ-ի ու հատկապես Թուրքիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը որոշակի թերահավատություն է ներշնչում: Այս գործընթացի անորոշ հեռանկարները հազիվ թե կարողանան հանգեցնել կողմերի միջև հարաբերությունների կարգավորման և, առավել ևս, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության:

Անկարայի արտաքին քաղաքական քայլերի, ինչպես նաև ԵՄ-ի ու Թուրքիայի միջև ներկայացված հակասությունների ու դրանց խորացման միտումների վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Թուրքիան, լիովին գիտակցելով ԵՄ-ին իր անդամակցելու հեռանկարի բացակայությունը, արդեն բացահայտ առձակատման մեջ է Բրյուսելի հետ:

⁴⁰² St´u EC предлагает Турции визовые послабления и 3 млрд евро на сдерживание мигрантов, <https://www.vedomosti.ru/politics/news/2015/10/16/613116>

3.2. ԵՄ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և դրա ազդեցությունը ԵՄ-Թուրքիա հարաբերությունների վրա

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության կարևոր նախապայմաններից է նաև հարևան երկրների, այդ թվում՝ Հայաստանի, հետ Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը: Այս համատեքստում ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ցավոտ հարցերից մեկն էլ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն է, որը մինչև այժմ համառորեն ժխտվում է ներկայիս Թուրքիայի կողմից: Բրյուսելն Անկարայի հետ բանակցություններում երբեմն բարձրացնում է նաև Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը՝ հիմնվելով Եվրոխորհրդարանի կողմից դեռևս 1987 թ. հունիսի 18-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» իր հայտնի բանաձևի վրա⁴⁰³, թեև այդ հարցը չի ներառվել Թուրքիային ներկայացվող նախապայմանների և չափանիշների պաշտոնական փաստաթղթերի մեջ:

2000 թ. նոյեմբերի 15-ին Եվրոխորհրդարանը, լսելով «Թուրքիայի առաջընթացը Եվրամիության անդամակցության ճանապարհին» գեկույցը, ընդունեց հռչակագիր, որի 21-րդ կետով հաստուկ ամրագրվում էր Հայաստանի հետ երկխոսություն սկսելու հարցը, որն ուղղված էր լինելու բնականոն դիվանագիտական և առևտրային հարաբերությունների հաստատմանը և առկա շրջափակման վերացմանը⁴⁰⁴: 2002 թ. «Հարավային Կովկասին վերաբերող բանաձև»-ով էլ ԵՄ-ն ևս մեկ անգամ առաջարկեց Թուրքիային ճանաչել

⁴⁰³ St´u European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

⁴⁰⁴ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 816.

Հայոց ցեղասպանությունը: 2004 թ. ընդունած հերթական բանաձևով Բրյուսելը կրկին կոչ արեց Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը⁴⁰⁵: Վերջին անգամ ԵՄ-ն Հայոց ցեղասպանության հարցին անդրադարձել էր 2005 թ. «Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ բանաձև»-ում, որի հինգերորդ կետում ԵՄ-ին անդամակցության համար Թուրքիայի առաջ նախապայման է դրվում Հայոց ցեղասպանության ճանաչումը:

Այս նախապայմաններից ելնելով էր, որ Բրյուսելը հետագայում ակտիվ դերակատարում ստանձնեց նաև հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացում, ինչի հետևանքով 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվեցին Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները: Անկարան, գնալով Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացին, փորձում էր ԵՄ-ին համոզել, որ կատարում է Բրյուսելի պահանջները և պատրաստ է «բարի կամք ցուցաբերել» Հայաստանի ապաշրջափակման հարցում՝ փոխարենն ակնկալելով Հայոց ցեղասպանության հարցով ԵՄ-ի կողմից իր նկատմամբ ճնշման թուլացում: Սակայն գործընթացը ձախողվեց, և դրանում Բրյուսելը միանշանակ մեղադրում է Անկարային, վերջինիս դիտելով որպես անվստահելի գործընկեր:

Եվրոպական երկրների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող բանաձևերի ընդունումը չափազանց ցավոտ է ընդունվում Անկարայի կողմից, որը նախ փորձում է շանտաժի միջոցով կանխել այդ բանաձևերի ընդունումը, իսկ

⁴⁰⁵ Сваранц А., Геноцид армян в Османской Турции: причины, этапы и последствия в национальной и международной жизни, М., 2006, с. 38.

անհաջողությունից հետո այդ երկրներից հետ է կանչում իր դեսպաններին և լարվածություն առաջացնում երկկողմ հարաբերություններում: Արտահայտելով Անկարայի պաշտոնական տեսակետը, նախկին արտգործնախարար Մ. Սոյսալը նշում էր, որ Թուրքիայի և ԵՄ-ի միջև հարաբերություններն իրավահավասար և արդարացի չեն, քանի որ Թուրքիան Բրյուսելի կողմից անընդհատ ենթարկվում է շանտաժի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայի անդամության ձգձգման հարցերով⁴⁰⁶:

Միավլած չենք լինի, եթե նշենք, որ Հայոց ցեղասպանության հարցում ԵՄ-ի դիրքորոշման գլխավոր արտահայտիչը դարձավ Ֆրանսիան, որն ի տարբերություն կառույցի մյուս երկրների, հայերի նկատմամբ կատարված այդ հանցագործությունը ճանաչել է ոչ թե բանաձևով կամ հայտարարությամբ, այլ օրենքով: Թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա որոշակիորեն ազդում է Ֆրանսիայում լավ ինտեգրված և իշխանության գրեթե բոլոր աստիճաններում ազդեցություն ունեցող մեծաթիվ հայկական համայնքի առկայությունն ու նրա արդյունավետ գործունեությունը: Դրա արդյունքում Ֆրանսիայում բարձրացվեց Հայոց ցեղասպանության հարցը, որտեղ, նախ 2001 թ. հունվարի 29-ին Սենատն ընդունեց օրենք, որում ասվում էր. «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թ. հայերի ցեղասպանությունը: Ներկայիս օրենքը պետք է իրագործվի իբրև պետական օրենք»⁴⁰⁷: Այս քայլը թուրք-ֆրանսիական հարաբերությունների վրա անդրադարձավ նրանով, որ Թուրքիան անմիջապես Փարիզից հետ կանչեց իր դեսպանին՝ խորհրդատվության անցկացման համար, այնուհետև չեղ-

⁴⁰⁶ Sté u Быкова О., Симпозиум в Анкаре: Турция обращает свои взгляды к Евразии, <http://www.geopolitica.ru/Articles/917>

⁴⁰⁷ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1. с. 818.

յալ հայտարարեց «Ալկատելի» հետ կնքված 149 մլն դոլար արժու-
ղությամբ պայմանագիրը՝ առաջին լրտես-արբանյակի արտա-
դրության մասին: Անկարան նաև ընդհատեց Ֆրանսիայի հետ մի
քանի բավական շահավետ պայմանագրերի բանակցությունները,
մասնավորապես՝ ԱԷԿ-ի կառուցման, մարտական ուղղաթիռների
և տանկերի գնման և այլն՝ չնայած այն բանին, որ Գերմանիայի և
ԱՄՆ-ի հետ մեկտեղ Ֆրանսիան նույնպես հանդիսանում էր Թուրքի-
այի առաջատար գործընկերը: Թուրքական ազատ սպառողների
միությունը նախագահ (Բ. Դենիզի գլխավորությամբ) ֆրանսիա-
կան արտադրանքին բոյկոտ հայտարարեց, կոչ անելով բոյկոտել
ֆրանսիական «Total» նավթային ընկերությանը, իսկ որպես հա-
ջորդ «գոհ» հայտարարեց «L'Oréal» գեղարարական ընկերու-
թյունը⁴⁰⁸:

Թուրքիային նյարդայնացնում է նաև որոշ եվրոպական
երկրների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականաց-
նելու օրենսդրության ընդունումը, մասնավորապես այդ ուղղությ-
ամբ Ֆրանսիայում կատարված քայլերը: 2006 թ. հոկտեմբերին
Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի՝ Ազգային Ասամբլե-
այի կողմից առաջին անգամ ընդունվեց Հայոց ցեղասպանությունը
ժխտելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող
օրինագիծը: Թեև օրինագիծն այդ անգամ չհաստատվեց Սենատի
կողմից, Անկարան մեծ արշավ սկսեց Փարիզի դեմ, որն իր ծավալ-
ներով շատ նման էր 2001 թ. Թուրքիայի ձեռնարկած քայլերին:

2011 թ. նոյեմբերին Հայաստան կատարած իր այցի ժամա-
նակ Ֆրանսիայի նախագահ Սարկոզին Թուրքիային կոչ արեց
ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ միաժամանակ շեշտելով, որ
ԵՄ-ն Թուրքիայի համար չէ: 2011 թ. դեկտեմբերի 22-ին Ֆրան-

⁴⁰⁸ Թուրքիա. Էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր..., էջ 191-192:

սիայի Ազգային ժողովն ընդունեց Ֆրանսիայի կողմից օրենքով ճանաչված ցեղասպանությունների՝ հրեաների Հոլոքոստի, Հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ սահմանող օրինագիծը⁴⁰⁹, ինչին ի պատասխան Անկարան Փարիզից հետ կանչեց իր դեսպանին: 2012 թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատը, անտեսելով Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացման վտանգները, հաստատեց այդ օրենքը, որով, փաստորեն, հրեական Հոլոքոստի ժխտման համար «Գեյտյի օրենքով»^{*} նախատեսված պատժամիջոցները տարածվելու էին նաև Հայոց ցեղասպանության ժխտման վրա՝ հավասարության նշան դնելով երկու նույնական հանցագործությունների միջև արդեն ոչ միայն ճանաչման, այլև դրանց զոհերի հիշատակը և տուժած ժողովուրդների զգացմունքները հարգելու առումով: Օրենքին կողմ քվեարկեցին 127, դեմ՝ 86 ձեռակուտականներ⁴¹⁰:

Արձագանքելով Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրենքի ընդունմանը՝ Էրդողանը հայտարարեց, որ այդ փաստաթուղթը հիմնված է ռասիզմի, խտրականության և այլատյացության վրա: Նա միաժամանակ նշեց, որ իր երկիրը պատժամիջոցներ կկիրառի Ֆրանսիայի նկատմամբ՝ նախ չեղյալ կհամարվեն ռազմական, տնտեսական և քաղաքական հարցերի շուրջ բանակցություններում Փարիզի հետ ձեռք բերված

⁴⁰⁹ St' u Preposition de Loi Anti-negationnisme ter pdf - 16.12.2012, 23H43.pdf
www.philippekrikoriant-avocat.fr

^{*} «Գեյտյի օրենքը» Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունվել է 1990 թ. հուլիսի 13-ին, որի համաձայն նացիստական հանցագործություններն ու մասնավորապես՝ հրեական Հոլոքոստը ժխտողների նկատմամբ սահմանվում է մեկ տարի ազատազրկում և/կամ 45000 եվրո տուգանք: St' u Assignation en Refere Pardevant Monsieur le President du Tribunal de Grande Instance de Marseille aux fins de Constatation d'une voie de fait Administrative et d'Injonction.
www.philippekrikoriant-avocat.fr

⁴¹⁰ St' u Анкара наказывает Париж, <http://expert.ru/2012/01/24/>

պայմանավորվածությունները, բացի այդ, ֆրանսիական ձեռնարկությունները, որոնք գործում են Թուրքիայում տրանսպորտի, սպառազինության և միջուկային ոլորտներում, կզրկվեն պետական պայմանագրերից, ինչը նշանակում էր, որ Փարիզը կզրկվեր բազմամիլիարդանոց գործարքներից: Ֆրանսիական ռազմական և քաղաքացիական ինքնաթիռներին կարգելվի վայրէջք կատարել Թուրքիայում, իսկ ֆրանսիական նավերը կզրկվեն թուրքական նավահանգիստներ մուտք գործելուց⁴¹¹: Այս որոշումները քննարկվում էին թուրքական կառավարության նիստում, որն ընթանում էր Մենատում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրենքի ընդունմանը զուգահեռ⁴¹²: Ինչ վերաբերում է թուրք հասարակությանը, ապա ֆրանսիական օրենքի ընդունման հետևանքով Թուրքիայի ավելի շատ քաղաքացիներ սկսեցին իրենց երկրի՝ ԵՄ-ին անդամակցելու դեմ արտահայտվել⁴¹³:

Օրենքի չեղյալ հայտարարման հարցով Ֆրանսիայի Սահմանադրական Խորհրդին դիմելու համար պահանջվում էր խորհրդարանականների ոչ պակաս, քան 60 ձայները, մինչդեռ դեմ էին քվեարկել 86 խորհրդարանականներ: Անկարան պատրաստվում էր կապեր հաստատել դեմ քվեարկած խորհրդարանականների հետ՝ օրենքը չեղարկելու նպատակով⁴¹⁴: Հունվարի 31-ին 76 պատգամավորների և 72 ծերակուտականների ստորագրությամբ հարցը փոխանցվեց Սահմանադրական խորհրդի քննարկմանը: Սահմանադրական խորհուրդ դիմած պատգամավորները գտնում էին, որ

⁴¹¹ Տե՛ս Мамедов М., К вопросу о геноциде, <http://www.politcom.ru/13237.html>

⁴¹² Տե՛ս Анкара наказывает Париж, <http://expert.ru/2012/01/24/>

⁴¹³ Տե՛ս Пахомов Н., Турцию отпугивают от Европы, <http://www.politcom.ru/3572.html>

⁴¹⁴ Տե՛ս Анкара наказывает Париж, <http://expert.ru/2012/01/24/>

տվյալ օրենքով խախտվում են խոսքի, խղճի և համոզմունքի ազատության սկզբունքները:

Սահմանադրական խորհրդի որոշում ընդունելուց առաջ՝ փետրվարի 4-ին, այդ մարմինն իր պաշտոնական կայքէջում արդեն տեղադրել էր «Օրենքի նորմատիվային ուժի կամ նորմատիվային հիմքի բացակայությունը» վերնագրով գրքույկը, որը վերաբերում էր 2001 թ. հունվարի 29-ի 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման օրենքին, ինչը գնահատվում էր իբրև ոչ նորմատիվային կամ անորոշ նորմատիվությամբ ակտ: Սահմանադրական խորհրդի նման գործողությունները, սակայն, համարվում են ֆրանսիական օրենսդրության խախտում, քանզի այդ մարմինն իրավունք չունի նախնական կարծիք հայտնել այն հարցի մասին, որը հանձնվել է իր քննությանը⁴¹⁵: Ստեղծված իրավիճակում Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին ուղղակի կարող էր ստորագրել և հրապարակել 2012 թ. հունվարի 23-ի օրենքը, քանզի Սահմանադրական խորհուրդն արդեն իսկ գերազանցել էր իր իրավասությունները, և հունվարի 23-ի օրենքը այլևս չէր կարող մնալ նրա ընդդատության տակ: Սակայն, չնայած նախապես Երևանում տված իր խոստումներին, նախագահ Սարկոզին ոչինչ չձեռնարկեց և սպասեց Սահմանադրական խորհրդի կանխատեսելի որոշմանը:

2012 թ. փետրվարի 28-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց 2012 թ. հունվարի 23-ին Սենատի կողմից ընդունված օրենքը, որը հանդիսանում էր

⁴¹⁵ Sté u Constats d’huissier en date des 30 Janvier et 2 Février 2012 établissant la preuve d’une publication en trente-trois pages figurant sur le site internet officiel du Conseil Constitutionnel, mettant à l’index la loi du 29 Janvier 2001, réputée être non normative, laquelle publication constitue une infraction manifeste au devoir d’impartialité et à l’obligation de réserve des membres du Conseil Constitutionnel expressément prévue par les dispositions de leur statut Janvier 2012, www.philippekrikoriant-avocat.fr

2001 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության ճանաչման օրենքի տրամաբանական շարունակությունը և նախատեսում էր քրեական պատասխանատվություն սահմանել նաև Հայոց ցեղասպանության ժխտման համար, ինչն արդեն արվել էր հրեական Հոլոքոստի առնչությամբ: Սահմանադրական խորհրդի այս որոշման տրամաբանությամբ հակասահմանադրական պետք է ճանաչվեր նաև 1990 թ. «Գեյտյի օրենքը», սակայն այս կերպ փաստորեն խտրականություն մտցվեց այս երկու նույնանման հարցերի իրավական գնահատման հարցում:

Իր որոշմամբ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը խոչընդոտներ ստեղծեց նաև Եվրոմիության առջև Ֆրանսիայի ստանձնած պարտավորությունների կատարման առումով, քանզի Ֆրանսիան Եվրոմիության մյուս երկրների հետ մեկտեղ 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրել էր «Ռասիզմի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը, որով ԵՄ-ի անդամ պետություններն իրենց քրեական իրավունքում պետք է պատժող դրույթներ նախատեսեին ցեղասպանության, մարդկության դեմ կատարված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հրապարակային ժխտման, ինչպես նաև դրանց զոհերի հիշատակի անարգման համար⁴¹⁶:

Սահմանադրական խորհրդի որոշումից հետո Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին կառավարությանը հանձնարարեց մշակել օրենքի նոր նախագիծ, ինչը, կարծում ենք, ավելի շատ ցուցադրական գործողություն էր, որով նա փորձում էր քավել հայկական համայնքի առջև իր մեղքը վճռական պահին անգործություն ցու-

⁴¹⁶ Journal officiel de l'Union Européenne L 328 du 6.12.2008, p. 55.

ցաբերելու համար: 2013 թ. փետրվարի 6-ին Վ. Բուայեն և իր հինգ գործընկերներն օրենքի նոր նախագիծ ներկայացրին ֆրանսիական խորհրդարանին՝ «Ազգային օրենսդրությունը Եվրամիության խորհրդի 2008 թ. նոյեմբերի 28-ի «Ռասիզմի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագրի դրույթներին համապատասխանեցնելու մասին»⁴¹⁷:

2014 թ. հունվարին Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդը երկօրյա պետական այց կատարեց Թուրքիա, որի ընթացքում իր տեսակետներն արտահայտեց ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ⁴¹⁸: Ֆրանսիայի նախագահը Անկարային կոչ արեց ճանաչել Հայոց ցեղասպանությունը և դադարել ժխտել այդ պատմական փաստը, ինչն, Օլանդի կարծիքով, խոչընդոտ է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու ճանապարհին: Օլանդը հանդիպեց նաև 2007 թ. հունվարին սպանված հայ լրագրող Հրանտ Դինքի այրու՝ Ռաքել Դինքի հետ: Ֆրանսիայի նախագահը հույս հայտնեց, որ Թուրքիան կվերացնի առևտրային արգելքները, որոնք կիրառվեցին այն ժամանակ, երբ ընդունվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը⁴¹⁹:

2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ՝ 54 կողմ, 42 դեմ, 3 ձեռնպահ, ընդունեց Ցեղասպանության ժխտումը քրեականացնող՝ «Այլատյացության դեմ պայքարի մասին» օրենքը, որի համաձայն Հունաստանի տա-

⁴¹⁷ St'u Proposition de Loi PK-VB depose le 06.02.2013.pdf, www.philippekrikoriant-avocat.fr

⁴¹⁸ St' u Оланд начал визит в Турцию словами о геноциде армян, <http://www.nakanune.ru/news/2014/1/28/22339101#sthash.1wzP43I1.dpuf>

⁴¹⁹ St' u Мамедов М., Турецкий гамбит французского президента, <http://www.politcom.ru/17266.html>

րաձքում քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեին ոչ միայն հրեաների, այլև հայերի և Պոնտոսի հույների ցեղասպանության ժխտման համար: Օրինագծով սահմանվում է, որ այն անձինք, ովքեր կժխտեն կամ բացասական կարտահայտվեն այդ ցեղասպանությունների մասին, կազատագրվեն 3 ամսից մինչև 3 տարի ժամկետով: Իսկ եթե օրենքը խախտողը պատգամավոր է կամ պետական պաշտոնյա, սահմանվելու է 3-5 տարվա ազատագրկում: Ֆիզիկական անձինք նման խախտման համար կարող են տուգանվել՝ 10-ից մինչև 100. 000 եվրոյով: Ժխտում ենթադրող միջոցառումներին մասնակցության համար նախատեսվում է 5-20 000 եվրո տուգանք:

ԵՄ-ի կողմից Հայոց ցեղասպանության հարցում նախկին գործընթացներից, ինչպես նաև Անկարայի հետ խորացող հակասություններից ելնելով՝ միանգամայն կանխատեսելի էր, որ 100-րդ տարելիցին ԵՄ-ում նոր զարգացումներ էին լինելու:

2015 թ. մարտի 3-ին «Եվրոպական ժողովրդական կուսակցության»^{*} Քաղաքական համաժողովն ընդունեց «Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» խորագրով բանաձև: Բանաձևի հենց վերնագրում Հայոց ցեղասպանության ճանաչումը փոխկապակցվում է եվրոպական արժեքների հետ: Հատկանշական է, որ բանաձևում դատապարտվում է ոչ միայն երիտթուրքերի, այլ նաև թուրքական հաջորդ վարչակարգերի կողմից 1894-1924 թթ. իրականացված ցեղասպանությունը՝ այդպիսով ցույց տալով թուրքական վարչակարգերի ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը: Ցեղասպանության ժխտումը բանա-

^{*} ԵԺԿ-ն Եվրոպական միության ամենաազդեցիկ քաղաքական միավորումներից է: Եվրոխորհրդարանի 751 անդամներից 219-ը այս կուսակցության ներկայացուցիչներն են, Եվրահանձնաժողովի և Եվրոպական խորհրդի 28-ական անդամներից 14-ականը ևս ԵԺԿ-ական են:

ձևում համարվում է պատասխանատվությունից խուսափելու և իրականացված ոճրագործությունները մոռացության մատնելու կամ արդարացնելու փորձ, որպես շարունակական հանցագործություն և նոր ցեղասպանություններ խրախուսելու միտում: Բանաձևը բացառիկ է նրանով, որ առաջին անգամ խոսվում է նյութական հատուցման, հողերի վերադարձի, մշակութային ժառանգության պահպանման, հնագույն մեծ քաղաքների, եկեղեցիների, դպրոցների, գերեզմանոցների և Արևմտյան Հայաստանում տեղակայված այլ պատմամշակութային արժեքների վերականգնման մասին⁴²⁰:

Մարտի 12-ին Եվրոխորհրդարանն ընդունեց «Մարդու իրավունքներ, ժողովրդավարությունն աշխարհում և ԵՄ-ի քաղաքականությունը 2013 թ.» զեկույցը, որում առանձին կետով նշվում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մասին և ԵՄ-ի անդամ պետություններին կոչ է արվում ճանաչել այդ փաստը, իսկ ԵՄ-ի կառույցներին՝ նպաստել ճանաչման գործընթացին⁴²¹: Մարտի 18-ին էլ «Եվրոնեստի»* խորհրդարանական վեհաժողովն ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ Թուրքիային կոչ անելով ճանաչել այդ փաստը և հաշտվել իր անցյալի հետ: Բանաձևում նշվում էր, որ Հայոց ցեղասպանությունը ժամանակին չդատապարտելը հանգեցրեց նրան, որ չհաջողվեց հետազայում ևս կանխարգելել այդ հանցագործության կրկնությունները: Բանա-

⁴²⁰ Տե՛ս ԵԺԿ-ն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունել, <http://news.am/arm/news/255195.html>

⁴²¹ Տե՛ս ПА «Евронест» приняла резолюцию к 100-летию Геноцида армян, <http://www.regnum.ru/news/polit/1906311.html#ixzz3V0tOa6K0>

* Եվրոնեստը ԵՄ-ի «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության խորհրդարանական մարմինն է, որում մասնակցում են Եվրոխորհրդարանի և «Արևելյան գործընկերության» հինգ անդամ-պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի պատգամավորները:

ձևում ընդգծվում է, որ ցեղասպանությունների կանխարգելումը պետք է առաջնահերթություն դառնա միջազգային հանրության համար և Եվրոնեստի խորհրդարանական վեհաժողովը պաշտպանում է ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված անձանց իրավունքների և պատմական արդարության վերականգնման գործում միջազգային հանրության ջանքերը: Փաստաթղթում նաև ավսոսանք է հայտնվում զանգվածային սպանության փաստերի, Առաջին աշխարհամարտի տարիների Օսմանյան կայսրությունում 1,5 միլիոն հայերի ցեղասպանության, ինչպես նաև մյուս ցեղասպանությունների ժխտման կապակցությամբ: Խորհրդարանական վեհաժողովը Թուրքիային կոչ արեց առերեսվել իր պատմական անցյալի հետ, ինչը հիմք կդառնա ժողովուրդների ապագա հաշտեցման համար: Երևանում ընթացած նիստի ժամանակ այդ բանաձևին կողմ քվեարկեցին 33, դեմ՝ 4 պատգամավորներ⁴²²:

Ապրիլի 2-ին Կիպրոսի խորհրդարանը 54 կողմ ձայների հարաբերակցությամբ ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը, որի համաձայն պատերազմական, մարդկության դեմ հանցագործությունների և ցեղասպանությունների ժխտումը, պատժվում է մինչև 5 տարվա ազատազրկմամբ և/կամ 10 000 եվրո տուգանքով⁴²³: Այսպիսով, Կիպրոսը Շվեյցարիայից, Սլովակիայից ու Հունաստանից հետո դարձավ չորրորդ պետությունը, որտեղ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեորեն պատժելի արարք է համարվում:

⁴²² Տե՛ս <http://armeniangenocide100.org/euronest-parliamentary-assembly-approves-resolution-on-armenian-genocide-centennial/>

⁴²³ Տե՛ս Կիպրոսը քրեականացրել է Հայոց ցեղասպանության ժխտումը, <http://armtimes.com/hy/read/62052>

Այս քայլերը, սակայն, իրենց հնչեղությամբ չէին կարող համեմատվել ապրիլի 12-ին, Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի պապ Ֆրանցիսկոսի մատուցած պատարագի հետ, որի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը նա անվանեց 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Պապը պատարագի ժամանակ նաև մեծարեց Սուրբ Գրիգոր Նարեկացուն՝ նրան շնորհելով «Տիեզերական եկեղեցու վարդապետ» տիտղոսը, որին մինչ օրս արժանացել է ընդամենը 35 մարդ⁴²⁴: Շատ կարևոր էր, որ Հռոմի պապի պատարագից հետո ելույթներով հանդես եկան Հայ Առաքելական եկեղեցու երկու նվիրապետական աթոռների առաջնորդները՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսները, ինչպես նաև Հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Ներսես Պետրոս XIX-ը:

Թուրքիայի նախագահ Էրդոդանը Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանություն համարելը զառանցանք անվանեց և հորդորեց Պապին այլևս չկրկնել այդ սխալը⁴²⁵: Չբավարարվելով դրանով՝ Անկարան պատարագի հաջորդ օրը՝ ապրիլի 13-ին հետ կանչեց Վատիկանից իր դեսպանին: Հռոմի պապին հասցրած վիրավորանքներն առաջացրեցին կաթոլիկ ամբողջ աշխարհի, այդ թվում՝ Եվրոպայի խիստ վրդովմունքն ու քննադատությունը՝ հանգեցնելով մի շարք եվրոպական կառույցների ու եվրոպական նորանոր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունմանը:

⁴²⁴ Տե՛ս Պապ. Հայերի հետ կատարվածը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, <http://www.azatutyun.am/content/article/26951506.html>

⁴²⁵ Տե՛ս Էրդոդանը «զառանցանք է» անվանել Հռոմի պապի խոսքերը Ցեղասպանության մասին, <http://www.panarmenian.net/arm/news/190692/>

Ապրիլի 15-ին «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը» թեմայով քննարկումների արդյունքում Եվրոխորհրդարանը բանաձև ընդունեց, որով դատապարտում էր Հայոց ցեղասպանությունը, Թուրքիայի իշխանություններին կոչ անելով ճանաչել այն և առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ սահմանները բացելու և դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու միջոցով⁴²⁶:

Ապրիլի 14-ին Չեխիան միացավ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած եվրոպական երկրների շարքին: Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Չեխիայի խորհրդարանի ընդունած բանաձևը, վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի» մասին կոնվեցիան, Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների օրենսդիր ու գործադիր մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների որոշումները, դատապարտում է ցեղասպանությունների ծանրության նվազեցումը կամ ժխտումը, միջազգային հանրությանը կոչ է անում՝ կանխել մարդկության դեմ հանցագործություններն աշխարհի ցանկացած հատվածում և վեճերը կարգավորել խաղաղ միջոցներով⁴²⁷:

Հաջորդն Ավստրիայի խորհրդարանն էր, որը ապրիլի 21-ին ընդունած բանաձևով ճանաչեց ու դատապարտեց Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիային կոչ անելով Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը ճանաչել որպես ցեղասպանություն⁴²⁸:

Ապրիլի 23-ին Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկը Բեռլինի մայր տաճարում կրկնեց Հռոմի պապի ձևակերպումը

⁴²⁶ Տե՛ս <http://m.mamul.am/am/theme/144>

⁴²⁷ Տե՛ս <http://www.azatutyun.am/archive/news/20150414/2031/2031.html?id=26955763>

⁴²⁸ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/news/190959/>

Հայոց ցեղասպանության հետ կապված՝ այն անվանելով 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Գերմանիայի նախագահն իր ելույթում հատուկ ընդգծեց, որ Թուրքիան ավանդաբար մերժում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շուրջ մեկուկես միլիոն հայերի զանգվածային ջարդեր իրականացնելու մեղադրանքները և չափազանց ցավազին է վերաբերվում Արևմուտքի այն քննադատություններին, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանության հարցին⁴²⁹:

Գերմանիայի նախագահի ելույթից հետո սպասվում էր նաև այդ երկրի խորհրդարանի՝ Բունդեստագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ նոր բանաձևի ընդունումը, քանզի շրջանառվում էին բանաձևի չորս նախագծեր, որոնցից երկուսի հենց վերնագրերում տեղ էր գտել «Հայոց ցեղասպանություն» ձևակերպումը: Մակայն բանաձևի ընդունում այդպես էլ տեղի չունեցավ՝ Գերմանիան որոշեց բավարարվել միայն նախագահի ելույթով:

Լյուքսեմբուրգի խորհրդարանն էլ մայիսի 5-ին ընդունեց բանաձև, որում՝ հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ընդգծվում է, որ մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացվածը հենց ցեղասպանություն է, և Թուրքիայի իշխանություններին կոչ էր արվում՝ առերեսվել սեփական պատմությանը⁴³⁰:

Վերը նշվածի լույսի ներքո միանգամայն տրամաբանական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ 2015 թ. ապրիլի 24-ին, Եվրամիության երկու երկրների՝ Ֆրանսիայի ու Կիպրոսի, ինչպես նաև այդ կառույցի անդամության

⁴²⁹ Տե՛ս http://arka.am/am/news/politics/germania468_1915_/#sthash.zpp0YdcM.dpuf

⁴³⁰ Տե՛ս <http://armedia.am/arm/news/17670/lyuqsemburgi-khorhrdarany-tchanachel-e-hayoc-cexaspanutyuny.html>

թեկնածու Սերբիայի նախագահներն ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակության ներկայությամբ Ծիծեռնակաբերդում հնչեցրած իրենց ելույթներում ևս մեկ անգամ դատապարտելով այդ հանցագործությունը, կրկին ուղերձներ հղելով Անկարային:

Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսն իր ելույթում մի քանի անգամ արտասանեց հայերեն «Մեծ եղեռն» բառերը՝ ընդգծելով, որ Կիպրոսը եվրոպական այն երկիրն է, որն առաջիններից մեկը ճանաչեց հայերի ցեղասպանությունը: Կիպրոսի նախագահը, զուգահեռ տանելով Հայաստանի ու Կիպրոսի միջև, նշեց, որ երկու երկրներն էլ անպատժելիության զոհեր են⁴³¹:

Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչն իր ելույթում նշեց, որ ինքը որպես մի երկրի նախագահ, որի ժողովուրդը զանգվածային կոռուստներ է կրել վերջին շրջանի բոլոր պատերազմներում՝ զուտ սերբ լինելու համար, պարզապես չէր կարող ներկա չգտնվել այդ օրը Ծիծեռնակաբերդի բարձունքում: Դատապարտելով «ցեղասպանություն» եզրույթի շահարկումը, իրավական ակտերի երկակի ստանդարտներով կիրառումը, ցեղասպանությունների գոհերին որպես ոճրագործներ ներկայացնելը՝ Սերբիայի նախագահն ընդգծեց, որ ոչ ոք իրավունք չունի մոռանալ Հայոց ցեղասպանության զոհերին⁴³²:

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդն իր ելույթում խոնարհվելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի առջև, նշեց, որ հանցագործության կազմակերպիչներին չհաջողվեց հասնել իրենց նպատակին, քանզի հայ ժողովուրդը շարունակում է ապրել: Ֆրանսիայի նախագահն անդրադարձավ Մեծ եղեռնի

⁴³¹ Տե՛ս Հայաստանի, Սերբիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նախագահները ելույթ ունեցան Ծիծեռնակաբերդում, <http://www.azatutyun.am/content/article/26976030.html>

⁴³² Տե՛ս նույն տեղում:

հանցավոր քաղաքականության իրականացման մեթոդներին ու փուլերին՝ մատնանշելով մտավորականների ձերբակալումն ու ոչնչացումը, բռնի տեղահանումները, զանգվածային արտաքսումները, և հրաշքով փրկված հայերի ոչնչացումը համակենտրոնացման ճամբարներում⁴³³:

Այսպիսին էր Եվրոպայի պատասխանը Հայոց ցեղասպանությունը ժխտող և այդ հարցի հետ կապված կաթոլիկ աշխարհի հոգևոր առաջնորդին վիրավորանք հասցնող ու սպառնացող Թուրքիայի նախագահին:

Ամփոփելով ԵՄ-ում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակներում ընթացող զարգացումները, պարզապես չենք կարող շրջանցել հոկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով կայացված վերջնական դատավճիռը:

Ինչպես հայտնի է, Թուրքիայի «Աշխատավորական» կուսակցության նախագահ Դոդու Փերինչեքը, որը ներկայանում է նաև որպես իրավագիտության դոկտոր, 2005 թ. մայիս, հուլիս և սեպտեմբեր ամիսներին Շվեյցարիայի Լոզան, Օպֆիկոն և Կոնիգ քաղաքներում կազմակերպված միջոցառումների ընթացքում հրապարակայնորեն հերքել է 1915 թ. և հետագա տարիներին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ցեղասպանության փաստը՝ Հայոց ցեղասպանությունը որակելով որպես «միջազգային կեղծիք»⁴³⁴: 2005 թ. հուլիսի 15-ին «Շվեյցարիա-Հայաստան» ասոցիացիան բողոք ներկայացրեց Փերինչեքի դեմ, և 2007 թ. մարտի 9-ին Լոզանի դատարանը նրան մեղավոր ճանաչեց Շվեյցարիայի քրեական օրենսգրքի՝ ռասսայական

⁴³³ Տե՛ս նույն տեղում

⁴³⁴ Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող Վ. Քոչարյան, Եր., 2014, էջ 94-95:

խտրականության համար պատասխանատվություն նախատեսող 261bis հոդվածի 4-րդ մասով: Դատարանն արձանագրեց, որ Փերինչեքի՝ Հայոց ցեղասպանությունը ժխտող էլույթն ունեցել է ռասիստական շարժառիթներ, կրել է ազգայնական բնույթ և չի կարող դիտարկվել պատմական բանավեճի կամ քննարկման շրջանակներում: Դատարանը նաև նշեց, որ Հայոց ցեղասպանությունն, ըստ շվեյցարական հանրային կարծիքի, համընդհանուր ապացուցված եղելություն է, ապացուցված պատմական փաստ: Այս հիմնավորմամբ Փերինչեքը Շվեյցարիայում դատապարտվեց պայմանական ազատազրկման և պարտավորվեց վճարել 12 հազար շվեյցարական ֆրանկ տուգանք⁴³⁵:

Փերինչեքը բողոքարկեց այդ վճիռը՝ պահանջելով վերաքննել գործը և հարցի շուրջ անցկացնել ուսումնասիրություն, սակայն Վոկանտոնի վերաքննիչ դատարանը նույն թվականի հունիսի 19-ին մերժեց նրա բողոքը: Վերաքննիչ դատարանի որոշման մեջ նշված է, որ Հայոց ցեղասպանությունը նույնպիսի պատմական փաստ է, ինչպես հրեաների Հոլոքոստը, և այն որպես այդպիսին ճանաչվել է շվեյցարական օրենսդիր մարմնի կողմից: Փերինչեքն այս վճիռը նույնպես բողոքարկեց՝ արդեն Շվեյցարիայի Դաշնային գերագույն դատարանում, որը 2007 թ. դեկտեմբերի 12-ին մերժեց բողոքը և վերահաստատեց Վոյի շրջանային վերաքննիչ դատարանի վճռի օրինականությունը⁴³⁶:

2008 թ. հունիսի 10-ին Դ. Փերինչեքը Շվեյցարիայի դեմ գանգատ ներկայացրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ պնդելով, որ շվեյցարական դատարանները

⁴³⁵ Տե՛ս <http://armeniangenocide100.org/perincek-wins-case-against-switzerland-loses-to-armenia/>

⁴³⁶ Տե՛ս Ամալ Քլունին ՄԻԵԴ-ում կներկայացնի Հայստանի շահերը, <http://legalinfo.am/2014/12/2252/>

խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով (արտահայտվելու ազատություն), 7-րդ հոդվածով (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա), ինչպես նաև մի շարք այլ հոդվածներով երաշխավորված իր իրավունքները: Մասնավորապես, նա վիճարկում էր շվեյցարական քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այն գնահատելով որպես ոչ բավարար կանխատեսելի, իսկ դատավճիռը՝ ոչ օրինական:

ՄԻԵԴ-ը 2013 թ. դեկտեմբերի 17-ին «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով իր կայացրած վճռում բավարարեց Փերինչեքի հայցը, ըստ որի՝ Շվեյցարիան խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, այն է՝ Փերինչեքի խոսքի ազատությունը, քանի որ նման սահմանափակումը չի ունեցել «հրատապ սոցիալական նշանակություն» և անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում հայերի ցեղասպանության զոհերի ժառանգների պատիվը և արժանապատվությունը պաշտպանելու համար: ՄԻԵԴ-ն իր որոշման մեջ նշել էր, որ «Փերինչեքի քրեական դատապարտումը 1915 թ. և դրանից հետո հայ ժողովրդի դեմ կատարված վայրագությունների մերժման համար արդարացված չէր»⁴³⁷: Եվրոպական դատարանը գտավ, որ Փերինչեքի կատարած արտահայտությունները չեն վերաբերում Կոնվենցիայի 17-րդ հոդվածին (իրավունքների չարաշահման արգելում)՝ միաժամանակ նշելով, թե այնպիսի գաղափարների արտահայտումը, որոնք կարող են «վիրավորել կամ շփոթության մեջ գցել», պաշտպանվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: ՄԻԵԴ-ի վճռի համաձայն՝ «զգայուն և հակասական բնույթ կրող հարցերի ազատ քննարկման իրավունքի ազատ իրականացումը կարծիք արտահայտելու ազատության հիմնարար չափա-

⁴³⁷ Sté u Case of Perincjek v. Switzerland, <http://hudoc.echr.coe.int/app/pdf/?library>

նիշներին է, և դրա միջոցով հանդուրժողականություն, բազմակարծություն ապահովող ժողովրդավարական վարչակարգը տարբերվում է ամբողջատիրական և բռնատիրական վարչակարգերից»⁴³⁸:

ՄԻԵԴ-ը, նշելով հանդերձ, որ կոչված չէ անդրադառնալու Հայոց ցեղասպանության իրավական ձևակերպմանը և, հետևաբար, չի անդրադառնալու Օսմանյան կայսրության կողմից 1915 թ. հայերի դեմ կատարված ոճրագործություններին առնչվող բովանդակային հարցերին, այնուամենայնիվ, իր վճռում անդրադարձավ Հայոց ցեղասպանության պատմական փաստին և տվեց հայկական կողմի համար սկզբունքորեն անընդունելի գնահատականներ: Փաստորեն, ՄԻԵԴ-ը գերազանցեց իր իրավասությունները՝ փորձելով տարբերակում մտցնել Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի միջև՝ նշելով, որ վերջինս եղելություն է և, ի տարբերություն առաջինի, ապացուցված է մի շարք անհերքելի պատմական փաստերով, ինչպես, օրինակ, գազախցերի առկայությամբ: Տվյալ պարագայում Փերինչեքի գործն ակնհայտորեն դուրս եկավ գուտ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի՝ Կոնվենցիային համապատասխանության որոշման շրջանակից և վերաբերվեց նաև հայ ժողովրդին: Թերևս, սա էր պատճառը, որ Հայաստանը որպես երրորդ կողմ որոշեց ներգրավվել դատական գործընթացում, որպեսզի հնարավորություն ունենա Եվրոպական դատարանին ներկայացնել հայության դիրքորոշումն ինչպես տվյալ գործի, այնպես էլ դատարանի առանձին ձևակերպումների վերաբերյալ:

2014 թ. մարտի 17-ին Շվեյցարիայի իշխանությունները բողոքարկեցին ՄԻԵԴ-ի վերոհիշյալ վճիռը: Հայաստանի նախագահը ողջունեց Շվեյցարիայի կառավարության՝ «Փերինչեքն ընդդեմ

⁴³⁸ Տե՛ս <http://armeniangenocide100.org/perincek-wins-case-against-switzerland-loses-to-armenia/>

Շվեյցարիայի» գործով ՄԻԵԴ-ի վճիռը բողոքարկելու որոշումը՝ հույս հայտնելով, որ ՄԻԵԴ-ն այնպիսի որոշում կընդունի, որը վիրավորական չի լինի ցեղասպանություն վերապրած ժողովուրդների համար և չի անարգի այն միլիոնավոր մարդկանց հիշատակը, որոնք ուղղակի անմեղ զոհ են դարձել⁴³⁹: 2014 թ. հունիսի 2-ին ՄԻԵԴ-ը որոշեց գործի քննությունը դատարանի Մեծ պալատ ընդունելու մասին: Նույն թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետությունը դիմեց Եվրոպական դատարանին՝ գործով որպես երրորդ կողմ ներգրավվելու համար, և սեպտեմբերի 26-ին ՄԻԵԴ-ը հաստատեց ՀՀ մասնակցությունը⁴⁴⁰: Տվյալ գործին որպես երրորդ կողմ մասնակցեց նաև Թուրքիան:

Հայաստանի Հանրապետությունը, տվյալ գործում որպես երրորդ կողմ ներգրավվելով, Եվրոպական դատարանից ակնկալում էր այնպիսի վճիռ, որը զերծ կլիներ Հայոց ցեղասպանության փաստը՝ պատմական, իրավական կամ որևէ այլ համատեքստում կասկածի տակ դնող ձևակերպումներից և որ Եվրոպական դատարանի վճիռը չդառնա գործիք Հայոց ցեղասպանությունը ժխտողների ձեռքին, որոնք կփորձեն այն օգտագործել իրենց անբարոյական նպատակներով:

2015 թ. հունվարի 28-ին ՄԻԵԴ-ի Մեծ պալատում տեղի ունեցան «Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով դատական լսումները: ՄԻԵԴ-ում գործի քննությանը որպես երրորդ կողմ մասնակցող Հայաստանի պատվիրակության կազմում ընդգրկված էին ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ, ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՄԻԵԴ-ում ՀՀ կառավարության լիազոր

⁴³⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁴⁰ «Փերինչեք v. Շվեյցարիա» գործը և հնարավոր հետևանքները Հայաստանի համար, <http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/9674/>

ներկայացուցչի տեղակալ Ա. Թաթոյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը, Լոնդոնի «Doughty Street» փաստաբանական պալատի հիմնադիր, «Անհարմար ցեղասպանություն. ո՞վ է այսօր հիշում հայերին» գրքի հեղինակ, միջազգային հայտնի փաստաբան Ջ. Ռոբերտսոնը, միջազգային հայտնի փաստաբաններ Ա. Քլունին և Թ. Քոլիսը⁴⁴¹:

2015 թ. հոկտեմբերի 15-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում ավարտվեց թուրք ազգայնական գործիչ Դ.Փերինչեքի գործով «Փեինչեքն ընդդեմ Շվեյցարիայի» գործով վերջնական լուսմն ու դատարանը վերջնական որոշում կայացրեց: ՄԻԵԴ-ի Մեծ պալատը որոշեց, որ Շվեյցարիան խախտել է Փերինչեքի ազատ խոսքի իրավունքը, սակայն, միևնույն ժամանակ, դատարանի վճռում նշվում է, որ այս գործով դատարանի խնդիրը չէ որոշել, թե արդյոք Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայ ժողովրդի նկատմամբ կատարված զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները կարող են որակվել որպես ցեղասպանություն՝ միջազգային իրավունքում այդ եզրույթին տրված սահմանման տեսանկյունից: Այնուհետև դատարանի Մեծ պալատը սահմանեց, որ Եվրոպական դատարանը չունի որևէ իրավասություն՝ իրավական հայտարարություններ կատարելու այս հարցի վերաբերյալ՝ անկախ այն բանից, թե ինչ տեսանկյունից են դրանք արվում:

Բացի այդ, դատարանի վճռում նաև արձանագրվեց, որ հայերն ունեն իրենց և իրենց նախնիների արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունք, այդ թվում՝ այն շրջանակներում, որն ամնչվում է ցեղասպանության հետևանքով վնաս կրած հայ-

⁴⁴¹ Տե՛ս <http://armenpress.am/arm/news/822218/mied-y-oroshum-kayacrec-doxu-perincheqi-gortsov-lracvum.html>

կական համայնքի ինքնությանը: Դատարանն այդպիսով արձանագրեց, որ հայերի այդ համոզմունքները և դրա հետ կապված՝ նրանց արժանապատվությունը ենթակա են պաշտպանության կոնվենցիոն դրույթների շրջանակներում:

Վերջապես, դատարանի վճռում սահմանվեց, որ Փերինչեքիս քրեական պատասխանատվության ենթարկելը ոչ թե ընդհանրապես հակասում է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, այլ, որ նրա նկատմամբ շվեյցարական օրենքը սխալ է կիրառվել: Սա նշանակում է, որ Հայոց ցեղասպանությունը ժխտելը քրեականացնելը և դրա համար քրեական պատասխանատվության ենթարկելն ընդհանրապես համարվել է իրավաչափ, ինչը, սակայն, պետք է կատարվի բացառապես Եվրոպական կոնվենցիայի շրջանակներում: Արդյունքում, Հայաստանի՝ որպես տվյալ գործով երրորդ կողմի, ներկայացրած բոլոր պահանջները բավարարվեցին Եվրոպական դատարանի կողմից⁴⁴²:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի Մեծ պալատը շվեյցարական դատարանի կողմից Փերինչեքի խոսքի իրավունքի խախտման մասով ուժի մեջ թողեց Փոքր պալատի վճիռը, սակայն ամբողջությամբ հանեց Հայոց ցեղասպանությանն առնչվող Հայաստանի ու հայ ժողովրդի համար անընդունելի հիմնական ձևակերպումները:

ՄԻԵԴ-ի փոխզիջումային այս որոշման վրա, անշուշտ, ազդեցություն ունեցան ոչ միայն Հայաստանի մասնակցությունն ու հայկական կողմի ներկայացրած փաստարկները, այլև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում Եվրոպայում տեղի ունեցած զարգացումները:

Ստիպված ենք արձանագրել, որ ՄԻԵԴ-ի վճիռն ունի երկակի բնույթ, և շահագրգիռ կողմերից յուրաքանչյուրը՝ թե՛ Թուրքիան,

⁴⁴² Տե՛ս նույն տեղում:

թե՛ Հայաստանը կարող են այն մեկնաբանել որպես իրենց հաջողություն: Այս որոշման մեջ ակնհայտորեն նկատվում է Եվրամիություն-Թուրքիա առանց այդ էլ բավականին լարված հարաբերություններում վերջինիս էլ ավելի չգրգռելու միտումը:

Թուրքիայի համար, անշուշտ, առավել կարևոր էր, որ ՄԻԵԴ-ի Փոքր պալատի վճռում Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնող ձևակերպումները պահպանվեին նաև Մեծ պալատի վճռում, ինչը, սակայն, ձախողվեց, և Անկարան ստիպված եղավ բավարարվել միայն Շվեյցարիայի կողմից Փերինչեքի ազատ խոսքի իրավունքի խախտման արձանագրումով: Թուրքիայի վարչապետ Ա. Դավութօղլուն ողջունեց եվրոպական դատարանի որոշումը՝ նշելով, որ այդ վճռից հետո 1915 թ. դեպքերը Եվրոպայում արդեն պետք է քննարկվեն առավելապես ակադեմիական մակարդակում⁴⁴³: Այսինքն, թուրքական կողմը, վճռի միայն առաջին մասը հիմք ընդունելով, կրկնում էր պատմաբանների հանձնաժողով ստեղծելու չարչրկված ու իրեն վաղուց սպառած տեսակետը:

Հայաստանի և հայ ժողովրդի համար այս վճռում կարևորն այն է, որ ՄԻԵԴ-ի որոշումով Հայոց ցեղասպանության հարցը, ի հեճուկս թուրքական կողմի ցանկությունների, շարունակելու է մնալ եվրոպական երկրների իրավական ու քաղաքական օրակարգում: ՄԻԵԴ-ի վճիռը որևէ կերպ չի սահմանափակում Եվրամիության երկրներում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու գործընթացը, ինչը նշանակում է, որ նորանոր երկրներ կարող են ընդունել նմանատիպ օրենքներ՝ պայմանով, որ դրանք հիմնվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Եվրամիության շրջանակներում ընդունված իրավական այլ

⁴⁴³ Տե՛ս Թուրքիան կաջակցի 1915 թ. դեպքերի հարցով պատմական հանձնաժողովների աշխատանքներին. Դավութօղլու, <http://armtimes.com/hy/read/72194>

նորմերի վրա: Այս տեսակետից կարևոր է, որ ԵՄ-ի անդամ երկրների ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենսդրությունն հիմնվի նաև 2008 թ. նոյեմբերի 28-ի «Ռասիզմի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագրի վրա, որով Եվրամիության երկրները պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել այդ փաստաթղթի դրույթներին⁴⁴⁴:

ՄԻԵԴ-ի որոշումը չի կարող խանգարել կամ բացասական ազդեցություն ունենալ նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանում Հայոց ցեղասպանության հարցով հնարավոր դատական գործընթացի վրա, երբ Հայաստանը, հիմնվելով Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների վրա, պատրաստ կլինի դիմել այդ ատյանին իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման հարցերով, կամ էլ՝ ՄԱԿ-ի կառույցների՝ ԳԱ-ի կամ ԱԽ-ի միջոցով կոլիմի այդ ատյանին՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինակականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով:

Ինչպես տեսնում ենք, անցած տարիներին և հատկապես Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ընթացքում Ռուսաստանի և ԱՄՆ-ի համեմատությամբ ԵՄ-ում կուտակվել է այդ հանցագործությունը դատապարտելու հսկայական քաղաքական կապիտալ: Մեզնից է կախված, կգարգացվեն արդյոք հաջողություններն ու կիրացվեն այս հարցում ընձեռված հնարավորությունները, թե կբավարարվենք եղած ձեռքբերումներով:

⁴⁴⁴ Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 288:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Թուրքիան այն պետությունն է, որը Հայոց ցեղասպանության քաղաքականության իրականացման միջոցով ժամանակավորապես տիրացավ այդ հանցագործության զոհ դարձած ժողովրդի հայրենիքի մեծ մասին՝ Արևմտյան Հայաստանին: Այսօր էլ աշխարհում կան Թուրքիայի նման երկրներ, օրինակ՝ նրա կրտսեր եղբայր Ադրբեջանը, որոնք ցեղասպան քաղաքականության միջոցով են փորձում լուծել ազգային հարցերն ու բռնություն կիրառելով պահպանել իրենց տարածքային ամբողջականությունը: Կան նաև ազդեցիկ, հզոր պետություններ, որոնք ոչ միայն չեն կանխում կամ դատապարտում ցեղասպանություն իրականացնող վարչակարգերի հանցավոր գործողությունները, այլ, հետապնդելով իրենց շահերը, օժանդակում են նրանց, տարածելով իրենց ազդեցությունը, տիրանալով զոհ ժողովրդի տարածքում եղած բնական պաշարներին, զբաղվելով զենքի վաճառքով և խոշոր գումարներ վաստակելով զոհ ժողովուրդների արյան վրա: Մրանց կողքին, սակայն, կան այլ պետություններ, որոնք չեն ցանկանում իրենց վրա զգալ ցեղասպանության հանցագործության հետևանքները՝ գաղթականների հոսքերը և դրա հետ կապված համաճարակների տարածումը, սոցիալական խնդիրների առաջացումը և այլն, որոնք պատրաստ են ոչ միայն դատապարտել այդ հանցագործությունը, այլև միջոցներ ձեռնարկել այն կանխարգելելու ուղղությամբ: Դառը ճշմարտություն է, որ ցեղասպանության հանցագործության նկատմամբ պետությունների դիրքորոշումները պայմանավորված են ոչ թե մարդասիրական մղումներով, կամ միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով, այլ նրանց շահերով:

Այս իրողությունից ելնելով էլ ցեղասպանության հանցագործության զոհ դարձած հայ ժողովուրդը և նրա շահերի ու իրավունքների արտահայտիչ հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու դրա հետևանքների հաղթահարման գործում պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ համաշխարհային քաղաքականության ուժային կենտրոններին՝ Ռուսաստանին, ԱՄՆ-ին ու ԵՄ-ին կարողանա ցույց տալ այդ գործընթացից նրանց ստանալիք շահը, ինչից հետո միայն նրանք կսատարեն հայ ժողովրդին ու Հայաստանին այդ պայքարում: Իսկ նրանց շահը տվյալ դեպքում կարող է համարվել Թուրքիային ավելի թուլացած, ինչու չէ, նաև՝ տրոհված տեսնելը, ինչով վերջնականապես կգսպվեն Անկարայի տարածաշրջանային և նույնիսկ համաշխարհային դերակատար դառնալու հավակնությունները, ինչը միանշանակ հակասում է նշված ուժային կենտրոնների շահերին:

Ինչպես տեսանք, համաշխարհային քաղաքականության նշված բոլոր ուժային կենտրոնների հետ Անկարան ներկայումս ունի բավականին բարդ ու լարված հարաբերություններ, և բարենպաստ պայմաններ են ստեղծվել, որ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի հետ Թուրքիայի խորացող հակասություններն օգտագործվեն վերջինիս դեմ: Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ու Սփյուռքի լոբբիստական կառույցների ներդաշնակ ու համաձայնեցված աշխատանքի դեպքում հնարավոր կլինի այդ ուժային կենտրոններում Հայոց ցեղասպանության հիմնահարցում ձևավորել այնպիսի մտայնություն, որ նրանք, եթե նույնիսկ հենց իրենք այդ հարցով անմիջական ճնշում չգործադրեն Թուրքիայի վրա, ապա սատարեն Հայաստանի ջանքերին, երբ վերջինս պատրաստ կլինի միջազգային դատական ատյանում իրավական գոր-

ծընթաց նախաձեռնել Թուրքիայի դեմ՝ Հայոց ցեղասպանության դատապարտման ու այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցով:

Քաղաքական ուղղությամբ տարվող աշխատանքներում կարևոր տեղ պետք է հատկացվի նաև ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովուրդների խախտված իրավունքների վերականգնման պայքարի ընդհանուր ճակատի ձևավորմանը, ինչը զգալիորեն կբարձրացնի տարվող աշխատանքների արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը: Պետք է նշել, որ այս գործընթացի հիմքերն արդեն իսկ դրվել են Օսմանյան կայսրության և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության կողմից ցեղասպանության ենթարկված ժողովուրդների՝ հայերի, ասորիների ու հույների սերտ համագործակցության ձևաչափով, որին կարող են միավորվել նորանոր ժողովուրդներ ու երկրներ: Այս առումով կարևոր քայլ պետք է համարել թե՛ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ մարտի 24-ին, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում ասորիների և հույների ցեղասպանությունը դատապարտող հայտարարության ընդունումը, և թե՛ ապրիլի 15-ին «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, որով դեկտեմբերի 9-ը՝ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման օրը, հռչակվեց ցեղասպանությունների դատապարտման և հիշատակման օր: Հայաստանի այս նախաձեռնությունը հասավ իր տրամաբանական ավարտին, երբ սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանի 103-րդ լիազումար նիստում կոնսենսուսով ընդունվեց Հայաստանի ներկայացրած բանաձևը, որով դեկտեմբերի 9-ը հռչակվեց ցեղա-

սպանության հանցագործության զոհերի հիշատակի, արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր⁴⁴⁵: Մակայն ստացված արդյունքները դեռևս վաղ է բավարար համարել:

Հաշվի առնելով ԵԺԿ-ի հեղինակությունն ու ազդեցությունը հատկապես եվրոպական երկրների քաղաքական համակարգի վրա, ինչպես նաև մարտի 5-ին նրա կողմից ընդունված Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևը, որի բովանդակության մեջ տեղ գտած շատ կարևոր ու սկզբունքային ձևակերպումները վկայում են այն մասին, որ դրան մասնակցություն են ունեցել հայկական կառույցները, կարծում ենք, այս ձևաչափում հարկավոր է շարունակել աշխատանքները՝ Հայոց ցեղասպանությունը դեռևս չճանաչած երկրներում ճանաչման հասնելու ուղղությամբ: Օրինակ, Հայոց ցեղասպանությունը չճանաչած երկրներից Հունգարիայի խորհրդարանի 199 անդամներից 133-ը ԵԺԿ-ն ներկայացնող կուսակցություններից են, Իսպանիայի Խորհրդարանի Ստորին պալատի 350 անդամներից 185-ը, Պորտուգալիայի խորհրդարանի 230 պատգամավորներից՝ 132-ը⁴⁴⁶: Չմոռանանք, որ Հայաստանի երեք քաղաքական կուսակցություններ՝ Հանրապետականը, «Օրինաց երկիրը» և «Ժառանգությունը» 2012 թ. փետրվարի 9-ից ԵԺԿ-ի լիիրավ անդամ են⁴⁴⁷, ինչը նշանակում է, որ ԵԺԿ շրջանակներում կուսակցական խողովակները նույնպես պետք է գործի դրվեն գործընկեր քաղաքական կուսակցությունների վրա ներագդելու և դրանք ներկայացնող երկրներում հաջողություններ գրանցելու նպատակով:

⁴⁴⁵ Տե՛ս <http://civilnet.am/2015/09/12/un-general-assembly-adopts-armenia-resolution-on-genocide/#.Vhl7vm6den8>

⁴⁴⁶ Տե՛ս <http://politics.am/?p=148&l=am/>

⁴⁴⁷ Տե՛ս <http://news.am/rus/news/92667.html>

Անհրաժեշտ է շարունակել աշխատանքները Հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչած ու դատապարտած երկրներում՝ այն իմաստով, որ ռացիոնալացվեն նրանց կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները: Հարկավոր է հասնել նրան, որ խորհրդարանների կողմից ընդունված բանաձևերն ու հայտարարությունները վերածվեն օրենքների և, այդպիսով, պարտադիր դառնան տվյալ երկրների համար: Բացի այդ, անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ցեղասպանության ժխտողականությունը քրեականացնող օրենքների ընդունման ուղղությամբ: Այս ուղղությամբ տարվող աշխատանքներում նույնպես կարելի է օգտագործել ԵԺԿ-ի հարթակը:

Եվրոպական որոշ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը օրենսդրորեն քրեականացնելու նախադեպերը՝ Շվեյցարիայում, Սլովակիայում, Հունաստանում և Կիպրոսում, օրենսդրական նոր նախաձեռնությունը Ֆրանսիայում, եվրոպական մյուս երկրների հայկական համայնքները պետք է աշխատեն տարածել նաև իրենց երկրների վրա: Այս առումով նպաստավոր է նաև այն հանգամանքը, որ Եվրամիության անդամ երկրները, 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրելով «Ռասիզմի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը, պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել նրա դրույթներին:

Հայկական լրբբիստական կառույցները բացի խորհրդարաններից իրենց աշխատանքների թիրախ պետք է դարձնեն նաև գործադիր մարմինները, քաղաքական որոշումները նախապատրաստող փորձագիտական կառույցներն ու «ուղեղային կենտրոնները»: Անհրաժեշտ է հասնել նրան, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած

ու դատապարտած երկրներն իրենց քաղաքականությամբ սատարեն Հայաստանին, երբ հաստունանա Հայոց ցեղասպանության հայցը միջազգային դատարան ներկայացնելու պահը:

Հայաստանն իր հերթին կարող է կոչ անել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին՝ խնդրանքով, որ նրանք պահանջեն ու ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, որ վերջինս կատարի այդ պայմանագրի 37–44 հոդվածներով իր ստանձնած պարտավորությունները՝ ոչ մահմեդական բնակչության իրավունքները պաշտպանելու հետ կապված: Թուրքիայի հետ Լոզանի պայմանագիրը ստորագրած պետությունները գործնականում կարող են առաջնորդվել այդ պայմանագրի 44-րդ հոդվածի 4-րդ մասով և, Թուրքիայի կողմից իր ոչ մահմեդական հպատակների իրավունքների խախտումը դիտելով այդ երկրի հետ իրենց վեճ, դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան, որն Արդարադատության միջազգային մշտական պալատի լուծարումից հետո համարվում է վերջինիս ժառանգորդ դատական ատյանը: Նման գործընթաց սկսելու համար բավարար է Լոզանի պայմանագիրը ստորագրած պետություններից անգամ մեկի պահանջը, քանզի Թուրքիան, ստորագրելով ու վավերացնելով այդ պայմանագիրը, համաձայնվել է, որ այդ վեճերի քննության արդյունքում միջազգային դատական ատյանի վճիռն իր համար լինելու է վերջնական:

Այն երկրներում, որոնք դեռևս չեն ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, հարկավոր է ստեղծել ու տարածել հանրամատչելի տեղեկատվական բուկլետներ, բրոշուրներ՝ տարբեր լեզուներով: Գերադասելի է դա անել Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով, որպեսզի գործին տրվի պաշտոնական բնույթ: Նույնը պետք է արվի նաև էլեկտրոնային լրատվական միջոցների և համացանցի միջոցով: Այդ երկրներում հար-

կավոր է ստեղծել բարենպաստ հասարակական կարծիք Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այս գործողությունների թիրախը պետք է դառնան հիմնահարցին անտեղյակ կամ թուրքական ժխտողական քարոզչության միջոցով ապակողմնորոշված զանգվածները, որոնց հանրամատչելի և անառարկելի ձևով պետք է ներկայացվի պատմական ճշմարտությունը: Աշխատանքներ պետք է տարվեն նաև այդ երկրների գիտական շրջանների հետ: Մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության տարբեր հիմնահարցերի շուրջ կարելի է հրավիրել միջազգային գիտաժողովներ՝ տվյալ երկրի գիտնականների մասնակցությամբ, իսկ գիտաժողովի արդյունքում ընդունված հայտարարությունները պետք է ուղղվեն ոչ միայն տվյալ երկրների, այլև Թուրքիայի նախագահներին:

Մտիպված ենք արձանագրել, որ նշված ուժային կենտրոնները վաղուց շահարկում են Հայոց ցեղասպանության հարցն իրենց նպատակներին հասնելու համար: Տվյալ պայմաններում մենք էլ, հաշվի առնելով ազդեցիկ տերությունների ու մեր շահերի համնկնման հանգամանքը, պետք է ճիշտ գնահատենք իրավիճակն ու բաց չթողնենք պահի ընձեռած հնարավորությունները, փորձենք հաշվենկատ ու շրջահայաց քայլերով Թուրքիայի վրա ավելացող ճնշումն ուղղել դեպի ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ

1. Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրությունը (1915-2000), Եր., 2001:
2. Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող՝ Վ. Քոչարյան, Եր., 2014:
3. Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М.Г. Нерсисяна, Ер., 1983.
4. Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Сост., отв. редактор, автор предисловия и комментария Ю.Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003.
5. Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17.
6. Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “По случаю 90-летия начала геноцида армянского народа” от 22 апреля 2005 года, <http://www.nashasreda.ru>
7. Декларация брюссельского саммита, подписанная 17.12.2004 года, www.abhaber.com.tr.
8. Assignation en Refere Par-devant Monsieur le President du Tribunal de Grande Instance de Marseille aux fins de Constatation d'une voie de fait Administrative et d'Injonction www.philippekrikorian-avocat.fr
9. Case of Perincjek v. Switzerland, <http://hudoc.echr.coe.int/app/pdf/?library>
10. Constats d'huissier en date des 30 Janvier et 2 Février 2012 établissant la preuve d'une publication en trente-trois pages figurant sur le site internet officiel du Conseil Constitutionnel, mettant à l'index la loi du 29 Janvier 2001, réputée être non normative, laquelle publication

constitue une infraction manifeste au devoir d'impartialité et à l'obligation de réserve des membres du Conseil Constitutionnel expressément prévue par les dispositions de leur statut

Janvier 2012,
www.philippekrikorian-avocat.fr

11. European Council. 2000 Regular Report from the commission on Turkey. Progress towards accession.

12. European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

13. Proposition de Loi Anti-negationnisme ter pdf - 16.12.2012, 23H43.pdf www.philippekrikorian-avocat.fr

14. Proposition de Loi PK-VB depose le 06.02.2013.pdf, www.philippekrikorian-avocat.fr

15. The Armenian Genocide. Documents and declarations 1915-1995. Compiled with an introduction by H. Sassounyan, Los Angeles, 1995.

16. The White House, Office of the Press Secretary, April 6, 2009, Remarks By President Obama to the Turkish Parliament <http://www.whitehouse.gov/the-press-office/>

17. The White House, Office of the Press Secretary, April 24, 2009, Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, http://www.whitehouse.gov/the_press_office/

18. "Transcript of Remarks and Response to Media Questions by Russian Minister of Foreign Affairs Sergey Lavrov at Joint Press Conference with Turkish Minister for Foreign Affairs Ali Babacan", September 2, 2008, İstanbul, http://www.turkey.mid.ru/hron/hron_e_19.html

2. Մենագրություններ

19. Բարսեղյան Լ., Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և թուրքական հակազդեցությունը, Երևան, 2001:

20. Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014:
21. Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2011:
22. Гасратян М.А., Курды Турции в новейшее время, Ер., 1990.
23. Гусейнов В., Каспийская нефть, экономика и геополитика, М., 2002.
24. Турция между Европой и Азией. Итоги европеизации на исходе XX века, М., Институт востоковедения РАН, 2001.
25. Дружиловский С.Б., Турецкая Республика в 80 - 90-е гг., М., 1998.
26. Агаев С.Л. Иран: внешняя политика и проблемы независимости, М.,1996.
27. Киреев Н. Г., Среднесрочные и долгосрочные интересы Турции в отношениях с Россией, «Ближний Восток и современность», М., 1997.
28. Коджаман О., Южный Кавказ в политике Турции и России в постсоветский период, М., 2004.
29. Кондакчян Р.П., Турция: внутренняя политика и ислам, Ер., 1983.
30. Кунаков В.В., Турция и ЕС: Проблемы экономической интеграции, М., Институт Ближнего Востока, 1999.
31. Сваранц А., Геноцид армян в Османской Турции: причины, этапы и последствия в национальной и международной жизни, М., 2006.
32. Тринич Ф. А., Россия-Турция: состояние торгово-экономического сотрудничества, «Ближний Восток и современность», М., 2003.
33. Уразова Е.И., Экономическое сотрудничество Турции и тюркских государств СНГ, М., 2003.
34. Энтин Л.М., Европейское право, М., Норма, 2005.

35. Assessing the economic implications of Turkish accession to the EU, A.M.Lejour, R.A. de Mooij, C.H. Capel. -The Hague: CPB Netherlands Bureau for Economic Policy Analysis, 2004
36. Celac S., Emerson M., Tocci N., A Stability Pact for Caucasus, CEPS Working Document 145, Bruxelles, CEPS, 2000.
37. Hale W. M., Turkish Foreign Policy 1774-2000, Routledge, 2002.
38. Howe M. Turkey: A Nation Divided over Islam's Revival / M.Howe, Boulder, 2000.
39. Lenski E., Turkey and the EU: On the Road to Nowhere? Berlin, 2003.
40. Phillips L. D., Unsilencing the Past: Track two Diplomacy and Turkish-Armenian Peconciliation, Berghahn Books, 2005.
41. Torbakov I., The Georgia Crisis and Russia-Turkey Relations, The Jamestown Foundation, 2008.
42. Ugur M., The European Union and Turkey: An Anchor/Credibility Dilemma / M.Ugur. - Aldershot: Ashgate Publishing, 1999.

3. Հողվածներ և հրապարակումներ

43. Աղաջանյան Մ., Առևտրա-տնտեսական հարաբերությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև, «Թուրքիա. էներգետիկան և միջազգային տնտեսական կապեր, վերլուծական նյութեր», թողարկում 2, Եր., 2008:
44. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ., «21-րդ ԴԱԸ», թիվ 6 (46), 2012:
45. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականության առաջնահերթություններն Անդրկովկասում 2008-2011 թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (47), 2013:
46. Գեղամյան Վ., Թուրքիայի դերը «Իսլամական պետություն» կազմակերպության կայացման գործում, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր, N 7, Եր., 2015:

47. Հարությունյան Ս., Տարածաշրջանային նոր գործոն Անդրկովկասում. առնչություններ Հայաստանի ազգային անվտանգությանը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=520
48. Հովսեփյան Ա., Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերություններն արդի փուլում, «21-րդ ԴԱԸ», թիվ 5 (51), Եր., 2013:
49. Չաքրյան Հ., Ռուսաստան-Թուրքիա հակասությունները տարածաշրջանային վճռորոշ գործոն, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, «Հայացք Երևանից», Ռուսաստան, թիվ 2, 1996:
50. Մարգարյան Ա., Ռազմարարական համագործակցությունը եվրասիական ինտեգրման համատեքստում, «21-րդ ԴԱԸ», N 2 (48):
51. Аватков В.А., Доманов А. О., Военно-политические отношения в треугольнике США-Турция-Франция: 2009-2012 гг., “Сравнительная политика”, N 1 (11), М., 2013.
52. Айдын М., Турецкая политика в отношении Кавказа в 2007 г., Кавказ – 2007, Ежегодник Института Кавказа, Ер., 2009.
53. Арас Б., Турция и Южный Кавказ в 2008 г., Кавказ-2008. Ежегодник Института Кавказа, Ер., 2010.
54. Гаджиев А.Г., К визиту премьер-министра Турции Р. Т. Эрдогана в Россию: российско-турецкие отношения на современном этапе, <http://www.iimes.ru/?p=9918>
55. Гаджиев А.Г. Курдский вопрос в свете очередного ежегодного доклада Еврокомиссии о развитии Турции. Институт Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09a.htm>
56. Гирагосян Р., США и Кавказ в 2008 г., Кавказ-2008. Ежегодник Института Кавказа, Ер., 2010.
57. Давудоглу А., Внешняя политика Турции и Россия, “Россия в глобальной политике”, N 1, М., 2010.
58. Киреев Н. Г., Турция – экономический партнер и политический соперник России в Евразии, “Россия на Ближнем Востоке: цели, задачи, возможности” (материалы конференции), М., 2001.
59. Корицкий А., Россия – Турция: 85 лет дипломатическим отношениям, «Азия и Африка сегодня», 2009, № 9.

60. Крылов А., Российская политика на Южном Кавказе в 2009 г., Кавказ-2009. Ежегодник Института Кавказа, Ер., 2011.
61. Куранов А., Новички спешат в Евросоюз, Новое время. Приложение, Политэкономия, №10, 26 мая 1998.
62. Минасян С. М., Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности, «21-й Век», №2 (4), Ер., 2004.
63. Моисеев П.П., Старченков Г.И., Стратегии экономического развития Турции, «Народы Азии и Африки сегодня», М., 2003, №7.
64. Сафрастян Р., Турция и Кипрская проблема: Эпизоды «Большой игры», «21-й Век», № 2, 2005.
65. Семедов С., Основные аспекты современной политики Турции на Кавказе. /Вестник. М., ун-та, сер. 18, Социология и политология, 2008, № 2.
66. Старченков Г.И., Турция: долгий путь в Евросоюз, «Современная Европа», М., 2002, № 4.
67. Торбаков И., Изменения в Турции и кавказская политика в 2004 г., Кавказ-2004, Ежегодник Института Кавказа, Ер., 2006.
68. Торосян Т., Возвращение Турции, “Россия в глобальной политике”, 2009, июль, август, № 4,
<http://www.globalaffairs.ru/numbers/39/12361.html>
69. Челикпала М., Турция и Южный Кавказ, Кавказ-2009. Ежегодник Института Кавказа, Ер., 2011.
70. Чернявский С.И., Политика США по укреплению своего влияния в Азербайджане, «Независимый Азербайджан: новые ориентиры», т. 2, РИСИ, М., 2000.
71. Юрков Е.И., Исламский фактор во внешней политике США, «США экономика политика, идеология», М., 1983, № 8.
72. Akyuz A., U.S. – Turkey Economic Relations at the Outset of the 21st Century, Insght Turkey, Vol. 2, No. 4, October-December, 2000. Albanian expert: Turkey waypoint for Balkan jihadists,
<http://www.todayzaman.com/353477.html>
73. Babali T., New Turkish Foreign Policy in the Balkans, 20 December 2010, <http://sam.gov.tr/this-is-my-first-blog>.

74. Baran Z., The Baku-Tbilisi-Ceyhan Pipeline: Implications For Turkey, The Central Asia-Caucasus Institute, Silk Road Studies Program, May 2005.
75. Demirtaş S., More than 1,000 turks fighting for the Islamic Caliphate, <http://www.hurriyetdailynews.com/>
76. Davutoğlu A., Turkey's Foreign Policy Vision: An assessment of 2007, *Insight Turkey*, Vol. 10, No. 1.
77. Gregg H. S., Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the US, The Rosemary Rogers Working papers Series, 2001.
78. Gursel K., Turkey paying price for jihadist highway on border, <http://www.al-monitor.com/pulse/originals/2014/06/gursel-al-qaeda-isis-yurkey-mosul-iraq-syria-consulate.html>
79. Hill F., Taspınar O., Turkey and Russia: Axis of the Excluded? «Survival», vol. 48, no. 1, Spring 2006.
80. Hubbard B., Yeginsu C., After opening way to rebels Turkey is paying heavy price, <http://www.nytimes.com/2014/06/25>
81. Iseri E., Geopolitics of Oil and Pipelines in the Eurasian Heartland, "The Politics of Oil", ed. Gokay B., London: Routledge, 2006.
82. "Is Turkey Getting Away from the US in Caucasus", *Journal of Turkish Weekly*, August 31, 2008.
83. *Journal officiel de l'Union europeenne* L 328 du 6.12.2008.
84. Laurelle M., Russo-Turkish Approachment through the Idea of Eurasia: Alexander Dugin's Networks in Turkey, The Jamestown Foundation, April 2008.
85. Lesser I. O., Turkey, the United States and the Delusion of Geopolitics, "Survival", Vol. 48, No. 3, Autumn 2006.
86. McGregor A., Massoud Barzani Conducing Dangerous Games in Northern Iraq, *Terrorizm Focus*, Vol. IV, Issue 23, July 17, 2007;
87. McGregor A., PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions *Terrorizm Focus*, Vol. IV, Issue 27, August 14, 2007.
88. Mkrtchyan T., Petrosyan V., Integration of Transcaucasia: Continued Failure and Hope, *Turkish Policy Quarterly*, Vol 8, No 1, Spring 2009.

89. Northern Iraq, Terrorism Focus, Vol. IV, Issue 23, July 17, 2007.
90. Oku A., Russian-Turkish Economic Relations in the Post-Soviet Era (AIA Turkish section), <http://www.axisglobe.com/article.asp?article=43>, 19. 04. 2005.
91. Özbay F., The Relations between Turkey and Russia in the 2000s, Perceptions: Journal of International Affairs, Vol. XVI, No 3, SAM, Autumn 2011.
92. Punsmann B. G., The Caucasus Stability and Cooperation Platform: An Attempt to Foster Regional Accountability, ICBS Policy Brief, No. 13, April, 2009.
93. Turkey providing direct support to ISIS, <http://www.wnd.com/2014/10>
94. Sanger D., Davis J., Struggling to starve ISIS of oil revenue, U.S. seek assistance from Turkey, <http://www.nytimes.com/2014/09/14/>
95. Turkey's Top Foreign Policy Aide Worries about False Optimism in Iraq, Interview with A. Davutoglu, Council on Foreign Relations, 19 September, 2008, <http://www.cfr.org/>.

4. Կապիչեր

96. <http://arka.am>
97. <http://armedia.am>
98. <http://armeniangenocide100.org>
99. <http://armenpress.am>
100. <http://armtimes.com>
101. <http://civilnet.am>
102. <http://expert.ru>
103. <http://glasru.ru>
104. <http://magazines.russ.ru>
105. <http://m.mamul.am>
106. <http://mir-politika.ru>
107. <http://news.am>
108. <http://newsland.com>
109. <http://novostink.ru>

110. <http://politics.am>
111. <http://profi-forex.org>
112. <http://vpoanalytics.com>
113. <http://www.azatutyun.am>
114. <http://www.cyprusadvertiser.com>
115. <http://www.foreignpolicy.ru>
116. <http://www.geopolitica.ru>
117. <http://legalinfo.am>
118. <http://www.meast.ru>
119. <http://www.mfa.gov.tr>
120. <http://mir-politika.ru>
121. <http://www.nakanune.ru>
122. <http://www.panarmenian.net>
123. <http://www.politcom.ru>
124. <http://www.president.am>
125. <http://www.regnum.ru>
126. <http://www.turkishweekly.net>
127. <https://www.vedomosti.ru>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	3
ԳԼՈՒԽ I. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	13
1.1. Ռուս-թուրքական արդի հարաբերությունների հակասություններն ու շահերի բախումները.....	13
1.2. Ռուսաստանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և դրա ազդեցությունը ռուս-թուրքական հարաբերությունների վրա.....	66
ԳԼՈՒԽ II. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ԱՄՆ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	75
2.1. Ամերիկա-թուրքական արդի հարաբերությունների հակասություններն ու շահերի բախումները	75
2.2. ԱՄՆ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և ամերիկա-թուրքական հարաբերությունների վրա դրա ազդեցությունը.....	122
ԳԼՈՒԽ III. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ ԵՄ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....	143
3.1. ԵՄ-Թուրքիա հարաբերությունների հակասություններն ու շահերի բախումները.....	143
3.2. ԵՄ-ի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում և դրա ազդեցությունը ԵՄ-Թուրքիա հարաբերությունների վրա.....	178
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	203
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	210